

**Մ- ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ**

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆՆ  
ԵՍԱՅԵԱՅ**

**աշխատասիրությամբ  
ՀԱԿՈՒ ՔՅՈՍԵՅԱՆԻ**

**Մ- Էջմիածին - 2008**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ս- Գրիգոր Տաթևացու վաստակը ոչ այլ բան է, քան հանրագումարը հայ միջնադարյան մտքի տարբեր մարզերում ձեռք բերված նվաճումների: Նրա բազմաժանր ու բազմաբնույթ մատենագրության մեջ արձանագրված ու համկարգված է աստվածաբանական - դավանաբանական, իմաստասիրական, մեկնաբանական, քարոզխոսական մարզերում հայ եկեղեցու կուտակած դարավոր փորձառությունը: Հատկապես նշանակալից է նրա բերած նպաստը դավանաբանական եւ մեկնաբանական աստվածաբանության մեջ: Եթե դավանական աստվածաբանությունը ներկայանում է Հարցմանց գրքով ու Ոսկեփորիկով, ապա մեկնաբանականը՝ սուրբգրային բազում մեկնություններով: Եթե առաջինին բնորոշ է հարցերի մշակվածությունն ու համակարգվածությունը, ապա երկրորդին՝ հանրագիտարանային ճոխությունը: Այս առանձնահատկությամբ աչքի են ընկնում Աստվածաշնչի նրա մեկնություններն ու լուծմունքները, որոնց գերակշիռ մասը տակավին անտիպ է<sup>1</sup>: Սրանց մեջ ուշագրավ է ծավալով փոքր, սակայն բովանդակությամբ հարուստ Եսայու մարգարեության մեկնությունը: Շնորհիվ իր բազմաշերտ աստվածաբանության, հայտնութենական թափանցումների Եսայու մարգարեությունն արդեն հնում իրավացիորեն նկատվել է Հին Կտակարանի Ավետարան: Եվ հիրավի, Քրիստոսի տնօրինության վերաբերյալ իր պարունակած ակնարկներով Եսայու մարգարեությունը բացառիկ կարևոր տեղ է զբաղեցնում Հին կտակարանում՝ թերևս իրեն մրցակից ունենալով միայն Սաղմոսները: Ուստի պատահական չէ, որ միջնադարի քրիստոնեական մատենագրության մեջ մասնահատուկ կարևորություն է տրվել այս գրքին: Հայտնի են Եսայու մարգարեության բազում մեկնություններ՝ շարադրված մասնավորաբար Արևելյան եկեղեցու հայրերի ու վարդապետների կողմից (Ռրոզինես, Եփրեմ Ասորի, Բարսեղ Կեսարացի, Հովհան Ոսկեբերան, Կյուրեղ Ալեքսանդրացի և ուրիշներ): Հայ մատենագիրները (Սարգիս Կունդ, Հովհաննես Մուշի որդի, Գևորգ Սկևռացի և ուրիշներ)՝ հետևելով Արևելաքրիստոնեական եկեղեցու մեկնաբանական հարուստ ավանդներին շարադրել են խմբագիր մեկնություններ<sup>2</sup>: Գրիգոր Տաթևացին ևս հենվել է անցյալի մեծանուն հեղինակությունների վրա: Սակայն առաջին անառարկելի հեղինակությունը նրա բազմերախտ ուսուցիչն է՝ Հովհան Ռրոտնեցին: Ինչպես այս

<sup>1</sup> Դրանց մատենագիտությունը տես Սուրբ Գրքի հայերեն մեկնությունների մատենագիտություն, պատրաստեցին Եզնիկ եպս- Պետրոսյան, Արմեն Տեր-Ստեփանյան, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 2002, էջ 34, 40, 57, 85, 94: Առ այսօր հրատարակված են միայն «Մեկնութիւն Սանդմոսաց» (համառոտ տարբերակ) աշխատ- Արմենուհի Քյոշկերյանի (Եր-, 1993), «Մեկնութիւն Սողոմոնի Առակաց» (զուգահիժ աշխարհ- թրգմ- Խաչիկ Գրիգորյանի (Եր-, 2000), «Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի», քննական բնագիր աշխատ- Դուկաս արդ- Չաքարյանի (Ս- Էջմիածին, 2005), ինչպես նաև՝ առանց քննական բնագրի հրատ- Երզ երզոցի եւ Իմաստության գրքերի մեկնությունների Խաչիկ Գրիգորյանի իրականացրած աշխարհաբար թարգմանությունները- Եր-, 2005:

այնպես էլ Սուրբգրային մյուս մեկնությունները շարադրելիս նա առաջնորդվել է իր ուսուցչի դասախոսություններով, ժանրի պահանջած սկզբունքի համաձայն խմբագրել դրանք: Ինչպես մյուս մեկնությունները Եսայու մարգարեության մեկնությունը նմանապես աչքի է ընկնում հանրագիտարանային ճոխությամբ, բազմաբովանդակ տեղեկատվությամբ- այստեղ իրենց պատշաճ արտահայտությունն են գտել միջնադարյան մտքի և գիտության տարբեր մարզերին վերաբերող տվյալներ, ուշագրավ վերլուծումներ եւ ընդհանրացումներ, որոնք թույլ են տալիս արժանիորեն գնահատել Հովհան Ռրոտնեցու եւ Գրիգոր Տաթևացու իրազեկության չափն ու խորքը, հարցերը լուսաբանելու կարողությունը: Այսպես, մեկնությունը պարունակում է Հվայոց եւ Հին Արեւելքի պատմության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ: Մեկնաբանելով «Երկինք աթոռ իմ են եւ երկիրս պատուանդան ոտից իմոց» (ԿԶ 1) բառերը՝ Տաթևացին նշում է, թե հրեաները, անտեսելով դրանց հոգուր իմաստը, տառացիորեն են ընկալում և մեկնաբանում այդ բառերը, «վասն որոյ եւ հեռանան ի Քրիստոսէ»: Մինչդեռ հենվելով առաջնորդի՝ Հովհան Ռրոտնեցու հաղորդած բանավոր տեղեկության վրա՝ Տաթևացին արձանագրում է, թե «մեծ վարդապետն Վարդան» (թերեւս Արեւելցին, 1201 – 71) Տփղիսում եղած ժամանակ «առաջի թագաւորին վրաց եւ մեծամեծաց նորա» ամոթահար անելով (հերքում է ոմն «տրամաբան» հրեայի տառապաշտ մեկնաբանությունը և ցույց տալիս խորհրդական մեկնաբանության անհրաժեշտությունը, որովհետեւ մարգարեական նման տեղիները (ինչպես օրինակ «Գայլք եւ գառինք ի միասին ճարակեսցին») հաճախ ակնարկում են ապագայում լինելիք բաները, քանզի պարզ տրամաբանությամբ անկարելի է դրանք ընկալել տառացիորեն:

Մեկնության մեջ բերվում են նաև տեղեկություններ, որոնք վերաբերում են Սուրբ գրոց հետ կապված Հին Արեւելքի պատմությանն ու աշխարհագրությանը: Մարգարեական տեղիի («Եւ եղիցի ի տեսիլ ամենայն մտեղեաց», ԿԶ 24) բացատրության համար պատշաճ նկատելով հեղինակը բերում է այն ժամանակ կենցաղավարող երկու կարգի լուսաբանումներ, որոնցից մեկի համաձայն մարգարեի այդ բառերը ակնարկում են ժողովուրդներին եւ բոլոր հեթանոսներին, իսկ մյուսի համաձայն՝ այն ազգերին, ովքեր Սելևկյան Անտիոքոս Դ Էպիփանես արքայի (Ն- Զ- 175 – 165) գլխավորությամբ ճնշում էին գործադրում հրեաների վրա՝ նրանց պարտադրելով հունական քաղաքակրթությունն ու կրոնական, վարչաքաղաքական կառույցը: Աստվածաշնչական պատմության ետնախորքի վրա հեղինակը ընդհանուր գնահատականն է տալիս Բաբելոնի Նաբուգոդոնոսոր (Ն- Զ- 604 – 562) եւ Աքեմենյան

<sup>2</sup> Տե՛ս **L- Տեր – Պետրոսյան**, «Եսայի մարգարեի հայ մեկնությունների մատենագիտություն» (անտիպ):

հարստության Կյուրոս Բ (Ն- Բ- 550 – 529) արքաների ռազմաքաղաքական գործունեության: Բևեռացնելով այս երկու արքաների քաղաքական ընթացքը ու բնորոշելով հրեաների ազգային ճակատագրում նրանց խաղացած դերը՝ հեղինակը պերճախոս կերպով նկատում է- «Նաբուգոդոնոսոր գերեաց զնոսա եւ Կիրոս աշխարհակալ դարձոյց», որով Սուրբ գրոց պատմության հայեցակետից բացասական գնահատականն է տրվում առաջինի եւ դրական՝ երկրորդի:

Մեկնության մեջ տեղ են գտել նաև պատմաաշխարհագրական տեղեկություններ ու ճշգրտումներ: Բերելով տարրնթաց կարծիքներ «Ասորիք», «Ասորեստան» և «Բաբելոն» տեղանունների վերաբերյալ՝ հեղինակը բացատրում է- «Ասորիք Դամասկոս է և շրջակայք նորին: Իսկ Ասորեստան Բաբելոն է, ասեն ոմանք: Այսէ ուղիղն, զի Ասորեստան Միջագետքն է, որ ի մէջ Դկլաթա և Եփրատա է, որ է Ուռհա, Մօսլ<sup>3</sup> և այլքն: Իսկ թէ ուրէք Բաբելացին Ասորեստան կոչի- այն է պատճառ, զի բաբելացոց թագաւորն եւ ի վերայ Ասորեստանեայցն տիրէր: Եւ Ասորեստան այն եւ ի վերայ Բաբելոնի տիրէր, վասն այն միմեանց անուամբ կոչին»: Այսպիսով տեղանունների շփոթը Տաթևացին բացատրում է ռազմաքաղաքական իրավիճակով, երբ մերթ Ասորեստանն էր իր գերիշխանությունը տարածում Բաբելոնի վրա, մերթ վերջինս էր տիրում առաջինին, և տիրող երկրի անունով էլ կոչվում էր ենթակա երկիրը:

Աշխատությունս օգտակար է Հայ միջնադարի աստվածաբանական մտքի հետազոտման համար: Ակներև է նրա կենդանի կապը Արևելաքրիստոնեական մտքի հարուստ ավանդների հետ: Այսպես, հետևելով այդ ավանդներին՝ հեղինակը բացառում է Աստծո էության ճանաչողությունը: Նա համեմատում է Հովհաննես Առաքյալի և Ավետարանչի «զԱստուած ոչ որ ետես երբէք» (Ա 18) և Եսայի մարգարեի «տեսի գՏէրն» (Ձ 1) խոսքերը, և գտնում, որ դրանք չեն հակասում իրար, քանզի Հովհաննեսի խոսքը նկատի ունի Աստծո բնության էությունը, որ, իբրև վերհայտնութեանական իրողություն, լինելով ինքն իր համար, ցույց է տալիս, թե՝ «Աստուած անբովանդակելի է բնութեամբ», այսինքն՝ իբրև բացարձակ ինքնիսկոյթ, անդրանցական է: Մինչդեռ «մարգարես ետես, որքան կար է մարդոյ, այլ՝ կերպարանաւ եւ նմանութեամբ»: Այսինքն մարգարեին երևացածը Աստծո, ադամորդուն մատչելի, պայմանական դրսևորումն է, որ այստեղ արտահայտված է «նստել» բայով, որ ըստ էության խորթ և օտար է Աստվածության անպարագիծ ու ոգեղեն բնությանը: Այսուհանդերձ Աստծո հետ կարելի է հաղորդակցվել նրա գործերի շնորհիվ երեք եղանակով- «Նախ՝ ի լսելեաց, երկրորդ՝ յիմաստութեանց, երրորդ՝ ի տեսանելեաց»: Աստվածճանաչողության առաջին եղանակի համար վկայակոչվում է Եսայու մարգարեության «ո՞չ լուսայք եւ ոչ

<sup>3</sup> Մինչդեռ իրականում Ուռհա = Եդեսիան, Մօսլ = Մոսուլը գտնվում են Ասորիքում:

պատմեցաւ ձեզ, թէ ո՞ հաստատեաց զհիմունս երկրի» (Խ 21), երկրորդի համար՝ ոչ իմանայք եւ ոչ զիտասցէք» (Խ 21), իսկ երրորդի համար՝ «Համբարձէք ի բարձունս զաչս ձեր եւ **տեսէք**» (Խ 26): Սրանցից յուրաքանչյուրը մատնանիշ է անում Աստծո ճանաչողության առանձին եղանակ ու մակարդակ: Զգայական և իմացական կարողությունների այսօրինակ հերթագայությունը որոշակիորեն ենթադրում է ճանաչողության վերընթաց զարգացում (լսելիք, զիտելիք, տեսանելիք): Իբրև խորհրդապաշտական գործընթաց դրանք իրարից հստակորեն զանազանվում են, բայց իբրև հոգևոր վիճակ դրանք պայմանավորում են իրար: Ուստի Աստծո ճանաչողության համար անհրաժեշտ է զգայական և մտային կարողությունների ներդաշն համագործակցում:

Հայրախոսական աստվածաբանության դասական ավանդներից է սնվում այն աներկբա համոզումը, թե Աստված չարի պատճառ չէ: Տերը մարդուն տվել է անձնիշխան կամք, որպեսզի նա հեռանա չարից և բարիք գործի, սակայն մարդը հոժար կամքով ընտրում է չարը: «Զոր օրինակ թագաւոր ոք տա զէն ծառայից ի փրկութիւն ինքեանց եւ ի սատակումն թշնամեաց, եւ թէ նոքա զինքեան սպանանեն, ինքեանք են մեղադրելիք»: Չարը ծնվում է նաև աստվածային կամքի շեղ կիրարկումից, երբ Աստծո տված հոգևոր շնորհը լուսաբանվում է ոչ թե հոգևոր հայացքով՝ այլ՝ աշխարհային «մտօք», որի հետևանքով մարդիկ «յիմարին»:

Մեկնության մեջ տեղ են գտել դավանական աստվածաբանության մաս կազմող երրորդաբանական և քրիստոսաբանական մտածումներ: Բացատրելով «սքանչելի խորհրդակից» (Թ 6) բառերը՝ հեղինակը նկատում է, թե «այսու զհաւասարութիւն ընդ Հօր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ ծանուցանէ», քանզի Որդու խորհրդակից լինելն ինքնին նրան հաւասար է հռչակում Երրորդության մյուս անձանց հետ: Ս- Երրորդության անձինք ոչ միայն հավասար են, այլև միասնական: Այսու մարգարեի «Յառաջ քան զիս ոչ եղև այլ Աստուած» խոսքը (ԽԳ 10) ամենևին էլ չի բացազատում Որդուն և Ս- Հոգուն, քանզի նրանք արարածներ չեն, «այլ բնութենակիցք Հօր, յեութենէ նորա ծնեալ եւ բխեալ»: Սրանից բնականորեն հետևում է, թե Որդին և Ս- Հոգին հավերժակից են Հորը: Սակայն շարունակելով կապաղովկյան հայրերի, մասնավորաբար Ս- Գրիգոր Նազիանզացու երրորդաբանական խոստովանությունը, ենթակայություն է նշմարում անձանց դիմային հարաբերության մեջ՝ Հորը պատճառը համարելով Որդու և Ս- Հոգու, «որպէս հուրն ոչ է յառաջ քան զլոյսն եւ ջերմութիւն իւր, **թէպէտ պատճառ է**»: Սակայն մյուս կողմից, իբրև առարկայական օրինակ վկայակոչելով մարդկային հոգու, մտքի և մարմնի պարագան, նկատում է, թեպէտ ադամորդին «երեք է ըստ յատկութեան եւ մի է մարդ, ըստ գոյացութեան», այդպես էլ Ս- Երրորդության անձինք բնությամբ մեկ են և

անձնավորությամբ՝ երեք- «մի եւ երեք են, եւ երեք են եւ մի»: Ս- Երրորդությունը ոչ միայն ինքնաբացարձակ և ինքնակա իրողություն է, այլև տնօրինաբար արտահայտվող փաստ, որի օրինակները Տաթևացին մատնացույց է անում Եսայու մարգարեության մեջ: Հետևելով Վարդան Արևելցուն՝ Տաթևացին ցույց է տալիս, որ Ս- Երրորդության մասին վարդապետությունն արդեն առկա էր Հին Կտակարանում<sup>4</sup> : Այսպես, Ս- Երրորդության անձինք ակնարկվում են- «Այս է նոցա ուխտ, ասէ Տէր, Հոգին իմ, որ ի քեզ է եւ բանքն---» (ԾԹ 1) խոսքում, ուր «Տէր»-ը Հայրն է «Հոգին»՝ Սուրբ Հոգին և «բանքն» (Բանը)՝ Որդին: Ս- Երրորդության դրսևորման վկայություն է նկատվում «Հոգի Տեառն ի վերայ իմ» (ԿԱ 1) խոսքը, որն ակնարկում է Բանի մարմնավորումը, «Հոգի», «Տեառն» և «Իմ» բառերը՝ Երրորդության հայտնությունը, իսկ «օծ իսկ զիս» բառերը՝ անձառելի միավորությունը, որով Երրորդության անձինք դառնում են մեկ: Ինչու՞ որովհետև Հոգին առանձին և օտար մի բան չէ Հոր և Որդու համար, այլ էապես պատկանում է նրանց, ուստի և, ինչպես բացատրում է Տաթևացին, մարգարեն բառս (Հոգի) օգտագործում է առանց դիմորոշ հողի («Հոգի Տեառն», և ոչ թե՛ Հոգին Տեառն), որը շեշտում է նրա բնութենական պատկանելությունը Ս- Երրորդությանը: Մինչդեռ ն-ը որոշյալ հողի կիրարկումը նպատակ ունի շեշտել երևույթի կամ իրողության եզակիությունն ու բացառիկությունը: Այդպիսին է «Ահա կոյսն յղասցի» (Է 14) տեղիի «կոյսն» բառի բովանդակած իմաստը, որը պատշաճորեն մեկնաբանվում է հեղինակի կողմից: Ս- Երրորդության դրսևորման առավել ակներև օրինակ է Քրիստոսի մկրտության դրվագը, որն այդ խորհրդի նորկտակարանյան հայտնության սկիզբն է, իսկ «աւետարանել աղքատաց» խոսքը (ԿԱ 1)՝ տնօրինական գործը:

Հայ Եկեղեցու դավանած քրիստոսաբանական համոզումները ևս իրենց վայել արտահայտությունն են գտել մեկնության մեջ: Այսպես- Քրիստոսի աստվածամարդկային բնության անբաժանելի միությունը ցույց տալու նպատակով հեղինակն ընդգծում է, թե Խաչի վրա «նոյն Բանն Աստուած մարմնովն իրովն մեռեալ էր, եւ նոյն մարմինն Աստուածութեամբն կենդանի էր»: Նմանապես չի կարելի տրոհել ներգործությունը՝ դրա բարձրագույն մասը վերագրելով Աստծուն, իսկ խոնարհագոյնը՝ մարդուն, այլ՝ «միաւոր միոյ դիմաց»:

Ինչպես մյուս մեկնություններում, այստեղ ևս առկա են հանրագիտարանային տարաբնույթ փաստեր, որոնք ոչ միայն ներկայացնում են Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական կարողությունն ու լայն իմացականությունը, այլև

<sup>4</sup> Տե՛ս Վարդան Արևելցի, ճառք, Ներբողեանք, աշխատ- Հակոբ Քյոսեյանի, Եր-, 2000, էջ 11: Այս վարդապետության ակունքը Ս- Իրինեոսի աստվածաբանությունն է, ըստ որի «Ս- Հոգին Լոգոսի հաջորդության համար ներշնչում է մարգարեներին, հայրը տալիս է հրամաններ»- տե՛ս Եզնիկ Ծ- վրդ- Պետրոսյան, Հայրաբանություն, Ա, Ս- Էջմիածին, 1996, էջ 102:

տաթևյան դպրոցի ընդհանուր մակարդակը: Այսպես, իբրև փիլիսոփա Որոտնեցին և Տաթևացին ոչ միայն զանազանում, այլև հակադրում են հավատն ու միտքը, քանզի դրանց առարկաներն էապես տարբեր են իրարից<sup>5</sup>: Հավատի առարկան կրոնն է, իսկ մտքի առարկան աշխարհային գիտությունն է: Հետևաբար եթե հավատը վերերկրային, աներևույթ իրողություններն է ընկալում, ապա միտքը քննում է տեսանելի, եղական իրողությունները, «յաղագս որոյ աստուածայինքն ամենայն հաւատով ճանաչի, մտօք ոչ քննի, զի տկարանան միտք»: Եթե եղական գիտելիքը կարիք ունի «նիւթական ապացուցի», ապա հոգևոր գիտելիքն, իբրև քաբիոմատիկ, ըստինքյան իրողություն, ընկալվում է հավատով, որը ապացուցման կարիք չունի: Ուստի սկզբունքորեն մերժելի է աշխարհային գիտութեամբ մոտենալ հոգևորին, օրինակ՝ «գերագոյ երրորդական անձանցն Աստուծոյ տնօրէնութեան խորհրդոյն»:

Հեղինակը քաջատեղյակ է սուրբգրային բանասիրությանն ու միջնադարում այնքան տարածված ստուգաբանական վերլուծումներին: Բնորոշ է «Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի» (Է 14) նշանավոր տեղիի բացատրությունը: Հենց սկզբից Տաթևացին ասում է, թե այս տեղին պարզիպարլո ակնարկում է կատարվելիքի գերբնական լինելը: Ուստի նա վիճարկում է այն թյուր կարծիքը, որ կյանքի է կոչվել որոշ (տվյալ դեպքում՝ Ակյուղասի և Սիմաքոսի) թարգմանություններում առկայող «Աղջիկն յղասցի եւ ծնցի» բառերի հիման վրա<sup>6</sup>: Վկայաբերելով այս տեղին ոմանք պնդում են, թե «ոչ վասն կուսի է բանս, այլ վասն ամենայն կանանց, որ յղանան եւ ծնանին»: Առարկելով այս պնդումը հեղինակը նկատում է, որ մարգարեի մոտ «կոյսի» առանց այր մարդու հիշատակվելը «յայտնապէս առանց առն զծնունդն նշանակէ»: Իր միտքը առավելագույնս հաստատելու նպատակով նա վկայակոչում է Ռեբեկայի համար եկած հարսնախոսներին ի պատասխան նրա եղբայրների խոսքը- «աղջիկն եկեսցէ եւ խօսեսցի» (Ծնդ- ԻԳ 57): Մեկնիչը սրանից հետևցնում է- ինչպես այնտեղ «կոյսը» «աղջիկ» է կոչվում, այնպես էլ՝ այստեղ: Մեկ այլ տեղ (Ը 13) նա բացատրում է «վիուկ», բառը՝ այն համարելով նույնանիշը «հարցող»-ի: Հարցողները կուռքերի պաշտոնյաներն էին, ովքեր նրանից հարցնում էին լինելիք բաների մասին: Սրանց պաշտոնակից են համարվում գետնակոչները, զրախոսները, որովայնակոչները: Հավանաբար նկատի ունենալով Յոթանասնից թարգմանությունից զանազանվող մյուս թարգմանությունները՝ նա ասում է, թե դրանցում «վիուկ»-ի փոխարեն գրված է «հաւագէտք», այսինքն՝ «որք

<sup>5</sup> Նրանց փիլիսոփայական հայացքների մասին տես՝ Բ. Գրիգորյան, Զովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Եր., 1980:

<sup>6</sup> Տես՝ Ստեփանոս Սյունեցի, Չորս Ավետարանների համառոտ մեկնությունը, թրգմ- Վիգեն դպր (այժմ Տեր Խաղ քին) Ղազարյան, Ս- Էջմիածին, 1997, էջ 168 – 169, ծնթ- 7:

զճայնս ձագուց եւ ագռաուց եւ զայլոցն դիւթեն»։ Բացատրելով «Լուսաւորեաց, լուսաւորեաց Երուսաղէմ---» (Կ 1) խոսքը՝ մեկնիչը վկայակոչում է մյուս թարգմանիչների «Արի եւ լուսաւորեաց---» թարգմանությունը։ Թարգմանական այս երկու մոտեցումները նա արդարացնում է աստվածաբանական երկու մոտեցումով։ «Երուսաղէմը»-ը նշանակն է հեթանոսաց եկեղեցիների, որոնք կաշկանդված էին մոլորություններով և կռապաշտությամբ, ուստի մարգարեն գոչում է- «Արի»։ Մինչդեռ Յոթանասնից թարգմանության մեջ առկայող «Լուսաւորեաց, լուսաւորեաց»-ը ցույց է տալիս, որ շնորհներն ընդունելուց հետո ծուլության և ապերախտության պատճառով եկեղեցին զրկվում է «ի լուսոյ շնորհաց»- այդ պատճառով էլ կրկնվում է, որպեսզի ընդունելով այդ շնորհները մեկընդմիջտ պահենք դրանք։

Սուրբգրային բանասիրության անքակտելի մասն է կազմում ստուգաբանությունը։ «Տեսիլ արաբացոց» (ԺԳ 20) արտահայտությունը բացատրելիս մեկնիչը իմաստաբանորեն զատորոշում է «տեսիլ», «պատգամ» և «առած» եզրերը։ Առաջինն այն է, «պատգամ» և «առած» եզրերը։ Առաջինն այն է, երբ մի պատկեր տպավորվում է մտքի և աչքի մեջ, կամ երևում է մարմնեղեն կերպարանքով։ «Տեսիլ»-ը նաև մարգարեներին տրված տեսնելու շնորհն է, որը թույլ էր տալիս նրանց տեսնել ապագան։ Մինչդեռ «պատգամ»-ի պարագային միայն ձայնն է լսվում, առանց տեսանելի պատկերի։ Իսկ «առած»-ը ոչ տեսանելի կերպարանքով է երևում և ոչ էլ ձայնով լսվում- սա էապես տարբերվում է նախորդ երկուսից իր բովանդակությամբ- «առած»-ը ցույց է տալիս այն ներգործությունը, որ Ս- Հոգին ունենում է մարգարեների վրա։

Նվազ շահեկան չեն այն մտածումները, որոնցով հեղինակը արդարացնում և հիմնավորում է սրբազան պատկերագրությունն ու պատկերահարգությունը<sup>7</sup>։ Ժխտելով հակառակորդների պատկերամարտական պնդումները (քանի որ պատկերները ստեղծվում են ապականության ենթակա իրերից, մինչդեռ Աստված անեղծ և անապական բնություն է, ուստի հարկ չէ կուռքերի նման պատկեպել Աստծուն), որոնք գալիս էին տակավին Ուշ անտիկ և վաղ Միջնադարից՝ Տաթևացի պատկերագրության անհրաժեշտությունը հաստատում է վեց հիմնական կետերով։ Լռելով Հայր Աստծո պատկերագրության հնարավորության մասին՝ Տաթևացին խոսում է Որդու և Ս- Հոգու պատկերագրության կամ, ավելի ճիշտ, պատկերի աստվածաբանության վերաբերյալ։ Որդին պատկերելի է, քանզի նա Հոր էության ճշմարիտ պատկերն ու նկարագիրն է (Եբր- Ա 3) որովհետև Որդին մարմնացել և մարդացել է ու ներկայացել է մարդու

<sup>7</sup> Ս- Գրիգոր Տաթևացու գեղագիտական ընկալումների մասին տե՛ս **Յր- Հակոբյան**, Գրիգոր Տաթևացին արվեստի մասին, ՊԲՀ, 1973, N 4:



կերպարանքով, երկրորդ՝ որովհետև Աստված մարդուն արարել է իր պատկերով, ուստի մենք էլ նկարում ենք նրա պատկերի պատկերը, երրորդ՝ որովհետև Աստված Աբրահամին և Մովսեսին երևաց պատկերի (այն է՝ մարդու) նմանությամբ, Ս- Հոգին էլ երևաց աղավնու կերպարանքով: Չորրորդ և հինգերորդ կետերն ունեն ավելի բարոյաբանական բնույթ- տնօրինական դրվագների նպատակն է հիշեցնել Տիրոջ մասին, երախտագիտությամբ ու բարեպաշտությամբ համակել դիտողին, որպեսզի վերջինս հետևի նրանց օրինակին և, զարհուրելով դժոխքի տանջանքներից, հեռանա անօրինություններից: Վեցերորդ կետը հիմնավորվում է եկեղեցական ավանդության վկայակոչմամբ (Տիրոջ պատկերի դրոշմվելը դաստառակի վրա և Հովհաննես Ավետարանչի կողմից Տիրամոր պատկերի նկարակերտումը փայտին): Մեկնիչն ակնարկում է նաև պատկերների հորինվածքի մասին, եթե սրբերը պատկերվում են խաղաղ ու անդորրավետ վայրում, Աստծո շուրջը համախմբված, ապա չարերը՝ դժոխքի տանջանքներում:

Առավել բնորոշ է լույսի խորհրդաբանությունը: հետևելով լույսի խորհրդաբանության միջնադարում օրինակարգված արժեհամակարգին («զի դարձուսցէ զնուազ լոյս լուսնին ի պայծառութիւն արեգականն եւ զաղատացեալ լոյս արդարութեան արինացն ի լուսափայլ քարոզութիւն Աւետարանին, զի լոյս ի լուսոյ յաւելեալ՝ զբոլորն ի միջոյ բարձցեն զխաւարն մեղաց»)՝ Տաթևացին գատորոշում է լուսնի և արեգակի լույսը: Լուսնի լույսն իր տկարության պատճառով ակնարկում է օրենքն ու մարգարեությունները, որոնք անկատար էին արդարության արեգակից առաջ («Աղօտաբար իմն ծագէր լուսնատեսիլ նշոյլք արդարութեան օրինացն»)՝ մինչդեռ արեգակի լույսն իր պայծառության հետևանքով պարզիպարզո մատնացույց է անում Ավետարանը, որ յոթ անգամ գերազանցում է յոթնօրյա արարչության լոյսին, այսինքն՝ Հին Կտակարանին:

Եսայու մարգարեության բովանդակությունն ինքը թելադրել է մեկնաբանական համապատասխան մոտեցում, որով առաջնորդվել է հեղինակը մեկնությունը շարադրելիս՝ դա բացատրության բարոյախորհրդաբանական եղանակն է, որ լայնորեն կիրառվել է Դ - Ե դդ դասական մեկնություններում: սակայն այստեղ, դարի պահանջին համապատասխան, այն մեկտեղված է դպրոցական (սքոլաստիկ) մեկնաբանության եղանակին, ինչը բնորոշվում է երևույթների խստորոշ դասակարգումով և օրինաչափությունների թվարկումով:

<sup>8</sup> Գ. Քյոսեյան, Աստվածաբանական բնագրեր, ուսումնասիրություններ, Ա, Անանիա Սանահնեցի, Ա- Էջմիածին, 2000, էջ 167:

\* \* \*

Ա- Գրիգոր Տաթևացու աշխատությունը հրապարակվում է ըստ Մաշտոցի անվ-  
Մատենադարանի հետևյալ ձեռագրերի-

A = 1131

Ժամանակ՝ ԺԵ դ-: Գրիչ՝ Շահիկ: Թերթ՝ 213: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 17, 8 × 13:  
Գրություն՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 40 - 49: Բնագիրը՝ թ- 2ա - 34բ:

B = 5169

Ժամանակ՝ ԺԵ դ: Գրիչ՝ Մատթեոս վրդ-: Ստացող՝ Յովհաննէս վրդ-: Թերթ՝ 420:  
Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 19 × 15: Գրություն՝ միասյուն, երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝  
25, 26 - 31: Բնագիր՝ թ- 212ա - 285բ:

C = 5871

Ժամանակ՝ ԺԴ, ԺԷ դդ-: Գրիչ՝ Կարապետ աբղյ- (Ա): Թերթ՝ 132: Նյութ՝ թուղթ:  
Մեծություն՝ 18 × 13,5: Գրություն՝ միասյուն, երկայուն: Գիր՝ բոլորգիր, նոտրգիր: Տող՝ 34,  
36, 33: Բնագիր՝ թ- 61ա - 63բ, 72ա - 118բ (բոլորգիր):

D = 5598

Ժամանակ՝ ԺԵ դ-: Թերթ՝ 148: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 17 × 13: Գրություն՝  
միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 35: Բնագիր՝ թ- 2ա - 61բ:

### ՀԱԿՈՒԲ ԲՅՈՍԵՅԱՆ

Ճաղկաքաղ մեկնութիւն ի լուսաւոր բանից  
արդիւնական վարդապետի Յոհաննու Որոտնեցոյ՝  
հաւաքեալ աշխատասիրութեամբ Գրիգորի աշակերտի  
նորին շնորհալից վարդապետի

- Ա -

[Հարց] Չի՞նչ է, որ ասէ Տեսիլ Եսայեայ.

Պատասխան. Չմարգարտութիւնն **տեսիլ** կոչէ, զի մարգարէն տեսանող<sup>1</sup> լսի ըստ  
եբրայեցոցն, զի զոր ինչ յետոյ առնելոց էր Աստուած, յոյժ պայծառութեամբ տեսանել  
տայր մարգարէական աչացն, վասն որոյ<sup>2</sup> **տեսիլ**<sup>3</sup> կոչէ, որպէս Միքիաս ասէ<sup>4</sup> ցԱքաաբ,<sup>5</sup> թէ՛  
«Տեսի զամենայն Իսրայէլ ցրուեալ» (Գ Թագ. ԻԲ 17): Եւ Դանիէլ ասէ.<sup>6</sup> «Տեսի, զի Աթոռք

<sup>9</sup> Տե՛ս ԵԲՅ, Ա, էջ 903 (լուսնատեսիլ):

անկանեին<sup>7</sup> եւ Հինաւորցն նստաւ» (Դան. Է 9-10): Դարձեալ **տեսիլս** կոչէ, զի առաքեացէ<sup>8</sup> զլսողն<sup>9</sup> առ Աստուած, որ զտեսիլն ցուցանէր: Իսկ ասելն **քան Տեառն և պատգամ**<sup>10</sup> զլուրն<sup>10</sup> Աստուծոյ յայտնէր, որ լսէին՝ զինչ խօսէր ընդ նոսա Աստուած: Ըստ այնմ. «Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի», (Ելք 2 10) եւ Եսայի թէ<sup>11</sup>. **Լուայ զբարբառ Տեառն**<sup>12</sup> (Չ 8): Իսկ այն որ առ Աստուած կոչեն զազդումն մարգարեութեան, որպէս Նաւում առ Աստուած Նինուէի ասէ, այսինքն՝ զի գոր ինչ առնուին ի Հոգոյն սրբոյ՝ զայն խօսէին: Եւ Պօղոս զԱւետարանն<sup>13</sup> ասէ. «Ոչ առի<sup>14</sup> ի մարդոյ, այլ ի<sup>15</sup> Յիսուս Բրիստոսէ» (Գաղ. Ա 12-13): Վասն այն եւ առաքեալ գրէ զինքն յամենայն ի թողթս<sup>16</sup>, զի ցուցէ, թէ ոչ զիր ինչ ասէ, այլ՝ զառաքողին<sup>17</sup>: Ըստ որում եւ Բրիստոս ասաց<sup>18</sup>. «Մի՛ կոչիցիք<sup>19</sup> վարդապետ, զի ուսուցիչն»<sup>20</sup> ձեր Բրիստոս է (Մտթ. ԻԳ 8): Այլ տեսանելն կամ լսելն<sup>21</sup> մարգարեիցն չէ որպէս մերս, զի այլազգ տեսանեին եւ լսէին: Որպէս ասէ Եսայի. «Յաւել ինձ ունկն ի լսել եւ խրատ Տեառն քանայ զականջս ինձ» (Ծ 4): Եւ Դաւիթ ասէ<sup>22</sup>. «Բաց զաչս իմ եւ հայեցայց<sup>23</sup> ի սքանչելիս» (Սղմ. ՃԺԸ 18): Այլ թէ որպէս՝ անգիտելի է մեզ, այլ փոքր ինչ օրինակաւ, որպէս յստակ ջուր զճառագայթ<sup>24</sup> արևու առեալ եւս<sup>25</sup> փայլատակէ, նոյնպէս եւ սիրտք մարգարեիցն զՀոգին Սուրբ ընկալեալ՝ յստակ տեսանեին զլիներցն:

- Բ -

Հարց - Չի՞նչ է, որ ասէ. **Լուր երկին եւ ունկն դիր երկիր** (Ա, 2):

Պատասխան - Կերպարանք բանիցս<sup>26</sup> նախ՝ ցուցանէ զբարկութիւնն Աստուծոյ եւ զանարժանութիւնն նոցա, զի թողեալ զմարդիկ ընդ անբան տարերսդ<sup>27</sup> խօսի:

Երկրորդ՝ յամօթ<sup>28</sup> մարդկան: Չի քան զանզգայսն անզգայագոյնք<sup>29</sup> են, զի երկինք եւ երկիր լսեն Աստուծոյ<sup>30</sup> եւ նոքա՝ ոչ: Չայս եւ այլ մարգարեքն առնեն որպէս մարգարէն այն, որ յառ Յերոբովամ ի Բեթէլ առաքեցաւ թողեալ զթագաւորն ընդ սեղանն խօսէր: Եւ Երեմիա<sup>31</sup> թէ. «Երկիր երկիր գրեա զայրդ տարագիր» (Երեմ. ԻԲ 30):

Երրորդ՝ զի առաջի երկնի եւ երկրի արար Իսրայելի մեծ բարութիւնս փրկելով յԵգիպտացոց, երկինք եւ երկիր մարտակիցք եղեն՝ երկինք՝ կարկուտ եւ երկիր՝ գորտ բխելով: Այժմ նոցա, այսինքն՝ երկնի եւ երկրի ցուցանէ զչարիս փրկելոցն, թէ ի գուր աշխատեցան:

Չորրորդ՝ զի սքանչելեօք քառասուն ամ յանապատին յերկնէ մանանայիս եւ յերկրի<sup>32</sup> առանց աշխատութեան պահեաց զնոսա<sup>33</sup> վիմաբուխ ջրովն եւ այլովն: Իսկ նոքա թողին զնոյն սքանչելարարն<sup>34</sup> Աստուած եւ անամօթաբար երկիր պագին զօրութեան երկնից՝ արեգականն եւ լուսնի, յանտառս՝ փայտից եւ քարանց, վասն այտորիկ<sup>35</sup> ի կշտամբանս չարեաց նոցա կոչէ **զերկին եւ զերկիր**:

Հինգերորդ՝ յերկինս հրեշտակաց եւ յերկրի մարդկան<sup>36</sup> վկայէ զչարիս նոցա, զի արժանիք էին բարկութեանն<sup>37</sup> Աստուծոյ եւ ամենայն պատուհասիցն, որ գայր<sup>38</sup> ի վերայ նոցա:

Վեցերորդ՝ ուխտեաց Աբրահամու, թէ՛ «Չաւակք քո լիցին, որպէս զաստեղս երկնիք եւ զաւազ ծովու» (Ծնդ. ԺԳ 16): Արդ, որպէս հռչակաւորս<sup>39</sup> արար զընդունելն նոցա, սոյնպէս հռչակաւոր առնէ եւ զմերժումն նոցա գերութեամբ այլազգեացն:

Եւթներորդ՝ բազումք էին հարք Իսրայէլացոցն յերկնի արդարքն Աբրահամ, Իսահակ, Յակոբ եւ այլքն, այլ որպէս<sup>40</sup> յերկրի հարք էին նոցա մարգարէքն եւ սուրբքն, որք ի բարեպաշտելն Իսրայէլի եւ ի բարեկրելն յԱստուծոյ զուարճանային, նոյնպէս եւ ի կռապաշտելն եւ ի պատուպասիլն դժուարանային: Չայս ոչ միայն յայնժամ հրէիցն, այլ եւ այժմ ի պատուհասելն եւ ի հանդերձելումն խայտառակէ զչարիսն մեր: Ի բանալ դպրութեանցն եւ իջանել երկնաւորացն ի յերկիր, յայնժամ յանդիմանեցէ զչարիս մեր: Ըստ այնմ. Արդ, յանդիմանեցից եւ կեցուցից զայս առաջի քո իմացարուք զայս ամենայն<sup>41</sup> առաջի քո»:

Հարց - **Ամենայն գլուխ ի ցաւս եւ ամենայն սիրտ ի տրտմութիւն** (Ա, 5):

Պատասխան - **Գլուխ** զԵրուսաղէմ եւ զթագաւորն ասէ:

**Յուտից մինչեւ ցգլուխ չիք առողջութիւն** (Ա 6): **Գլուխ** են թագաւորքն եւ սիրտք՝ քահանայքն: Որ իբրև սիրտ զամենայն մարմնոյն հոգայ զկենդանութիւնն, զի շրթունք քահանային<sup>42</sup> պահեսցեն<sup>43</sup> զգիտութիւն օրինացն Աստուծոյ ասէ (Մաղաք. Բ 7), իսկ **նոք** են ամենայն ժողովուրդքն զբոլոր աշխարհիս եւ զազգ<sup>44</sup> իբրեւ զմի մարմին առակէ եւ մատնէ ի գերութիւն:

Հարց - **Եթէ ոչ Տեառն զարութեանց թողեալ էր<sup>45</sup> մեզ զաւակ<sup>46</sup> իբր զՍողոմ լինէաք եւ Գոմորոյ նմանէաք**<sup>47</sup>(Ա, 9):

Պատասխան - Նախ զայն ասէ, զի յորժամ գերեցան ի Բաբելոն, բազում մնացորդք մնացին եւ փախեան յԵգիպտոս:

Երկրորդ՝ զի ելեալքն յԵգիպտոսէ դառնացուցին զՏէր, որոց երդուաւ չմտանել ի հանգիստ, բայց Յեսու եւ Քաղէբ անցին զՅորդանան եւ ժառանգեցին զերկիրն, յօրինակ հաւատացելոցս ի Քրիստոս, որ անցանեն ընդ սուրբ<sup>48</sup> աւագանն եւ ժառանգեն զարքայութիւնն երկնից:

Երրորդ՝ զի յետ Քրիստոսի յորժամ գերեցաւ Երուսաղէմ ի Տիտոսէ, առաքեալքն եւ բազումք ի հաւատացելոցն զերծան ի գերութենէն եւ<sup>49</sup> եղեն մնացորդք հրէիցն, զոր մարգարէս շնորհօք գոհանայ զԱստուծոյ:

Չորրորդ՝ զի թէպէտ եւ<sup>50</sup> տիրասպանք եղեն եւ կորեաւ ազգն Իսրայէլի, այլ ի<sup>51</sup> յետին ժամանակն դառնալոյ են առ Տէր ամենեքեան, ըստ Պօղոսի. «Յորժամ լրումն հեթանոսաց

մտցէ, ապա ամենայն Իսրայէլ կեցցէ» (Հռոմ. ԺԱ 25): Եւ այս լինի յաւուրս Նեոհինն, որպէս ասէ Յոհանէս ի տեսիլն. «Տեսի<sup>52</sup> յազգէն Իսրայէլի հարիւր քառասունչորս հազար կնքեալս (Հմմտ. Յայտ Ի 2):

Հինգերորդ՝ զի վատթարելոցն ի մեղս ներողութիւնն Աստուծոյ երկայնամիտ լինի մինչեւ յետոյ զոջանա խղճի մտացն եւ ոչ մատնի անվախճան տանջանացն:

- Գ -

Հարց- **Լուացարուք, սրբեցարուք** զլ. Բ (Ա, 16ա): Ասաց յառաջ քան զայս թէ՛ «Ոչ ներեցից մեղաց ձերոց, յազեալ եմ ձեօք,<sup>53</sup> զպահս ձեր ատեցի, խունկ ձեր պիղծ են ինձ, զի ձեռք ձեր լի են արեամբ» (Հմմտ. Եսայի Ա 13-15), իսկ այժմ զիա՞րդ խրատ տայ յուղութեանն:

Պատասխան - Այս է պատճառն, զի սովոր է Աստուած սպառնալ մարդկան, զի յուղութեան անձ է ապաշխարել տայ<sup>54</sup>, եւ յորժամ դառնան՝ զփրկութեան յոյսն առաջի դնէ, որպէս Նինուացոցն արար: Չի յորժամ ի սպառնալեացն զարհուրեցան եւ ի լաւութիւն դարձան, յայնժամ վաղվադակի անցոյց զբարկութիւնն: Նոյնպէս եւ աստ ասէ. **լուացարուք սրբեցարուք**, այսինքն՝ ի ձեռն ապաշխարութեան զոջման եւ արտասուաց խոստովանութեան եւ այլոցն: Դարձեալ բանս այս զհոգեւոր մկրտութիւնն գուշակէ, որ մկրտիմք ի Հոգին Սուրբ եւ ի հուր, զի մաքրէ զաղտեղութիւնս մեղացն, որպէս ասէ Պետրոս<sup>55</sup>. «Ապաշխարեցէք եւ մկրտեցէք իւրաքանչիւր ոք ի<sup>56</sup> ձեռն յանուն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց» (Գործք Բ 38):

**Ընկեցէք զչարիս յանձանց ձերոց** (Ա, 16բ): Չի մի յորժամ լուիցեն<sup>57</sup> թէ՛ «լուացարուք, սրբեցարուք» կարծիցեն զհրեական լուացմունս, վասն որոյ յաւել թէ՛ **ի բաց ընկեցէք զչարիս յանձա[ն]ց**. զդիրութիւն առաքինութեան եւ զանձնիշխան ազատութիւնն ցուցանէ զի յոր կողմն եւ կամի՝ փոփոխի մարդ: Եւ զի յետ լուացման<sup>58</sup> մկրտութեանն՝ պարտ է զանձինս սուրբ պահել, ըստ կարողութեան: Վասն որոյ ասէ. **Ընկեցէք զչարիս յանձանց** Եւ Սողոմոն ասէ. «Ամենայն պահպանութեամբ պահեա զսիրտ քո» (Առակ. Դ 23):

**Առաջի աչաց իմոց** (Ա 16գ)<sup>59</sup>: Որպէս եւ Սողոմոն ասէ. «Առաջի ամենատես աչացն Աստուծոյ լիցի<sup>60</sup> քո սրբութիւնդ եւ ոչ որպէս կեղծաւորք, որ յաչս մարդկան ձեւանան եւ ի ներքոյ են զայլք յափշտակողք» (Հմմտ. Ա Կորնթ. Գ 13 Մարկ Է 15): Բերանով խօսին զխաղաղութիւն եւ սրտիւ նիւթն զնենգութիւն» (Հմմտ. Սաղմ. Գ 16 եւ Առակ Զ 18):

Հարց- Չի՞նչ է որ ասէ<sup>61</sup>. **Ուսարուք զբարիս գործել**»(Ա 17):

Պատասխան - Բազում ինչ հակառակ<sup>62</sup> կա բարեաց գործոց. նախ՝ բռնութիւն բնութեանս: Երկրորդ՝ ծուլութիւն անձնիշխանութեանս: Երրորդ՝ խաբէութիւն դիւստ:

Չորրորդ՝ ազահութիւն: Վասն որոյ թէ որ կամեացի գերծանել յայսցանէ պարտ է, գլօժարութիւն կամացն ուղղել առ<sup>63</sup> բարին եւ յԱստուծոյ խնդրել զօգնականութիւն, ըստ Դաւթի<sup>64</sup>. «Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեացէ, որ արար» (Սղմ. ճԻ 2):

**Խնդրեցէք զիրաւունս** (Ա 17ա). Չորս իրք թիւրէ զիրաւունս<sup>65</sup> դատաստանին. Նախ՝ կաշառքն, երկրորդ՝ ակնառութիւն, երրորդ՝ երկիւղն, չորրորդ՝ տգիտութիւն: Արտաքոյ սոցայ ուղիղ լինի<sup>66</sup> դատաստանն: Բայց են ոմանք, որ զվճիռն ոչ հատանեն: Վասն այնորիկ<sup>67</sup> ի վերայ բերէ ասելով՝ **փրկեցէք զգրկեալն** (Ա 17բ):

- Գ -

Հարց - **Իշխանք ձեր գողակիցք են գողոց** (Ա, 23):

Պատասխան - Նախ՝ զայն ասէ, զի որք<sup>68</sup> ընդ արծաթն պղինձ խառնեն եւ ընդ զինին՝ ջուր եւ այլք զչափ եւ զկշիռն<sup>69</sup> թիւրեն, եւ իշխանքն առնուն ի նոցանէ կաշառս եւ թոյլ տան՝ կցորդ լինին գողոց: Այս ամենեւին դժնդակ չար է իշխանացն, զի գոր կարճել պարտ էր, այլ ամեցուցանեն: Եւ զի յայսցանէ լինի գրկումն աղքատաց եւ կռիւ եւ կործանումն քաղաքաց եւ աթոռոց:

Երկրորդ՝ զի իշխանն թէ բարի է գործով եւ թէ չար իշխեցեալքն ամենայն զնոյն ուսանին, որպէս ասէ Առակն, թէ<sup>70</sup> «Թագաւոր, որ հաւանի անօրէնութեան՝ ամենեքեան, որ ընդ նովաւ են՝ անօրէնք են»<sup>71</sup> (Առակ. ԻԹ 12), զի թէ արմատ ծառոյն գօս է՝ ամենայն ճիւղքն եւ ստեղունքն նմանապէս գօսանան: Յիրաւի ապա մարգարէս կցորդ դնէ զիշխանն մեղաց ժողովրդեանն, զի ի նմանէ ուսան եւ համարձակեցան:

Երրորդ՝ **իշխանս**<sup>72</sup> դարձեալ զքահանայս եւ զառաջնորդ հրէիցն ասէ, որք գողակիցք են գող աշակերտին Յուդայի եւ ի միասին խորհեցան զսպանումն Տեառն: Դարձեալ զիտելի է. զի իշխանք, որք են դատաւորք, վասն չորից մեղաց առաւել պատժին, զորս<sup>73</sup> աստ թուէ մարգարէս. Նախ՝ զի ոմանք դատաւորք, որք հրաւիրեն զմարդիկ ի վերայ անմեղաց գուր ասել եւ քարշել ի դատաստան, զոր<sup>74</sup> ի ժամանակիս բազումս տեսանենք, վասն որոյ ասէ «**գողակիցք են գողոց**» Երկրորդ՝ զի են որ կաշառ առնուն, որպէս ասէ, սիրեն զկաշառս: Երրորդ՝ զի են որք նենգ եւ ոխ ունին առ մարդս եւ ի ժամ դատաստանին յայտնեն, վասն որոյ ասէ «վրիժագործք»: Չորրորդ՝ զի ոմանք աղաղակի ականջ ոչ դնեն եւ ոչ դատաստան առնեն: Վասն որոյ ասէ՝ որբոց եւ այրեաց ունկնն ոչ դնեն եւ իրաւունս ոչ առնեն:

Երեք են պատճառք շինութեան<sup>75</sup> քաղաքի.

Նախ՝ ազնիւ<sup>76</sup> բարեպաշտութիւնն իշխանին: Երկրորդ՝ բարեմիտ խորհրդականութիւն խրատատուի<sup>77</sup> նորին: Երրորդ՝ ամենեւին հնազանդութիւն<sup>78</sup> իշխեցելոցն եւ ռամիկ ժողովրդեան, եւ սոքօք կատարեալ շինութիւն է: Նոյնպէս եւ երիս իրս պիտոյ է յառողջութիւն հիւանդին. նախ՝ ճարտար բժիշկն: Երկրորդ՝ հնազանդութիւն<sup>79</sup> հիւանդին, որ

զինչ դեղ տա՝ ըմպէ: Երրորդ՝ նիւթք բժշկական դեղոցն, զի առ ձեռն իցէ: Ի սոցանէ թէ մինն պակաս լինի հիւանդ՝ ոչ առողջանա, նոյնպէս եւ զվերոյ ասացեալսդ<sup>80</sup> իմա: Եւ կոչեսջիր քաղաք արդարութեան մայրաքաղաքաց հաւատարիմ Սիոն ասէ, հմմտ- Կ 14) եւ ոչ երբէք կոչեցաւ Երուսաղէմ քաղաք արդարութեան: Ասէ սուրբն Յոհան Ոսկեբերան<sup>81</sup>. «Թպէտ եւ<sup>82</sup> անուամբ ոչ կոչեցաւ, այլ գործով ճշմարտութեանն կոչեցաւ», այսինքն՝ զի փոխեցաւ ի մեղաց յարդարութիւն: Եւ զգուշութեամբ պահեա զբանդ, զի յորժամ հարցանէ հրեայն, թէ՛ Քրիստոսն<sup>83</sup> այն<sup>84</sup> է, որ ի Մարիամայ ծնաւ. իսկ նա Էմանուէլ<sup>85</sup> ոչ կոչեցաւ<sup>86</sup>, զի ասէ Եսայի, թէ. **Էմանուէլ կոչեսցի** (Է, 14): Պատասխանեա նմա, որպէս զքաղաքն արդարութեան, թպէտ անուամբ ոչ կոչեցաւ Էմանուէլ, այլ ի յարդեանց գործոցն յայտնեցաւ Էմանուէլ զոլն, այսինքն՝ «Բոլոր անօրէնութեամբն կատարեաց եւ արար զփրկութիւն եւ համբարձաւ առ Հայր» (Մարկ. ԺՁ 19):

Հարց. Չի՞նչ է **Քաջագատին** կամ **միագատին**:

Պատասխան. Որպէս ասեն ոմանք, կամ զուժգին արիութիւնն նշանակէ<sup>87</sup>:

Հարց - Չի՞նչ է **Դժոխք** (Ե 14):

Պատասխան - **Դժոխք** է տեղի դժուարին, թշուառացելոց ոգոյ տխուր կապարան<sup>88</sup>:

**Եւ եղև յամին, յորում մեռաւ Ոգիա արքա տեսի** (Ձ 1): Ոգիա բարեպաշտ թագաւոր էր եւ բազում ողորմութիւնս<sup>89</sup> գործեաց, որպէս պատմէ Չորրորդ թագաւորութիւնքն<sup>90</sup> եւ զի համարձակեցաւ<sup>91</sup> խունկ արկանել ի տաճարն, եւ բորոտացաւ եւ ժողովորդն անփոյթ արար զնմանէ, վասն որոյ բարկացաւ Աստուած եւ արգել զտեսիլս<sup>92</sup> մարգարէիցն, եւ ոչ ումէք տայր<sup>93</sup> պատասխանի: Եւ յորժամ<sup>94</sup> մեռաւ Ոգիա, ապա երեւեցաւ տեսիլս այս<sup>95</sup>:

Հարց - Չի՞նչ է որ ասէ Յոհաննէս<sup>96</sup> - «զԱստուած ոչ որ ետես երբեք» (Յովի. Ա 18), իսկ մարգարէն Եսայի **Տեսի զՏէրն** ասէ (Ձ 1):

Պատասխան - Չեն հակառակ միմեանց, զի ասելն «զԱստուած ոչ որ ետես», այսինքն՝ զէութիւն բնութեանն<sup>97</sup> Աստուծոյ: Չի ոչ որ ի յեղականացս<sup>98</sup> տեսանել կարող է<sup>99</sup>, զի տեսութիւն մարգարէիցն<sup>100</sup> բովանդակելի է: Իսկ Աստուած անբովանդակելի է բնութեամբ<sup>101</sup>: Բայց<sup>102</sup> մարգարէս ետես, որքան կար է մարդոյ, այլ<sup>103</sup> կերպարանաւ եւ նմանութեամբ: Ուստի յայտ է, զի ասէ. **Տեսի զՏէրն նստեալ** (Ձ, 1), զի Աստուծոյ ոչ է տեղի, զի անբովանդակելի է եւ ոչ ասի **նստել** նմա<sup>104</sup>:

- Ե -

Եւ զի՞նչ է **նստելն**<sup>105</sup>. Նախ՝ զխոնարհելն եւ զիջանելն առ մեզ նշանակէ: Երկրորդ՝ զհաստատ եւ զանեղծ եւ զանփոփոխ էութիւնն Աստուծոյ նշանակէ, որպէս ասէ Երեմիա. «Մէք կորնչիմք եւ Դու նստիս յաիտեան» (Հմմտ. Ողբ Ե 19): Երրորդ՝ «զհանգիստն» աստուածային կամացն նշանակէ ի սուրբս ըստ այնմ. **Ես ո՞ հանգեայց, թէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս** եւ այլն՝ (ԿՁ 2): Չորրորդ՝ նստիլն յաթոռն զդատելն եւ զպատժելն նշանակէ, ըստ

այնմ Նստար յաթոռ դատաւորդ արդարութեան» (Սղմ- Թ 5): Հինգերորդ՝ նստելն յաթոռ բարձր եւ վերացեալ զանհաս եւ զգերամբարձեալ<sup>106</sup> քագաւորութիւնն նշանակէ ի վերայ ամենայն արարածոց, զոր յայտնէ սերովբէիցն<sup>107</sup> շուրջ կեալն<sup>108</sup> ահիւ: Ըստ այնմ՝ «Թագաւոր մեծ ի վերայ երկրի Աստուած է» (Սղմ- ԽՁ 3):

Իսկ ասելն՝ Լի էր տաճարն փառաօք նորա (Ձ 1). նախ՝ փառք զագրումն սքանչելեացն ասէ:

Երկրորդ՝ փառք լոյսն է, ըստ առաքելոյ. «Այլ փառք արեգականն եւ այլ փառք լուսնի» (Ա Կորնթ. ԺԵ 41): Երրորդ՝ զգերապայծառ աստուածային լոյսն կոչէ: Չորրորդ՝ «Փառք» զաստուածավայելուչ գեղեցկութիւնն ասէ: Հինգերորդ՝ «Փառք» զոր ի տաճարին<sup>109</sup> զշնորհս<sup>110</sup> Հոգոյն Սրբոյ<sup>111</sup> իբր զամպ հովանի լինէր ի վերայ սեղանոյն:

Հարց - Ձի՞նչ նշանակեն թելքն առ անմարմինս:

Պատասխան - Նախ՝ զերագութիւն նոցա ցուցանէ եւ զփոյթն ի հրամանս Աստուծոյ առ մարդիկ:

Երկրորդ՝ զի բարձրացեալ են ի ստորնային խորհրդոցն<sup>112</sup>: Երրորդ՝ զպահպանութիւնն նոցա<sup>113</sup> ցուցանէ, որպէս Աստուծոյ, ասէ մարգարէն<sup>114</sup>. «Ծածկեցայց ընդ հովանեաւ թեւոց քոց» (Սղմ. ԺՁ 9): Իսկ վեց<sup>115</sup> թեւոցն **երկուք ծածկելն զերեսս եւ երկուքն զոտս եւ երկուքն թռուցեալ** (Ձ 2), նախ զայն ցուցանեն, թէ սկիզբն եւ վախճան<sup>116</sup> ի յԱստուած տեսանել անկար է, զի անսկիզբն եւ անվախճան է, այլ միջնորդաւ<sup>117</sup> ոմամբք, այսինքն՝ ի ձեռն օրինակաց զլինելութիւնս աշխարհիս տեսանենք: Դարձեալ զահագին եւ զսաստիկ երկիւղն ցուցանեն հայելն յԱստուած երեսաց եւ ոտից ծածկելն, որպէս մեք ի ճայթմանէ փայլատակմանց զարհուրիմք եւ ի վայր խոնարհեցուցանենք զգլուխս: Իսկ միջինն թելքն զմիշտ սերն, զոր ունին առ Աստուած անխոնարհ կամօք, որպէս ասացաք վասն թեւոցն: Իսկ աղաղակելն մի առ մի. նախ՝ ցուցանէ զպատկառանսն, որպէս մարդիկ ամաչելով ի մեծամեծաց<sup>118</sup> ոչ իշխեն առ դէմն կանգնել<sup>119</sup>, այլ մի յետ միոյ անցանեն: Դարձեալ զփառաբանութիւնն միւսն<sup>120</sup> երգէր եւ ի միւսն տայր ոչ թէ աշխատէին, այլ վասն կարգաւորութեան<sup>121</sup>: Իսկ երեքսրբեանն երգաբանութիւնն նախ՝ փառաբանութիւն է Աստուծոյ, զոր միշտ<sup>122</sup> մատուցանեն: Երկրորդ՝ մարգարէութիւն յաղագս<sup>123</sup> հանդերձեալ աստուածապաշտութեանս, որ լինելոց էր: Երրորդ՝ վկայութիւն հաստատ եւ անջրելի մերում կրօնիցս՝ դաւանելով զԱստուած երեք Անձնաւորութիւն եւ մի Տէրութիւն:

- Ձ -

Հարց - Ձի՞նչ է որ ասէ՝ **Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի** (Է 14ա)

Պատասխան - Չբանս զայս կամին հրէայքն հեռացնել<sup>124</sup> ի կուսական ծննդէն<sup>125</sup> Մօր Տեանն.





որպէս յորժամ ասեմք «գոյ» եւ «է»<sup>140</sup> եւ «խօսի» եւ «գնա»։ այսպիսիքս զմինն ցուցանեն։ Եւ յորժամ [չ]ասաց մարգարէն յայտնապէս, թէ՛ «Յղասցի ի Հոգոյն Սրբոյ» (Մտթ. Ա 18), որպէս Գաբրիէլ ատետաց։ Այս վասն երկու պատճառի. Նախ՝ զի զգուշացաւ մարգարէն ի չար հրէիցն, զի մի այրեսցեն զգիրս, զոր սովոր էին առնել։ Երկրորդ՝ զի յիրացն ցուցանէ, զի յորժամ կոյսն յղասցի առանց առն ուստի<sup>o</sup> է, թէ ոչ՝ ի Հոգոյն Սրբոյ։ Իսկ յորժամ լուիցես, թէ ի Հոգոյն Սրբոյ յղացաւ՝ մի՛ խառնակումն ինչ անմարմնոյն կարծիցես, այլ որպէս առաջին Ադամն յԱստուծոյ եւ ի<sup>141</sup> հողոյ ոչ խառնակութեամբ, այլ՝ արարչութեամբ, նոյնպէս երկրորդ Ադամ՝ ի Հոգոյն Սրբոյ եւ ի Կուսէն։ **Եմմանուէլն** թարգմանի՝ ընդ մեզ Աստուած։ Ընդ մեզ լինելն Աստուծոյ ոչ տեղեալ էր, զի երկինք եւ երկիրս լի է Նովալ եւ ոչ խնամօք, որպէս ընդ Մովսիսի եւ ընդ<sup>142</sup> Յեսուայ եւ առաքելոցն, այլ ընդ մեզ լինելն մարդանալն եւ մարմնով երեւել ի վերայ երկրի, որպէս ասէ Բարուք. «Աստուած մեր, որում չիք ոք նման, յետ այսորիկ ի յերկրի երեւեսցի եւ ընդ մարդկան շրջեսցի» (Բար. Գ 38)։

Նախ՝ այն է, որ Բանն Աստուած ի բնութիւնս միացաւ եւ Աստուած մարդ եղել։ Ըստ մերում կերպիս ըստ այնմ թէ՛ «Բանն մարմին եղել» (Յովի« Ա 14)։ Երկրորդ՝ զի զբնութեան օրէնսն ըստ մերում կերպիս<sup>143</sup> կատարեաց եւ «ի չափ հասակի եկն», (Եփես. Գ 13), այսինքն՝ յղանալն յարգանդի, իննամսեա ժուժկալելն, ծնանիլն<sup>144</sup>, աճելն եւ այլն ամենայն։ Երրորդ՝ զի ընդ մեզ շրջեցաւ եւ խօսակցեցաւ<sup>145</sup> եւ եկեր ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս<sup>146</sup> եւ զանազան բժշկութեամբ, զորս<sup>147</sup> առնէր ի մեզ եւ ամենայն բարութեամբ եւ շնորհօք ելից զմեզ, այս է թարգմանութիւն Եմմանուէլին։ Եւ երբ կոչեցաւ Եմմանուէլ այս է յելից իրացն, զի թէպէտ անուամբ ոչ<sup>148</sup> կոչեցաւ, սակայն ի տնօրէնութեանցն, զոր կատարեաց եւ արար փրկութիւն մեզ, յայտնապէս ծանուցաւ, թէ Աստուած է ճշմարիտ։

**Եղ եւ մեղր կերիցէ** (Է 15)։ Այս է, զի ստուգապէս մարդ եղել հաստատէ զայս կերակրովն, որ տղայոցն էր վայելչական, վասն զի ծնեալ Եմմանուէլն ոչ սոսկ մարդ<sup>149</sup> էր եւ ոչ միայն Աստուած, այլ Աստուած մարդացեալ եւ ի մարմին ոչ փոփոխեալ \*։ Վասն այն երբեմն զաստուածայինսն ճառէ, որպէս ի Կուսէ ծնանելն եւ Եմմանուէլ կոչելն եւ երբեմն՝ զմարդկայինս, որպէս կերակուրն, որ զմեզ է վայելչական, զի մի՛ կարծեսցի առ<sup>150</sup> աչօք լինել մարդեղութիւն<sup>151</sup>, որպէս ասացին Մարկիանոս եւ Վաղէնտիանոս<sup>152</sup> հերձուածողքն։

**Եւ մինչ չեւ ծանուցեալ կամ ախորժեալ զչարութիւնն՝ ընտրեսցէ զբարին** (Է 16)։ Եւ այս եւս ցուցանէ զառաւել բարձրութիւն Նորա, զի կերակրի, վասն զի մարդ էր, եւ ի վեր մնա, քան զմեղս, վասն զի Աստուած էր նոյն Ինքն, զի կերակրովն<sup>153</sup> հասարակ էր, ըստ մեզ։ Իսկ ի բնէ անդուստ անփորձ մնալ ի չարէ։ Իսկ զբնականէն եւ զգործնականէն այս յատուկ է աստուածացեալ մարմնոյն եւ առաւել է քան զմարդկայինս<sup>154</sup>, զի մարդիկ յետ չարեացն

\* Համապատասխանում է ս. Իրինեոսի, Հովիան Ոսկեբերանի, Բարսեղ Կեսարացու եւ այլ հայրերի մեկնաբանությանը. «••» > 1/157 · «••» / # . 15 ; 7 #

ապա զղջանան եւ գործեն զբարիս: Իսկ նա ի բնէ ընտրեաց զբարին եւ անարգեաց զչարն, որպէս ինքն ասէր. «Ո՞վ յանդիմանեսցէ Ձիս վասն մեղաց» (Յովի. Ը 46), եւ մարգարէս ասէ. «Ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա» (Մղմ. ԼԱ 2):

Ասորիք՝ Դամասկոս է եւ շրջկայք նորին: Իսկ Ասորեստան՝ Բաբելոն է ասեն ոմանք<sup>155</sup>: Այլ այս է ուղիղն, զի Ասորեստան Միջագետքն<sup>156</sup> է, որ ի<sup>157</sup> մէջ Դկլատա եւ Եփրատու է, որ է Ուռհա, Մօսլ եւ այլքն: Իսկ թէ ուրէք Բաբելացին Ասորեստան<sup>158</sup> կոչի, այն է պատճառն, զի Բաբելացոց թագաւորն եւ ի վերայ Ասորեստանեայցն<sup>159</sup> տիրէր: Եւ Ասորեստան այն է ի վերայ Բաբելոնի<sup>160</sup> տիրէր, վասն այն միմեանց անուամբ կոչին: Ասեն ոմանք<sup>161</sup> Նաքաւով է անուն փարաւոնին, որ զբարեպաշտ թագաւորն<sup>162</sup> եսպան զՅովսիայ: Եւ դարձեալ յետ երեք ամի զՅովաքագ որդի նորա գերի տարաւ յԵգիպտոս եւ փոխանակ նորա թագաւոր եղ<sup>163</sup> զՅովակիմ եղբայր նորա, յորոյ ի տաս ամի թագաւորութեանն եկն Նաբուգոդոնոսոր յԵրուսաղէմ եւ գերեաց զառաջինն եւ ապա երկրորդ եւ երրորդ անգամ դարձեալ գերեաց մինչեւ քակեաց զտաճարն եւ զսուրբ քաղաքն Երուսաղէմ:

Հարց - Չի՞նչ է, որ ասէ. **Ընդ մեզ Աստուած, զիտացէք, հեթանոսք** (Ը 9):

Պատասխան - Չքանս զայս զանազան մեկնեն վարդապետք: Չի Եփրեմ առնու ի վերայ Հռասոնի արքային Դամասկացոց եւ Փակէէ թագաւորին Սամարացոց, որք պաշարեցին զԵրուսաղէմ յաւուրս Աքագու եւ ոչ կարացին ինչ<sup>164</sup> վնասել նմա\* : Վասն որոյ յիշեն զԵմմանուէլն, որ նշան խաղաղութեան եւ փրկութեան ետ նոցա մարգարէն յերեսաց երկուց թագաւորաց խանձողացն<sup>165</sup> ծխելոց: Իսկ Ոսկերեբանն մեկնէ ի վերայ Հռափսակայ<sup>166</sup>, որ պաշարեաց զԵրուսաղէմ հարիւր ութսունհինգ հազարով յաւուրս Եզեկիա եւ պարտեցան ի հրեշտակէն, որ սատակեաց զամենեսեան եւ խորհուրդ նոցա ցրուեցաւ, որք կամէին գերել եւ քակել զԵրուսաղէմ եւ համբաւ նոցա լսելի եղեւ մինչեւ ի ծագս երկրի: Վասն որոյ զպատճառ յաղթութեանն<sup>167</sup> յարաժամ պարծին. ոչ զինուք եւ<sup>168</sup> պատերազմաւ եղեւ, այլ Աստուծոյ օգնականութեամբն, զի ընդ մեզ է Աստուած\*\* : Իսկ Կիւրեղ մեկնէ ի խորհուրդ<sup>169</sup> տնօրէնութեանն Քրիստոսի, զի ընդ մեզ եղեւ Բանն Աստուած մարդեղութեամբն\*\*\* : Եւ ի դէմս առաքելոցն լինէին<sup>170</sup> ասացեալ բանքս՝ իբր թէ նոքա ասեն. Ընդ մեզ է Աստուած: Իսկ հեթանոսաց խնդրի<sup>171</sup> երկու ինչ- Նախ՝ ճանաչել զխորհուրդ տնօրէնութեանն Քրիստոսի. այս է **զիտացէք հեթանոսք**: Եւ երկրորդ՝ հնազանդիլ ուսուցչացն, այսինքն՝ առաքելոցն. այս է **պարտեցարութն**: **Լսելի արարէք մինչեւ ծագս** (Ը 9). այս է, զի ընդ ամենայն երկրի ել բարբառ նոցա. զայս առ հեթանոսն ասէ: Եւ դարձուցանէ առ հրէայսն զբանսն: **Հզօրացեալքդ պարտեցարութք**, այսինքն՝ զի հզօրացն եւ կամեցան սպանանել

\*Տե՛ս Զմմտ. Թագ. ԺԵ 37, ԺԶ 5-10, Եսայի Է 1:

\*\*Տե՛ս և Զմմտ. Դ Թագ. ԺԹ 17, Եսայի ԼԶ. Յովիան Ոսկերեբան, Մեկն. Եսայեայ, մարգարտութեան, Վենետիկ, 1880, էջ 101:

«զԱռաջնորդն կենաց»՝ (Գործք Գ 15) ոչ գիտեին, թե կենդանի է յափտեան<sup>172</sup>: Այժմ ասե՛ք **«պարտեցարութիւն»**, այսինքն՝ հաւատացէք ի նա: Ջի<sup>173</sup> թեպէտ եւ դարձեալ զօրանայք, այսինքն՝ ի վերայ աշակերտացն, զոր եւ զան հարին եւ պատուիրեցին մի<sup>174</sup> խօսել յանունն յայն: Դարձեալ ի պարտութիւն մատնեսցիք, այսինքն՝ ի ձեռն թագաւորին հռոմայեցոց<sup>175</sup>, որ վարեաց<sup>176</sup> զնոսա ի գերութիւն: Եւ չար խորհուրդ նոցա, զոր ունէին առ հավատացեալսն, ցրուեցաւ եւ ոչ հաստատեցաւ:

**Յերկիւղէ նոցա մի երկիցէք** (Ը 12). մի երկնչիք դուք ի նոցանէ, որ պատուիրեցին չխօսել յանունն յայն<sup>177</sup>, այլ ի Տեառնէ երկերուք եւ զՏէր Քրիստոսն սուրբ եւ փառաւոր արարէք: Դարձեալ ոմանք հաւատացեալք ի Քրիստոս երկնչէին յօրինացն եւ զթլփատութիւն եւ զօրէնսն եւս պահէին: Ասէ առ նոսա, թէ մի երկնչիք յօրինացն, այլ՝ ի Քրիստոսէ, եւ զնա սուրբ եւ փառաւոր արարէք յանձինս ձեր եւ ոչ զօրէնսն ի նա յուսացից<sup>178</sup> սրբել ի մեղաց եւ փրկիլ եւ ոչ յօրէնսն, որ ոչ կարէ փրկել, զի լրումն օրինացն Քրիստոս է (Հմմտ. Հռովմ. ԺԳ 10): Ահաւասիկ.

**Եւ եւ մանկունք իմ զորս**<sup>179</sup> **ես ինձ Աստուած** (Ը 18): Եթէ նշանաւ Կուսին ծննդեամբն փրկեցի Երուսաղէմ: Եւ եթէ մարգարէ կնոջն ծննդեամբն վաղվաղակի աւար հարկանելոց է զԵփրեմեանսն ի ձեռն Տեառն եմք ամենեքեան: Դարձեալ մանկունք, զորս<sup>180</sup> **ես Աստուած**<sup>181</sup> եւ ոչ բնութիւնս՝ զԺողովուրդն ասէ: Իսկ «ահաւասիկն» անդադրութեան եւ նուիրականէ, զոր մարգարէս զինքն եւ զԺողովուրդն կամացն Աստուծոյ յանձնէ, եթէ ի պահպանութիւն եւ եթէ ի գերութիւն որպէս եւ մարգարէն Դաւիթ ասէր. Ահաւասիկ կամ եղիցի որպէս Տեառն է հաճոյ<sup>182</sup>, եւ Յոբ ասէր. «Տէր ետ եւ Տէր էառ<sup>183</sup>, եղիցին կամք Տեառն օրհնեալ»<sup>184</sup> (Հռովմ. Ը 15, 17): Դարձեալ ի դիմաց Քրիստոսի է բանս, որ եղև մեզ եղբայր ծնանելով<sup>185</sup> ի կուսական արգանդէ եւ ի Հոգոյն Սրբոյ եւ ետ մեզ զհոգին իւր ծնանելով Հոգով Սրբով ի կոյս աւագանէն, «Որով աղաղակեմք Աբբա<sup>186</sup> Հայր, զի եղաք եղբայր եւ ժառանգակից Քրիստոսի» (Յոբ Ա 21): Այլ թեպէտ եղբայր է մեզ ըստ մարմնոյն, այլ ոչ ուրանամք զփառս նորա, զի Աստուած է Եւ հայր հանդերձելոյ աշխարհին, վասն որոյ զուարճանայ<sup>187</sup> ի վերայ մանկացս եւ իբրեւ մատամբ ցուցանելով ասէ. «առ Հայր եւ Աստուած մեր» թէ՛ **Ահաւասիկ ես եւ մանկունք իմ, զոր ետուր ինձ ժառանգութիւն** (Ը, 18), որպէս եւ յԱւետարանին ասէ. «Բո էին եւ ինձ ետուր զնոսա» ( Յովհ. ԺԷ 9): «Ժողովուրդ, որ նստէր ի խաւարի ետես զլոյս<sup>188</sup> մեծ» (Մտք. Գ 16): Հրեայքն ունէին զփոքր լոյս օրինացն, մեծ լոյս ծագեցաւ նոցա՝ Քրիստոս, որ է «Արեգակն արդարութեան» (Մաղ. Գ 2):

**Եւ որ բնակեալ էք ի ստուերս մահու լոյս ծագեսցէ ձեզ** (Թ 2): Հեթանոսք, որ էին ընդ ստուերաւ կռապաշտութեան եւ մեղաց, սոցա ոչ ասէ մեծ լոյս, այլ<sup>189</sup> միահաղոյն լոյս

\*\*\* Տե՛ս «Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրի ի մեկնութենէ մարգարէին Եսայեայ», ՄՍ ձեռ. 1525, ք. 56ար:

ծագեալ նոցա Քրիստոս: Չոր Աւետարանիչն<sup>190</sup> ճշմարիտ լոյս ասէ. «Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ» ( Յովհ. Ա 9), այսինքն՝ զի լուսաւորեաց զնոսա ճշմարիտ աստուածգիտութեամբն:

**Այլ նորա կամէին, թէ հրձիգ<sup>191</sup> լեալ էին. զի Մանուկ ծնաւ մեզ, Որդի տուաւ մեզ (Թ 6):** Բազում ուրէք մարգարէքն<sup>192</sup> զհանդերձեալ խորհուրդն Քրիստոսի ի մերձակա իրացն գուշակեցին: Եւ այս վասն բազում պատճառի. նախ՝ զի մի անհամ, այլ ախորժելի լիցի բանն: Երկրորդ՝ զի յարինակէն յոյժ հաւատալի եղիցի<sup>193</sup>: Երրորդ՝ զի իբրեւ<sup>194</sup> վարագուրաւ ծածուկ մնասցէ մինչեւ բացցէ Եմանուէլն<sup>195</sup> զալստեամբն իւր: Որպէս Մովսէս<sup>196</sup> գուշակելովն զմարդանալն Աստուծոյ<sup>197</sup> ի պատճառս դիւթիցն ի կախարդացն ասէր ժողովրդեանն, թէ՛ մի՛ լսէք զնոցա կախարդութիւնն<sup>198</sup>. «Այլ մարգարէ յարուցէ ձեզ Տէր Աստուած<sup>199</sup> յեղբարց ձերոց. նմա լուիջիք»<sup>200</sup> (Բ օր ԺԸ 18): Եւ ի պատճառս խստասրտութեանն փարատնի ընկէց զգաւազան յերկրի եւ եղեւ օձ, որ նշանակէր զԲանին մարմին լինելն: Եւ ի պատճառս խուժանին Կորխեայ<sup>201</sup>. զգաւազան եղ ի խորանն՝ եւ<sup>202</sup> ծաղկեցաւ, որ նշանակէր զանսերմն ծնունդն Քրիստոսի: Եւ ինքն<sup>203</sup> մարգարէն Եսայի ի պատճառս թերահաւատութեանն Աքազու ետ նշան. **Եթէ կոյսն յղասցի եւ ծնցի Որդի** (Է, 14): Նոյնպէս եւ աստ առնելով զնախանձ տանն Եփրեմի, որ եմ տաս ցեղքն ընդ տանն Յուդա եւ նշանակէ զնախանձաբորբոք՝ լինելն հրէից ընդ Տեառն մերոյ Յիսուսի, զոր ի մտանելն մոգուցն<sup>204</sup> ի քաղաքն ասէ. «Խռովեցաւ Հերովդէս եւ ամենայն Երուսաղէմ ընդ նմա» (Մտք. Բ 3): **Կամէին, ասէ<sup>205</sup> հրձիգ լեալ:** Վասն է՞ր **կամէին.** զի եղծ զնոսա ծնեալ մանուկն մեզ: «Չի թէպէտ նոցա, ասէ Պօղոս, ծնեալ զմանուկն, ըստ այնմ. Որոց կտակարանքն որոց հարքն, յորոց եւ Քրիստոս» (Հռովմ. Թ 5) այլ մեզ՝ հաւատացելոցս եղեւ Տէր եւ փրկիչ ծնեալ մանուկն: Եւ տես, զի նախ **Մանուկ** ասէ, որ է մարմնանալն եւ ապա **Որդի**՝ զՄիածին Բանն, որ յերթնէ Հօր, վասն զի մարդեղութեամբն ծանեաք զաստուածութիւն Նորա: Դարձեալ ասելն<sup>206</sup> ցուցանէ, թէ ոչ վասն իւր ինչ էր մարդանալն, այլ վասն մեր, զի զմեզ յառաջին փառսն նորոգեսցէ: Դարձեալ ոմանք ասեն, թէ ինչ ի բանս մարգարէութեան, որ վասն Եզեկիայի է, զոր ոչ յարմարի ամենայն<sup>207</sup> կարգ բանիս, այլ սակայն թէպէտ<sup>208</sup> լինի ինչ ի բանէս, որ թէպէտ ի դէմս Եզեկիա իցէ, այլ նա տիպ էր<sup>209</sup> եւ օրինակ էր Որդւոյն իւրոյ Քրիստոսի, որ յազգէ նորա մեզ<sup>210</sup> ծնանելոց էր: Որոյ իշխանութիւն իւր<sup>211</sup> ի վերայ ուսոյց իւրոց: Այս ոչ յարմարի մարդկան ումէք, որ զամենայն ինչ պարգեւօք ունին, այլ միայն ծնիցելոյ մանկանն Յիսուսի, որ բնութեամբ եւ յինքնէն ունի զտիրելն եւ զիշխանութիւնն ամենայնի: Դարձեալ զԽաչն ասի իշխանութիւն Նորա, որ երարձ ի վերայ ուսոյն եւ ել ի Գողգոթա, որով տիրեաց բոլոր էիցս ամենայնի, ըստ այնմ. «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի» ( Մտք. ԻԸ 18): Դարձեալ

---

\* Չիք ՆԲԳ:

բանս ի մերոյ իրացս զմեզ ուսուցանէ, զի որպէս զօրութիւնս յուս եւ ի բազուկս է<sup>212</sup>: Իսկ զօրութիւն եւ բազուկ Քրիստոսս է Աստուծոյ Հօր եւ զօրութեամբ իւրով տիրէ ամենայնի: **Անուն նորա կոչի. Մեծի խորհրդոյ Հրեշտակ** (Թ 6): **Մեծ խորհուրդ** այն է, որ ծանոյց մեզ զհայրական անուն Աստուծոյ, թէ Հայր է ըստ այնմ. «Ծանուցի զԱնուն քո մարդկան» (Հովհ. ԺԷ 26): Դարձեալ մեծ խորհուրդ այն է, որ կամեցաւ զհեթանոսս մարմնակից եւ ժառանգակից առնել Որդոյ իւրոյ եւ այս յայտնեցաւ մարդեղութեամբն Քրիստոսի, որպէս ասէ Պօղոս. «Յայտնեաց մեզ խորհուրդս կամաց իւրոց» (Եփես. Ա 9): Դարձեալ մեծ խորհուրդն այն է, որ խորհեցաւ հայր ընդ Որդի եւ ընդ Հոգի, զի ի հոգօք ստեղծեալ մարմինս նստուցանելով զերագոյն հրեշտակաց ի փառս Աստուածութեանն, զորս<sup>213</sup> յանձնէ առ Որդի եւ կատարեաց, այլ ոչ եթէ ի հրեշտակս փոխեցաւ, այլ զի զգործս<sup>214</sup> հրեշտակի արար, այսինքն՝ զի սպասատրեաց եւ զծածուկ եւ զմեծ խորհուրդն Աստուծոյ Բանի պատմեաց մեզ, վասն այն «**հրեշտակ**» անուանեցաւ: Ըստ այնմ, «Ձոր ինչ լուս ի հարե իմմէ<sup>215</sup>, ծանուցի ձեզ» ( Յովհ. ԺԵ 15): **Սքանչելի խորհրդակից**. այսու զհաւասարութիւն ընդ Հօր եւ ընդ Հոգոյն Սրբոյ ծանուցանէ: Ձի յեղելոցս ոչ ոք է նմա խորհրդակից ըստ մարգարէին: Ո՞ եղեւ նմա խորհրդակից: Իսկ Որդին խորհրդակից է Հայր եւ Հոգոյ, ապա ուրեմն<sup>216</sup> հաւասար է նոցա: Դարձեալ կոչի անուն նորա **սքանչելի**, ըստ այնմ, որ ասաց առ Յակոբ. «Անուն իմ սքանչելի է» ( Բ. Օր ԻԸ 58) եւ Դաւիթ երգէ. «Տէր, Տէր մեր սքանչելի է անուն քո» ( Սղմ. Ը 2): Եւ զի սքանչելի է անուն Քրիստոսի կրկին կերպի յայտնի է. Նախ՝ զի միայն անուն նորա ընդ բոլոր տիեզերս, զհաւար կռապաշտութեանն խափանեաց եւ ի լոյս աստուածգիտութեան էած զմարդիկ: Երկրորդ<sup>217</sup> զի յանունն Քրիստոսի կաղն վազէր, եւ Տաբիթայն յառնէր, եւ զամենայն մեծամեծ սքանչելիս կատարէր:

**Աստուած հօր: Հօրն** անջրպետ է ի մեջ կոռցն, զի կուռքն կոչէին աստուածս, այլ տկարք էին, զի ոտս ունէին<sup>218</sup> եւ ոչ զնան եւ այլն: Իսկ ճշմարիտ Աստուածն Տէր մեր Յիսուս Քրիստոս «Տէր կարող եւ Տէր հօր» (Սղմ. ԻԳ 7): Որ հօրացաւ ի վերայ կարծեալ հօրին եւ կապեաց զնա եւ զերեաց զգերութիւն:

**Իշխան**. իշխանն ոչ է ընդ իշխանութեամբ, եւ զիա՞րդ ասեն ոմանք, թէ ընդ իշխանութեամբ է, զի մարգարէս իշխան անուանէ զնա եւ Դանիէլ. «Իշխանութիւն նորա յաւիտենական եւ ամենայն ազգք եւ լեզուք նմա ծառայեսցեն» (Դան. Գ 31, Է 27) ասէ:

**Հայր հանդերձելոյ աշխարհին, Հայր**, այսինքն՝ Ստեղծող եւ Արարիչ է հանդերձեալ կենացն: Եւ զիա՞րդ ասեն նոյն արեանոսքն, եթէ ոչ զիստէ զօրն զայն, զի արարիչ է, ասէ, աւուրն այն եւ որ ինչ ի նմա էն: Նախանձ Տեառն զօրութեանց արար զայս: Բաւականապէս ասաց զճառս<sup>219</sup> զմարդեղութեանն Քրիստոսի, այժմ ասէ զպատճառս մարդանալոյն:

**Նախանձ Տեառն արար** (Թ 7), ասէ, զի ետես որ վիշապն ապստամբ քարշեաց զպատկերն իր, այսինքն՝ զմարդկային ազգս եւ եղ ընդ հարկիւ ծառայութեան իւրոյ, վասն որոյ յիրաւի է նախանձ Տեառն, որ ի ձեռն Միածին Որդոյն ազատեաց զպատկերն իւր: Դարձեալ **նախանձ Տեառն**<sup>220</sup>, այսինքն՝ զուրբ եւ խնամք նորին արար զմարդանալ Միածնի իւրոյ: Եւ ոչ թէ ուղղութիւն կամ արժանատրութիւն մեր, ըստ այնմ. «Այնչափ սիրեաց Աստուած զաշխարհ մինչեւ զՄիածին Որդին ետ» (Յովհ. Գ 16): Դարձեալ հրեայքն<sup>221</sup> նախանձ արկին Աստուծոյ չաստուածովքն<sup>222</sup>, զի զպաշտօնն<sup>223</sup> Աստուծոյ դիւաց մատուցանէին եւ յետոյ զՈրդի նորա խաչեցին: Վասն որոյ եւ Աստուած նախանձ էարկ նոցա եւ դարձոյց զհեթանոսս ի կոռցն եւ էած յԱստուածպաշտութիւն: Չի նախանձ արկցէ նոցա: Ասէ Պաւղոս հռոմեացոց եւ Մովսէս ասէ<sup>224</sup>. «նոքա նախանձեցուցին զիս<sup>225</sup> չաստուածօքն, արդ, եւ ես նախանձեցուցից զնոսա յազգ անպիտան ( հմմտ. Հռոմ Ժ 19, ԼԲ 21):

- Է -

Հարց - Չի՞նչ է **Վիուկն** եւ այլն, որ ասէ<sup>226</sup> (Ը 19):

Պատասխան - Ոմանք ասեն թէ **Վիուկն** հարցողքն են<sup>227</sup>, որ լինէին<sup>228</sup> պաշտօնեայք կոռցն եւ ի նոցանէ, այսինքն՝ ի կոռցն հարցանէին զլինելոցն: **Գետնակոչն** այն է, որ ի ներքոյ կոռցն կամ ի ներքոյ ծառոց ծածուկ լինէր գետինն եւ յայնմանէ խօսէր դէմն, յորժամ եկն Աղէքսանդր թագաւոր ի մեհեան<sup>229</sup> արեգականն եւ լուսնին, եւ եհարց ի գետնակոչէն: Իսկ **գրախօսն** ընդ վայրախօսն է, որպէս գարընկեցք: Իսկ **որովայնակոչն** այն է, յորժամ սպանանեն զարջառ կամ զոչխար՝ ի սիրտն եւ ի թոքն եւ յայլսն դիւթեն զշարժմունս նոցա: Դարձեալ եւ<sup>230</sup> **Վիուկն** այն է, որ չար դէմն ի կանայս մտանէր եւ խօսէր ընդ որովայն նոցա: Իսկ այլ թարգմանիչքն<sup>231</sup> փոխանակ **Վիկաց զհաւագէտքն**<sup>232</sup> են գրեալք, այսինքն՝ որք զճայնս ծագուց եւ ազոռուց եւ զայլոցն դիւթեն: Եւ **գետնակոչն**<sup>233</sup> այն է, որ ասացաք, իսկ **գրախօսն եւ որովայնակոչն** այն է, որ դէմն մտանէր ի մեռեալն եւ նովաւ ընդ վայր եւ սուտ բարբառէր, վասն որոյ ասէ զինչ խնդրեցեն<sup>234</sup> վասն կենդանեաց ի մեռելոց անտի: **Հապա** բառ է երբեմն հորդորական, որպէս ասէ Յոր. «հապա վարուժանակք իմ», եւ երբեմն հեզմական, որպէս ասաց աստ մարգարէն<sup>235</sup>. «Հապա նախ զայդ արբ»:

- Ը -

Հարց- Չի՞նչ է, որ ասէ, **Եղիցի լոյսն Իսրայելի իբրեւ զհուր եւ սրբեսցէ զնոսա եւ այրեսցէ իբրեւ զխոի զանտառն** (Ժ, 17-18):

Պատասխան - Բանս այս զկորուստ զօրացն Հռափսակայ նշանակէ ի դուռն Երուսաղէմի, որ հուր բարկութեանն Աստուծոյ ճարակեաց զնոսա, զի **եւ հրէշտակն եւ սպան ի միում զհշերի հարիւր ութսունհինգ հազար զօրս** (ԼԷ 36)<sup>236</sup>. Նախ՝ այս է միտք բանիս- Եղիցի, ասէ,<sup>237</sup> պատգամն Աստուծոյ Իսրայելի իբրեւ զհուր եւ սրբեսցէ զարդարսն

իբրև զբոց եւ այրեսցէ զնոսա որպէս խռիւ: Երկրորդ՝ լոյս Տեառն է օրէնքն եւ լուսատրիչ է կատարողացն, ըստ այնմ «Օրէնք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց» ( Մղմ. ԺԸ 9): Այս լոյս Իսրայէլի հոյր եւ սատակիչ եղև թշնամոյն ի զիւր ժողովուրդն սրբեաց, այսինքն՝ զի իւր զատոյց, զի սուրբն ոչ միայն<sup>238</sup> արդարն է, այլ եւ նուիրեալն, այս երկրորդ կոչի: Ըստ այնմ. «Որ բանայ զարգանդ՝ սուրբ Տեառն կոչի» ( Դուկ. Բ 23), այսինքն՝ նուիրեալ Տեառն: Երրորդ՝ միտք Տէր մեր Յիսուս Քրիստոս լոյս Իսրայէլի եւ ծագեաց հեթանոսաց, ըստ այնմ «լոյս յայտնեցար»<sup>239</sup> եւ նոյն ինքն հոյր այրիչ բանասարկութիւնն, զի կորոյս զկռապաշտութիւնն եւ սրբեաց զմարդիկ հրով Հոգոյն եւ նուիրեաց Աստուծոյ Հօր: Չորրորդ՝ ջերմ ցանկութիւնն սիրոյն, որ առ Աստուած յորոց ի<sup>240</sup> յոգիս բորբոքի, լուսատրէ զնա գործովք բարեաց եւ զժանգ աղտեղի ցանկութեանց մաքրէ եւ ի բաց մերժէ, ըստ այնմ՝ «Լուսատր եւ անթառամ է ցանկութիւն իմաստութեան» (Իմաստ. Չ 13): Բան մի հակիրճ եւ համառօտ արդարութեամբ արասցէ Տէր ի վերայ ամենայն տիեզերաց. Նախ՝ զոչ ներելն եւ զոչ երկայնամտելն Աստուծոյ նշանակէ, այլ ի կարճոյ զվճիռն տալ: Երկրորդ՝ զհանդերձեալ օր դատաստանին ասէ, որ համառօտ լինելոց է, ըստ այնմ մի անգամ խօսեցաւ<sup>241</sup> Աստուած եւ այլն: Երրորդ՝ զԱւետարան յօրինացն զանագանէ<sup>242</sup>, զի օրէնքն Մովսիսի երկայնաբանիւք սակաւ ինչ օգտութիւն յայտ առնէր առակաւ եւ ստուերաւ: Իսկ աւետարանական բանս<sup>242ա</sup> յայտնի եւ կարճ ունի զճշմարտութիւնն, ըստ այնմ թէ. «խոստովանեցիս բերանով քով զՏէր Յիսուս եւ հաւատասցես<sup>243</sup> ի սրտի քում կեցցես» (Հռոմ Ժ 9):

- Թ -

**Բխեսցէ զաւագան յարմատոյն Յեսսեա** (ԺԱ 1): Ոմանք ասեն զբանս զայս վասն Եզեկիա, որ կարի անյարմար է, զի այն որ ասէ բխեսցէ զապագայն նշանակէ եւ այս յայտնի<sup>244</sup> է, որ մարգարէութիւնս այս ի թագաւորութեանն Աքագու էր եւ Եզեկիա քան զթագաւորելն Աքագու ինն ամաւ յառաջ ծնեալ էր, այլ ամենայն բանք ճառիս<sup>245</sup>: Ի Քրիստոս վերայ բերի, որ Տէրն է Եզեկիա: Բխեսցէ ասէ, չասաց թէ բուսանի, զի մի՛ կարծեսցի ի սերմանէ գոլ: Այլ թէ բխեսցէ ըստ այնմ,<sup>246</sup> որ ասաց. «Աստուած բխեսցէ երկիր, զբանճար խոտոյ»<sup>247</sup> (Ծննդ. Ա 11): Իսկ **բխելն**, շառաւեղելն եւ ելանելն<sup>248</sup>: Իսկ **զաւագանան** նշանակէ զՔրիստոս, զոր կոչի վասն բազում պատճառի. Նախ՝ զի զաւագանն զցեղն նշանակէ, ըստ այնմ, որ ասացաւ<sup>249</sup> Սաւուղ «Առն Յեմինացոյ»<sup>250</sup> են ես» ( Դատ. Գ 5) , վասն որոյ աստ ասելն **զաւագան Յեսսեա** ցուցանէ զՔրիստոս ի ցեղէն Յուդայի գոլ: Երկրորդ՝ զիշխանութիւնն եւ զփառս թագաւորութեանն նշանակէ **զաւագանն**: Վասն որոյ ունին թագաւորք ոսկի զաւագան ի ձեռին, զի զտէրութիւնն եւ զփառս թագաւորին ցուցանէ, որպէս Եզեկիէլ տեսանէր յետ դարձին, զի երկու զաւագանք կցեին ի միմեանս եւ լինէին մի զաւագան, այսինքն՝ Յուդայի եւ Եփրեմի թագաւորութիւն, որ



միացաւ: Իսկ Տէրն մեր, զի թագաւորէ անվախճան, վասն որոյ<sup>251</sup> ասէ մարգարէն. «Աթոռ քո Աստուած յաիտեանս<sup>252</sup> յաիտենից գաւազան ուղղութեան, գաւազան արքայութեան քո» (Սղմ. ԽԴ 7): Երրորդ՝ զուղղութիւնն նշանակէ, զոր ունին քահանայք եւ ուղղիչք, այսինքն՝ վարդապետք ի ձեռին ի նշան ուղղութեան: Իսկ Տէրն մեր է Վարդապետ եւ Տէր, զի ուսուցանէր ամենեցուն զուղղի գիտութիւնն<sup>253</sup> աստուածաշտութեան: Ըստ այնմ. «Յիսուս առնէր եւ ուսուցանէր (Գործք Ա 1): Եւ թագաւորութեանն Քրիստոսի<sup>254</sup> գաւազանն նշանակեցաւ ի գաւազանն Մովսիսի, իսկ քահանայութեանն<sup>255</sup> ի գաւազանն Ահարոնի:

Չորրորդ՝ զի ցույց եւ գաւազան լինի հովուաց եւ անբան հօտից, իսկ Տէրն մեր Հովիւ բանաւոր հօտից, ըստ այնմ սաղմոսին<sup>256</sup> «Ո հովուետդ Իսրայէլի, նայեաց, որ առաջնորդես» (Սղմ. ՀԹ 2), եւ Ինքն ասէ<sup>257</sup>. «Ես եմ Հովիւն քաջ եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց» (Յովհ. Ժ 11): «Ձի ի վայրի դալարուջ բնակեցոյց», ըստ մարգարէին (Սղմ. ԻԲ 2), այսինքն՝ ի կերակուր մարմնոյ եւ արեան իւրոյ եւ առ ջուր հանգստեան սնոյց» (Սղմ. ԻԲ 2): Այսինքն՝ ջրով աւազանին հանգոյց, զի զմեղս եթող մկրտութեամբ ջրոյն: Հինգերորդ՝ **գաւազան** հաստատութիւն է տկարաց եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս յոյս եւ հաստատութիւն եղէ<sup>258</sup> հաւատովն տկարացելոց մարդկան ազգի<sup>259</sup>: Որպէս ասէ Սողոմոն ի դէմս Քրիստոսի. «Փայտ կենաց է ամենեցուն,<sup>260</sup> որ պատսպարին եւ որ յենուն ի նա իբրեւ [ի] Տէր հաստատութեամբ»<sup>261</sup> (Առակ Գ 18): Վեցերորդ՝ կերպիւ ինչ կուրաց<sup>262</sup> առաջնորդէ ի ճանապարհ<sup>263</sup>: Եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս<sup>264</sup> զինքն ճանապարհ ճշմարտութեան կոչեաց, ըստ այնմ. «Ես եմ ճանապարհ եւ ճշմարտութիւն» (Յովհ. ԺԳ 6), վասնզի Նովաւ ընթանամք առ Հայր, որպէս եւ ասէր. «Ոչ ոք գա առ Հայր, եթէ ոչ ինեւ» (Յովհ. ԺԳ 6): Եւթներորդ՝ **գաւազանն** զպատուհաս եւ զտանջանս նշանակէ, ըստ այնմ **հարից գաւազանաւն**՝ զտանջանօք զանիրաւ<sup>265</sup> եւ որք ոչ հաւատան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մատնին ի տանջանս: Ըստ այնմ, «Որ ոչ հնազանդի Որդոյ, ոչ տեսցէ զկեանս, այլ բարկութիւնն մնա ի վերայ նորա» (Յովհ. Գ 36): Այս այսքան<sup>266</sup>:

Իսկ ասելն՝ **յարմատոյն ՅԵՍՍԵԱ**: Նախ՝ ցուցանէ ի տաննն ՅԵՍՍԵԱ զոլ, այսինքն՝ ի թագաւորական ազգէ, ի ցեղէն Յուդայ, զոր եւ Ղուկաս պատմէ թէ. «Առաքեցաւ Գաբրիէլ առ կոյս խօսեցեալ առն, որում անուն էր Յովսէփ՝ ի տանն եւ ի յազգէ<sup>267</sup> Դաւթի եւ ամենայն ոք ի ցեղէն իւրմէ առնոյր կին» (Ղուկ. Ա 27): Երկրորդ՝ նշանակէ արմատն յԱբրահամն եւ ի վեր ցԱդամն եւ ի նոցա գաւակէն զո՞ղ, որպէս ազգաթիւն Ղուկաս սկսեալ ի Յովսէփու, հանէ ըստ կարգի մինչեւ ցԱդամ: Երրորդ՝ ցուցանէ արմատն, թէ ոչ ամուսնութեամբ առնի<sup>268</sup> ծնունդն, այլ միայն յարմատոյն է, որ է կոյսն Մարիամ, որպէս ասաց նոյն մարգարէս. **Ահա կոյսն յղացի եւ ծնցի Որդի** (Է, 14):

Չորրորդ՝ ասելն **յարմատոյն**<sup>269</sup> զբազում եւ զանազան հերձուածս լուծանէ, որք ասացին, թէ ոչ էառ ի Կուսէն, այլ մարմինն ընդ մարմինն էանց ընդ Կոյսն, որպէս ջուր՝ ընդ խողովակ,

կամ ոսկի՝ ընդ դարիճակ: Ընդդէմ նոցա ասէ. **յարմատոյն բխեալ**, որ է ի բնութենէ կուսին Մարիամայ: Այլք ասեն յերկնից բերեալ զմարմինն եւ այլք, թէ՛ նոր ստեղծուած է: Ըմբերանէ զնա ասելն, թէ՛ **յարմատոյն Յեսսեա**, եւ ոչ որպէս դուք ասէք<sup>270</sup>: Եւ այլք ասացին փոփոխմամբ լինել զմարդեղութիւնն Աստուծոյ: Ասէ ընդդէմ նոցա, թէ՛ **յարմատոյն է բխեալ գաւազանն**, զի շառաւիղն ելեալ յարմատոյն զնորին բնութիւնն ունի եւ ոչ է փոխեալ: Եւ այլք ասացին որպէս Նեստոր, թէ նախ գոյացաւ մարդն յարգանդի եւ ծնաւ սոսկ մարդ ի մօրէ եւ ապա Բանն Աստուած բնակեցաւ ի նմա յետ մկրտութեանն եւ նովաւ կատարեաց զանօրէնութիւնն իբր ի տաճարի կամ ի հանդերձի, զոր արմատքի խլէ զնոր հերձուածն, որ ասէ, թէ՛ անդատին յարմատոյն բխեաց գաւազանն, որ է թագաւորութիւնն եւ Տէր գոլն ամենայնի, ի<sup>271</sup> նոյն ընդ միաւորութեան ի նիւթն յարգանդի Կուսին, այսինքն՝ ի մարդն լինելն Բանին,<sup>272</sup> որպէս ասէ Պօղոս. «Առաքեաց Աստուած զՈրդին իւր, որ եղև» ( Հռոմ Ը 3): Իսկ, զի յիշէ զՅեսսէ, զի մի կարծեսցի գոլ սոսկ գաւազան գոլ<sup>273</sup>, այլ յարմատոյ մարդկայինս բնութեան լինել գաւազան: Եւ ընդէ՞ր ոչ յիշէ զԴաւիթ, որ է նշանաւոր<sup>274</sup>: Այս է, զի ցուցցէ զխոնարհութիւնն Քրիստոսի, թէ ոչ զարշեցաւ յունեքէ, զոր եւ Աւետարանն այլ առաւել զխոնարհութիւնն յայտ առնէ<sup>275</sup> ասելով. «Ի խանձարուրս պատեցաւ եւ եղաւ ի մտուր» (Դուկ. Բ 7):

**Ելցէ ծաղիկ յարմատոյ անտի:** Ելցէ ասելն զբնական աճումն նշանակէ<sup>276</sup> աստուածավայելչացեալ մարմնոյն: Իսկ **ծաղիկ** կոչի Քրիստոս որպէս<sup>277</sup> ասէ յԵրզն. «Ես ծաղիկ դաշտաց շուշան հովտաց» (Երզ Բ 1): Եւ այս վասն բազում պատճառի. Նախ՝ զի հոտն անմարմին եւ անասր իմն է, որ բխէ յենթակայէ ծաղկէն՝ անբաժանելի գոլով ի նմանէ, որ նշանակէ զբանին<sup>278</sup> միաւորութիւնն անբաժանելի ի մարմնոյն: Երկրորդ՝ զի ծաղիկն հոտ անուշ բուրէ<sup>279</sup> ի բոլոր յամենայն կողմանսն<sup>280</sup>: Սոյն պէս ի Քրիստոս անուշահոտութիւնն բուրեաց<sup>281</sup> ի բոլոր բնութիւնս, որպէս ասէ Պօղոս ի Կորնթացոցն. «Քրիստոս Յիսուս զհոտ զիտութեանն Իւրոյ յայտնի առնէ մեօք յամենայն հեթանոսս, զի հոտ անուշ եմք Քրիստոսի առ Աստուած» (Բ Կորնթ. Բ 14-15): Երրորդ՝ զի ի մէջ պատենիցն գոլով ունի զհոտն յինքենէ, բայց յետոյ բուրէ: Նոյնպէս Տէր մեր Յիսուս Քրիստոս յարգանդի Կուսին խառնեալ միաւորեաց զբնութիւնս մեր ընդ իւրում Աստուածութեանն, բայց յետոյ յայտնեաց զփառս զԱստուածութեան<sup>282</sup> իւրոյ ի ձեռն զօրութեան սքանչելեացն<sup>283</sup>: Չորրորդ՝ որպէս նիւթ ծաղկին աճէ ի նուագութենէ ի մեծութիւն հանդերձ հաւատովն իւր: Նոյնպէս ի մարմինն Քրիստոսի աճէր, ըստ բնական հասակին հանդերձ միաւորեալ Աստուածութեամբն ի նմա բոլորն ի բոլորն եւ բոլորն յիւրաքանչիւր մասն<sup>284</sup> մարմնոյ, որպէս ասէ Աւետարանն. «Մանուկն աճէր եւ զօրանայր լի իմաստութեամբ եւ շնորհօքն Աստուծոյ» ( Դուկ. Բ 40): Հինգերորդ՝ որպէս զեղեցիկ է ծաղկին տեսութիւնն<sup>285</sup>, քան զամենայն բուսոց, զի խառնեալ է ի զանազան գունոց:

Նոյնպէս եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս «Գեղեցիկ է տեսանելով»<sup>286</sup>, քան զամենայն որդիս մարդկան» ( Սղմ. ԽԴ 3), ասէ Սաղմոսն<sup>287</sup>: Վասն զի խառնեալ միացեալ էր Աստուած Բանն ընդ մարմնոյն: Որպէս ասէ յԵրգս. «Եղբարորդիւն իմ սպիտակ է եւ կարմիր՝ ընտրեալ ի բիրոց» (Երգ Ե 10-11): Վեցերորդ՝ ծաղիկն նշանակէ զանսերմ ծնունդն Քրիստոսի, որ յառաջ նկարեցաւ ի գաւազանն Ահարոնի, զի որպէս գաւազանն այն ծաղկեցաւ առանց տնկելոյ, սոյնպէս եւ կոյսն Մարիամ Աստուածածին<sup>288</sup> առանց ամուսնութեան եւ անսերմն յղացմամբ ծնաւ զծաղիկն անապական զՏէր մեր Յիսուս Քրիստոս: Երկրորդ՝ որպէս ծաղիկն լինի բժշկութիւն եւ առողջութիւն հիւանդաց<sup>289</sup>, նոյնպէս եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս բժշկութիւն<sup>290</sup> եղեւ հիւանդացելոցն մեղօք եւ անհաւատութեամբ: Որպէս ասէ Սողմոն. «Ծաղիկ կենաց է բժշկութիւն լեզուի նորա»<sup>291</sup> (Առակ. ԺԵ 4): Եւ Եսայի ասէ. «Նա զմեղս մեր վերացոյց եւ զգաւս մեր երարծ» (ԾԳ 11) եւ ինքն ասէր. «Ոչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ՝ հիւանդաց» եւ այլն ( Ղուկ. Ե 31):

Ութերորդ՝ զի<sup>292</sup> որպէս ծաղիկն կատարումն է բուսոցն<sup>293</sup>, ըստ որում ի ծայրքն<sup>294</sup> ելանէ, զի թեպէտ յետոյ երեւի, սակայն անդ ըստ ինքնութեամբ ունին ամենայն բոյսք, զի ծաղկեսցին: Նոյնպէս տէր մեր Յիսուս Քրիստոս թեպէտ յետին ժամանակիս<sup>295</sup> ծագեաց եւ ծաղկեցաւ ի Կուսէն, սակայն «Նա է ակնկալութիւն աշխարհի» (Ծննդ. ԽԹ 10-11): Եւ<sup>296</sup> նա է լրումն օրինաց եւ մարգարէից, ըստ առաքելոց. «Լրումն օրինացն Քրիստոս է» (Հռոմ. Ժ 4), եւ ինքն ասէ. «Ոչ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս, այլ՝ լնուլ» (Մատթ. Ե 17): Այլ եւ նա է<sup>297</sup> գլուխ մեր ըստ այնմ. «Անն ամենայնի գլուխ Քրիստոս է» ( Ա Կորնթ. ԺԱ 3): Իններորդ՝ զի նախ ծաղկի բոյսն եւ ապա պտղաբերի որպէս ասէ ոմն ի հարցն սրբոց<sup>298</sup>, եթէ սկիզբն պտղաբերութեան ծաղիկն է: Նոյնպէս եւ յերեւել Տեառն մերոյ<sup>299</sup> Յիսուսի Քրիստոսի, ապա արդիւնացան ամենայն բարեգործութեանց պտուղք, զի յառաջ քան զՔրիստոս անշահ եւ անպտուղ էին բարեգործութիւնքն, զի «ոչ ոք արդարացաւ ի գործոց արինաց» ( Գաղատ. Բ 16) , ասէ Պօղոս, եւ ի կորնթացոց<sup>300</sup> յորդորէ<sup>301</sup> զհաւատացեալս. «Եթէ վաստակքն ձեր այժմ ոչ են անօգուտ եւ ընդունայն» ( Կորնթ. ԺԵ 58): Տասներորդ՝ զի որպէս ծաղիկն է ի մէջ բուսոցն եւ պտղոյն, զի յարմատոյն<sup>302</sup> նախ յառաջ գա բոյսն եւ ապա ծաղիկն եւ ապա յետոյ պտուղն: Նոյնպէս յետ<sup>303</sup> բնական օրինացն, որ տնկեցաւ ի բնութիւնս իբրեւ<sup>304</sup> զարմատ. ետ<sup>305</sup> նախ զգրաւորական<sup>306</sup> [օ]րէնս Մովսէսաւ<sup>307</sup> եւ ի միջին զաւետարանական<sup>308</sup> եւ յետոյ փոխի ի յաւիտենականն: Ի յոր փոխելոց է բնութիւնս մեր եւ ապա անդ ժողովել զպտուղ<sup>309</sup> բարեգործութեանց ի շտեմարանս արքայութեան երկնից եւ այն եղեւ ի ձեռն Քրիստոսի, որ ծաղկեցաւ ի սրբոյ Կուսէն, որպէս ասէ՝ **Եւ ծաղիկ յարմատոյ անտի, եւ՝ հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ** (ԺԱ 2): Աստ ասեն հերձուածողք, եթէ Աստուած է Քրիստոսն եւ ոչ է կարօտ, վասն է՞ր լնու զնա Հոգին Աստուծոյ: Առ որս ասենք, եթէ համարեցուք ըստ ձեր հայեցողութեանդ, թէ Որդին նուաստ է

եւ երկնչի ի Հօրէ վասն ձեր<sup>310</sup> ասելոյն, թէ. **Լցցէ զնա Հոգին երկիրի Աստուծոյ** (ԺԱ, 3): Եւ արդ, ըստ ձեր հայհոյութեանդ, ո՛վ արիանոսք, Հոգին նուաստ է քան զՈրդի: Եւ<sup>311</sup> զհա՞րդ մեծն<sup>312</sup> կարօտի այնմ, որ նուագ է քան զինքն, ապա յայտ է թէ դուք ի բանից ձերոց<sup>313</sup> ըմբռնեցայք: Արդ, ընդունի Որդի զհոգին ոչ վասն իւր կարօտութեան, այլ վասն մեր, զի մեք էաք կարօտ յայնմ հետէ, ուստի զրկեցաք ի Հոգոյն Աստուծոյ, որպէս ասէ. «Մի՛ մնասցէ Հոգի իմ ի դոսա վասն լինելոյ դոցա մարմին» (Ծննդ. Չ 3): Եւ արդ, նա զլուխ գոլով մեզ ընդունի զՀոգին Սուրբ եւ սփռէ յանդամս իւր, այսինքն՝ ի հաւատացեալս: Եւ որպէս եղև մարդ ոչ վասն իւր կարօտութեանն, այլ զի զմեզ որդիս Աստուծոյ արասցէ: Սոյնպէս եւ էառ զՀոգին Սուրբ, զի ինքեանք մեզ բաշխեսցէ զՀոգին իմաստութեան, զհանճարոյ, զխորհրդոյ, զօրութեան, զգիտութեան, զաստուածապաշտութեան,<sup>314</sup> զերկիրի Աստուծոյ: Չի մեք էաք կարօտ այսպիսի շնորհացս, իսկ ի Քրիստոս յայտնեցաւ իմաստութեան Հոգին, որպէս յորժամ ասացին հրեայքն. «Ուստի՞ է սնա այսպիսի իմաստութիւն» (Մատթ. ԺԳ 54): Իսկ<sup>315</sup> զիտութեանն ասէին. «Չիարդ զիտէ Սա զգիրս, զի ուսեալ բնաւ չիք» ( Յով. Է 15): Եւ զօրութեանն ասէին. «Չօրութիւնք բազում ելանէ<sup>316</sup> ի նմանէ» (Բուկ. Չ 19):

**Եւ լցցէ զնա Հոգի երկիրի Աստուծոյ** (ԺԱ 3), ուր<sup>317</sup> երկիրդ Տեառն է, անդ ամենայն պատուիրանաց<sup>318</sup> պահպանութիւն է: Չի կրկին է երկիրդն. ոմն ծառայական եւ վատթար, որպէս ասէ Յոհանէս թէ՛ «Որ երկնչի նա չէ կատարեալ ի սերն»<sup>319</sup> (Ա Յովհ. Դ 18): Եւ ոմն է<sup>320</sup> պատուական երկիրդ. այն, որ ասէ մարգարէն. «Սկիզբն իմաստութեան երկիր Տեառն» (Առակ ԻԲ 4): Այլ տե՛ս, զի ոչ ուրեք ասաց Որդի առ Հայր, եթէ երկեա ի քէն, այլ թէ՛ Սիրեցի զքեզ, զի Որդոյ սէր էառ Հայր եւ ոչ երկիրդ, որպէս ասէ. Մաղաքիաս «Որդի փառաւոր առնէ զՀայր եւ ծառայ երկրնչի ի Տեառնէ» (Մաղ. Ա 6): Իսկ որ ասէ **Լցցէ զնայ հոգի** կրկին է տեսութիւնն. Նախ՝ զի ցուցցէ, թէ ոչ մասնաւոր, այլ բովանդակ զամենայն լրումն Հոգոյն Սրբոյ ընկալաւ Քրիստոս, որպէս Աւետարանն ասէ<sup>321</sup> «Ոչ թէ չափով տայ Աստուած զՀոգին Որդոյ» ( Յովհ. Գ 34): Իսկ հասարակ մարդկան չափով եւ մասնաւոր տայ զՀոգին, որպէս գրէ Պօղոս. «Ումենն ի Հոգոյն տուեալ է քան իմաստութեան, այլում քան զիտութեան» (Ա Կորնթ. ԺԲ 8): Երկրորդ՝ ցուցանէ զհաւասարութիւնն ընդ Որդոյ, որովհետեւ զՈրդին բովանդակ կարէ լնուլ<sup>322</sup>, զի թէ մեծ էր<sup>323</sup> Որդի, քան զՀոգի, ոչ կարէր լնուլ նուազն զմեծն<sup>324</sup>: Իսկ թէ զի՞նչ է իմաստութիւնն եւ զի՞նչ է<sup>325</sup> հանճարն եւ այլն: Ըստ նկարագրին այս է, իմաստութիւնն է, որ իմացմամբ եւ մտօքն իմանայ զգիրն<sup>326</sup>, իսկ հանճարն է, որ դժուարին եւ խորին բանից<sup>327</sup> լուծումն գտանէ, իսկ խորհուրդ է ընտրելն<sup>328</sup> զբարինն ի չարէն: Եւ զիտութիւն է արուեստն<sup>329</sup>, որ ի ձեռն զգայարանացս զիտեմք:

**Ճարակեսցէ գայլ ընդ գառին** (ԺԱ 6). Չգազանաբարսն ի<sup>330</sup> մարդկանէ<sup>331</sup> **գայլ** կոչէ: Եւ զգօնս՝ **գառն**: Այսինքն թէ՛ զօրականք եւ՛ սպարապետք, եւ՛ շինականք, եւ՛ գռեհիկք<sup>332</sup> ի մի

հօտ, այսինքն՝ յեկեղեցի էն ժողովեալ, եւ միով օրինակաւ բարեգործեն ի միասին եւ ոչ մեղիցեն միմեանց:

**Որք եւ ցուլ եւ առիծ ի միասին ճարակեսցին** (ԺԱ 7ա)<sup>333</sup>: Այս է՝ իմաստունք, խորհրդականք եւ իշխանք եւ տգէտք եւ փոքունք ի միասին հաւանեսցին եւ լուիցեն աւետարանական բանին, գոր քարոզէ հովին միամիտ առակեալ ի մանուկ տղա:

**Եզն եւ արջ ի միասին ճարակեսցին**. Այսինքն՝ արդարք եւ մեղաւորք կերակրին ի խորհրդաւոր սեղանոյն ի մարմնոյ եւ<sup>334</sup> յարենէ<sup>335</sup> Քրիստոսի: Այն է յորժամ տեսանես զաւագակս, զգողս,<sup>336</sup> զրկողս եւ զյափշտակողս, որք շռայտէն<sup>337</sup> յայլոց ընչից եւ շաղղակերութեամբ եւ արբեցութեամբ: Իսկ այժմ<sup>338</sup> երբեմն պահեն եւ երբեմն միջին կերակրովքն շատանան: Յիշեա զբան մարգարէին, թէ. **Առիծն իբրեւ զեզն յարդ կերիցէ** (ԺԱ 7բ):

- Ժ -

**Ձի ահաւասիկ հասեալ է օր Տեառն անբժշկելի**<sup>339</sup> լի<sup>340</sup> բարկութեամբ (ԺԳ 9): Ի վերայ այսմ բանի<sup>341</sup> ասէ Ոսկէբերանն, թէ աստ ապաշխարութեամբ գոյ հնար բժշկութեան ոգոց, իսկ յորժամ անդր երթայցենք<sup>342</sup> վիրօք մեղաց ոչ գոյ վախճան տանջանացն: Սորին վասն անբժշկական կոչէ զօրն<sup>343</sup>, զի մի առանց բժշկութեան աստի անդր<sup>344</sup> երթիցուք, եւ թէ զիա՞րդ անբժշկական՝ ընթերցիր<sup>345</sup> զճառս մեծատանն եւ Ղազարու, եւ ուսիր: Կարկեսցին բերանք հերձուածողացն, որք յետ մահուանն ապաշխարութիւն լինել ասեն հոգոցն եւ բժշկութիւն:

**Առնել զտիեզերս անապատ** (ԺԴ 17): Տե՛ս, զի ասէ անապատ լինին տիեզերքս<sup>346</sup>, վասն զի զարդարսն<sup>347</sup> ընկալցի արքայութիւնն եւ զմեղաւորս՝ զեհեանն, ըստ այնմ, թէ՛ «Պակասեցին մեղաւորք յերկրէ» (Սղմ. ԵԳ 35): Ձի ոչ է գալուստն այն որպէս զառաջինն առանց ոտնաձայնութեան. «Որպէս անձրեւ ի վերայ գեղման» (Սղմ. ՀԱ 6): Ձի յորժամ<sup>348</sup> եկն զմեղս բառնալ, այլ այժմ զարդարութեան վրէժս խնդրել վասն այսորիկ դողան<sup>349</sup> երկինք եւ երկիր եւ ամենայն արարածք: Եւ օրն այն ոչ միայն բարկութեան է, այլ եւ պարզեաց: Վասն է՞ր ի չար անուանէն կոչի եւ ոչ ի բարոյն<sup>350</sup> այլս<sup>351</sup> վասն երեք պատճառի. նախ՝ վասն մերոյ ծուլութեանս, զի գոնէ<sup>352</sup> այնպէս զարթիցուք: Երկրորդ՝ զի զայն թէ պարզեաց օր է՝ ամենեքեան զհտեն, այլ թէ եւ պատժոց այնմ չեն տեղեակ: Երրորդ՝ զի ի պատուոյն հաւատան, իսկ տանջանացն՝ ոչ, վասն որոյ յարածամ յիշէ զտանջանքն:

- ԺԱ -

Հարց- **Ձիա՞րդ անկաւ յերկնից Արուսեակն, որ ընդ առաւօտն ծագէր** (ԺԴ, 12):

Պատասխան - Ոմանք զբանս<sup>353</sup> ի վերայ բարելացոցն մեկնեն, զի հպարտացեալ բարձրացեալ էր ի միտս իւր եւ իբրեւ<sup>354</sup> զաստղ փառաւոր կարծէր զոլ<sup>355</sup> զինքն, որ անկաւ

ընդ առաւօտն եւ<sup>356</sup> խորտակեցաւ, այսինքն՝ յորժամ առաւաւտ եւ դարձ եղել գերութեանն Իսրայէլի, նոցա կորուստ եւ սատակումն եհաս ի մարաց եւ պարսից: Այլ ամենայն վարդապետք ի վերայ Արուսեկին սատանայի մեկնեն, որ անկաւ յերկնից իբրեւ զփայլակն, որպէս հրամայէ<sup>357</sup> Տէրն: Իսկ նա կոչի Արուսեակ, վասն բազում պատճառի. նախ՝ զի<sup>358</sup> Արուսեակ անկեալ ասէ իբրեւ թէ<sup>359</sup> ի լուսոյ փառացն, զոր<sup>360</sup> ունէր, զրկեցաւ եւ եղել խաւար, որպէս ասէ Յոհանէս. «խաւար նմա ոչ եղել հասու» ( Յովհ. Ա 5): Երկրորդ՝ զի ի լուսոյ կազմեցան հրեշտակք եւ թեպէտ յանցեան զբնութեան պարգեսն,<sup>361</sup> ոչ էառ ի նոցանէ Աստուած, որպէս եւ<sup>362</sup> ոչ զանմահութիւն եւ զանմարմնութիւն, եւ յայտ է զի. «Դեւս հրեշտակ լուսոյ կերպարանին» ( Բ Կորնթ. ԺԱ 14), որպէս ասէ Պօղոս: Երրորդ՝ կոչին **Արուսեակ** վասն մշտնջենաւորութեան, զի որպէս անապական են բնութիւնք աստեղաց, այնպէս<sup>363</sup> եւ սատանայ ոչ ունի ապականութիւն, զի անմահապէս տանջեսցի<sup>364</sup> միշտ: Չորրորդ՝ կոչի **Արուսեակ**, զի քան զայլսն իւրոյ լուսոյ գեղեցկութիւնն առաւել տկարացոյց<sup>365</sup> զինքն, ուստի յայտ է, զի ոչ կարաց տեսանել զփառսն, այլ յինքնէ կարծեաց կոյր մտօք: Հինգերորդ՝ **Արուսեակ** կոչի, զի ցուցցէ, թէ իշխան եւ զլիսաւոր էր սաղայէլ ի դասուցն իւրոց, որոց ընդ նմա կործանեցան, զի ասի ըստ ոմանց տասներորդ դասուն անկելոց<sup>366</sup> հրեշտակաց, այլ սոյնպէս ոչ իմանի, թէ տասն դասք էին հրեշտակաց եւ մինն անկաւ, այլ թէ յամենայն դասէ անկեալք են իբր դասոյ միոյ չափ:

**Որ ընդ առաւօտն ծագէր** (ԺԳ 12): Այսինքն՝ ի սկիզբն ստեղծման աշխարհի: Ընդ բաժանելն ի մէջ լուսոյն եւ խաւարին յայնժամ միայն ծագեցին եւ անկան յերկնից եւ Տէրն մեր փայլակն կոչէ զնա վասն փոյթանց լինելոյն: Դարձեալ առաւօտ է վախճանն<sup>367</sup> այսմ յաիտենիս, յորժամ աներեկ օրն սկսանի որպէս եւ Դաւիթ ասէ. «Ընդ առաւօտս սպանանէի զամենայն մեղաւորս երկրի» (Սղմ. Ծ 8): Արդ, մերձ ի կատարածին դարձեալ յառնելոց է ի վերայ մարդկան ի ձեռն Նեռինն եւ ապա ընկեսցի<sup>368</sup> յերկիր եւ կորիցէ խաբէութիւն նորա: Անկաւ ասէ յերկնից: Անմարմինն զիա՞րդ անկանի, վասն զի անկանելն<sup>369</sup> մարմնոյ, որ ծանրութիւն ի վայր հակէ այս է զի մեղք հպարտութեանն, որ է երկնային ախտ, ծանրացոյց եւ ընկէց յերկիր: Որ առաքէր առ<sup>370</sup> ամենայն ազգս զախտս անբարտաւանութեան սփռեաց առ ամենայն ազգս մարդկան, ասէ զի նովին կորստեամբն,<sup>371</sup> որով ինքն անկաւ, եւ զնոսա կորուսցէ որպէս զԱդամ ցանկութեամբ աստուածանալոյն ընկէց յերկիր, եւ որք զաշտարակն շինէին անբարտաւանեալք կալ հակառակ Աստուծոյ ընդդէմ<sup>372</sup>: Վասն որոյ ինքեանք ցրուեցան<sup>373</sup> եւ եղել զործ նոցա ոչինչ: Սոյնպէս եւ<sup>374</sup> Սէնէքերիմ հպարտացաւ, թէ ինքն միայն կեցցէ<sup>375</sup> իշխան: Եւ ասէր՝ ընդ ձեռամբ առնուլ զամենայն տիեզերս, իբրեւ զձուս ի բունոյ թռչնոց, վասն որոյ զօրութիւնք եւ փառք իւր ի դուռն Երուսաղէմի սատակեցան ի միում զիշերի հարիւր ութսունհինգ հազար

հեծելոց\* : Նոյնպէս եւ բաբելացին, որ ասէր ի սրտի իւրում, թէ՛ **Ելից յերկինս եւ եղէց նման բարձրելոյն եղեւ ի կորուստ եւ ի կոխան** (ԺԴ- 13ա) այլոց թագաւորաց, որպէս ասէ, արդ. **Ահաւասիկ ի դժոխս իջցես եւ ի հիմունս երկրի** (ԺԴ- 15): Եւ Տէրն մեր պատուիրէր. «Որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեսցի» (Մատթ. ԻԳ 12): Վասն զի Տէր ամբարտաւանից հակառակ կայ ասէ Սողոմոն: Եւ զի Տէրն մեր եկն զայսպիսի ախտս մեղաց բժշկել ի մարդկանէ՝<sup>376</sup> խոնարհութեամբ կատարեաց զտնօրէնութիւն իւր, զի Աստուած Բանն եղեւ մարդ եւ ծնաւ յաղքատ զառաքեալս ի խոնարհաց եւ ի ձկնորսաց զխաչին կիրսն<sup>377</sup>, զթուր, զապտակ եւ զայլսն<sup>378</sup> ամենայն կրեաց նա, զի ամենայնիւ մեզ զխոնարհութիւնն ուսուցէ<sup>379</sup>: Դու ասէիր ի մտի քում ելից յերկինս: Խայտառակէ զչար խորհուրդն սատանայի, զի ցուցցէ թէ եւ չար խորհրդոցն վրէժխնդրութիւն կայ եւ պատիժ պատուհասի:

**Նստայց ի լերին բարձու** (ԺԴ- 13բ): Այսինքն՝ գեր ի վերոյ հրեշտակաց:

**Ի վերայ լերանց բարձանց հիւսիսոյ** (ԺԴ- 13գ): Այսինքն՝ ի վերայ ցուրտ եւ սառնաստոյց չարութեան իւրոյ, զի սառուցեալ էի յԱստուծոյ:

**Ելից ի վերոյ քան զամպս**<sup>380</sup> **եղէց նման Բարձրելոյն** (ԺԴ- 14): Այս է երկրպագութեամբ մարդկան: **Յամպս** ասել զաթոռն դնել. Նախ՝ զբարձրութիւնն նշանակէ ի վերայ այլոց, որպէս ամպս գեր ի վերոյ մերոյ է<sup>381</sup>: Երկրորդ՝ **ամպ** զմարգարէսն նշանակէ, որք են պատգամաւորք Աստուծոյ: Ըստ այնմ՝ **Հրաման տաց ամպոց իմոց, զի մի տեղասցեն յայգի իմ** (Ե 6) ասէ ի մտի իւրում հրամանատու լինել պատգամաց<sup>382</sup> մարգարէիցն, եւ այնու նմանիլ Բարձրելոյն: Երրորդ՝ **ամպ** ասելով զերկինս նշանակէ, զի ոմանք օրէդէն ասեն զերկինքն եւ այսու կամէր նմանիլ Աստուծոյ, որպէս ասաց մարգարէիւն. **Երկինք աթոռ իմ են** (ԿԶ 1) եւ այլն, եւ սոյնպէս՝ **Պատուանդան ոտից իմոց**<sup>383</sup> (ԿԶ 1): Չորրորդ՝ զի ամպով եւ հողմով ասի շրջիլ Աստուծոյ, ըստ այնմ «Ո՞ եդ յամպս զգնացաւոր»<sup>383ա</sup> եւ շրջիլ ի վերայ թեոց հողմոց», որք են հրեշտակք եւ այսու լինէր նման Աստուծոյ, ի վերայ ամպոց եւ հրեշտակաց շրջելով:

Հարց - Չիա՞րդ առակէ զԱքազ յօձ եւ զԵգեկիա յիժ (ԺԴ- 29).

Պատասխան - Չի յօձն սողալով հասնէ ի թշնամին եւ<sup>383բ</sup> եւ յորժամ հարկանէ շրջի ի վեր եւ ապա կարէ գերծանիլ<sup>384</sup>, թռչի եւ հարկանէ եւ կամ միայն շնչովն<sup>385</sup> ընդ հայելն սպանանէ: Այսպէս թագաւորն Աքազ բազում աշխատութեամբ ապա հարկանէր զփոշտացիսն, իսկ Եգեկիա փոյթ ընդ փոյթ եւ կամ նստելով ի տան միայն աղօթիւք հալածէր զնոսա:

\* Սենեքերիմ- Ասորեստանի թագաւոր (Ն- Բ- 710-700), որի բանակը ջախջախվեց Զուղայի Եգեկիա արքայի (726 – 698) աղոթքի զորութեամբ, իսկ ինքը չարաչար սպանվեց իր որդիների՝ Ադրամելեքի և Սանասարի կողմից, որոնք փախան Զայաստան- Դ Թագ- ԺԸ, ԺԹ, Բ Մնաց- ԼԲ- տես Բառարան Սուրբ Գրոց, Կ- Պոլիս, 1881, էջ 493 – 494:

Հարց- Ընդէ՞ր սպառնա մարգարէս<sup>386</sup> գգերութիւնն եւ զսատակունն այլազգեացն, որպէս զԲաբելացոցն, զԴամասկացոցն<sup>387</sup> զՄովբացոցն եւ զայլն:

Պատասխան - Առաջին պատճառն այս է, զի թէ ի միտ առցեն զասացեալսն ի մարգարէն, կարիցեն<sup>388</sup> ապաշաւանօք գերծանիլ<sup>389</sup> ի պատուհասէն որպէս Նինուացիքն ապրեցան: Երկրորդ՝ զի մի՛ գիտացէ Իսրայէլ թէ հանապազ գերիւն իւրոց ի զօրութենէ կռոցն է կամ ի զօրաւոր արանց նոցա, վասն որոյ ածէ եւ ի<sup>390</sup> վերայ նոցա պատուհաս:

Երրորդ՝ ի հանդիմանութիւն սուտ մարգարէիցն<sup>390ա</sup>, որք ասէին Իսրայէլացոցն, թէ դուք վասն այն միշտ<sup>391</sup> ի գերութիւն մատնիք<sup>392</sup>, զի զկուտսն անարգէք<sup>393</sup>, զյաղագս որոյ<sup>394</sup> զնոսա, որ ամենկին պաշտօնեայք էին կռոցն<sup>395</sup> ի գերութիւն մատնէ: Չորրորդ՝ զի յորժամ կամէր Աստուած խրատել<sup>396</sup> զի Իսրայէլ վասն մեղաց մատնէր զնոսա այլազգեացն: Իսկ նոքա առաւել քան զչափ կամացն Աստուծոյ չարչարէին զնոսա, վաս նորոյ զխիստ եւ զանողորմ բարս նոցա մատնէ ի գերութիւն եւ նմանապէս զփոխարէնն հատուցանէ նոցա<sup>397</sup>:

- ԺԲ -

Ահաւասիկ Տէր նստեալ ի վերայ թեթև ամպոյ եկեացէ յԵգիպտոս (Գ 5): Թեթև ամպ կոչէ զկոյսն Մարիամ Աստուածածինն<sup>398</sup>: Եւ այս վասն բազում [պատճառի]: Նախ՝ զի ամպն այն թեթև է վասն որոյ յոյժ բարձրացեալ է քան զամենայն բարձունս երկրի: Նոյնպէս եւ սուրբ կոյսն<sup>399</sup> Մարիամ յոյժ թեթևացեալ եւ բարձրացեալ<sup>400</sup> է յամենայն երկրաքարշ խորհրդոց ամենամաքուր սրբութեամբն իւր: Յորոյ եւ ի դէմս ասէ մարգարէն Դաւիթ. «Սուրբ է տաճար սքանչելի արդարութեամբ» (Սղմ. ԿԳ 6): Երկրորդ՝ զի **ամպն** այն ոչ ունի խոնաւութիւն ինչ: Նոյնպէս եւ սուրբ կոյսն<sup>401</sup> Աստուածածին ոչ ունէր զէճ եւ աղտեղի ցանկութիւն մարմնական, վասն որոյ **Կոյս** կոչի ի մարգարէէն<sup>402</sup> Եսայեա. **Ահա կոյսն յղասցի եւ ծնցի Որդի** (Է, 14), զի կոյսն զանուն զամենեկին սրբութիւն նշանակէ, ըստ որում առանց սերման յղացաւ եւ անապական մարմնով ծնաւ զԲանն Աստուած<sup>403</sup>: Երրորդ՝ զի **ամպն** այն պայծառ է և լուսաւոր<sup>404</sup>, քան զայլսն յինքն ձգելով զճանճանչ<sup>405</sup> արեգականն: Նոյնպէս եւ սուրբ<sup>406</sup> կոյսն Աստուածածին, յինքն կրեալ զիմանալի արեգակ արդարութեան: զՔրիստոս<sup>407</sup> եղև պայծառագոյն եւ գերազանց, քան զամենայն ազգս, զի որպէս գերազանց է<sup>408</sup> քան զամենայն պատիւ՝ Մայր լինել Աստուծոյ: Նոյնպէս գերազանց է նորայն, քան զամենայն շնորհ հեղեալ ի ստեղծուածս, վասն որոյ ասէ. «Յայսմհետէ երանեսցեն ինձ ամենայն ազգք» (Գուկ. Ա 48): Չորրորդ՝ զի երազընթաց է **ամպն**<sup>409</sup> եւ փութապէս աճէ: Նոյնպէս եւ սուրբ<sup>410</sup> կոյսն Մարիամ<sup>411</sup> երազափոյթ է<sup>412</sup> յամենայն տեսակս բարեգործութեան, մինչ<sup>413</sup> զի օրըստօրէ առաւելոյր եւ աճէր ներգործական փառքն ի վերայ շնորհականին:



Հինգերորդ՝ զի ամպն հովանի լինի ի տօթ ժամու: Նոյնպէս<sup>414</sup> եւ սուրբ կոյսն Տիրուհի<sup>415</sup> հովանաւորեալ ի Հօրէ ըստ հրէշտակին, եւ ի տօթացեալ ժամու, յորում տապ փորձանացն սատանայի տագնապէր զբնութիւնս ծնաւ զՓրկիչն մեր զՔրիստոս զհովանին ամենայն աշխարհի: Վասն որոյ ասէ մարգարէն. «Ի հովանի թեոց քոց ցնծացայց մինչեւ անցանէ» (Սաղմ. ԿԲ 8): Յորում նկարեցաւ խորհուրդ ի սին ամպոյն, որ հովանի եղէ Իսրայէլի, եւ լոյս տայր նոցա ի գիշերի, այսինքն՝ զի ի խաւարէ անգիտութեան ի լոյս աստուածգիտութեան էած, եւ զբնութիւն սատանայի վերացոյց: Վեցերորդ՝ ամպն զծածուկ և զանգիտութիւն նշանակէ, այսպէս եւ<sup>416</sup> ամենայն խորհուրդ տնօրէնութեանն, որ ի սուրբ Կոյսն ծածուկ եւ թաքուն կատարիր, այսինքն՝ զի նախ սրբութեամբ սնաւ ի տաճարին, ըստ օրինի կուսանաց եւ յետոյ խօսեցեալ եղէ առն արդարոյ, որ ի յղութիւն երկնչէր Յովսէփ մինչ ի հրէշտակէն փարատեցաւ. «Մի՛ երկնչիր Յովսէփ որդի Դաւթի»<sup>417</sup> (Մտթ. Ա 20) եւ այլ: Եւ այս եղէ, զի մի՛ տեսցէ զնա ակն անգեղ (Հմմտ. Յովք Գ 9), ասէ Յոբ<sup>418</sup>: Եւթներորդ՝ զի որպէս<sup>419</sup> ամպն ծածկէ երբեմն զլոյս արեգականն, որպէս ի գիշերի, զի ընդ անհալ ամպով ծածկի ըստ ոմանց<sup>420</sup> եւ ծագէ յարեւելս, նմանապէս եւ սուրբ<sup>421</sup> կոյսն Տիրամայր, իննամսեա ժամանակօք ծածկէր յինքեան զլոյսն<sup>422</sup> ամենայն աշխարհի, եւ ապա եղէ իմանալի արեւելք եւ ծագեաց ծննդեամբ զարեգակն արդարութեան<sup>422ա</sup> ի վերայ երկրի, ըստ այնմ, որով այց արար մեզ արեգակն ի բարձանց (Դուկ. Ա 78՝) ծագել լոյս եւ ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան: Ութներորդ՝ զի ամպն առեալ ի ծովէ ծածկաբար եւ ապա ցաւղէ ի վերայ երկրի անձրեւ յայտնապէս եւ լցուցանէ զնա ամենայն բարութեամբ: Այսպէս եւ սուրբ Կոյսն յերկնաւոր եւ յիմանալի ծովէն, այսինքն՝ ի ծոցոյ Հօր Աստուծոյ<sup>422բ</sup> թաքնաբար յինքն կրեաց զջուրն կենդանի եւ եհեղ ի ցամաքեալ բնութիւնս բանաւոր երկրի եւ լցոյց զկարոտութիւն մեր առատապէս ամենայն բարութեան, որպէս ասէր. «Եթէ ոք ծարաւիցէ՝ եկեսցէ առ իս եւ արբցէ» (Յովի Է 37): Եւ արինակեցաւ ցաւղն, որ ի վերայ գեղման: Իններորդ՝ ըստ այլ յեղանակի զի լինի ամպն ի խոնաւ<sup>423</sup> գոլորշեաց ջուրց: Եւ ունի ջուրն բնական զդառնութիւնն, այլ ի ձեռն հողմոց պարզի դառնութիւն այն և հեղեալ յերկիր լինի քաղցր եւ ախորժելի<sup>424</sup>:

- ԺԳ -

Սմին նման եւ Կոյսն Մարիամ էր ի դառնացեալ զանգուածոյ բնութենէն<sup>425</sup> Ադամայ եւ ի ձեռն եկաւորութեան Հոգոյն Սրբոյ<sup>426</sup> մաքրեցաւ, իսկ զբնական պարտուցն եւս, ապա յամենամաքուր Կուսէն ցօղն քաղցրութեանս Քրիստոս սփռեցաւ ի սիրտ հաւատացելոց քաղցրաբովս վարդապետութեամբն Իր, ըստ այնմ. «Քաղցր են ի քիմս իմ բան քո, քան մեղր» (Սղմ. ԳԺԸ 103): Եւ Ինքն ասէր. «Լուծ իմ քաղցր է» (Մատթ. ԺԱ 29) եւ այլն:

Տասներորդ՝ զի ամպն ոչ միայն զցօղ անձրեւէ, այլ եւ՝ ձիւն եւ կարկուտ եւ հրայրեցութիւն իջուցանէ: Այսպէս եւ ի սրբուհի Կուսէն ծնեալն Աստուած եղև

հաւատացելոց անձրեւ կենաց եւ պտղաբերութեան, իսկ անհաւատիցն եւ սատանայի եղել կարկուտ հրախառն եւ ձմեռն անպտղութեան: Ըստ այնմ՝ «Բարձրեալն ետ զձայն իւր», (Սղմ. ԽԵ 7), որ է Քրիստոս ի կարկուտ եւ ի կայծակունս հուր, այսինքն՝ ի վերայ սատանայի, զի կործանեալ այրեաց եւ կորոյս գլիւամոլ կռապաշտութիւն յաշխարհէ, որպէս եւ աստ ասէ մարգարէս, թէ **շարժեսցի**, այսինքն՝ թէ կործանեսցին ձեռագործքն Եգիպտացոց, որ էին կուռքն, եւ «Ամենայն կուռք հեթանոսաց դեւքն են» (Սղմ. ՂԵ 5), ասէ մարգարէն: Եւ Ինքն՝ Տէրն սպառնա անհաւատիցն, որ ոչ հնազանդի Որդոյ՝ բարկութիւն Աստուծոյ մնա ի վերայ նորա (Յովհ. Գ 36): Վասն զի «Նա կա ի կանգնումն եւ ի զլորումն բազմաց» (Ղուկ. Բ 34), ասէ ծերունին Սիմոն: Եւ այլ ազգ. զի առաջին գալուստն Քրիստոսի էր իբրեւ զցօղ ի վերայ գեղման: Իսկ երկրորդն ահագին եւ զարհուրելի է, զի հուրը յայտնելոց է սաստիկ որոտմամբ եւ ձայնիւ փողոյ դատաստանք եւ պատիժք, ըստ գործոց:

Եւ ասէ Տէր ցեսայի. **Երբ եւ ի բաց հան զքորձոյ ի միջոյ քումնէ** (Ի 2), զայն գոր զգեցեալ էր վասն Ոզիա: Տես, թէ որպիսի հանդերձ ունէր մարգարէն ի վերայ մերկ մարմնոյն. նախ՝ զի խիստ ճգնութիւն եւ զխոշոր վարքն նշանակէր խորգն, զի ոչ էր որպէս նոքա, որ ի հանդերձս փափուկս զարդարեալ էին եւ ի տունս թագաւորաց են: Երկրորդ՝ զի սգայր զեկեալ հասեալ չարիսն ի վերայ ժողովրդեանն, գոր յետոյ լինելոց էր, նա յառաջագոյն տեսանէր եւ ի սուգ մտանէր, որպէս որք վասն սիրելեաց թուխ<sup>427</sup> զգեմուն: Նա եւ Դանիէլ ի խորգ եւ ի մոխիր ճգներ, եւ Սամուէլ սուգ ունէր ի վերայ Սաուդայ զամենայն օրս, եւ Յովաննէս զստեւ ուղտոյն զգեմոյր եւ Եղիա<sup>428</sup> զմաշկեակն: Երրորդ՝ զի կերպարանօք սգոյն զբան հաւատարիմ արասցէ, զի թէ երկիցեն եւ դարձցին ի չարեաց<sup>429</sup> եւ զերծանին ի սպառնալեաց, որպէս Նինուացիքն: Չորրորդ՝ սգային զբաղաքն Երուսաղէմ, որ ոչ ընդունելոց էր գՔրիստոս, որպէս եւ Տէրն իսկ արտասուեաց:<sup>430</sup> Հինգերորդ՝ սգային զանկումն բնութեանս ի փառակենցաղ դրախտէն յերկիրս<sup>431</sup> անիծից՝ զրկեալք ի լուսեղէն զգեստուցն եւ յանմահ կենացն: Վեցերորդ՝ զի զիտէին հաւաստեալ, որ այսպիսի զգեստիւքս եւ տխուր կենօք վերստին ընդունելոց են զփառսն, գոր մերկացան, ըստ այնմ թէ. «Որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի» (Ղուկ. ԺԴ 11), որպէս այժմ բազումք են, որ այսպէս քրձագգեաց լինին եւ սգան զտիեզերս, որ այնպէս ի չարի կան եւ ինքեանք ակն ունին յաւիտենից մխիթարութեանն եւ պայծառութեանն:

Հարց - Ընդէ՞ր հրամայէ մերկանալ (Ի, 2):

Պատասխան - Այս վասն բազում պատճառի.

Նախ՝ ըստ Գրքին ի<sup>432</sup> յօրինակ այնոցիկ, որ գերի վարելոց էին մերկ եւ բոկ, ողորմելի կենօք<sup>433</sup> ծերք եւ տղայք: Վասն որոյ հրամայէ մերկանալ, զի ահագին թուիցի սպառնալիքն եւ վաղվաղակի տարածեսցի համբաւն ընդ ամենայն երկիրն:

Երկրորդ՝ հրամայե մերկանալ, զի յայտնի արասցէ զամենեւիմբ հնազանդութիւն մարգարէին<sup>434</sup>, որ լաւ համարեցաւ զհրաման Աստուծոյ կատարել քան զծածկութիւն իւր, զի պարտ է<sup>435</sup> հնազանդել ամենայն պատուիրանացն Աստուծոյ, զոր մեք ոչ թէ զայս միայն չառնենք, այլ եւ սակաւ եւ<sup>436</sup> փոքր պատուիրանացն չենք լսող, որ ասէ. Սիրել զԱստուած, եւ զհայր, եւ զմայր եւ ընկերս, եւ ողորմել աղքատին ( Բ. Օր. ԺԱ 22 Առակ. ԺԳ 31) եւ այլ ամենայն տեսակք առաքինութեանց, զոր կամի Աստուած, փոքր են, քան զմերկանալն եւ ծանակ լինել ի մէջ ժողովրդոց: Որպէս<sup>437</sup> մարգարէն, զի ի բաց ընկեց զամենայն նախատինս եւ ոչ ամաչէր վասն չորս պատճառի. Նախ<sup>438</sup> զի ծանականք եւ ամօթալի գործն այն է, զոր Աստուած ոչ հրամայէ, իսկ զոր Աստուած հրամայէ, չեն ամօթ, այլ պարծանք պարծանաց:

Երկրորդ՝ զի վասն ժողովրդեան փրկութեան էր, ոչ ամաչէր<sup>439</sup>. ցուցանէ զառաւել զուրբն, զի վասն փրկութեան նոցա արհամարհեաց զամօթ, որպէս եւ վասն Տեառն մերոյ, ասէ Պօղոս առաքեալն. «Յանձն առ զչարչարանս արհամարհեաց զամօթ»<sup>440</sup> ( Եբր. ԺԲ 2): Երրորդ՝ ոչ ամաչէր վասն վարձուցն փոխարենի, որպէս եւ մարտիկք մեռան վասն պսակացն: Եւ զի՞նչ էր պսակն, այն որ զմարգարէն ծառայ կոչեաց իւր, որպէս գրէ ի հետագայն<sup>441</sup> եւ ասէ Տէր. «Չոր օրինակ զնա ծառայն իմ Եսայի մերկ եւ բոկ» (Ի 3), զի թէ լինել ծառայ թագաւորի պատիւ է մարդոյն, որչափ եւս Աստուծոյ մանաւանդ յորժամ Աստուած վկայէ: Չորրորդ՝ ոչ ամաչէր, զի զգեցաւ նա զհրամանն Աստուծոյ փոխանակ զգեստին եւ ի մերձ<sup>442</sup> իւր տեսնելով զԱստուած ոչ հայէր ի մարդկան, յորոց միջի շրջեր, ուստի յայտ է, զի տեսութիւն մտացն առաւել էր, քան զգալի աչացն:

Այժմ դարձուցուք յառաջին կարգն, թէ վասն է՞ր մերկացաւ: Երրորդ պատճառ, զի ի միտ ածցէ զմերկանալն նախնեացն մերոց ի դրախտէն եւ զայն, որ «Մերկ գամք յաշխարհս եւ դարձեալ մերկ ելանելոց ենք» ( Յովբ. Ա 21), որպէս ասէ Յոբ<sup>443</sup>: Չորրորդ՝ մերկացաւ մարգարէն<sup>444</sup> զբուրձն ի յօրինակ ստուերակերպ օրինացն հնոյն Իսրայէլի, զի մերկանալոց էին, յորժամ հրամանն Աստուծոյ, այսինքն՝ Բանն Աստուծոյ իջանէր յերկիր: Եւ մերկանայր հին օրէնքն, որպէս Պօղոս ի հին հանդերձս առակէր ասելով<sup>445</sup>. «Ամենայն, որ հնանայ, մերձ է յապականութիւն» (Եբր Ը 13): Հինգերորդ՝ մերկացաւ մարգարէն յօրինակ Քրիստոսի, որ մերկացաւ ի վերայ Խաչին, զի որպէս մերկութիւն մարգարէին զխայտառակութիւն<sup>446</sup> եգիպտացոցն նշանակէր, այսպէս եւ մերկութիւն Տեառն էր նշանակ<sup>447</sup> խայտառակութեան սատանայի եւ գերութիւն գերելոցն, որ ի դժոխս, որպէս ասէ Պօղոս. «Մերկաց զիշխանութիւնս եւ զպետութիւնս յայտ յանդիման խայտառակեալ նշանակեալ զնա յանձին<sup>448</sup> իւրում» ( Կողոս Բ 15): Եւ Դաւիթ ասէ. «Գերեաց զգերութիւն էառ աւար» (Հմմտ. Սաղմ. ԿԷ 19) եւ կործանեաց զդժոխս, ըստ<sup>449</sup> նմանութեանն Եգիպտոսի եւ Բաբելոնի: Վեցերորդ՝ մերկացաւ մարգարէն ի յօրինակ հետեւողացն

Քրիստոսի, որք վասն սիրոյ հրամանացն Աւետարանին թողին զհայրենիս եւ զստացուածսն եւ զայլն, նա եւ մերկացան ի մարմնոյ եւ<sup>450</sup> ծաղր եւ ծանակ լինէին ի մէջ հեթանոսաց, որպէս ասէ Պօղոս. «Իբրեւ առակ նշաւակի եղաք<sup>451</sup> ամենայն աշխարհի» (Երեմ Ը 2) նա եւ այժմ բազումք են<sup>451ա</sup>, զի յորժամ տեսանեն զառաքինիսն գծուծ<sup>452</sup> կերպի եւ առանց օժանելոյ, թաղծեալ դիմօք՝ նախատեն եւ ծաղր առնեն: Վասն որոյ ինքեանք լինելոց են յետոյ յորժամ տեսցեն զնոսա պայծառազգեստ իբրեւ զարեգակն եւ «իբրեւ զկայծակն ընդ եղէգն ընթացեալ» (Իմաստ. Գ 7) եւ **փոխանակ մոխրոյն օծումն ուրախութեան եւ սգաւորացն հանդերձ փառաց** (ԿԱ 3) Յայնժամ եղկեսցեն զինքեանս՝ ասելով. Մէք յիմարք եւ զվաստակ դորայ ոչ ինչ համարեաք, եւ այլն: Երթներորդ՝ մերկանալ մարգարէին զքուրձն նշանակէր զմարդկան մերկանալն ի մեղաց, այսինքն՝ զոր ի ձեռն մկրտութեան մերկանամք զհնութիւն մեղաց<sup>453</sup> եւ դարձեալ յետոյ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ սրբինք եւ ազատինք ի մեղաց, որպէս ասէ մարգարէն Դաւիթ. «Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, զերծ յինէն զքուրձ եւ ինձ զգեցոյց զուրախութիւն» (Սղմ. ԻԹ 12), որպէս յայտ է յառակէ անառակին, որ եհան ի նմանէ զհանդերձն եւ զգեցոյց զպատմուճանն առաջինն:

Ութերորդ՝ մերկանալ մարգարէին նշանակէ ի յարութեանն ատուրն զմերկութիւն եւ զյայտնի լինելն ամենայն գործոց մարդկան, զի զոր ինչ աստի ծածուկ եւ թաքուն գործեն, անդ դէմ յանդիման խայտառակելոց է ի մէջ բազմաժողով հրապարակին, որպէս այլոր ասէ մարգարէս. «Երեւեսցի ամօքք քո եւ յայտնեսցեն խայտառականք քո» (Երեմ ԺԳ 27), եւ մարգարէն Դաւիթ՝ «Արդ, յանդիմանեցից եւ կացուցից զայս ամենայն»<sup>454</sup> (Սղմ. ԽԹ 21):

Իններորդ՝ դարձեալ մերկանալ մարգարէին<sup>455</sup> նշանակէ ի դատաստանին զմերկութիւն շնորհացն ի մեղաւորացն, զի որք այժմ առնուցուն զքանքար շնորհացն, ըստ իւրաքանչիւր չափու եւ աստիճանի<sup>456</sup> եւ ոչ իրաւապէս շահին, այլ ծրարեն ծուլութեամբ եւ զլոյս աշտանակին դնեն ընդ գրուանաւ՝ հեշտութեան մարմնոյ<sup>457</sup>: Անդ յարդար դատաւորէ մերկանան զառեցեալ շնորհսն եւ տուժին յաւիտենական հրովն<sup>458</sup>, որպէս ասէ. «Առեք ի դմանէ զքանքարդ»<sup>459</sup> (Մտթ. ԻԵ 28) եւ «զձառայդ հանեք ի խաւարն արտաքին» (Մատթ. ԻԵ 30):

Տասներորդ՝ մերկացաւ մարգարէն, զի ուսուցանէ<sup>460</sup> քարոզողաց, զի որ ինչ բանի քարոզեն այլոց, նախ՝ պարտ է գործով յինքեան ցուցանել, որպէս մարգարէս սպառնայր մերկանալ նոցա, նախ ինքն մերկացաւ նոյնպէս եւ՝ ձերն մարգարէիցն Քրիստոս. Նախ յիւր անձն եցոյց զամենայն բարիս եւ զկարիս, այսինքն՝ զվիշտ եւ զչարչարանս: Չի որ ասաց, թէ. «Պարտ է ծնանել վերստին ի ջրոյ եւ ի հոգւոյ» (Յովհ. Գ 5), նախ Ինքն մկրտեցաւ, ասաց թէ. «Պարտ է յամենայն ժամ աղօթս առնել» (Դուկ. ԺԸ 1) եւ Ինքն հանէր զգիշերն ի զլուխ յաղօթսն Աստուծոյ: Ասաց. «Երանի որ լան, եւ վայ որ ծիծաղին» (Դուկ. Զ

21-25) եւ Ինքն ելաց բազում անգամ եւ ոչ երբեք ծիծաղեցաւ, զահս քարոզեաց<sup>461</sup> եւ Ինքն անսուաղ եկաց: Գովեաց զոնանկութիւն եւ աղքատութիւն եւ Ինքն ոչ ունէր տեղի, որ դնէր զգլուխն եւ զաղքատութեամբ հետիոտս եւ բոկ<sup>462</sup> շրջէր: Գովեաց զխոնարհութիւնն եւ Ինքն լուաց զոտս աշակերտացն: Օրինադրեաց զխորհրդաւոր պատարագն եւ Ինքն նախ պատարագեաց<sup>463</sup>, եկեր եւ արբ: Ասաց, թէ՛ «Չարչարելոց էք «Եւ ընկալաւ զթուքն, զապտակն, զգանն, զպսակն փշեղէն,<sup>464</sup> զխաչն եւ զմահն» (Հմմտ. Ժ 6): Եւ զայսոսիկ արար, զի զմեզ ուսուցէ նոյնպէս առնել եւ քարոզել, քարոզել եւ առնել: Հրէից պատժոցն էին օրինակքն, որ մերկանայր մարգարէն եւ այլն:

Այսքան առ այս:

- ԺԳ -

**Տեսի հեծեալս: Երկուս հեծեալ մի իշոյ, եւ հեծեալ մի ուղտու** (ԻԱ 7): Ըստ գրին հեծեալն յէշ առակէ զթագաւորն Մարաց, եւ հեծեալն յուղտ՝ զԵլիմացոցն, որք աներեցին եւ գերեցին զԲաբելոն ի ձեռն անարգ զօրաց կործանեցան: Նա եւ իշովն զխառնակեցութիւն բաբելացոցն նշանակէ եւ ուղտովն՝ զբարձր հպարտութիւնն: Դարձեալ հեծեալն ի յէշն նշանակէ զՔրիստոս, որ նստաւ ի վերայ ասանակի եւ իշոյ<sup>465</sup>, ըստ մարգարեութեան Չաքարիա. «Ահա թագաւոր քո գա նստեալ ի յասանակի»<sup>466</sup> (Չաք. Թ 9-10), իսկ հեծեալն յուղտու նշանակէ զՅովաննէս, որ զգեցեալ էր զստեւ ուղտու: Եւ խորհուրդ էր այս, զի զալստեամբն Քրիստոսի սուրբք<sup>467</sup> եւ անսուրբք միատրին, զի ի ձեռն մկրտութեան ամենայն ազգք մարդկան լինին անդամք եւ յողին ի գլուխն Քրիստոս, որպէս ասէ Պօղոս. «Ոչ հրէա եւ ոչ հեթանոս, ոչ սկիւթացի, ոչ ծառայ, ոչ ազատ,<sup>468</sup> այլ դուք մի էք ամենեքեան ի Քրիստոս Յիսուս» (Գաղ. Գ, 28): Տեսի հեծեալ մի երկձի: Քրիստոս է, որ ետ անտիս մարդկան վասն կործանման սատանայի եւ դժոխոց ասելով. «Քաջալերեցարուք, զի Ես յաղթեցի աշխարհի» (Յովհ. ԺՁ 33): Իսկ երկու ձի կամ զմարգարէսն եւ զառաքեալսն<sup>469</sup> ասէ, որք զբանն Աստուծոյ կրեցին եւ պատմեցին յայլ եւ յայլ տեղիս, որպէս ասէ Ամբակումն. «Ելել դու ի կառս քո հեծելութիւնք» (Ամբ. Գ, 8) կամ հրէայք եւ հեթանոսք էին երկու ձի, որք լծեցան ի կառս բանի Նորա:

[Հարց] - Չի՞նչ է, որ ասէ Տեսիլ արաբացոց (ԺԳ, 20):

Պատասխան - Տեսիլն այն էր, որ կամ ի միտքն տպաւորի տեսութիւնն իրին եւ կամ միայն ի յաչքն տպանայ եւ կամ արտաքոյ մարմին ձեւանա եւ երեւի: Իսկ պատգամն այն է, որ միայն ձայն լսեն առանց երեւելոյ ինչ: Իսկ առածն՝ որ ոչ տեսեամբ երեւի եւ ոչ ձայն լսէ, այլ միայն ազդմամբ լինի, այսինքն՝ որ ազդէ Հոգին Սուրբ ի մարգարէն եւ շարժէ ի խօսել, որպէս երգիչն մատամբն ազդէ ի քնարն եւ շարժէ ի ձայն, կամ որպէս ջերմութիւն հրոյ ազդէ ի մարմինն, կամ որպէս ջերմացաւ յանկարծակի<sup>470</sup> ազդէ ի մարմինն եւ շարժէ ի դողումն եւ ի կափ կափումն ատամանց: Որպէս ի վիշտս ոմանք պիտանիք եւ ոմանք

անպիտանք լինին: Պիտանիք նոքա են, որք համբերութեամբ եւ գոհութեամբ տանին, որպէս Յոր, եւ այնոքիկ, որք կրեցին զգանազան տանջանս վասն անուանն Քրիստոսի, եւ անպիտանք են, որ նեղասրտութեամբ եւ դժգոհութեամբ են ի վիշտս եւ կամ ոչ համբերեն մինչ ի կատարումն: Նոյնպէս եւ ի պատիժս եւ ի մեծութիւնս ոմանք պիտանիք եւ ոմանք անպիտանք լինին: Պիտանիք են, որ փառս մեծութեան խոնարհութիւն եւ հեզութիւն ստանան որպէս Աբրահամ, Դաւիթ, Կոստանդիանոս, Տրդատ եւ Թէոդոս, որպէս ասէ<sup>471</sup> Սողոմոն. «Որքան ի մեծութիւն հասանիցես՝ ի խոնարհութեան կալ» (Առակ. ԺՁ 3): Եւ անպիտանք են, որ ի պատիւս իւրոց ամբարտաւանեն եւ ոչ հնազանդին Տուողին զպատիւս, որպէս սատանայ, որ հպարտութեամբ ընկեցաւ ի պատուոյն, եւ Ադամ զրկեցաւ ի դրախտէն,<sup>472</sup> եւ Նաբուգոդոնոսոր եւ Սենեքերիմ կորեան վասն հպարտութեանն: Ի խոստումն պարգեւացն առաւել պարտ է գոհանալ առողին, քան թէ ի վերայ կալ<sup>473</sup> պարգեւացն, զի գոհանալ վասն առեալ պարգեւին անկատար է, զի թերութեան կարծիս ունի: Եւ յորժամ տեսանէ եւ առնու, ապա գոհանայ, իսկ նախքան զառնուլն, այսինքն՝ ի խոստմունք ի բարեացն գոհանալ առաւել հաստատուն եւ աներկբա հաւատոյ է ցոյցք, որպէս Աբրահամ, զի զամենայն պարգեւաց խոստմունս<sup>474</sup> Աստուծոյ իբրեւ զառեալ, հաւատայր առանց թերութեան: Նոյնպէս եւ մարգարէն Եսայի յառաջ քան զփրկութիւն ժողովրդեանն ի ձեռաց Հռափսակայ գոհանայր զԱստուծոյ եւ ասէր. «Տէր Աստուած իմ փառաւորեցից զքեզ եւ օրհնեցից զանուն քո»<sup>474ա</sup> (ԻԵ, 1):

- ԺԵ -

[Հարց]- Ո՞ր է ծանր եւ մեծագոյն, քան զամենայն մեղս:

Պատասխան - Կռապաշտութիւնն: Եւ յայտ է յերկու պատճառէ.

Նախ՝ զի ամենայն մեղք շնութիւն, սպանութիւն եւ այլն յանցումն է սուրբ պատուիրանացն Աստուծոյ: Իսկ կռապաշտութիւնն է մեղանշումն ընդդէմ էութեան եւ փառացն Աստուծոյ:

Երկրորդ՝ զի ամենայն մեղք զինչ եւ գործէ որ զերկիւղն<sup>475</sup> Աստուծոյ սանձ եւ պահապան ունի, վասն որոյ յերկիւղէ անտի յետոյ զղջանայ: Իսկ կռապաշտութիւնն ոչ ունի զերկիւղն Աստուծոյ: Եւ յայսմանէ յայտնի է մեծութիւն մեղաց: Չի ի հինն զինչ եւ մեղանշէր մարդ, ըստ կշռոյ<sup>476</sup> մեղացն մեծ եւ փոքր պատարագն սրբէր, այսինքն՝ զուարակօք եւ նոխազօք, ուլի եւ այլովն, իսկ մեծութիւն կռապաշտութեան յանցանացն այնքան<sup>477</sup> է մինչ Սիւնի Ռոդին Աստուծոյ պատարագեցաւ մարմնով Իրով ի վերայ Խաչին եւ ապա բարձաւ եւ քաւեցաւ մեղք կռապաշտութեան յաշխարհէ:

**Մարդոց ամբարշտաց եւ որոց<sup>478</sup> մատնեցեր<sup>479</sup> զմեզ** (ԻԵ 5). Յայսմանէ չորս օգտութիւն լինի. Նախ՝ զի որպէս պարտիզպան կակղացն<sup>480</sup> զերկիր եւ զաւելնորդն քաղէ, նոյնպէս Աստուած մատնուելով զմեզ ի ձեռս ամբարիշտ արանց<sup>481</sup> սրբէ զաւելորդ մեղսն բուսեալ ի

հոգի եւ ի մարմին մեր: Երկրորդ՝ զի մեք ոչ ամբարշտասցուք<sup>482</sup> որպէս նոքա զիրանալով եւ հեշտութեամբ մարմնոյ կամ<sup>483</sup> փարթամութեանց, այլ ի ձեռն նոցա նեղութեանցն նուազիմք յամենայն: Երրորդ՝ զի համբերեսցուք եւ զպսակ համբերութեանն առցուք, ըստ այնմ. «Որ համբերեսցէ ի սպառ՝ նա կեցցէ» (Մատթ. Ժ 22), եւ թէ՛ «համբերութեամբ ստասջիք զոգիս ձեր» (Գլուկ. ԻԱ 19): Չորրորդ՝ զի առվշտին դառնամք առ Աստուած եւ աղաղակեմք եւ փրկեսցէ զմեզ, ըստ այնմ, թէ՛ **Տէր ի նեղութեան յիշեցաք զքեզ** (ԻԶ 16): Որպէս զԻսրայել փրկեաց յԵգիպտոսէ յորժամ աղաղակեցին առ Աստուած եւ զԵրուսաղէմ ի ձեռացն Ռափսակայ, վասն Եզեկիա եւ որք ընդ նմա աղաղակելով ընթանալոյն ի տաճարն<sup>484</sup>: **Զօրացաւ մահ եւ եկուլ** (ԻԵ 8). Ոչ ասէ, թէ՛ եկեր, այլ՝ **եկուլ**<sup>485</sup>. վասն երեք պատճառի. Նախ՝ զի ուտելն զմասն<sup>486</sup> նշանակէ, իսկ կլանելն՝ զբոլորն, զի ցուցցէ, թէ ի վերայ բոլոր բնութեանս զօրացաւ մահ, վասն այն ասէ եկուլ: Երկրորդ՝ զի կլանելն զանյազ<sup>487</sup> ցանկութիւնն նշանակէ, այսինքն՝ զի սատանայ եւ մահն բորբոք ջերմութեամբ կամէր կորուսանել զմարդիկք: Երրորդ՝ զի ուտելն մանր ծասկելն է, որ սպականի յորովայնն, իսկ<sup>488</sup> կլանելն ամբողջ մտանելն եւ ելանելն է, որպէս ձուկն, որ<sup>489</sup> եկուլ զՅունան եւ ել ամբողջ. ցուցանէ, թէ ի ձեռն Քրիստոսի ամբողջապէս ի դուրս կորզելոց էր մարդկայինս բնութիւն, յորովայն է դժոխացն եւ ի ձեռաց մահու: Իշխանք աշխարհի ի ձեռն չորս իրաց զերկիրն խաղաղութեամբ եւ շէն պահեն. Նախ՝ իմաստութեամբ: Երկրորդ՝ փարթամութեամբ: Երրորդ՝ զօրօք: Չորրորդ՝ ամրոցօք: Իմաստութիւն պիտոյ է<sup>490</sup>, որ զիտէ շահել զհնազանդեալսն կամ զվերնագոյնս, ըստ իրաքանչիւր ախորժակացն: Փարթամութիւն ընչից պիտոյ է, զի տացէ մեծամեծացն, քան զինքն եւ<sup>491</sup> աղքատացն: Զօրք պիտոյ է, զի յաղթեսցէ թշնամեաց<sup>492</sup>: Ամրութիւն շինուածոց<sup>493</sup> պիտոյ է, վասն բռնաւոր հզօրաց, քան զինքն: Այս հասարակաց է: Այլ քրիստոնէա իշխանին<sup>494</sup> պիտոյ է միւս եւս, այսինքն՝ բարեպաշտութիւն, այն է, որ լինիցի գործով<sup>495</sup> սուրբ եւ արդար եւ հաւատով եւ յուսով անշարժ, որպէս բարեպաշտն Եզեկիա, վասն որոյ ասէ. Պահէ զարդարութիւն եւ ի քեզ յուսացայ, Տէր (Հնմտ. Եզեկ. ԺԱ 20 եւ ԼԵ 24): Նա պահէ զխաղաղութիւն աշխարհի: Ասէ Տէր. «Ես դնեմ ի հիմունս Սիոնի վէմ<sup>496</sup> բազմապատիկ, զընտիր զգլուխ անկեան, զպատուական ի հիմունս նորա եւ որ ի նա հաւատասցէ մի՛ ամաչեսցէ» (Հռոմ Թ 33): Նախ զթագաւորութիւնն Եզեկիա, զի նա եղեւ ընտիր քան զայլսն: Անկիւնն պատուական սեղանն է, որք քերովբէքն<sup>497</sup> հովանի ունէին: Եւ թագաւորն զլուխ է ժողովրդեան եւ հիմն է, զի ի վերայ արդարութեանն նորա հիմնաւորացն եւ որք իբրեւ զնա հաւատան մի՛ ամաչեսցեն: Այլ ճշմարտութեամբ ի Տէր մեր առակի բանս: **Վէմ** է, որ ի կուսէն ծնաւ առանց սերման, ըստ Դանիէլի. «Ի լեռնէ վէմն առանց ձեռին հատեալ» (Դան. Բ, 45): **Ընտիր**, այսինքն՝ անարատ, զի. «Ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նենգութիւն» (Ա Պետ. Բ, 22): **Անկիւն պատուական** (ԻԸ 16ա) սեղանն է, որ յամենայն օր յամենայն սեղան

պատարագի: **Գլուխ** է, զի կատարիչ է եկեղեցոյ, ուստի ամենայն անդամք յօղիւք եւ խաղալեօք աճեն, զաճումն սուրբ եւ հիմն է, զի. «Ի վերայ ինքեան շինեաց զեկեղեցի հաւատացելոց» (Մատթ. ԺԶ 18), որպէս ասէ Պօղոս. «Հիմն այլ ոչ որ»<sup>498</sup> է, բայց եղեալն Յիսուս Քրիստոս» (Ա Կորթ. Գ 11): Եւ դարձեալ գլուխ է, զի Աստուած է եւ հիմն է, զի մարդ է. «Եւ որ ի Նա հաւատասցէ մի՛ ամաչեսցէ»<sup>499</sup> (Ա Պետ. Բ, 6). մի յաստեացս չարէ եւ մի՛ հանդերձեալ հրոյն: Դարձեալ **Ես Տէր**, ասէ, **դնեմ ի հիմունս** (ԻԸ 16բ), եւ ոչ մարգարէ որ եւ ոչ վասն քարի: Եւ հիմանց է<sup>500</sup> բանս, յայտ է, զի ասէ. **Որ ի նա հաւատասցէ** (ԻԸ 16գ): **Ի հիմունս**, ասէ, **դնեմ**. զի առաջին շինուածն ապականեալ բնութիւնս<sup>501</sup> վերստին ի հիմանց կամի նորոգել:

### - ԺԶ -

Հիմն է Քրիստոս, զի որք ի վերայ նորա ոչ շինեն՝ ի շինուածն ոչ մտանեն: Այսպէս եւ այլոր «որք» ասէ զԻնքն, այսինքն՝ սկիզբն եւ արմատ շառաւղաց հաւատացելոցս<sup>502</sup>: **Վեմ** կոչի<sup>503</sup> դարձեալ<sup>504</sup> վասն հաստատութեան եւ անշարժութեան, զի որ<sup>505</sup> յենուն ի Նա՝ անշարժ հաստատութեամբ ամրանան: Դարձեալ **վեմ** կոչի, զի Ադամ **վեմ** էր անմահութեամբ եւ զի յանցեալ եւ հող եղել, եւ Տէրն ողջացնել կամելով զբնութիւնս՝ **վեմ** լինի եւ **վեմ** կոչէ զեկեղեցի<sup>506</sup>: Դարձեալ «վեմն» է ի թանձրութենէ հողոյ, եռացմամբ հրոյ կարծրացեալ եւ ունի բազում յատկութիւնս, որ ի Տէր մեր տեսանի: Նախ զի կարծր է եւ ուժով է եւ սեղմ է եւ ծանր է եւ ցամաք է: Այսպէս Տէր մեր Յիսուս Քրիստոս զթանձր հողեղէն բնութիւնս<sup>507</sup> մարդկային մարմնոյ խառնեալ ձուլեաց ի հուր Աստուածութեան իւրոյ ըստ նմանութեան վիմի. Նախ՝ զի կարծր, այսինքն՝ անփոփոխելի է<sup>507ա</sup> ոչ միայն Աստուածութիւնն, այլ եւ մարմինն՝ միաւորեալ առանց ապականութեան, եւ անփոփոխ է:

Երկրորդ՝ զի ուժով, այսինքն՝ զօրաւոր է, ըստ այնմ, «Որ կրէ զամենայն բանիւ զօրութեան» (Եբր. Ա 3) եւ «Քրիստոս Աստուծոյ զօրութիւն» (Ա Կորնթ. Ա 24), ասէ: Երրորդ՝ զի սեղմէ խստացեալ մանկունք փոշեացն, այնպէս եւ անբաժանելի է զերագոյն միաւորութիւն Քրիստոսի, զի յետ անճառ միաւորութեան բանին եւ մարմնոյ ոչ բաժանին ի միմեանց ո՛չ բնութիւնք ո՛չ կիրք եւ ոչ ներգործութիւնք, այլ որ ինչ Աստուծոյն նոյն եւ մարդոյն եւ որ ինչ մարդոյն նոյն եւ Աստուծոյն, վասն զի Աստուածն մարդ է եւ մարդն՝ Աստուած: Չորրորդ՝ զի ծանր է, որ նշանակէ զանչափ խոնարհութիւն Քրիստոսի, որպէս ասէր. «Յինէն ուսարուք, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ» (Մատթ. ԺԱ, 29), այսինքն՝ զի յերկնից յերկիրս<sup>508</sup> էջ եւ մեծատունն վասն մեր աղքատացաւ, որ ի կերպարանս Աստուծոյ էր, զկերպարանս ծառայի էառ: Եւ մտադրութեամբ ծառաեաց բազմաց, եւ «հնազանդ եղել մահու չափ եւ մահու խաչի»<sup>509</sup> (Փիլիպ. Բ 8): Հինգերորդ՝ զի ցամաք է **զվեմն** եւ Տէր մեր ցամաք մնաց աշխարհական հիւթոց, զի ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նենգութիւն: Վեցերորդ՝



զի վեճն ի փոս եւ ի դիւր վայրս դադարի: Եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս<sup>510</sup> ասէ- **Ես յո՞հանգեայց եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս**, եւ թէ ոք զպատուիրանս իմ պահեցէ, Ես եւ Հայր իմ առ նա եկեցուք» (Յովհ. ԺՁ 23): Եւթներորդ՝ զի վեճն գթէ եւ գլորէ, գորս ոչ տեսանեն ի գնացս: Եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս անհաւատիցն է վեճ գլորման եւ քար զայթա[կ]ողութեան. «Ձի նա է ի գլորումն եւ ի կանգնումն<sup>511</sup> բազմաց», ասէ Սիմոն (Ղուկ. Բ, 34): Ութներորդ՝ զի «յոյր վերայ անկցի եւ հոսեցէ վեճն» (Մտթ. ԻԱ 44) եւ Տէր մեր խորտակեաց զօրութիւն սատանայի, եւ փշրեալ կործանեաց զպատկերս կռոցն բանի զօրութեան: Ըստ տեսլեանն Դանիէլի թէ. «Հատեալ վեճն առանց ձեռին» (Դան. Բ, 45) ետար եւ փշրեաց զամենայն պատկերս կռոցն:

**Բազմապատիկ**, (ԻԸ 16), այսինքն՝ բազմակտոր: Նախ՝ զի ամենայն ոք, որ շինին ի վերայ նորա՝ տանի եւ ընդունի: Երկրորդ՝ զի ոչ միայն զաստեղացս<sup>512</sup> բարութիւն, այլ եւ զհանդերձեալ կեանս պարգեւէ: **Ընտիր** է, զի ոչ ոք<sup>513</sup> է Նմա հաւասար, զի մի յորժամ լսիցես որդի անդրանիկ զԻսրայէլ կամ օծեալ գոք ընդ Քրիստոսի, որ է Սիածին<sup>514</sup> Որդին հաւասար կարծիցես, զի նա է Որդիս ընտրեալ<sup>515</sup>, «ընդ որ հաճեցաւ Հայր» (Մտթ. Գ 17), բայց միայն Հօր է հաւասար, զի գոր ինչ ասի Հօր նոյն եւ Որդոյ ասի:

**Պատուական** է, զի թէպէտ անարգեցաւ եւ թուք ընկալաւ եւ չարչարեցաւ՝ յԻրմէ մեծութեանն է փառացն ոչ նուազեցաւ:

**Գլուխ անկեան**՝ (ԻԸ 16դ) անիկիւնաբարն: Երկու ինչ գործ ունի. Նախ՝ զի զերկու որմն կապէ ի մին: Երկրորդ՝ զի զամենայն ինչ որմոյն յինքն ընդունի: Այսպէս եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս զամենայն ինչ զմեղս եւ զանեծս յինքն ընկալաւ եւ եբարձ մարդեղութեամբն իւրով<sup>516</sup>, եւ զիրէայս եւ՝ զհեթանոսս կապեաց ի մի հաւատ քրիստոնէութեան: Եւ զի չորս են կողմունք որմոցն, որ կապէ անկիւնաբարն: Այս է հրէայք եւ հեթանոսք, մարդիկ եւ հրեշտակք, զի եբարձ զկրճիմն, որ էր խտրութիւն օրինացն ի մէջ հրէիցն եւ հեթանոսաց: Եւ եբարձ զթշնամութիւն, որ էր կռապաշտութիւն եւ մեղքն ի մէջ հրեշտակաց եւ մարդկան եւ հաշտեցոյց զհրեշտակս ընդ մարդկանս<sup>517</sup>, ըստ որում զմարմինն ի բնութենէ մարդկան նստոյց ընդ աջմէ Հօր եւ «Նմա կրկնի ամենայն ծունր երկնաւորաց եւ երկրաւորաց» (Փիլիպ. Բ 9) եւ այլն: «Եւ որ ի նա հաւատասցէ մի՛ ամաչեցէ» (Ա Պետ. Բ 6): Հաւատովն նշանակէ զառաջին զալուստն, զի յերկրորդ զալուստն ոչ են պետք հաւատոց:

Դարձեալ ասէ. «Որ հաւատայ ի նա մի ամաչեցէ» (ԻԸ 16) եւ ոչ որ քննեցէ յայսմանէ յայտ է թէ ոք<sup>518</sup> ժպրհի ի քննութիւն աստուածային տնօրէնութեանն, ամաչեցէ: Նախ զի ոչ կարէ հասնել մտօք: Եւ երկրորդ, զի յերկրայութիւն անկանի եւ կորիցէ: Այսքան առ այս<sup>519</sup>:

- ԺԷ -

Հարց - Ձի՞նչ է որ ասէ. **Արքոյց ձեզ Տէր ոզի յիմարութեան եւ եխից զաչս ձեր**<sup>520</sup> (ԻԹ, 10):

Պատասխան - Բազում են ի Սուրբ Գիրս այսպիսի բանքս, ըստ այնմ, որ ասէ. «Ետ նոցա Աստուած<sup>521</sup> հոգի յիմարութեան, աչս, որ ոչ տեսանիցեն» (Հռոմ. ԺԱ, 8): Եւ Պողոս ասէ, թէ՛ «Մատնեաց զնոսա ի միտս անարգութեան» (Հռոմ. Ա 28): Եւ թէ. «Աստուած կուրացոյց զմիտս<sup>522</sup> անհաւատիցն» (Բ. Կորնթ. Դ, 41): Նա եւ<sup>523</sup> բազում զգուշութեամբ պարտ է իմանալ զայսպիսի բանքս, զի մի՛ կարծիցեն չարափառքն, զի Աստուած է պատճառ մոլորութեանց նոցա. Նախ՝ ասէ զայս, զի մի<sup>524</sup> զվիշտսն եւ զպատուհասն յԱստուծոյ կարծիցեն<sup>525</sup>, զի յորժամ բազում սպառնալեաց բան ոչ լսիցեն՝ ածէ ի վերայ նոցա տանջանս: Երկրորդ՝ զի ետ Աստուած անձնիշխան կամս<sup>526</sup> մարդոյն, որով խտորեացի ի չարէ եւ արասցէ զբարի, իսկ նոքա անձնիշխան կամօքն ընտրեցին զչար եւ ոչ կամեցան լսել զբանն Աստուծոյ: Եւ թէպէտ Աստուած ետ անձնիշխան կամս<sup>527</sup> ի նոսա՝ ոչ է Աստուած պատճառ չարեաց նոցա, այլ՝ ինքեանք, որ կամաւ զչարն ընտրեցին: Չոր օրինակ թագաւոր որ տա զէն ծառայից ի փրկութիւն ինքեանց եւ ի սատակումն թշնամեաց, եւ թէ նոքա զինքեանս սպանանեն, ինքեանք են մեղադրելիք<sup>528</sup> եւ ոչ՝ թագաւորն: Երրորդ՝ զի Աստուած տա բազում լոյս<sup>529</sup> իմաստից եւ նոքա աշխարհականն մտօք ոչ կամէին տանիլ, վասն այն յիմարին, եւ ոչ Աստուած, այլ նոքա են պատճառ յիմարութեանց իւրեանց<sup>530</sup>: Չոր օրինակ պայծառ լոյս արեգակն ծագէ ի վերայ բոնտ աչաց եւ նա խաւարի յառաւել լուսոյն: Արդ, ոչ արեգակ, այլ տկարութիւն աչացն եղի պատճառ կորութեան նմա: Նոյնպէս եւ Աստուած. «Ծագէ զարեգակ ի վերայ չարեաց եւ բարեաց», ասէ (Մատթ. Ե 45): Չորրորդ՝ զի Աստուած ծածկէ զբանս առակաւ եւ օրինակաւ յանարժանիցն, եւ նոքա ոչ իմացան զծածուկ խորհուրդս, վասն այն յիմարին, որպէս ասիցէ որ- Նոքա ոչ<sup>531</sup> կամին լսել, ես այնպէս խօսիմ, զի մի լսիցեն, որպէս աստ ասէ.

**Եղիցին պատգամքս այս իբրեւ զթուղթ կնքեալ, զոր ոչ ոք կարէ ընթեռնուլ (ԻԹ, 11):** Եւ թէ ասիցէ որ ընդէ՞ր ասէ. «Յորժամ ոչ օգտին, այս է, զի են բազումք որ օգտելոց են, որպէս բանք մարգարեիցն, թէպէտ<sup>532</sup> յայնժամ նոցա ծածուկ եւ անօգուտ լինէր, այլ այժմ մեզ յատնի օգտակարք են ամենայն: Հինգերորդ՝ զի յորժամ մարդիկ անզոյապէս սովորին ի չարիս, յայնժամ թոյլ տա Աստուած երթալ զհետ կամաց իւրոց, այն է՝ մատնելն զնոսա ի միտս անարգութեան, որպէս այժմ բազումք են ի մոլորութեան, եւ զիտէ Աստուած, զի ոչ կամին դառնալ. վասն այն ոչ խնդրէ զնոսա, եւ ոչ առաքէ նոցա<sup>533</sup> քարոզս:

Հարց - Չի՞նչ է, որ ասէ<sup>534</sup>. **Եղիցի բանս այս թուղթ կնքեալ, զոր տայցեն ցայր մի զրագէտ եւ ոչ կարէ ընթեռնուլ (ԻԹ, 11):**

Պատասխան - Նախ մարգարեից բանքն են կնքեալ օրինակաւ, զոր ոչ իմաստունք եւ ոչ տգէտք<sup>535</sup> ոչ կարելին<sup>536</sup> իմանալ, որպէս ասացաք, զի անարժանք էին, որպէս մեք, յորժամ ոչ կամք լսել կորուսանենք զբանն, զի ասէ Սողոմոն. «Յունկն անզգամի մի խօսիր» (Առակ ԻԳ 9) եւ Տէրն թէ՛ «Մի՛ արկանէք զմարգարիտ ձեր առաջի խոզից» (Մատթ. Է 6): Երկրորդ՝

յարմարի բանս<sup>537</sup> ի կոյսն Մարիամ. մայրն Եմանուէլի կնքեալ թուղթ էր, զի խորհուրդ կուսութեան<sup>538</sup> նորա անթարգմանելի էր, զի մայր լինելով կուսութեամբ պատուեցաւ<sup>539</sup> Եւ ճարտար դպիրն Յովսէփ է, որ<sup>540</sup> կացուցաւ խորհրդոյն սպասաւոր<sup>541</sup> եւ ոչ զհտաց զնա: Նա եւ կոյսն Յոհանէս սպասաւորեաց որդիութեամբ սրբուհոյ Մօրն եւ Կուսին մինչեւ ի փոխումն յերկրէ: Երրորդ խորհուրդ տնօրէնութեանն Աստուծոյ անհաս է մտաց եւ անճառ բանի ոչ միայն չափաւոր մարդկան, այլ եւ՝ նոցին իսկ աստուածաբանից եւ հազարապետաց խորհրդոց նորին: Եւ ով են սոքա երկու այրք, որք ոչ կարացին ընթեռնուլ, այսինքն՝ Պօղոս յառաքելոցն եւ «Մեծն ի ծնունդս կանանց» (Ղուկ. Է 28) Սկրտիչն Յովաննէս ի մարգարէս, եւ նմանք նոցին: Չմինն անհետազօտելի եւ անքննելի զճանապարհն Աստուծոյ ասէր<sup>542</sup>, եւ մինն ոչ կարէր զխրացս կօշկաց նորա լուծանել, այսինքն՝ ի մարմնառիկ<sup>543</sup> տնօրէնութեանցն սակաւ ինչ թարգմանել<sup>544</sup>: Եւ վասն է՞ր ասէ, զի **կնքեալ** էր: Եւ զի՞նչ էր կնիքն<sup>545</sup> Հայր եւ Հոգին Սուրբ, ըստ այնմ. «Հոգին Սուրբ եկեցէ քեզ եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի քեզ» (Ղուկ. Ա 35): Արդ, գոր Հայր եւ Հոգին կնքեն՝ ո՞վ է, որ համարձակեցի յայտնել<sup>546</sup>: Ռիւնոյ Կորուրայ<sup>547</sup> կոչէ զԵգիպտոս, **Արիէլ**\* (ԻԹ 1) քաղաք, որ է ընդդէմ Աստուծոյ, կոչի<sup>548</sup> զԵրուսաղէմ, **Քերմել** (ԻԹ 17) զԿարմնելոս լեռն կոչէ:

Ասէ Տէր. **Վայ ձեզ որդիք ապստամբքք**» (Լ, 1), յառաջ զպատիւն ասէ, որ է Որդի, զի աստիկք ցուցցէ զպատիժն: Չի որպէս մեծ է պատիւն Որդոյն, նոյնպէս եւ պատիժ քան զծառայն, որ երեւի<sup>549</sup> երեք իրօք. Նախ՝ զի զծառայն ընչիւք ստանան, իսկ զՈրդին յէութենէն հատանեն ցաւօք եւ երկամբք: Երկրորդ՝ զի Որդին զէութիւնն առնու, իսկ զծառայն զպատահմունքն, որ են ինչքն: Երրորդ՝ զի Որդին բոլոր ընչիցն է ժառանգ, իսկ ծառայն՝ մասնաւորին, իսկ զպատիժն Որդոցն ասէ յօրէնքն. «Որ անարգէ զՀայր կամ զՄայր՝ մահու մեռցի» (Բ Օր. ԻԷ 16), իսկ ծառային ոչինչ յայցանէ, ապա պարտ է, որ առաւել սիրէ որդին զհայր քան ծառայ՝ գտէր: Իսկ մեք Աստուծոյ որդի կոչինք ոչ միայն ըստ արարչութեան, այլ եւ, ըստ աւագանին ծննդեանն ի Հոգոյն Սրբոյ, «Որով աղաղակենք՝ Աբբա Հայր» (Հռոմ Ը 15): Եւ ունինք բազում<sup>550</sup> առաւելութիւնք քան զայլս. Նախ՝ զի Հոգին Սուրբ, որ էութիւնն է Աստուծոյ, ետ մեզ, եւ ապա՝ զհաւատոյ կենդանութիւնն ի գլխոյն մերմէ Քրիստոսէ: Եւ զի ժառանգակիցք ենք Քրիստոսի ամենայն բարութեանց, իսկ անհաւատքն իբր զծառայք արարեալք յԱստուծոյ՝ միայն յաշխարհիս սակաւ բարութիւնս ունին: Վասն որոյ մեք պարտական ենք առաւել սիրել<sup>551</sup> զԱստուած, քան զնոցա<sup>552</sup>, «զի որում շատ տուաւ շատ խնդրեցի» (Ղուկ. ԺԲ 48): Նոյնպէս եւ

\* Եբր. բառացի «Տիրոջ առյուծ» կամ «Տիրոջ սեղան», որ Եսայու մոտ Երուսաղէմի, իբրեւ աստվածային զոհաբերութեան վայրի, բանաստեղծաշունչ անվանումն է:

յանցանելն պատիժն մեր<sup>553</sup> մեծ<sup>554</sup> է, քան զնոցայն, զի. «Որ զիտե զկամս Տեառն եւ ոչ պատրաստիցէ ըստ կամաց նորա, արբցէ զան բազում» ասէ Տէր (Ղուկ. ԺԲ 47):

**Խորհեցայք խորհուրդ ե՛ւ ոչ ինեւ** (Լ 1), այսինքն՝ ոչ Իմով կամօք: **Ինեւ** (Լ 1) այսինքն՝ ոչ Իմով կամօք: **Ինեւ**ն տիրական է եւ ոչ ծառայական է, զի ինքնեաւ վարէին հինքն առ կոչմունս իշխանացն, եւ մարգարէն ասէ. «Ինքն հրամայեաց եւ հաստատեցան» (Սաղմ. ԸԽԸ, 5):

**Եւ դաշինս կռեցէք եւ ոչ իմով հոգով** (Լ 1). տե՛ս եւ<sup>555</sup> ի միտ առ, զի զՀոգին Սուրբ<sup>556</sup> հաւասար Աստուծոյ դնէ<sup>557</sup>, զի անդ ասաց, թէ՛ «ոչ ինեւ» եւ աստ թէ՛ **ոչ իմով Հոգով**:

- ԺԸ -

**Տեսիլ**<sup>558</sup> չորքոտանեաց յանապատի ի նեղութեան եւ յանձկութեան: Այս երկրորդ հատորն է ասէ. հատորն այն է, որ Ոսկէբերանն հատոր<sup>559</sup> հատոր է արարել զմեկնիչն վասն ընդարձակութեան բանիցն<sup>560</sup>, որպէս զՄատթէոս զլուխն յերիս հատորս կամ թէ ըստ խորհրդոյ<sup>561</sup> տեսութեանն ասի հատոր: Ուստի փոխէ զբանն յայլ դէմս:

**Չորքոտանեաց.** Չի էին մարդիկք զբարս չորքոտանեաց ստացեալ, ըստ այնմ՝ «Հաւասարեաց անասնոց անբանից» (Սղմ. ԽԸ 13) եւ ամայացեալք ի բարութեանց կամ զի<sup>562</sup> ընդարձակ անապատս եւ անջուրս բազում նեղութեամբ իջանէին յԵգիպտոս, փախստականք յԱսորեստանեայցն<sup>563</sup> ի նեղութեան ժամանակին:

**Առիծ եւ կորին առիծոյ եւ ի նոցանէ իժ եւ քարք թեւաորք** (Լ 6): Նախատէ զվատութիւն<sup>564</sup> նոցա, զի առիծ կոչեցաւ Յուդայ եւ իժի նմանեցաւ Եգեկիա, այժմ տկարութեամբ բարձեալ զգանձս իրեանց<sup>565</sup> փախչին յԵգիպտոս իբր յամրոցի: Դարձեալ **առիծ** արի եւ հզօր կոչէ զնախնիսն<sup>566</sup> եւ իժս չարաբարոյս զնոսա, զի առաքինութեամբ նախնեաց յամօք արասցէ<sup>567</sup> զնոսա: Այս ըստ ճառին: Իսկ հոգեւորապէս ճառս այս ի դէմս Քրիստոսի է: Եւ նախ զփրկելոցն նովաւ դնէ զօրինակս եւ ասէ **չորքոտանեաց**, որք չորիւք առաքինութեամբ յինքեանս<sup>568</sup> կրեցին զՔրիստոս, այսինքն՝ ի<sup>569</sup> խոհեմութիւնն, արիութիւնն, ողջախոհութիւնն եւ արդարութիւնն, կամ հաւատ, յոյս, սէր եւ գործք բարի, յորժամ անապատ լինի ի չարեաց: Իսկ **նեղ** եւ **անձուկ** ասէ զժամանակն, որ յառաջ քան զՔրիստոս, կամ նեղ եւ անձուկ ճանապարհն, ասէ ( Մատթ. Է 13-14), ընդ որով ինքն Բանն զնաց եւ զմեզ Յակոբ Յուդայի, որ ել բազմեցաւ եւ ննջեաց (Ծնդ. ԽԹ 9) ի վերայ խաչին, եւ Ինքնիշխան զօրութեամբն յարեաւ: **Իժք** եւ **քարքք** կոչէ զառաքեալսն կամ զի մի<sup>570</sup> ծանր թուեցի անուն նոցա ի վերայ սատանայի, յորոց ազդու բանից հարան եւ սատակեցան դերք եւ փշրեցան պատկերք նոցին: Կամ վասն կամակոր օձաձեւ բնութեանս, որ հինգ զգայարանօք իբրեւ զօձ խոտորի: Որք թռեան առ ամենայն ազգս եւ ածին ի ներքս փոքրոզի<sup>571</sup> բեռինն Քրիստոսի: **Էջ** կոչէ զհրէայսն, որք բեռնակիրք էին աստուածային արինացնն, **ուղտ**՝ զհեթանոսս, որք բեռնակիրք էին մեղաց, եւ բարձին հրէայքն զգանձս

լրման մարգարեիցն, որ է Քրիստոս: Եւ հեթանոսք զմեծութիւնն, որ վասն ողորմութեան, փառաւոր արարին զԱստուած: Որք էին իբրեւ զեգիպտացիս անարգ կռոցն խոնարհեալ եւ այժմ՝ խնդութիւն եւ փառք եւ պսակ պարծանաց առաքելոցն:

**Եղիցի լոյս լուսնին իբրեւ լոյս արեգականն, եւ թնապատիկ եղիցի իբրեւ լոյս ատուրց եւրանց** (Լ 26). Չգալապէս այս ոչ եղեւ առ Հրեայսն եւ ոչ այն, որ ասէ. «Եղիցի ջուր բխեալ ի վերայ ամենայն լերանց»: Այլ յորժամ կործանեցաւ բանակն Սենեքերիմա, բազմացաւ լոյս լուսաւորացն ի վերայ նոցա, որք էին ի խաւարի<sup>572</sup> պաշարմանն (տե՛ս Դ Թագ- ԺԹ-): Եւ թռեաւ աւետիք նոցա ընդ ամենայն տիեզերս: Իսկ առ մեզ լոյս մեծ ծագեաց ոչ միայն եւ թնապատիկ, այլ բիւրապատիկ, քան զարեգակն, եւ լուսաւորեցան ներքին եւ արտաքին աչք մեր առ հասարակ, եւ բժշկեցան<sup>573</sup> ցաւք հոգոց եւ մարմնոց, եւ<sup>574</sup> ջուր կենդանի յամենայն տեղիս բխեաց, այսինքն՝ ուսումն վարդապետութեանն Քրիստոսի ի մեջ հեթանոսաց՝ լեռնացեալ ամբարշտութեամբ: Դարձեալ **լոյս լուսնին** է հին օրէնքն, մարգարեքն, որ ի գիշերի յառաջ քան զծագումն արեգականն արդարութեան անկատարք էին, եւ զալստեամբ Բանին կատարեցան եւ եղեն իբրեւ զԱւետարանն: Իսկ **լոյս արեգականն** է Աւետարանն, որ եւ թնապատիկ եւս<sup>575</sup> առաւել է քան զլոյս եւ թ ատուրցն արարչութեան, զի անդ ի հողոյ մարդ արարաւ, իսկ աստ մարդն հողեղէն աստուածացաւ եւ ընդ աջմէ Հօր Աստուծոյ նստաւ: Դարձեալ ի կատարածին, յորժամ նորոգին երկինք եւ երկիր եւ ամենայն տարերք, նմանապէս եւ լուսաւորքն առաւել պայծառասցին, քան զոր այժմ են, զի լուսինն եղիցի իբրեւ զարեգակն եւ արեգականն եւ թնապատիկ եւս<sup>576</sup> պայծառասցի<sup>577</sup>:

Ասէ Տէր<sup>578</sup>. **Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, եւ ընտանեակք իցեն նորա յԵրուսաղէմ** (ԼԱ 9): Ոմանք ասեն լոյս **ի Սիոն**, որ է փրկութիւն եւ հուր՝ **յԵրուսաղէմ**, որ է սաստիկ տանջանք Ասորեստանոյն: Այլ **Սիոն** եւ **Երուսաղէմ** զվերին եւ զիմանալիսն ասէ, «Որ է Մայր մեր ամենեցուն» (Գաղ. Դ 26-27): Եւ թէ մարդիկ ի մարմնաւոր տանջանաց փրկին **երանելի**<sup>579</sup> ասենք զնոսա, որչափ եւս առաւել նոքա<sup>580</sup>, որ փրկին յանտի տանջանաց հրոյն, որ այրէ զսատանայ թշնամին մեր: Իսկ **զաւակ** ասէ զհոգեւոր<sup>581</sup> ծնունդս բարեգործութեանց, զի յերկիւղն Աստուծոյ յղանամք եւ երկնչիմք<sup>582</sup> համբերութեամբ ի ճգնութիւնս եւ ծնանիմք զփրկութիւն հոգոյ, որ ուրախ առնէ միշտ զԾնօղսն, ըստ այնմ «Բնակեցուցէ զամուլն ի տան, որպէս մայր որդի բերկրեալ» (Սղմ. ԾԺԲ 9): Այլ եւ **զընտանիս** ունիմք զգալապէս յեկեղեցիս, որ է նոր Սիոն եւ Երուսաղէմ զնուէրս պատարագաց, որ է փոխանակ մեր միշտ անմոռաց յիշատակ եւ ընտանի են առաջի երեսացն Աստուծոյ, այսինքն՝ բուրմամբ անուշահոտ եւ լուսովն անշէջ. եւ այլ ինչ արդիւնք, զոր յեկեղեցիս կատարենք<sup>583</sup>:

**Երանի, որ սերմանիցեն ընդ ամենայն ջրով, ուր եզն եւ էշն կոխիցեն (ԼԲ 20):** Վարդապետաց ասէ, որք հերկեն<sup>584</sup> գկորդացեալ սիրտս մեղաւորաց եւ սերմանեն զբանն կենաց, յետոյ պարտ է ամենայն ջրով ոռոգել, զփուշսն քաղել եւ ապա զարդիմսն յարքայութիւնն երկնից ժողովել. նոքա են երանելիք եւ ոչ՝ որք միայն սերմանեն եւ յանհոգս կան: Դարձեալ **եզն՝** սուրբ եւ **էշն՝** անսուրբ. նշանակեն զարդարս եւ զմեղաւորս, զի եզն սուրբ կենդանի եւ պատարագելի եւ երկրավաստակք<sup>585</sup>, նոքա արդարք են, որ միշտ ի<sup>586</sup> տղայական տիոց ի<sup>587</sup> բարեգործութիւնս վաստակին եւ հանապազ ընդունելի եւ հաճոյք են Աստուծոյ, որք եւ ունին զջուրն կենդանի յուտոյն<sup>588</sup>: Իսկ **էշն** անսուրբ եւ բեռնակիր, նոքա մեղաւորքն են, որ ի բաց ձգեն զբեռինս մեղաց եւ ապաշխարութեամբ կրեն յինքեանս<sup>589</sup> զփոքրոգի բեռն Զրիստոսի, որք ունին զջուր արտասուաց: Երկոքեան<sup>590</sup> սոքա միապէս<sup>591</sup> երանելիք են, ասէ, այսինքն՝ արդարն, որ միշտ բարեգործէ, եւ մեղաւորն որ յետոյ ապաշխարէ, զի եւ Տէրն երանեաց ոչ միայն զսուրբս սրտիք ,այլ եւ՝ զսգաւորսն ի վերայ մեղաց:

- ԺԹ -

**Տէր ողորմեաց մեզ, զի ի քեզ յուսացաք (ԼԳ 2).** «Տե՛ս, զի չէ պարտ ողորմելոյն ընդ վայր ողորմիլ, զի թէ չունիս այլ ինչ ուղղութիւն, այսինքն՝ ողորմութիւն, զի աղքատ ես, չունիս պահք, զի տկար ես, սակայն յուսով ժտեա ի Տեառնէ եւ տացէ քեզ զխնդրուածս քո եւ այլն, ըստ առակի այրոյն, որ ժողովն էառ<sup>592</sup> զխնդրելին (տե՛ս Ղուկ. ԺԸ 1-8), եւ որ զբիր դահեկանն պարտ էր, վասն խնդրելոյն թողաւ նմա (տե՛ս Ղուկ. ԺԶ 1-8):

Բայց չորս իրք հարկաւորք են ի խնդիրն. Նախ՝ զի յամենայն կողմանց զսպեցես զմարմինն եւ զգայարանս առ ի միտսն ժողովեցէ եւ հոգովն եւ մտօքն առ Աստուած խոկասցէ, ըստ այնմ. «Սաղմոս ասացից հոգով եւ մտօք» (Ա Կորնթ. ԺԳ 15):

Երկրորդ՝ զի հաւատով խնդրեսցէ՝ առանց երկբայութեան, ըստ այնմ «Չամենայն ինչ, զոր եւ խնդրիցէք հաւատով՝ առնուցուք, զի երկմիտ մարդն մի ակնկալցի առնուլ ինչ յԱստուծոյ» (Յակ. Ա 7-8) ասէ: Երրորդ՝ զի խոնարհութեամբ խնդրեսցէ, որպէս մաքսաւորն եւ ոչ հպարտութեամբ, որպէս փարիսեցիւն. **Հայեցաւ Տէր յաղօթս խոնարհաց եւ ոչ արհամարեաց զխնդրուածս նոցա (ԿԳ 9)**, այսինքն՝ յիշելով զմեծ գթութիւն Աստուծոյ առ առաջինսն եւ զտկարութիւն բնութեանս: Չորրորդ՝ զի օգտակարս<sup>593</sup> խնդրեսցէ հոգոյ կամ եկեղեցոյ կամ իշխանաց կամ աշխարհի եւ ոչ զանօգուտսն այսինքն<sup>594</sup> մարմնական իր, ըստ աշխարհի ցանկութեանց, զի այն խնդիր հեթանոսաց է: Վասն որոյ ասէ. «Խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ եւ այդ ամենայն յաւելցի ձեզ» (Մտք. Զ 33): Չորեքին սոքա հարկաւորք են ի խնդիրն, այլ տեղին եւ ժամանակն ի պիտանեացն են: Եւ որ ոք անպակաս պահեսցէ զսոսա, զոր ինչ խնդրէ՝ առնու, եւ զոր հայցէ՝ գտանէ եւ այլն: Այլ թէ ասես. մեղաւոր եմ՝ ոչ է մեծ մեղքն քո, քան զողորմութիւնն Աստուծոյ եւ ոչ կարէ մեղքն

յաղթել քո զոդորնութիւնն Աստուծոյ, այլ<sup>595</sup> որպէս կայծ մի հրոյ է մեղքն քո առ անդունդս խորոց ողորնութեան նորա: Տե՛ս զոդորնութիւնն Աստուծոյ<sup>596</sup>, որ գյուսահատեալն եւ զդատապարտեալ մեղաւորն որդիս Աստուծոյ արար եւ ժառանգակիցս Իւր: Տե՛ս եւ զգօրութիւնն Աստուծոյ ի վերայ մեղաց. **Եթէ իցեն մեղք ձեր իբրեւ զճանճախարհիք, իբրեւ զձինն սպիտակ արար** (Ա, 18): Եւ այլ դիւրաւ «Սրսկեա յիս զոպաի եւ սուրբ եղէց քան զձինն» ասէ: (Սղմ Ծ 9)\*: Մեծ է մեղք քո, մեծ է ողորնութիւն նորա մինչեւ յերկինս, կարելվեր է խոցուածդ՝ մարդասէր է բժիշկն եւ ձրի բժշկէ: Ահագին է<sup>597</sup> ծով մեղացդ՝ իմաստուն է նաւապետն, խոր է վիհդ մեղաց՝ ամենագօր է ձեռն Աստուծոյ, մեծ է քան զամենայն մեղս յուսահատութիւնն, այլ եւ յետ յուսահատութեանն կազմէ դեղն: Յուսա ի նա եւ յոյսն ոչ երբէք յամօթ առնէ (Հռոմ Ե 5): «Ի քեզ Տէր յուսացայ, մի՛ ամաչեցից յաիտեան» (Սղմ. Լ 2), ասէ մարգարէն:

**Եղև զառակ անհաւատիցն ի կորուստ** (ԼԳ 2): Ջօրքն Հռափսակայ<sup>598</sup>, որք կորեան եւ սատակեցան<sup>599</sup> ի դուռն Երուսաղէմի: Այլ եւ այժմ զծնունդս անհաւատից ոչ առ հասարակ կորուսանէ եւ ոչ առ հասարակ թողու, այլ զոմանս թողու եւ զոմանս կորուսանէ: Ընդէ՞ր իսկ. այն իսկ է, զի զոմանս թողու, զի նոքօք երեւեցին եւ ի ձեռն նոցա փորձեցին ընտիրքն,<sup>600</sup> իսկ զոմանս կորուսանէ, զի մի՛ հուսահատեալ հեղգասցին առաքինիքն: Դարձեալ զոմանս թողու, զի ներող եւ քաղցր է Տէր, եւ զոմանս բառնա, զի արդար եւ հատուցանող է:

**Ժողովեցի կապուտն ձեր մեծի եւ փոքու** (ԼԳ 4). ըստ ճառին ժողովեալ զկապուտն<sup>601</sup> զօրացան Հռափսակա, յորժամ սատակեցան նոքա, ցեղն Յուդա զիւրոց եւ զնոցայն առ հասարակ ժողովեցին զմթերս զանձուցն<sup>602</sup> եւ զայլսն: Իսկ առ ի միտս զի մարդն առաջին ունէր բազում մեծութիւնս, այսինքն. նախ՝ զանմահութիւն, երկրորդ՝ զսրբութիւն, երրորդ՝ զտեսութիւն Աստուծոյ, չորրորդ՝ զխօսակցութիւն, հինգերորդ՝ զտեղիս<sup>603</sup> փափկութեանն դրախտին, վեցերորդ՝ զանաշխատ վայելչութիւնս կերակրոցն:

Չայս ամենայն զրկեաց եւ կողոպտեաց բանսարկուն, իսկ ի ձեռն Տեառն մերոյ վերստին ժողովեցայք զայս, այսինքն՝ զանմահութիւնն յարութեամբ նորին, զսրբութիւնն՝ աւազանան, զտեսութիւն Աստուծոյ, այժմ՝ հաւատով եւ յետոյ՝ դէմ յանդիման, զխօսակցութիւն<sup>604</sup> Աւետարանան, զժառանգութիւն արքայութեանն վերին փոխանակ դրախտին<sup>605</sup>, զկերակուրն՝ հաղորդութեամբն մարմնոյ եւ արեան Կենարարին այժմ եւ ի<sup>606</sup> հանդերձեալն ի սեղան Հօր, որպէս խոստացաւ:

**Սուրբ է Տէր Աստուած մեր, որ բնակեալ է ի բարձունս** (ԼԳ 5). Սուրբ է եւ սրբարար եւ ի սուրբս հանգչի Աստուած: Ի բարձունս բնակէ ոչ միայն յերկինս, այլ եւ՝ ի բարձրացեալ հոգիս խոնարհաց, ըստ այնմ. «Ես յո՞ հանգեայց եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս» (ԿԶ, 2): «Չի որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի» (Դուկ. ԺԳ 11): Եւ<sup>607</sup> «Պարծեսցի եղբայր

\* Ընկալլալ բնագրում «ցողեա յիս մշտկաւ եւ սուրբ եղէց, լուս եւ քան զձինն սպիտակ եղէց»:

խոնարհի ի բարձրություն իւր» (Յակ. Ա 9): Այլ եւ բնակէ ի պահողս<sup>608</sup> պատուիրանացն որպէս ասէ.<sup>609</sup> «Ես եւ Հայր առ նա եկեացուք եւ օթեանս առ նմա արասցուք»<sup>610</sup> (Հմմտ. Յովհ. ԺԳ 23) ասէ:

**Լցաւ Սիոն իրաւամբք եւ արդարութեամբ՝** ի սատակումն զօրացն երեսեցաւ զօրութիւն եւ արդարութիւն եւ ճշմարտութիւնն Աստուծոյ. զօրութիւնն յայն, որ մին հրեշտակն զբազում բիրսն<sup>611</sup> կորոյս, եւ արդարութիւն էր- բազում անգամ գերեալ եւ սատակեալ էին զԻսրայէլ: Եւ զի զԱստուած հայհոյեցին՝ յիրաւի սատակեցան, իսկ յետոյ մնացեալքն իմացան, թէ նա միայն է ճշմարիտ Աստուած, եւ փրկեաց զժողովորդն իւր: Դարձեալ Սիոն նորս եկեղեցի, զի է ի սմա ըստ իրաքանչիւր չափու յանցանաց իրաւունք հատուցման եւ բժշկութիւն: Եւ արդարութիւն է մայր ամենայն<sup>612</sup> առաքինութեան: **Լցաւ, ասէ, արդարութեամբ,** զի ոչ միայն չզրկելն արդարութիւն, այլ եւ պահել զամենայն զգայարանս անարատ եւ հատուցանել իրաքանչիւր ումէք. ումեմն՝ զպարտս, ումեմն՝ զպատիւ եւ զայլն ըստ առաքելոյ:

**Օրինօք մատնեցին եւ զանձիւք եղիցի փրկութիւն մեր** (ԼԳ 6ա) Ո՞ր օրինօք. Ադամայ թէ՞ Մովսէսին. թուի թէ՛ երկուքն, զի յորժամ զօրէնսն Մովսէսի ոչ պահէին՝ մատնէին ի ձեռս<sup>613</sup> թշնամեացն եւ **զանձիւքն**, այսինքն՝ ծածուկ զօրութեամբն<sup>614</sup> Աստուծոյ փրկէին: Այլ եւ Ադամ, զի յանցեաւ, զօրէնսն՝ մատնեցաւ մահու. «Յորում ատուր ուտիցես՝ մահու մեռանիցես» (Ծնդ. Բ 17), ասէ: **Եւ զանձիւք եղիցի փրկութիւնն**, այսինքն՝ անբիծ եւ անարատ արեամբն Քրիստոսի: Եւ դարձեալ պատուիրանացն պահպանութեամբ լինի փրկութիւնն: **Եհաս իմաստութիւն եւ հանճար եւ աստուածպաշտութիւն. այս են զանձք արդարութեան** (ԼԳ 6բ): Ասաց թէ՛ զանձիւք է փրկութիւնն, զի մի՛ զիտասցեն թէ՛ մարմնական զանձիւք: Ասէ, եկն իմաստութիւնն՝ Քրիստոս եւ հանճարեղս արար ի ճշմարիտ աստուածպաշտութիւնն, որով փրկեցաք. **Այս է զանձն արդարութեան:** Դարձեալ երկիւղն սկիզբն է իմաստութեան (Առակ- Ա 7), եւ նա՛ հանճարոյ եւ հանճարն՝ աստուածպաշտութեան: Յայտ է թէ պատիժն եւ նեղութիւնն են զանձք արդարութեան, յորմէ երկիւղէ զամք յիմաստութիւն եւ ի հանճարս եւ յաստուածպաշտութիւն եւ պիտանիք լինիմք:

**Արդ, յարեաց, ասէ Տէր** (ԼԳ 10ա), եւ յորժամ մատնեաց ի գերութիւն, յայնժամ յարուցեալ էր, այլ չէին յայտնի իրքն, իսկ ի սատակումն զօրացն<sup>615</sup> առաւել յայտնեցաւ: Ոյ ասէ՛ յարեցից ի վերայ, վասն զի յառնելն Աստուծոյ միայն բաւական է ի ցրումն թշնամեաց նորա: Որպէս<sup>616</sup> ասէ Դաւիթ. «Յարիցէ Աստուած եւ ցրուցան թշնամիք նորա» (Հմմտ. Սղմ. ՉԲ 2), յառնելն նստելոյն է, եւ այս ոչ է վայել<sup>617</sup> անմարմին բնութեանն Աստուծոյ, այլ Գիրք Սուրբ զվրէժխնդրելն Աստուծոյ յառնել եւ զարթնուլ ասէ, եւ զներելն՝ նստել եւ ննջել<sup>618</sup> ասէ:



**Արդ փառաւորեցայց** (ԼԳ 10բ): Սեփական եւ բնութեամբ է աստուածային փառքն, այլ ասէ զայս ըստ մարդկան կերպի: Դարձեալ զփառս ժողովրդեան իւրոյ **իւր** կոչէ: Դարձեալ թէ այժմ յայտնեցաւ փառքն Աստուծոյ ի մէջ այլազգեացն: Եւ տես եւ ի միտ առ զայն, որ ասէ Տէրն: «Այժմ փառաւորեցաւ Որդի մարդոյ» (Յովհ. ԺԳ 31), այսինքն՝ այժմ յայտնեցաւ փառքն, զոր ունէր բնութեամբ եւ սեփական: **Արդ, բարձրացայց**, նոյնպէս եւ այս, զի հանդերձ ժողովրդեամբն բարձրացաւ ի մէջ նոցա, որ յառաջ քան զայս նուաստ եւ խոնարհ կարծէին: Դարձեալ Տէր մեր յարեաւ ի գերեզմանէն եւ փառաւորեցաւ յերկինս եւ յերկրի եւ ի բարձունս ընդ աջմէ Հօր նստաւ յերկինս: Եւ նոքա տեսին եւ յամօթ եղեն, զի ոչ ի միտ առին:

**Նա բնակեցցէ ի բարձր այր վիմի հաստատնոյ** (ԼԳ, 16). զբանս<sup>619</sup> զայս երեք կերպիւ է<sup>620</sup> իմանալ.

Նախ՝ ի դարձ գերութեանն ասէ: **Վէմ հաստատուն** եւ երկիր զԵրուսաղէմ կոչէ, զոր ի հեռուստ տեսանէին, զայցեն եւ բնակեցցեն ի նմա:

Երկրորդ՝ զի<sup>621</sup> յարմարի յԵգեկիա, զի նա զնաց արդարութեամբ առաջի Աստուծոյ եւ բնակեցաւ ի բարձունս արքայութեանն երկնից<sup>622</sup> հաստատապէս: Անդ եւ ջրհոր նորա առատ բխեալ եւ փառօք երեւեցաւ յետ սատակման այլազգեացն, կամ ի դարձ արեգականն, յորժամ առողջացաւ:

Երրորդ՝ ճշմարտութեամբ է ի Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ ի հաւատացեալքս<sup>623</sup> նորա, որ զամենայն զգայարանաց սրբութեամբ եւ հաւատով բնակեցան ի<sup>624</sup> հաստատուն վէմն՝ Քրիստոս: Եւ նոյն Ինքն է **Հաց** կենաց՝ յերկնից իջեալ, զոր ետ մեզ առաքելովքն եւ **զջուր**, այսինքն՝ զուսումն վարդապետութեան Իւրոյ եւ կամ **զջուր** աւազանին **հաւատարիմ**, այսինքն՝ անփոփոխ եւ հաստատուն: **Թագաւոր փառաց** (ԼԳ 17) սոյն ինքն է Տէր մեր, զոր Պօղոս «Տէր փառաց» (Եփես. Ա 17. հմմտ. Յակ Բ 1) կոչէ եւ սաղմոս՝ «թագաւոր փառաց» (Մղմ. ԻԳ 7), զոր այժմ տեսանեն հաւատովք եւ խորհրդական մարմնովն եւ յայնժամ՝ ղէմ յանդիման, յորժամ զայցէ փառաւք Հօր իւրոյ<sup>625</sup> (հմմտ- Ա Կորնթ- ԺԳ 12):

**Աչք ձեր տեսցեն զերկիրն ի հեռուստ** (ԼԳ 17): Այժմ մտօք տեսանի<sup>626</sup> երկիրն կենդանեաց, ուստի մերժեալ են ցաւք եւ տրտմութիւնք եւ հեծութիւնք եւ այլն, որպէս ասէ յառաջիկայդ: Եւ զի ոչ զոն մեղք նմին իրի եւ ոչ ցաւք եւ տրտմութիւնք եւ այլն: Եւ զի ոչ կոխեն զնա ոտք ամբարտաւանին սատանայի, վասն որոյ ոչ զոն մեղք, եւ զի ոչ է անդ թագաւորութիւն մարմնաւոր այլ՝ հոգւոր: Վասն այն ոչ է մահ, այլ միշտ կենդանի, ըստ Հոգոյն:

**Անձինք ձեր**<sup>627</sup> **խոկասցեն յերկիրն Աստուծոյ** (ԼԳ 8): Այսբան զամենայն գերագոյն է, զի ուր երկիր Տեառն է անդ եւ ամենայն պատուիրանացն պահպանութիւն, եւ ուր պատուիրանաց պահպանութիւնք՝ անդ եւ ոչ յանցանք ինչ:

- Ի -

**Գալարին երկինք որպես մագաղաթ** (ԼԳ 4) ոչ ըստ ոմանց, թե վարագոյր հաստատութեան<sup>628</sup> գալարին, իբրեւ զի երեւեսցի հանդերձեալ աշխարհն վերին: Այլ որպէս ծալեալ մագաղաթ խոնարհեսցեն հրեշտակք ամենայն եւ ընդ Տեառն իջանեն ի դատաստան: Կամ որպէս մագաղաթն գալարուելով նուազի եւ մթանայ, նոյնպէս լոյսն արփոյն նուազի եւ ոչ երեւի յառաւել ճառագայթից իմանալի լուսոյն: **Մագաղաթ** ասէ եւ ոչ այլ ինչ, զի մագաղաթն ի մերձիկ հրոյն գալարի: Եւ երկինքն յայնժամ գալարի, յորժամ վառեսցի երկինք եւ երկիր հրով, ասէ: Նոյնպէս եւ՝ **աստեղաց քօթափումն**, այսինքն՝ զի ծածկին յառաւել ծագմանէ արեգականն արդարութեան եւ սրբոց նորա, զի փայլեսցեն որպէս զարեգակն, (Մտթ. ԺԳ 43), ասէ Տէր: Չոր օրինակ լոյս ճրագի կամ աստեղք ոչ թէ կորնչին, այլ չերեւին ի ծագել արեգականն, նոյնպէս եւ ի կատարածին՝ լուսաւորք: Չի թէ անլուսաւորքն լուսաւորին, լուսաւորքն քանի եւս այլ գերագոյն պայծառասցին, ըստ այնմ, որ յառաջն ասաց «Եղիցի լոյս լուսնին իբրեւ զլոյս արեգականն եւ արեգականն եւթնապատիկ եղիցի» (Ծննդ. Ա 16):

**Իբրեւ գտերեւ յորթոյ**, ասէ: Չի որպէս տերեւն յիրում ժամանակի թափին, նոյնպէս եւ լուսաւորքդ ի վերջին<sup>629</sup> ժամանակս կատարածին ծածկեսցին:

Հարց - Չի՞նչ է **սրտմտութիւն բարկութեանն** Աստուծոյ (Թ, 19):

[Պատասխան] - Առ մեզ ախտք են սոքա, զի յորժամ շարժի շուրջ զսրտին արինն՝ գոլորշիք նորա ի խելապատակն ելանէ\*, եւ յայնմանէ խելագարեալ յիմարի մարդն եւ զանիրաս բարբառէ եւ գործէ: Իսկ առ Աստուած ոչ այնպէս. այլ՝ արդարապէս հատուցումն է ստրմտութիւն<sup>630</sup> նորա, վասն այն ասէ. **Ստրմտութիւն<sup>631</sup> Տեառն դատաստանաւ իջցէ ի վերայ ամենայն ազգաց** (ԼԳ 2): **Տէր հրամայեաց նոցա եւ ոգի նորա ժողովեաց զնոսա: Եւ ձեռն Նորա**, որ է Որդին, բաժանեաց նոցա ճարակս: Աստ գերորդութիւնն յայտնապէս ցուցանէ<sup>632</sup>, ի միտ առ:

- ԻԱ -

**Ուրախ լեր, անապատ ծարաւի եւ ցնծացել անապատն** (ԼԵ 1ա): Կրկին յիշէ զանապատն, զի անապատն կոչի անգործ երկիրն, որ է ազգ հեթանոսաց, որք էին անգործ յօրինացն Աստուծոյ, եւ Քրիստոսի ի պողաբերութիւն փոխեցան Աւետարանան: Եւ կոչի **անապատ** անջուր տեղիքն, որք էին ոգիք ծարաւեալք, որ զովացան ի Քրիստոսի վարդապետութեանցն եւ **ուրախ եղեն**, զի թողան մեղք նոցա:

\* Գնմտ. «Ամբարձեալ գոլորշի սաստիկ ի խելապատակն»- Մագիստրոս ԿԶ- տէս ԵԲԳ, Ա, էջ 566 («գոլորշի»), սակայն Մագիստրոսի նշված թղթում նման արտահայտություն չգտա:

**Ծաղկեսցէ իբրեւ զշուշան** (ԼԵ 1բ): Ծուշան երկու ազգ է եւ երկու գոյն ունի՝ դեղին եւ սպիտակ եւ բուսանի ի ջրշէղջ<sup>633</sup> վայրս՝ եղեգնաձէի ի վերայ եկեալ եւ յերեսս ջրոյն ծաղիկս արձակէ: Իսկ զվայրի շուշանն ասեն, թէ կարմիր է եւ սպիտակ: Իսկ ծաղիկն ծովային՝ այս նոնոֆարն է, որպէս ասաց ի ջրոց բուսեալ<sup>634</sup>, որ նշանակէ զեկեղեցիս հեթանոսաց՝ բուսեալ ի տղմուտ վայրս կռապաշտութեան, եւ ուղիղ հաւատով վերացեալ առ Աստուած եւ անուշահոտ առաքինութեամբ զարդարեալ, զոր առաքինիքն զնմանութիւն ծաղկի<sup>635</sup> յինքեան բերեն՝ ի հոգի եւ ի մարմին: Չի առաքինեաց մարմինն դեղին է ի խստամբերութենէ ճգնութեանցն\*\* եւ ոգին պայծառ, քան զձին սպիտակացեալ:

**Յնծասցէ անապատն Յորդանանու** (ԼԵ 2). զՅորդանանու անապատն յիշէ, զի զամենայն սքանչելիսն, որ անդ եղէն, ի դէմս եկեղեցոյս հեթանոսաց բերցէ. նախ՝ զի անդ ետես եւ վկայեաց Յովաննէս զՔրիստոս՝ «Գառն Աստուծոյ եւ բարձող մեղաց» (Յովհ. Ա, 29): Երկրորդ՝ զի զգլուխ վիշապին անդ ջախջախեաց Քրիստոս: Երրորդ՝ զի լերինք եւ բլուրք խայտացին որպէս խոյք մաքեաց<sup>636</sup>: Չորրորդ՝ սրբեաց զջուրսն, զի սրբեսցէ զմեզ: Հինգերորդ՝ զի կարողացուցէ զջուրն զմեզ որդիս Աստուծոյ: Վեցերորդ՝ անդ երկինք բացան<sup>637</sup> զոր փակեալն էր<sup>638</sup> Եւթներորդ՝ զի անդ վկայեաց ձայնն հայրական<sup>639</sup> «Դա է Որդի իմ սիրելի<sup>640</sup> ի խորհուրդ որդեգրութեան մերոյ:

Ութերորդ՝ Հոգին Սուրբ աղանակերպ էջ ի վերայ Քրիստոսի (Յովհ. Ա 32), յորմէ գլխոյ հեղու<sup>641</sup> յանդամքս<sup>642</sup>, այսինքն՝ ի հաւատացեալքս: Այսպէս եւ եկեղեցի. որ ամուլն եւ սկունդուկ էր, եղև բազումորդի:

- ԻԲ -

Հարց - Ձի՞նչ է, որ ասէ. **Ահաւասիկ Աստուած մեր հատուցանէ դատաստան եւ հատուցէ** (ԼԵ, 4):

Պատասխան - Յուցանէ թէ կրկին է դատաստանն Աստուծոյ. աստ՝ մասնաւոր եւ անդ՝ ընդհանուր, մասնաւոր որպէս՝ Սողոմ եւ զփարաւոն, Հրէայքն, որ վասն ի Քրիստոս ամբարշտութեանն, աստակեցան ի հռոմայեցոցն, Յուդա խեղդեցաւ, եւ Հերովդէս որդնալից սատակեցաւ: Դարձեալ մասնաւոր է, զի աստ միայն զմարմինն, իսկ անդ ընդհանուր, զի զամենեսեան պատժէ եւ բոլորիմբ եւ հոգով եւ մարմնով: Եւ վասն երեք պատճառի աստ զամենեսեան ոչ տանջէ:

Նախ՝ զի մի անցցէ<sup>643</sup> աշխարհս, զի ամենեքեան յանցաւորք են եւ թէ զամենայն պատժէ վաղ ուրեմն անցեալ էր աշխարհս<sup>644</sup>:

Երկրորդ՝ զի ի<sup>645</sup> նոցանէ լինելոց են ծնունդք պիտանիք:

Երրորդ՝ զի մի գիտացեն, թէ միայն այս են<sup>646</sup> կեանք եւ ոչ գոյ այլ հատուցումն:

\*\* «Եւ դեղինն ճգնաւորաց է, որ ի փապարս լերանց կեցեալ արեակեզ եւ ցրտասառոյց եւ զանձինս ճնշեալ ի պահս եւ յաղաւթս եւ մարմինն դեղնեալ եւ նուազեալ»- տես է- Ս- Բաղդասարյան, Հովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակը, Եր-, 1977, էջ 219:

Իսկ զմասնատրս<sup>647</sup> պատժե վասն երեք պատճառի.

Նախ՝ զի ծանիցեն թե գոյ դատարոք եւ հատուցանող:

Երկրորդ՝ զի այլքն զգուշացին յանպիսի մեղաց:

Երրորդ՝ զի երեւեսցի մարդասիրութիւնն Աստուծոյ, զի ներեւ ամբարշտաց եւ տա ժամանակ դարձի:

Հարց - Վա՞սն էր նախ կամի զխնդրելն եւ ապա տա Աստուած(Հմմտ. Մղմ. Բ 8)

Պատասխան - Եւ առանց խնդրելոյ կարող է տալ, այլ ոչ այնպէս պտղաւետ է, այսինքն՝ զի գոր ինչ խնդրելով առնու՛մք այն պտուղ է խնդրոյն: Իսկ տուրքն առանց խնդրելոյ ձրի պարզեք է, եւ պարտական ենք փոխարէն հատուցանելոյ: Ապա յայտ է, թէ պատուական է տուրքն վասն խնդրոյն, քան առանց խնդիրն, վասն այն յորժամ պաշարեաց Ռափսակ զԵրուսաղէմ, նախ խնդրեաց Եզեկիա եւ ապա փրկեցաւ, եւ յորժամ հիւանդացաւ<sup>648</sup> մերձ ի մահ նախ աղօթեաց արտասուօք<sup>649</sup> եւ ապա առողջացաւ: Չոր օրինակ յորժամ բարկանա թագաւորն կրկին իրօք զնա ի հաշտութիւն ածեն, այսինքն՝ պատգամօք եւ աղերսի: Նոյնպէս եւ աղօթքն ի սուրբ սրտե խօսք է առ<sup>650</sup> Աստուած եւ արտասուքն մեծ աղերս եւ նուէրք է առ Աստուած, զի ամենայն նուէրք, գոր մատուցանենք Աստուծոյ՝ արծաթ կամ ոսկի կամ արջառ եւ ոչխար եւ այլ ինչ արտաքին իր են, իսկ արտասուքն յերկնէ յանձանց մերոց, վասն որոյ առաւել հաճոյ է Աստուծոյ: Եւ տես, զի յորժամ լուաւ Եզեկիա զբանս Ռափսակայ, նախ ինքն զգեցաւ զքորձն՝ ուսեալ ի Դաւիթ<sup>651</sup>, որ ասէ. «Եւ ի նեղեալ նոցա քորձ զգեճուի» (Մաղմ. ԼԳ, 13): Եւ ապա զմարգարէն Եսայի բարեխօս առաքեաց առ Աստուած: Սոյնպէս եւ մեզ պարտ է նախ պաղատել առ Աստուած եւ ապա զայլ սուրբս միջնորդ եւ օգնական ունել եւ ոչ որպէս այժմ բազումք ի հեշտութիւնս մեղաց ննջեն եւ զայլսն<sup>652</sup> հրաւիրեն ի պաշտօնս<sup>653</sup> եւ ի պաղատանս, զի զի՞նչ շահէ յորժամ մի՛նն շինէ եւ միսն քակէ, նոյնպէս եւ այն անօգուտ է:

Հարց - Ընդէ՞ր ի զիշերի սատակեցան զօրքն Ռափսակայ (Հմմտ. ԼԷ, 36):

Պատասխան - Նախ զի մի՛ կարծիցեն, թէ յամբոխմանէ մի՛ն<sup>654</sup> զմի սատակեցին եւ ոչ հրեշտակն:

Երկրորդ՝ զի մի երկիցէ ժողովուրդն յայգին տեսութենէ սատակմանն<sup>655</sup>:

Իսկ նշան փրկութեան, որ ասէ<sup>656</sup> **Կերիցես այս ամենայն զվաստակդ եւ միւս ամենայն զմնացորդսն: Եւ յամին երրորդ վաստակեցէք եւ հնձիցէք** (ԼԷ 30). Յուցանէ զշնորհսն<sup>657</sup>, որ ի ժամ մկրտութեան ձրի վայելենք, իսկ յետ այնորիկ ի վաստակս գործոց պէտք են ըստ այնմ՝ «Վաստակեցէք զարդարութիւն եւ հնձեցէք զպտուղ կենաց» (Ովսէ Ժ 12):

Հարց - Վա՞սն էր յորժամ աղօթէր Եզեկիա զուղղութիւնս եղ առաջի Աստուծոյ<sup>658</sup> եւ ասէ. **Յիշեա զիս Տէր, զի գնացի առաջի քո արդարութեամբ** (ԼԸ, 3):

Պատասխան - Ոմանք ասեն, թե զվիշտ մահուն ետես, վասն այն արար զայն, եւ այլք թէ՛ որպէս սիրելի որ զառաջին սերն յիշատակէ, զի այնու ի գութ շարժեսցէ, նոյնպէս եւ նա արար զանկեղծ սերն<sup>659</sup> զոր ունէր առ Աստուած եղ առաջի, զի առցէ զխնդրելին, ուստի յայտ է, որ ասէ. Առաջ քո տեսութեանդ գնացի արդար եւ ճշմարիտ հաւատով եւ ոչ թէ ի ցոյց մարդկան: Դարձեալ յիշեաց զուղղութիւնս եւ արտասուեաց: Չուղղութիւնն եղ վասն արդարութեանն Աստուծոյ եւ զարտասուսն վասն ողորմութեանն, զի թէ՛ արդարութեամբ եւ թէ՛ ողորմութեամբ մի՛ ինչ վրիպեսցի խնդիրն: Եւ թէ որ տարակուսեսցի, եթէ ահա Եզեկիա եւ օրինակն նմանապէս զմի բան եղին առաջի, այսինքն՝ զուղղութիւն<sup>660</sup> զործոցն: Ընդէ՞ր սա պատուեցաւ եւ նա պատժուեցաւ: Առ այս ասեմք: Նախ, զի թեպէտ մին լինի տեսակ զործոց այս ըստ մտացն ոմն պատուի եւ ոմն՝ պատուհասի<sup>661</sup>: Չոր օրինակ «Պոռնիկք, ասէ, զարքայութիւնն ոչ ժառանգեն (Ա. Կորնթ. Զ 9) եւ Ովսէէ պոռնկեցաւ եւ ոչ պատժեցաւ, ասացաւ մի սպանանէր եւ եսպան<sup>662</sup> Փենէհես զպիղծսն, եւ Եղիա՝ զսուտ քահանայսն: Եւ արդարք են նոքա: Եւ երկու պահացողք, միմն<sup>663</sup> վարձ առնու եւ միսն<sup>664</sup> ոչ վասն կեղծաւորութեան, նոյնպէս թեպէտ մի երեւի տեսակ բանից նոցա, այլ ոչ դիտաւորութիւնն, զի փարիսեցիս<sup>665</sup> պարծելով եւ ոտնահարութեամբ էր ի վերայ մաքսաւորին: Իսկ Եզեկիայն<sup>666</sup> խոնարհութեամբ եւ աղաչանօք ի Տէր. «Յիշեա զիս Տէր», ասէր: Նա եւ ոչ տեսակ բանիցն միապէս են. զի Եզեկիա աղերսէր զԱստուած, թէ դու յիշեա զարդարութիւն զործոցն, իսկ փարիսեցիս Ինքն յիշատակէր, եթէ՛ «Պահեն երկիցս ի շաբաթոյ» (Գուկ. ԺԸ 12) եւ այլն: Եւ սա արտասուօք ելաց լալումն մեծ եւ նա համարձակութեամբ կեայր<sup>667</sup>: Եւ թէ որ ասիցէ՛ Արդարք առաւել մահու ցանկան<sup>668</sup>, ըստ Պօղոսի, «Ցանկամ ելանել ի մարմնոյս եւ մտանել առ Աստուած» (Բ Կորնթ. Ե 8)- զիա՞րդ Եզեկիան<sup>669</sup> զկեանս խնդրէր. ասեմք թէ ոչ են հակառակ ցանկութիւն սոցա, զի եւ Եզեկիա հոգեւորին ցանկայր եւ խնդրեաց զկեանս<sup>670</sup>: Նախ՝ զի որքան յերկարէր ի կեանս՝ առաւելոյր արդարութեան պսակն առ Աստուած: Երկրորդ՝ զի ոչ ունէր զաւակ ըստ մարմնոյ, յորմէ ազգէ ճիշն օրհնութեան լինելոց էր Զրիստոս, վասն այն ասէր. **Պակասեցա եւ յազգատոռնմէ իմմէ** (ԼԸ 12): Յետ որոյ երից ամաց ծնաւ զՄանասէ եւ եղեւ հայր արհնութեան, որպէս ասէր. **Այսուհետեւ մանկուսն ծնայց, որ պատմեսցենն զարդարութիւնս, Տէր փրկութեան իմոյ** (ԼԸ 19): Ահաւասիկ յաւելում ի ժամանակս քո ամս հնգէտասաներորդ (Եսթեր ԺԴ 5): Աստի ուսանիմք մեծ իմն կրօնս, այսինքն թէ՛ օրհասական մահ իցէ եւ թէ բնական եւ թէ ի դժնդակ ախտից եւ թէ յայլ իմն պատճառէ<sup>671</sup>. պարտէ զայս ամենայն խնդրել յԱստուծոյ: Բնականն այն է, որ ալետրեալ եւ լի աւուրք մեռանին, զոր ասէ Դաւիթ. «Թիւ ամաց մարդկան եւթանասուն ամ եւ թէ եւս զօրաւոր ութսուն ամ» (Սղմ. ԶԹ 10), այն է<sup>672</sup> ասեն չափ մարդկայինս բնութեան, որ այնքան տեսն տարերքն ի միասին կապեալք:

Հարց - Եւ զի՞նչ է, որ նախահայրքն<sup>673</sup> յերկարակեաց լինէին, որպէս Ադամ ինն հարիւր երեսուն ամ եւ Մաթուսաղա ինն հարիւր եւթանասուն ամ եւ այլքն ամենայն<sup>674</sup>:

Պատասխան - Ոմանք ասեն թէ Դաւիթ զթիւ սոցա ասէ, յորում ժամանակի ինքն էր եւ այլք զնախահարցն թիւ զամիս կամ զշաբաթուն զոլ, իսկ ինձ թուի, թէ որպէս չափ հասակի մարդոյս չորս կանգուն է, ըստ փիլիսոփայիցն եւ ատելին եւ նուազն ի սխալմանէ է: Նոյնպէս եւ այն է չափ ժամանակի մարդկայինս բնութեան, իսկ որ յերկարին կամ պակաս մնան խնամոցն Աստուծոյ է, զի կամէր զառաջինսն յերկարակեաց առնել<sup>675</sup>, զի զօրութիւնն Աստուծոյ եւ զողորմութիւնն պատմեցեն ծննդոց իւրոց ի բազում ազգս, իսկ զվերջինսն վասն մեղաց սակաւակեաց առնէ: Եւ լինի մահ վասն մեղաց, ըստ այնմ **«Մի՛ լինիր խիստ, զի մի տարածամ մեռցիս»** (Ժող. Է 18): Եւ լինի կեանք վասն արդարութեան, որպէս ասէ Գիր. **«Թէ պահեսցես զօրէնս՝ յաւելցին ամք կենաց քոց»** (Առակ. Գ 1-2): Արդ, սոքա<sup>676</sup> են պատճառք տարածամ մահու, որ է օրհասական<sup>677</sup> եւ յերկար կենաց մարդկան, այսինքն՝ արդարութիւնն եւ մեղքն: Բայց գիտելի է, զի արդարութիւնն լինի կենաց եւ մահու<sup>678</sup> պատճառ: Նոյնպէս եւ մեղք մահու եւ կենաց պատճառ<sup>679</sup>: Որպէս արդարութիւնն Եզեկիա եղէ կենաց պատճառ, զի յաւելցէ արդարութիւնն եւ վարձքն եւ զի օրինակ բարեաց լիցի: Եւ արդարութիւնն Յովսիա եղէ մահու պատճառ<sup>680</sup>, զի մի՛ տեսցէ զզերութիւնն եւ զի մի՛ բարէխօսեսցէ վասն ժողովրդեանն, նոյնպէս եւ Կայենին<sup>681</sup> մեղքն եղէ պատճառ կելոյ, զի տանջեսցի եւ Սաուղայն՝ զի չարչարեսցէ զժողովուրդն, որ խնդրեցին թագաւորս: Եւ մեղքն սողմայեցոց եւ որ առ ջրհեղեղան եղէ պատճառ մահու, զի կրեսցեն պատիժս եւ այլոց երկիւղ լիցին: Արդ, այս է պատճառ ամենայն մարդկան տարածամ ելիցն յաշխարհէս<sup>682</sup> եւ կելոյն, մեղքն եւ արդարութիւնն, որպէս ասացաւ, այլեւ մեղաւորաց տա յերկար ժամանակս, զի ապաշխարեսցեն, ըստ այնմ. **«Ոչ կամիմ զմահ մեղաւորին»** (Եզեկ. Ը 23): Այլ եւ արդարք եւ մեղաւորք կարեն զտարածամ մահս դարձուցանել, թէ կամեսցին. արդարք՝ որպէս Եզեկիա, զի արտասուօք դարձոյց զհրամանն Աստուծոյ եւ մեղաւորք, որպէս Նինուացիքն, որ ապաշխարութեամբ փրկեցան ի մահուանէն: Եւ այս Աստուծոյ մարդասիրութեան է, զի յորժամ դատաւորք աշխարհի վճիռ մահու հատանեն ինքեան՝ դատապարտեալքն ոչ կարեն յետ դարձուցանել զհրամանն, բայց թէ լինի այլ ոք համարձակ, զի միջնորդեսցէ: Իսկ առ Աստուած ոչ այնպէս, այլ ինքեանք, որ զվճիռ մահու առնուն փոխեն զհրամանն Աստուծոյ ի քաղցրութիւն, որպէս Եզեկիա եւ Նինուացիքն:

- ԻԳ -

Հարց - Ընդէ՞ր Տասնհինգ ամ յաւել ի կեանսն<sup>683</sup>, որ եւ այսչափ ասեն զՂազարուն յետ յարութեանն (Յով. ԺԱ, 43):

Պատասխան - Չի կեանս այս զգայական է, և, ըստ թուոյ զգայարանացս, երեքլին յաւել: Եւ յիրաւի. վասն զի իրաքանչիւր զգայարանք երիւք մեղանչեն. Նախ՝ արտաքոյ ի

տեսն: Երկրորդ՝ ի յինքեանս հեշտանան: Երրորդ՝ ի գործն: Նոյնպէս եւ երիւքս այս զղջումն գործի վասն այն երեք զպարգեսն էառ: Յորժամ սատակեաց զօրսն ծանուցաւ, թէ Տէր է մահու, եւ յորժամ յարոյց զԵգեկիա ծանուցաւ, թէ իշխան եւ տուիչ է կենաց, ըստ այնմ. «Ես սպանանեմ եւ ես կեցուց[անեմ], նմա հարկանեմ եւ Ես բժշկեմ» (Բ. Օր. ԼԲ 39):

- ԻԳ -

Հարց - Վասն է՞ր զհնգայեղեանն, մեղմով դարձոյց յետս եւ ոչ փութապէս (Յեսու Ժ, 12):

Պատասխան - նախ՝ զի յայտնապէս երեւի սքանչելիքն յամենայն աշխարհի: Երկրորդ՝ զի երեւեսցի, թէ յումեքէ հրամանէ շարժի: Երրորդ՝ զի մի՛ վնասեսցէ զաշխարհս յանկարծակի լինելովն յարեւելս: Կապեաց Յեսու զարեգակն, դարձ Աստուած ի յետս, խաւարեցոյց Քրիստոս<sup>684</sup> ի Խաչին, զի երեւեսցի գործ Արարչին, որոյ<sup>685</sup> հրամանաւ շարժին եւ լուսաւորեն զաշխարհս<sup>686</sup>: Չտասն աստիճանսն կոխեալ էր արեգակն, այսինքն տասն ժամ եւ տասամբ<sup>687</sup> յետս դարձաւ եւ տասն ժամ դարձեալ եկն ի նոյն կենդանակերպն ժամն եւս եւ եղեւ տիւն այն երեսուն երկու ժամս: Իսկ թէ երկինքն եւս ընդ արեգականն<sup>687ա</sup> յետս դարձաւ եւ թէ դադարեցաւ եւ թէ յիւր գնացսն<sup>688</sup> ընթանայր զիտէ, որ հրաշագործէ<sup>689</sup> սքանչելեացն եւ ոչ մեք: Եւ հնգայեղեանն այն է, որ ի տասն ժամն զհինգ կենդանակերպն յեղեաց<sup>690</sup>: Իսկ պաղատիտս թգոյն կաթն է կամ<sup>691</sup> չոր թուզն որ մանրեաց եւ եղ ի վերայ վիրին, ոչ թէ ի զօրութենէ թգոյն էր բժշկութիւնն, այլ ի բանէն Աստուծոյ: Սակայն զթուզն ետ նշան սքանչելեացն որպէս Նէեման Ասորին տարաւ ի հողոյ երկրին եւ Տէրն կաւ արար եւ ծեփեաց զաչս կուրին: Եւ զի կաւն կուրացուցիչ է աչաց, յայտ է լի զօրութիւնն ի բժշկողէն<sup>692</sup> է եւ ոչ ի նիւթոյն<sup>693</sup>: Եւ կամ զի ամենայն ուրեք ըստ մեզ զիջանի եւ ոչ ինչ խնդրէ ի մէնջ բայց միայն՝ հաւատ, որ միոյն ասէր. «Կամիմ, սրբեաց» (Մատթ. Ը, 3) եւ միոյն զձեռն իւր կարկառէր, ի հարիւրապետին տունն ոչ եմուտ, զի մեծ էր հաւատք նորա, իսկ ի քահանայապետին<sup>694</sup> եմուտ աշակերտօքն, զի փոքր էին հաւատք նորա:

**Եղիցի խաղաղութիւն յաւուրս իմ** (ԼԹ 8): Ինքնասիրութեան է բանս, զի յորժամ վասն իւր ել հրաման մահու եւ խնդրեաց արտասուօք եւ յետս դարձոյց: Իսկ գերութիւն որդոցն ասաց, թէ բարոք է բանդ, ոչ որպէս սքանչելի արքն. զի Մովսէս ասէր.. «Թէ թողուս սոցա՝ թող, ապա թէ ոչ եւ զիս ջնջեա» (Ելից ԼԲ, 32) ի դպրութենէն,<sup>695</sup> եւ Դաւիթ. «Ես հովիւս մեղայ սուր քո յիս եւ ի տան Հօր իմոյ» (Բ Թագ. ԻԳ 17), եւ Սամուէլ. «Քաւ լիցի ոչ խնդրել վասն ժողովրդեանդ»: Նոցայն հրեշտակային եւ սորայն՝ մարդկային, նոքա առ օտարսն զթածք են, սա առ իւրսն անագորոյն, զի ոչ խնդրեաց վասն նոցա:

- ԻԵ -

**Չայն բարբառոյ յանապատի** (Խ 3), հաստատութիւն է դարձի նոցա ի գերութենէն, զի վերստին շինի աներակ երկիր<sup>696</sup> նոցա եւ ձայն ուրախութեան եւ մարդկան բարբառ լսելի

լիցի: Դարձեալ «**ձայն բարբառոյ**»<sup>696ա</sup> է Մկրտիչն Յովաննէս<sup>697</sup>, որ ի յաւերակ ոգիս<sup>698</sup> մարդկան քարոզէր համարձակութեամբ եւ ամբաստանէր զամենեսեան՝ «Ծնունդք ի ժից կոչելով» (Ղուկ. Գ 7), զի զհտէր թէ ձեռք նոցա լի են<sup>699</sup> արեամբ մարգարէիցն, այլ նա առանց երկիւղի համարձակ քարոզէր: Որպէս ձայն կոչի Յովաննէս ոչ անյօդ<sup>700</sup> եւ աննշան ձայն, այլ՝ **բարբառոյ**, զի<sup>701</sup> մարդ եւ մարգարէ էր<sup>702</sup>: Նոյնպէս Բանն Աստուած կոչի Բան ոչ անանձն եւ սոսկ որպէս մերս<sup>703</sup> բանս, այլ՝ Բան անձաւոր եւ Աստուած կատարեալ: Դարձեալ ձայն Յովաննէս եւ բարբառ, որ է Բան<sup>704</sup>, Քրիստոս է, զի որպէս ձայն Բանին է յառաջընթաց եւ թարքման, նոյնպէս եւ Յովաննէս՝ Քրիստոսի: Իսկ ասելն **յանապատի**, զի քաղաք լի է ամենայն չարեօք եւ անապատն<sup>705</sup> սուրբ է ի մեղաց, վասն որոյ թողեալ զքաղաք եւ զբնակութիւն մարդիկն յանապատի շրջէր: Եւ զի՞նչ քարոզէր. **Պատրաստ արարէք զճանապարհս Տեառն** (Խ, 3), որպէս զգնացս թագաւորաց մաքրեն, յորժամ մտանէ ի քաղաք<sup>706</sup>, նոյնպէս եւ<sup>707</sup> զհոգիս պատրաստեալ եւ սրբեալ ի մեղաց, զի ընդունիցիմք զՔրիստոս:

**Ուղիղ արարէք զշաւիղս Աստուծոյ** (Խ, 3): Գնապարհն բազմակոխն է<sup>708</sup> եւ շաւիղն, որ նոր եւ նուրբ լինի եւ նորահետ<sup>709</sup>: Արդ, ճանապարհ էին Հրէայքն եւ կոխան օրինացն, իսկ **շաւիղք**՝ հեթանոսք, զի անհետ էր օրինացն եւ քարոզութեանց: Իսկ Քրիստոս գնալով ի նոսա<sup>710</sup> նոր շաւղուօք, դարձոյց զնոսա ի կռոցն յաստուածայաշտութիւն, եւ՝ մեղաւորք,<sup>711</sup> եւ՝ պոռնիկք, եւ՝ մաքսաւորք նախաքարոզութեամբ եղեն Քրիստոսի<sup>712</sup> եւ հնազանդեցան Նմա:

**Ամենայն ձորք լցցին եւ ամենայն լերինք եւ բլուրք խոնարհեցցին** (Խ 4). այն է, որ ասէ. Ամենայն ոք զինչ ունիցի տայցէ այնմ, որ ոչն ունիցի ( Մատթ. ԻԵ 28-29) եւ լինիցի<sup>713</sup> հաւասարութիւն: Դարձեալ **լերինք**՝ զերիչքն եւ **ձորք**՝ զերեալքն, **խոնարհեցան** թագաւորքն եւ արձակեցին զգերեալսն եւ հաւասարեցան<sup>714</sup>: Դարձեալ **ձորք** եւ **լերինք** եւ **դժուարինք**, ասէ, զառաքինութիւնս, զի յառաջ քան զՔրիստոս դժուարինք եւ անգնալիք էին, իսկ Քրիստոսիւ եղեն դիւր եւ դաշտ, որպէս ասէ. «Լուծ իմ քաղցր է եւ բեռն իմ թեթեւ»<sup>715</sup> (Մատթ. ԺԱ 30): Եւ Պօղոս այժմու նեղութիւնս թեթեւ կոչէ<sup>716</sup> (տե՛ս Բ Կորնթ. Գ 17): Եւ զի **դժուարինք** էին յառաջ քան զՔրիստոս, ասէ ի Հռոմեացոցն. «Ո՞ ապրեցուցէ զիս ի մարմնոյ աստի չարէ<sup>717</sup>, այլ շնորհքն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի» ( Հռոմ Է 25), զի այժմ ամենայն ոք, որ եւ կամի զկուսութիւն<sup>718</sup>, զմարտիրոսութիւն եւ զայլ ամենայն առաքինութիւնս դիւրաւ կատարէ<sup>719</sup> եղիցին դժուարինք ի դիւրինս: Այս սքանչելեացն Աստուծոյ է, զի ոչ փոփոխէ զբնութիւնսն, այլ զբարսն եւ զկամսն, զի ոչ այլ ոք ի տեղի այլոց մուծանի, այլ զնոյն ինքն յանուղղութենէ յուղղութիւն անձէ, նոյնպէս եւ ի յարութեանն զնոյն փոտեալ եւ զհողացեալ մարմինն յարուցանէ եւ ոչ զայլ ոք փոխանակ այլոյ:



**Եւ ամապարքն ի դաշտս** (Խ 4). Այն է որ եւ ի հարկաւորացն եւս համբերեցին, այսինքն՝ ի կերակրոյ ի հանդերձից եւ յայլոց, զի էր նոցա սիրտ եւ անձն մի, եւ ոչ որ ասէր զընչից իւրոց, թէ իւր իցէ, այլ էր ամենայն ինչ նոցա հասարակաց:

**Եւ երեւեսցին փառք Տեառն** (Խ 5ա). Նախ՝ ի մարմին խառնելովն: Երկրորդ՝ զհրեշտակաց վարս<sup>720</sup> յերկրի տնկելով: Երրորդ՝ յորժամ բարձրացաւ ի վերայ խաչին:

**Եւ**<sup>721</sup> **տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ** (Խ 5բ). ՉԱստուծոյ փրկութիւնն ասէ եւ ոչ զմարդոյ ուրուք, զի «սուտ է փրկութիւն մարդոյ» (Սղմ. ԾԷ 13), վասն այն ասէ եւ մարգարէն Դաւիթ. «Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ» (Սղմ. ԳԸ, 3), իսկ որ ասէ **ամենայն մարմին** այն է, զի որք հաւատացին եւ ծանեան, եւ որք ոչ հաւատացին՝ լսելով տեսին: Եւ դարձեալ յապագայն «Ամենայն լեզու խոստովան լիցի զՏէր Յիսուս» (Փիլիպ. Բ 11): **Չայն որ ասէ գոչեա** (Խ 6): Գոչել կամ հեռաւորութենէ լսողացն է կամ թէ խուլք իցեն, կամ թէ որ ամաչէ եւ երկնչի, ասեն. Գոչեա մի ամաչիւր եւ մի երկնչի<sup>722</sup> ճշմարիտ է բանդ, զոր այսպէս յորդորէ զմարգարէն: Եւ<sup>723</sup> որպէս նաւապետք յուսով շահին, եւ տան զանձինս իւրեանց<sup>724</sup> ի ծովն, նոյնպէս եւ դու մի՛ երկնչի<sup>725</sup> զի մեծ է շահն:

**Գոզջիր**, այսինքն՝ իմասջիր **ամենայն մարմին խոտ է եւ ամենայն փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ** (Խ 6բ):

Հարց - Վասն է՞ր է **խոտ**: (Խ, 6):

Պատասխան - Միթէ՞ յԱրարչէն՝ ոչ, զի նա կամեցաւ սերտ եւ անմահ լինել մարդոյն, այլ մեք գործովք մեղաց խոտոյ<sup>726</sup> նմանիմք բազում օրինակաւ.

Նախ՝ զի<sup>727</sup> որպէս խոտն բուսեալ ի գարնան եւ գեղեցկանայ սակաւ ժամանակս կանանչագեղ գունով եւ ի շնչել հողմով խորշակի<sup>728</sup> վաղվաղակի անցանի, նոյնպէս եւ կեանք մեր դիրաթառան է, զի աճիմք սակաւ ժամանակս գեղեցկակերպ մանկութեամբ եւ ի շնչել հողմոյ մահուն՝ վաղվաղակի անհետ անցանեմք, որպէս ասէ Դաւիթ. «Շնչէ ի նմա հողմն, ոչ է եւ ոչ եւս երեւի տեղի նորա» (Սղմ. ԾԲ 16): Եւ դարձեալ<sup>729</sup> զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքիս, որպէս դալարի խոտ վաղվաղակի անցանեն<sup>730</sup>: Երկրորդ՝ որպէս խոտն բուսանելով եւ չորանալով<sup>731</sup> մի զմի փոխանակեն, զի հինն չորացեալ լուծանի յերկիր եւ լնու զպակասութիւն տարերց, եւ նորն ելեալ յերկրէ եւ սնանի ի նմանէ եւ լնու զտեղի հնոյն մինչեւ ցամաքի հիւթ կենդանութեանն եւ ապա ի հող լուծանի: Նոյնպէս եւ մարմինք մարդկան հատելի տարերաց բաղկանան եւ լնուն զտեղի զպակասելոցն, ի նոցանէ<sup>732</sup> սնանին եւ կերակրին: Եւ յորժամ ելցէ հոգին եւ երթայ առ Աստուած, որ ետ զնա, մարմինն վերստին յերկիր լուծանի, ուստի առաւ, ըստ այնմ՝ «Հող էիր եւ ի հող դարձիս» (Ծննդ. Գ 19), եւ եթէ ելցէ հոգի ի նոցանէ եւ դարձնի<sup>733</sup> անդրէն ի հող: Երրորդ՝ զի<sup>733ա</sup> որպէս խոտն հասարակ ունի զկանաչութիւն նախ, իսկ<sup>734</sup> յետոյ երփն երփն<sup>735</sup> գունով եւ

զանազան ծաղկօք զարդարին, նոյնպէս եւ մանկութիւն մեր հասարակ է ամենայն մարդկան, այլ յետոյ զանազան փառօք փառաւորին,<sup>736</sup> այսինքն՝ ոմանք՝ մեծ ազգութեամբ, ոմանք՝ իշխանութեամբ, ոմանք՝ փարթամութեամբ, ոմանք՝ իմաստութեամբ,<sup>737</sup> ոմանք՝ գեղեցկութեամբ, ոմանք՝ զօրութեամբ, ոմանք՝ արուեստի եւ այլովքն, վասն որոյ ասէ Դաւիթ. «Մարդոյ որպէս խոտոյ են ատուրք իւր որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկէ» (Սաղ. ԾԲ 15): Չորրորդ՝ եւ թեպէտ եւ զանազանք<sup>738</sup> են ըստ գունոյ ծաղկանց, սակայն խոտ են ամենեքեան եւ միապէս չորանան: Նոյնպէս եւ մարդիկք թեպէտ զանազան են անցաւոր փառօք<sup>739</sup>, սակայն ի մարմինս նոցա չկա զանազանութիւն, զի միապէս ամենեքեան մեռանին եւ ի հող դառնան<sup>740</sup> իմաստուն եւ տգետք, իշխան եւ ռամիկք, վասն որոյ ասէ. **Ամենայն մարմին խոտ է** (Խ, 6), այսինքն՝ թագաւորաց, հսկայից, մեծատանց եւ աղքատաց եւ այլոցն: Եւ երթ ի գերեզմանս եւ տես<sup>741</sup>. միթէ՞ ունի<sup>742</sup> ինչ աւելի բռնաւորն կամ ազահն կամ այլքն: Հինգերորդ՝ զի<sup>743</sup> յորժամ խոտն ցամաքի եւ ծաղիկքն<sup>744</sup> թօթափին ի նմանէ, ասէ այսպէս: Նոյնպէս<sup>745</sup> եւ մարդիկք, յորժամ մեռանին, թօթափին ի նոցանէ փառքն եւ ոչինչ կարեն տանել ընդ ինքեանս. ոչ իշխանք՝ զիշխանութիւն եւ ոչ մեծատունք՝ զմեծութիւն եւ այլն, որպէս ասէ Դաւիթ. «Մի՛ զարմանայր յորժամ մեծանայ մարդ բազում լինին փառք տան նորա» (Սղմ. ԽԸ 17) եւ այլն, զի ոչ եթէ ի մեռանելն իւրում առցէ ընդ իւր զամենայն, եւ ոչ թէ իջցեն եւ այլ՝ զինչ թողցէ նա, ասէ օտարաց զմեծութիւնս իւրոց, զի «զանձէ եւ ոչ զիտէ ում ժողովէ» (Սղմ. ԼԸ 7): Վեցերորդ՝ զի յորժամ թարշամի խոտն, ընդ նմին՝ եւ ծաղիկք նորա,<sup>746</sup> նոյնպէս յորժամ մեռանի մարդն, ընդ նմին եւ փառքն շիջանէ, զի ոչ է այլ մահ փառացն, այլ նոյն մարմնոյն մահն մահ է եւ փառացն, որպէս ասէ Դաւիթ. «Ելցէ Հոգի ի նոցանէ եւ յայնմ ատուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա» (Սղմ. ԾԽԵ 4), այսինքն՝ մեծութիւնք<sup>747</sup> եւ փառաց գովութիւնք եւ հեշտութիւնք եւ այլքն ամենայն: Երկերորդ՝ որպէս խոտն չորս փոխումն ունի, զի նախ բուսանի եւ ապա աճէ եւ ապա ծաղկի եւ ապա դեղնի եւ հետ այնորիկ հնձի կամ չորանայ: Նոյնպէս մարմինք մեր. նախ բուսանին ծննդեամբ, ապա աճէն հասակաւ եւ ծաղկի<sup>748</sup> մանկութեամբ եւ դեղնի ծերութեամբ եւ հնձի եւ չորանայ մանգաղօ մահուն<sup>749</sup>, որպէս մարգարէն Դաւիթ զժամանակ մարդոյս, ըստ փոփոխման ատուրն համեմատէ ասելով. «Ընդ առաւօտս որպէս դալարի բուսցին, ընդ առաւօտս որպէս դալարի գուարճացին, ընդ երեկոյս թարշամեսցին եւ անկցին» (Սաղմ. ՉԹ, 5): Եւ Տէրն ընդ փոփոխման զիշերոյն ասէ<sup>750</sup> «Ոչ գիտէք, թէ յորում ժամու գայցէ՛ յերեկորեայ, եթէ ի մէջ զիշերի, եթէ ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտս» (Մարկ.ԺԳ, 35): Ութերորդ՝ որպէս խոտն մի զմի առաւել հրդեհեն, նոյնպէս եւ մեղաւորք բորբոքեն զհոգիս միմեանց բանիւք եւ գործաւք՝ յորդորելով ի չարս, ի շնութիւն, ի գողութիւն, ի սպանութիւն եւ յայլսն, որպէս ասէ Առակն «Եկ ընդ մեզ, կցորդ լեր արեան»<sup>751</sup> (Առակ. Ա 11): Աւ դարձեալ. «Այր իմ գնացեալ է ի ճանապարհ զանկողինս իմ

պատրաստեցի պաստառակալաւ» եւ այլն (Առակ. Է 17) վասն որոյ ասէ Դաւիթ<sup>752</sup>. «Մի նախանձիր ընդ չարս եւ մի ընդ այնոցիկ, որ գործեն զանօրէնութիւն» (Մաղմ. ԼԶ, 7): Ինններորդ՝ զի խոտն կոխան եւ կերակուր է անասնոց, նոյնպէս եւ մեղսասերքն գործովք իւրոց կերակուր եւ կոխան են<sup>753</sup> անկեալ սատանայի՝ ծառայելով զնա, զի «Որ առնէ զմեղս՝ ծառայ է մեղաց» (Յովհ. Ը 34) ասէ, զի<sup>754</sup> որով իւրք յաղթի<sup>755</sup> ոք, նմին եւ ծառայ է, զի ազահն մամոնայի է ծառայ, ասէ Տէրն եւ որկրամոլիցն. «Աստուածք որովայնն իւրեանց են» (Փիլիպ. Գ 19) ասէ առաքեալն: «Եւ անառակ որդին արածէր զխոզս» (Դուկ. ԺԵ 15-16)՝ զարշ ցանկութեանց մեղաց, եւ սոքօք պարարի սատանայ: Ջի զանազան մեղօք զանազանապէս կերակրին դեւք եւ ուրախանան, այսինքն՝ յորժամ ծիծաղիմք, յորժամ զիրանամք, յորժամ գողանամք, ի շնութիւնն, ի սպանութիւնն եւ այլն ամենայն: Եւ զի դեւքն ուրախանան սոքօք, յայտէ ի պիղծ տօնից կոռցն, զի ոմն սպանութիւն խնդրէր եւ մինն՝ զշինութիւնն եւ միւսն՝ զարբեցութիւնն եւ այլն: Տասներորդ՝ խոտն լուցկի է հրոյ ըստ այնմ. «Խոտն ի վայրի, որ այս օր է եւ վաղիւն ի հնոց արկանի» (Դուկ. ԺԲ 28) նոյնպէս եւ մեղսասերքն<sup>756</sup> այսօր զուարճ կենօք կեան եւ յետ մահուն ճարակք են յախտենից<sup>757</sup> հրոյն, ըստ այնմ՝ «Ելցեն հրեշտակք եւ մեկնեցեն<sup>758</sup> զչարս եւ ի հուրն արկանեն» (Մաթ. ԺԳ 49) եւ այրի, որպէս մեծատունն ի մէջ բոցոյն պապակէր: Եւ տես<sup>759</sup> զի ոչ ասէ, թէ ամենայն մարդ, այլ՝ **ամենայն մարմին խոտ է**, այսինքն՝ մարմնասերքն, որպէս ասէ Աստուած. «Մի մնացէ Հոգի իմ ի մարդկանդ<sup>760</sup> յայդմիկ, վասն լինելոյ դոցա մարմին» (Ծնդ. Ջ 3), եւ Պօղոս ասէ. «Մարմին եւ արիւն զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն» (Ա Կորնթ. ԺԵ, 50): Նոքա են<sup>761</sup>, որ շինեն ի վերայ հիմանն փայտ, խոտ եւ եղէզն, որ այրին ի հուրն, իսկ որ շինեն ոսկի, արծաթ եւ ակն՝ ոչ այրին<sup>762</sup>, այլ առաւել պայծառան[ան]<sup>763</sup>, որպէս առաքեալք Քրիստոսի<sup>764</sup> եւ հետեւողք նոցին<sup>765</sup> հարքն եւ<sup>766</sup> հայրապետքն եւ վկայքն, կուսանքն<sup>767</sup> եւ պարկեշտքն եւ ընտիրքն, որք թուեցան յաչս անըզամաց, թէ մեռան, այլ յոյս նոցա լի է անմահութեամբ» (Իմաստ. Գ 4) ասէ<sup>768</sup>: Իսկ մեղաւորաց կեանքն խղճի է եւ մահն յուսահատութեամբ, զի ոչ ունին ժամանակս<sup>769</sup> ապաշխարութեան եւ ոչ լսեն ձայն, թէ. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք կամ օրհնեալք Հօր իմոյ» (Մաթ. ԺԱ, 29), այլ զի՞նչ. «Գնացէք յինէն անիծեալք եւ թէ ոչ զիտեն զձեզ» (Մաթ. ԻԵ, 41), եւ թէ. «Կապեցէք զդորա զձեռս եւ զոտս եւ հանէք ի խաւարն արտաքին» (Մաթ. ԻԲ, 13):

Չոր հաւաստէ դարձեալ զնոյն ասելով. Արդարեւ, խոտ է ժողովուրդս<sup>770</sup> այս, **ցամաքեցաւ խոտն եւ քօթափեցաւ ծաղիկ նորս, զի ոգի Տեառն շնչեաց ի նմա** (Խ 7-8) այսինքն՝ ոգի բարկութեան Տեառն, որ արկանէ զնոսա ի հուրն<sup>771</sup>: Եւ զի՞նչ մնա ապա. **Բան Տեառն մնացէ յախտեան**, ասէ որպէս ասէ Տէրն. «Երկինք եւ երկիր անցանեն եւ բանք իմ մի՛ անցանեն» (Մաթ. ԻԴ 35), այն է՝ զի ամենայն հարկիւ կատարի «Յովտ մի, որ նշանախեց մի է, ոչ անցցէ մինչեւ ամենայն կատարեսցի» (Մաթ. Ե 18): Ջի թէ Բան Տեառն

մնա,<sup>772</sup> քանի եւս առաւել՝ գործքն: Այլ եւ Բանն օրէնքն է եւ պատուիրանքն, գոր ոչ մահ եւ ոչ հիւանդութիւնք եւ ոչ այլ ինչ, որ կարեն խափանել: Գրեալ է եւ<sup>773</sup> սոյնպէս վասն հատի եւ խոտոյ<sup>774</sup> ի Կորնթացոց Առաջին<sup>775</sup> թուոթն (Տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 37):

- ԻՉ -

**Ո՞ չափեաց ափով իրով զջուրս եւ կշռեաց զլերինս** (Խ, 12), ընդէ՞ր ոչ ասէ, թէ արար զհրեշտակս եւ զպէտսն, զի թէպէտ եւ նոքա մեծամեծ են պատուով, այլ ի<sup>776</sup> յերեւելեացն կամի ցուցանել: Եւ ընդէ՞ր ոչ ասէ թէ հաստատեաց զերկինս եւ զերկիր, այլ թէ՛ **չափեաց**: Այս է զի գիտելն գործ է Աստուծոյ: Արդ, միտք բանիս, որ ասէ՛ չափեաց զջուրն եւ զայլն<sup>777</sup>. Արդ միտ սորա<sup>778</sup> Նախ՝ այն է իբր թէ արար զնոսա, զի գիտէ Նա միայն զորչափութիւն նոցա, որ Արարիչն է նոցա: Երկրորդ՝ **չափելն** եւ **կշռելն** զնախախնամելն յայտնէ, զի արուեստաւորք ոչ կարեն միշտ պահել զգործս իւրոց: Իսկ Աստուած միշտ ընդ արարածս Իւր է պահպանութեամբ, զի ամենակալ է եւ կրէ զամենայն բանիս զօրութեան Իւրոյ, ասէ:<sup>779</sup> Երրորդ՝ զանվրէպ գիտելն նշանակէ, որպէս մարդ յորժամ չափէ եւ կշռէ զիր ինչ հաւաստեալ գիտէ, այլ նա ոչ եթէ չափելով գիտէ, այլ գիտէ յինքնէն, որ արար զնոսա, որպէս յորժամ ասէ. «Քննէ զսիրտս եւ երիկամունս» (Սղմ. Գ 10) ոչ եթէ քննելով գիտէ այլ զգիտելն քննել ասէ, վասնզի գիտելն ի քննելոյն է<sup>780</sup>: Նոյնպէս եւ աստ վասն ամենհմաստ գիտութեանն կշռել ասէ զժանրութիւնդ լերանց եւ զորքանութիւն երկրի զլայնութիւն երկնից եւ զբազնութիւն ջուրց: Վասն որոյ ասէ Յուդիթ. «Որ Արարիչդ եւ ջուրց»<sup>781</sup> (Յուդ. Թ 17): Չորրորդ՝ զանչափ մեծութիւնն նշանակէ, որ երկինքն թիզ մի է նոքա եւ երկիրս քիլ մի եւ ջուրք ծովու ափ մի եւ զլերինս կշիռ ունի, այսինքն՝ զի ոչ հողմք զլերինս խլել<sup>782</sup> կարեն եւ ոչ լերինք զհողմս դարձուցանեն: Հինգերորդ՝ ասէ<sup>783</sup> զայս, զի մի՛ քննիցի, թէ վասն է՞ր վարի ի գերութիւն զմեզ եւ դարձուցանէ: Յորժամ զերկինս եւ զերկիր ի բռին ունի ոչ ք<sup>784</sup> կարէ գիտել զխորհուրդս նորա:

Վեցերորդ ասէ զայս վասն բաբելացոցն, որք իբրեւ զջուր ծովու բազումք թուէին նոցա եւ իբրեւ զլերինս բարձրացեալ անխոնարհելի, ասէ ձեզ<sup>785</sup> այսպէս թուի, այլ առ Աստուած իբր զկաթիլ մի ի դուլէ են եւ իբր զմէտ մի ի կշռոց նոքա:<sup>786</sup>

**Ո՞ զիտաց զմիտս Տեառն** (Խ 13): Ովս<sup>787</sup> այս անջրպետէ զեղական միտս. այլ հերձուածողք եւ՛ զՈրդի եւ՛ զՀոգի ի նոյն<sup>788</sup> հարեն յայնմանէ, զի ասէ Որդի. «Չոր լուայ ի Հօրէ պատմեն ձեզ» (Յովհ. ԺԵ, 15), եւ վասն Հոգոյն ասէ. «Չոր լսէ, պատմեսցէ ձեզ»: Արդ, զի Որդին հաւասար է գիտութեան Հօր<sup>789</sup> Ինքն ասէ. «Ոչ ք զիտէ զՀայր, եթէ ոչ՝ Որդի» (Մատթ. ԺԱ, 28), «Որպէս գիտէ զԻս Հայր, գիտեն եւ Ես զՀայր» (Հովհ. Ժ, 15): Իսկ վասն Հոգոյն Սրբոյ ասէ Պօղոս. «Ոչ ք զիտէ զԱստուծոյն, եթէ ոչ Հոգին, որ ի նմայն» (Ա. Կորնթ. Բ, 11), զի «Հոգին զամենայն քննէ եւ զխորս Աստուծոյ» (Ա. Կորնթ. Բ, 11): Եւ զի հաւասար պատիւ է Երրորդութիւնն, յայնմանէ յայտ է, «Երթայք մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ

Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ» (Մատթ. ԻԸ 19-20), իսկ այն, որ ասէ. **լուայ եւ թէ՛ լսիցէ**, վասն պատճառին ասէ՝ զՀօրէ: Չինչ է բանս մարգարէին որ ասէ<sup>790</sup>.

**Ո՞ր գիտաց զմիտս Տեառն** (Խ 13), եւ առաքեալ. «Մեք զմիտս Քրիստոսի ունինք» (Ա. Կորնթ. Բ, 16):

Պատասխան - Չեն ինչ հակառակ, զի առաքեալն ոչ զանճառն եւ զանհասականն, ասէ, ունել միտս, այլ՝ ի յայտնութենէ Հոգոյն. ըստ չափոյ կարողութեան մեզ յայտնեաց ասէ Հոգովն իւրով<sup>791</sup>:

**Ո՞վ եղև նմա խորհրդակից**, այսինքն՝ յեղելոցս՝ ոչ ոք, այլ՝ միայն Որդին եւ Հոգին իւր<sup>792</sup>: Տես եւ ի միտ առ, այս ընդդէմ է եբրաեցոցն, որք ասեն, թէ ընդ հրեշտակս խորհեցաւ եւ ասաց. «Արասցուք մարդ ըստ պատկերի մերում» (Ծննդ. Ա, 26), իսկ սա թէ՛ ընդ ում խորհեցաւ: Իսկ մեզ յայս բանից երեք ինչ երեւի. Նախ՝ զի ոչ ոք է պատճառ Աստուծոյ, որ ի խորհուրդս գիտութեանն ածէր զնա: Երկրորդ՝ եւ ոչ ոք համեմատ Նմա, զի խորհրդակից արասցէ զնա: Երրորդ՝ զի ամենայն խորհուրդք եւ իմաստ ի նմանէ է մեզ<sup>793</sup>:

**Ամենայն հեթանոսք իբրեւ կաթիլ մի ի դուլէ են մեզ** (Խ 15) եւ այլն. Նախ՝ վասն ամենեւին նուազ եւ փոքրկութեան ասէ զայս: Երկրորդ՝ զի անպիտանք եւ աւելորդ են հեթանոսք իբր զկաթիլ մի ի դուլէ եւ զշիթս ի<sup>794</sup> բերանոյն, որ ընդ խօսիցն ի դուրս անկանիցին<sup>795</sup>:

**Ամենայն Լիբանան չէ բաւական յայրումն եւ ամենայն չորքոտանիք չէ բաւական յողջակէզս եւ յայրումն»** (Խ 16):

Նախ՝ զի թէ կարօտէր զոհից ասացեալքս ամենայն չէին բաւական յողջակէզս եւ յայրումն: Եւ թէ ոք<sup>796</sup> ոչ է արժանի ողջակիզաց նմա՝ բանք եւս ոչ հասանէ գիտութեան նորա եւ մանաւանդ՝ Էութեան նորա: Երկրորդ՝ թէ<sup>797</sup> ամենայն փայտ ոչ են<sup>798</sup> **յայրումն**, այլ են<sup>799</sup> ոմանք ի պտղաբերութիւնն եւ կէսք<sup>800</sup> յայլ ինչ պէտս: Եւ **ամենայն չորքոտանիք**, այսինքն՝ անսուրբքն չեն ի պէտս ողջակիզաց, այլ՝ միայն սուրբքն: Նոյնպէս եւ ամենայն հեթանոսք անպիտանք են եւ յոչինչ համարեալ, զի ոչ ունին զճշմարտութիւնն հաւատոյ եւ զբարութիւն<sup>801</sup> զործոց:

- Ի՛է -

**Արդ, ո՞ւմ նմանեցուցանէք զՏէրն** (Խ 18): Վասն չորս պատճառի ոչ է պարտ կազմել նմանութիւն Աստուծոյ, ըստ պատկերի. Նախ՝ զի օրինօք փակեաց. «Մի՛ արասցես զնմանութիւն Աստուծոյ, ըստ պատկերի, որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի» (Բ օր. Ե 8): Երկրորդ՝ զի ոչ ոք յառաջնոց նախնեացն կազմեաց զպատկեր<sup>802</sup> Աստուծոյ: Երրորդ՝ զի ոչ ոք զիտէ հաւաստեալ զնմանութիւն նորա<sup>803</sup> զի այլ ոչ ոք է նման Նմա: Չորրորդ՝ զի եղծանելի իրաց կազմենք պատկեր, իսկ Աստուած անեղծ եւ անապական բնութիւն է, յաղագս<sup>804</sup>, որոյ չէ պարտ կազմել պատկեր<sup>805</sup> Նմա, որպէս կոչոցն:

Հարց - Իսկ թե որ հարցանիցե՞՞ր մեք ընդէ՞ր ապա նկարենք զՏիրականն<sup>807</sup> պատկեր եւ զամենայն սրբոց՝ պատասխանենք<sup>808</sup> վասն վեց պատճառի. նախ՝ զի պատկեր ճշմարիտ եւ նկարագիր<sup>809</sup> Էութեանն Հօր է՝<sup>810</sup> Որդին Միածին: Եւ<sup>811</sup> Նա եղև ի պատկեր մեր եւ հաւատամք<sup>812</sup> յիրաւի, ապա եւ զեղելութեան պատկերն նկարենք<sup>813</sup>: Երկրորդ՝ զի «Աստուած արար զմարդն ի պատկեր Իւր» ( Ծննդ. Ա 27) ասէ զիրն, նկարենք ապա եւ մեք զպատկեր պատկերի Նորա: \* Երրորդ՝ զի երեւեցաւ Աստուած ի նմանութիւն պատկերի, որպէս առ<sup>814</sup> Աբրահամ եւ առ Մովսէս: Եւ «Հինատուրցն»՝ առ Դանիէլ եւ «յաթոռ բարձու»՝ Եսայի եւ Եզեկիել: Տեսին եւ Հոգին Սուրբ, որ ճշմարիտ<sup>815</sup> կերպիւ Աղաւնոյ հանգեաւ ի վերայ Քրիստոսի (Յովհ. Ա, 32), իշխենք ապա զնմանութիւն երեւութեան նորա նկարել: Չորրորդ՝ զի<sup>816</sup> զլուր բանիցն Նորա եւ զյիշատակ երախտեաց Նորա տեսութեամբ աչաց անմոռաց պահեսցուք: Վասն որոյ զփրկականն պատկեր յիրաքանչիւր տնօրէնութեան եւ հասակի նկարենք, ընդ նմին եւ զԱստուածածին կուսին. Հինգերորդ՝ զի ցանկացուք երանութեանց նոցա եւ նմանեսցուք եւ զարհուրեսցուք ի տանջանաց եւ փախիցուք: Յաղագս որոյ նկարենք զպատկերս սրբոց ի հանգիստ տեղոջ եւ շուրջ զԱստուածով եւ զպատկերս<sup>817</sup> չարեացն՝ ի տանջանս դժոխսցն: Վեցերորդ՝ զի Տէրն մեր եւ օրէնադիրն ձեւագրեաց զպատկեր իւր ի դաստառակի: Եւ Աւետարանիչն Յովհաննէս զպատկեր Տիրամօրն ի փայտի<sup>818</sup> ձեւագրեաց<sup>819</sup>, ուստի եւ մեք համարձակապէս նկարեսցուք եւ իբրեւ զկենդանի եւ, իբրեւ զկենդանիս<sup>820</sup>, առ Աստուած աղերս մատուցուք եւ բարեխօս դիցուք, ըստ այնմ. «Զկենդանագիր անարատ ծնօղի քո արկանենք առաջի, անոխակալ Տէր» \* : Իսկ թե ոչք զայթակղեսցի<sup>821</sup> կոյր մտօք զպատկերս<sup>822</sup> սրբոց համեմատելով ընդ կոռցն<sup>823</sup>, զիտասցէ, զի բազում զանազանութիւնք գոն.

Նախ՝ զի կուռքն դիւաց է պատկեր, ըստ այնմ «Ամենայն<sup>824</sup> կուռք հեթանոսաց դէք են» (Մով. ԳԵ 5), իսկ այս՝ ճշմարիտ Աստուծոյն: Երկրորդ՝ զի նոքա զձեռագործ նիւթն պաշտէին, իսկ մեք ոչ զնիւթն այլ զնշանակութիւնն միայն<sup>825</sup> պատուենք եւ պաշտենք: Երրորդ՝ նոքա սիրեն չարագործս եւ զսպանումն անմեղաց, որպէս եւ<sup>826</sup> յայտ է ի տօնս զանազան ոճրագործութեամբ եւ զոհիւք տղայոց: Իսկ սուրբք ի տօնս իւրեաց սիրեն, զսրբութիւն եւ զաղօթս, եւ յորժամ կատարի յօժար կամաց ի մաքուր սրտաց եւ ի միամիտ մտաց, ուղիղ հաւատով<sup>827</sup>, զթողութիւն մեղաց շնորհեն<sup>828</sup> եւ զառողջութիւն՝ մարմնոց<sup>829</sup>: Չորրորդ՝ զի պատկերք սրբոց զմեծամեծ եւ սքանչելիս եւ զբժշկութիւնս կատարեն, որպէս դաստառակն՝ զԱբգար եւ Տիրամօրն զեղեփանդական բորոտութիւն բժշկէ, եւ այլն նոյնպէս<sup>830</sup>, զի թէ<sup>831</sup> ստուէրքն նոցա զմեռեալս հարուցանեն, որչափ եւս առաւել<sup>832</sup>

\* Բառերը համերաշխ են Որոգիների այն մտածումին, թե Որդին Աստծո պատկերն է, իսկ մարդը արարվել է «ըստ Աստծո պատկերի», այսինքն համաձայն Աստծո Լոգոսի պատկերի- տես Եզեկի Ծ- վրդ- (այժմ- Արք) Պետրոսյան, Հայրաբանություն, Ա, Ս- Էջմիածին, 1996, էջ 153:

\* Շարական Ապաշխարութեան- տես Զայնաքաղ շարական, Վաղարշապատ, 1888, էջ 94:

պատկերը նոցա: Իսկ պատկերը կռոցն ոչինչ կատարեն սքանչելիս, գոր այլուր ամբաստանէ մարգարէս, եթէ՝ **զի՞նչ խնդրէք կենդանիքդ ի մեռելոց անտի** (Ը 19): Եւ աստ ասէ, եթէ գեղեցկութիւն պատրէ՝ այն ի ճարտար արհեստաւորացն<sup>833</sup> է, զի արարին պատկեր եւ ձուլեցին ոսկով: Եւ թէ յերկար ժամանակս տեւէ՝ այն ի հնարիցն է, զի **փայտ անփուտ ընտրեաց եւ կանգնեաց, զի մի շարժեսցի** (Խ 20): Եւ եղեն ոմանք յերբեմն ժամանակի, որք անարգեցին զպատկերս սրբոց եւ ժողովեալ ոմանք հերքեցին զհերձուածն զայն, վասն որոյ եւ մեք՝ հաւատացեալքս ոչինչ մոլորիմք վասն հոմանունութեան: Այլ որպէս բազումք տեսանեմք ձեւ խաչի ի կենդանիս եւ յանկենդանս<sup>834</sup>, այլ մեք<sup>835</sup> ոչ համօրէն պատուեմք եւ ոչ համօրէն<sup>836</sup> խոտեմք, այլ զմինն պաշտեմք, ուր Քրիստոս միացաւ եւ զայլսն խոտեմք: Նոյնպէս եւ զտէրունական պատկերս պաշտեմք եւ պատուեմք զսրբոց նորա եւ զայլ պատկերս անարգեմք՝ եթէ մարդկան, եւ եթէ՛ դիւաց: Այսքան<sup>837</sup> առ այս:

### - ԻԸ -

Եւ աստի յառաջ յեղելոց իրաց<sup>838</sup> զԱստուած ի ծանօթութիւն ամէ երեք կերպիւ. նախ՝ ի լսելեաց: Երկրորդ՝ յիմաստութեանց: Երրորդ՝ ի տեսանելեաց, զի կամ լսիցեն ի նախնեացն, թէ՝ «Ի սկզբանէ արար զԱստուած զերկինս եւ զերկիր» (Ծննդ. Ա 1): Եւ թէ ոչ ի բնութենէ իրացն՝ իմացին մտօք, զի ամենայն իրի պիտոյ է սկիզբն եւ<sup>839</sup> պատճառ գոլ: Եւ թէ ոչ տեսցեն աչօք յերկինս եւ յերկիր, վասն առաջնոյն ասէ. **Ո՞չ լուայք եւ ո՞չ պատմեցաւ ձեզ, թէ ո՞ հաստատեաց զհիմունս երկրի** ( Խ 21): Վասն երկրորդին ասելի է. **Ոչ իմանայք եւ ոչ զիտասցէք** (Խ, 21): Վասն երրորդին ասէ. «**Համբարձէք ի բարձունս զաչս ձեր եւ տեսէք, որ տա զիշխանս յոչինչ իշխել**» եւ այլն (Խ, 26): Արդ, ի յերկրի տեսանելի է չորս ինչ. նախ՝ զհաստատութիւն երկրի եւ զգնացս ջուրց: Երկրորդ՝ զփոփոխումն թագաւորաց, զաղքատաց մեծանալն եւ զփարթամաց տնանկանալն<sup>840</sup>: Երրորդ՝ զփոփոխումն խորհրդոց եւ կամաց մարդկան, զի բազում ինչ խորհիմք եւ կամիմք<sup>841</sup> եւ ոչ կատարի: Չորրորդ՝ զայլալումն օդոցն եւ բուսոց, վասն առաջնոյն ասէ Դաւիթ. «**Հաստատեաց զերկիր ի վերայ հաստատութեան իւրոյ, զի մի՛ սասանեսցի**» (Սղմ. ԾԳ 5), եւ թէ՝ «**Առաքեաց զաղբերս ընդ ծործորս լերանց**» (Սղմ. ԾԳ 10): Վասն երկրորդին ասէ յԱռակս. «**Ինէս թագաւորք թագաւորութեանն**» (Առակ. Ը 15), եւ Աննա՝ «**Տէր աղքատացուցանէ եւ Տէր մեծացուցանէ**» ( Ա Թագ. Բ 7): Վասն երրորդին՝ «**Տէր ցրուէ զխորհուրդս**» (Սղմ. ԼԲ 10): Եւ վասն չորրորդին ասէ. «**Դնէ զձիւն որպէս զասր եւ զմէգ**» եւ թէ՝ «**Առաքէ բանիւ եւ հալէ զնոսս եւ շնչեսցեն հողմք եւ զնացեն ջուրք**» ((Սղմ. ԾԽԷ 16, 18): Եւ թէ՝ «**բուսուցի զխոտ ի լերինս եւ զդալարիս**» (Սղմ. ԾԳ 14):

Նոյնպէս յերկինս տեսանելի չորս ինչ. Նախ՝ զլայնատարած մեծութիւնն եւ զհաստատ կամարածութիւնն երկնից: Երկրորդ՝ զգեղեցկագարդութիւն նորա: Երրորդ՝ զանդադար

շարժումն: Չորրորդ՝ զայլալումն լուսաւորացոյ, այսինքն՝ զի երբեմն խաւարին, որպէս առ խաչելութեամբն եւ երբեմն յետս դառնան եւ կանգնին առ Յեսուսա եւ առ Եզեկիայի, եւ յայսցանէ պարտ է իմանալ, թէ է Արարիչ սոցա<sup>842</sup>, վասն առաջնոյն ասէ մարգարէս, թէ՝<sup>843</sup> «Հաստատեաց զերկինս իբրեւ զկամար» (Հմմտ. Ամովս Դ 13): Վասն երկրորդին ասէ. **Ո՞ հանէ զարդ նոցա** ( Խ 26): Վասն երրորդին ասէ Ժողովողն. «Շրջելով շրջի երկին», եւ թէ՝ «Ելանէ արեգակն եւ մտանէ արեգակն եւ ի տեղի իւր ձգի» (Ժող. Ա 5):

Վասն չորրորդին ասէ. Դաւիթ<sup>844</sup> «Արարէր զխաւար եւ եղեւ զիշեր» (Սղմ. ԵԳ 20):

**Որ ունի զշրջանակ կամ զծիր երկրի** (Խ 22): Տես, ի միտս առ, զի բոլորակ ասէ զերկիր: Ընդդէմ փիլիսոփայիցն է, որք զառագողի<sup>845</sup> օրինակաւ ասեն զերկիր, այսինքն՝ չորք անկլինի կամ կարակնի, այսինքն՝ եռանկլինի: Սոյնպէս ունի ասէ **զծիր երկրի**, զի մի՛ խնդրեսցես թէ յէ՞ր վերայ հաստատեցաւ, զի հաստատ հիմն երկրի<sup>846</sup> է Բանն Աստուծոյ, ըստ այնմ՝ «Կրէ զամենայն բանի զօրութեան Իւրոյ» (Եբր. Ա 3):

- ԻԹ -

**Կանգնեաց զերկինս իբրեւ զկամար եւ ձգեաց իբրեւ զխորան** (Խ 22): Ակիւղաս ասէ. «Ձգեաց զերկինս եբրեւ զանօսը ինչ»: Սիմաքոս ասէ. «Ձգեաց զերկինս որպէս զվրան»: Աստ զայն ոչ ասէ, թէ է՞ր<sup>847</sup> արարչագործեաց եւ ոչ թէ զինչ է նիւթ երկնից եւ ոչ թէ որպէս ինչ նիւթ եւ ի մարմին է, այլ գյօրիւնածն ասէ, եթէ կամարածն ձեռով հաստատեցաւ, **կամար** ասէ, զի մի՛ զարհուրեսցին բնակիչք երկրի, թէ յանկարծու անկանի<sup>848</sup> ի վերայ մեր, ասէ՝ Սի երկնչիր, հաստատ է, որպէս կամար քարեա: Եւ **վրան** ասէ զնա վասն դիրութեան: Նոյնպէս եւ **ձգելն** զայն յայտնէ, թէ դիրաւ տարածեաց եւ մեկնեաց<sup>849</sup> որպէս ոք զհանդերձ տարածէ եւ<sup>850</sup> սփռէ:

**Եւ երկիր իբրեւ զոչինչ արար** (Խ 23): Կամ զայն ասէ, թէ յոչընչէ արար, կամ թէ դիրաւ առանց աշխատութեան արար, այսինքն՝ բանի եւ մանաւանդ թէ կամօք ըստ այնմ, «Չամենայն զոր ինչ կամեցաւ եւ արար Տէր» (ԽԶ, 10): Ու՞ր են այնոքիկ, որ անարար ասեն զերկիր եւ բերեն վկա թէ՝ «երկիր էր աներեւոյթ»: Չի եւ նոյն Սովսէս. նախ՝ ասաց, թէ՝ «Արար Աստուած զերկին եւ զերկիր» (Ծնդ. Ա 1) եւ ասէ թէ՝ արար զերկիր, յայտ է, թէ արարելն անարար ոչ է, իսկ որ ասէ՝ «Էր աներեւոյթ», զի ծածկեալ էր ի բազմութենէ ջուրց եւ դեռ լոյս ոչ գոյր:

**Համբարձէք ի բարձունս զաչս ձեր** (Խ 26): Յաղագս երեք պատճառի կանգուն է ձեւ մարդոյս եւ ոչ կորագլուխ, որպէս զանասնոցն<sup>851</sup>. Նախ՝ զի Տէր եւ իշխան ենք ի վերայ նոցա: Երկրորդ՝ զի միշտ յերկինս հայելով տեսանենք զբարձրութիւնն Աստուծոյ: Երրորդ՝ զի ի միտ ամենք զազնուականութիւն մեր, վասն այսր պատճառի եւ աչքն ի բարձր մասին եղան<sup>852</sup> որպէս զդատաւորք, զի անսխալ տեսցէ եւ ընտրեսցէ զբարին ի չարէն<sup>853</sup>, որպէս



ասէ ժողովողն. «Իմաստնոյն աչքն ի գլուխ» (Ժող. Բ 14), իսկ որք միշտ յերկիր հային երկրաքարշ խորհրդով, խրատէ զնոսա՝ ի բարձունս ամբառնալ զաչսն:

**Ո՞ հաստատեաց զայս ամենայն:** Ոչ որպէս ասեն թէ ոմն զերկիր արար եւ այլ ոմն՝ զծով եւ ոմն՝ զերկինս, այլ միայն նա արար ասէ զամենայն զարդս երկնից յանուանէ կոչէ: Չայս եւ Դաւիթ. «Ո՞ թուէ զբազմութիւն աստեղաց» (Սղմ. ԺԽԶ 4) եւ այլն. Նախ՝ զի անսխալապէս գիտէ զամենայն: Երկրորդ՝ զի նախախնամէ զիրաքանչիւրսն, զի մի՛ կորիցեն: Երրորդ՝ զի ամենեքեան հնազանդ են<sup>854</sup> բանին նորա, այս է յանուանէ կոչելն (տե՛ս Ծնդ ԻԶ 25, Եսայի ԽԵ 3): Սաստիկ է զօրութիւնն Աստուծոյ երեք կերպիւ. Նախ՝ զի յերկար եւ միշտ: Երկրորդ՝ զի առաւել է զօրութիւն: Երրորդ՝ զի ամենագօր է, այսինքն՝ յամենայն իրս զօրաւոր է, իսկ մարդիկ երբեմն են նուազ եւ առ ոմանս են զօրաւորք:

- Լ -

Հարց - Չի՞նչ է յաւիտենական եւ զի՞նչ մշտնջենաւորն:

Պատասխան - Յաւիտենականն է անսկիզբն եւ անվախճան, որպէս Աստուած: Եւ մշտնջենաւորն է սկսեալն եւ անվախճանն որպէս հրէշտակք եւ հոգիք մարդկան:

- ԼԱ -

**Ո՞ զարթոյց յարեւելից զարդարութիւն եւ կոչեաց զնա զհետ իւր** (ԽԱ, 2): Այսինքն՝ ոչ թէ հեթանոսք կամ կուռքն իրեանց զարդուցին<sup>855</sup> զարդարութիւն, բայց միայն՝ Աստուած. նախ՝ զգործ արդարութեան է իմանալի, զի վասն մեղացն զերեցան, յիրաւի ապա վասն դարձի ազատեսցին: Եւ այն, զի ասէ **զարթոյց**, զի մինչ ի մեղսն էին<sup>856</sup>, անփոյթ առնէր զնոսա<sup>857</sup>: Երկրորդ՝ ի Կիրոս ակնարկէ, որք ազատեաց զնոսա, զի ոմանք զարդարն ասեն: Երրորդ՝ Չօրաբաբէլ է արդարն, որ առաջնորդեաց ժողովրդեանն եւ զարհուրեցոյց զթագաւորսն հեթանոսաց: Չորրորդ՝ վրէժխնդրութիւն է բաբելացոց, որ յարոյց զՊարս եւ զՄարս եւ աւերեաց զնոսա, իսկ հինգերորդ՝ արդարութիւնն է Տէր մեր Յիսուս Քրիստոս ծագեալ իբր յարեւելից ի Հօրէ եւ լուսաւորեաց զխաւար մեր եւ սրբեալ արդարացոյց զմեզ<sup>858</sup>: **Չարթոյց** ասէ. ընդ մեզ զիջանելով խօսի:

**Եւ կոչեաց զնա զհետ իւր**, այսինքն՝ զհետ նախասահմանեալ կամացն իւր, զի յառաջագոյն նկարեալ էր զմարմնանալն Որդոյ, զխաչն, զմահն եւ զյարութիւնն եւ զփրկութիւնն մեր:

**Եւ Տէր առաջին եւ ես նոյն եմ, որ առ յապա** (ԽԱ 4): Այս է սեփական Աստուծոյ, զի յառաջ քան զՆա ոչ ոք է եւ յետ նորա ոչ ոք է, այսինքն՝ զի անըսկիզբն է եւ անվախճան: Այլ Ինքն է սկիզբն եւ կատարումն ամենայնի:

- ԼԲ -

Աստ ասէ, թէ ընտրեցի զձեզ, եւ Պօղոս. «Յառաջ քան զլինելն աշխարհի ընտրեաց զմեզ» (Եփես. Ա 4): Արդ, եթէ Աստուած զմինն ընտրէ եւ զմիւսն խոտէ ապա<sup>859</sup> խոտեալն չէ

մեղադրելի: Ոչ եթե Աստուած բռնութեամբ եւ խառնիխուռն ընտրէ եւ խոտէ<sup>860</sup> այլ յառաջադէտ<sup>861</sup> տեսութեամբ արդարապէս զլօսն<sup>862</sup> ընտրէ եւ զվատթարսն խոտէ, զոր օրինակ մարդիկ զառաջի եղեալն ընտրեն զայնոսիկ, որ ի յերթիւնսն կամ ի պատահմունսն ունին զպատուականութիւն: Նոյնպէս եւ ամենիմաստ զիտութեամբն յառաջագոյն ընտրէ. եթե՛ յորովայնէ եւ եթե՛ յետոյ<sup>863</sup> լինելոց են պատուականք, զիրաքանչիւրսն ի դէպ ժամու կոչէ, որպէս յայտ է յառակաց մշակացն յայգին: Իսկ անարժանիցն<sup>864</sup>, որք չեն ընդունելոց, ոչ առաքէ քարոզս, որպէս յազգս պարսից եւ այլոց եւ զամենայն այսպէս իմայ:

**Որդիդ եւ զածածդ Իսրայելի** (ԽԱ 14) կոչէ զժողովուրդն, զի խոնարհեալք էին եւ սակաւաւորք:

- ԼԳ -

**Բացից զետս ի վերայ լերանց եւ ի դաշտս աղբիւրս** (ԽԱ 18): Այս գրարձ նոցա նշանակէ, զի վերստին շինութիւն էր լինելոց յամենայն տեղիս, նա եւ մարգարտութիւնք եւ ուսմունք օրինացն<sup>865</sup> յետ դարձին: Իսկ առ մեզ հոգեւորապէս **զետք**<sup>866</sup> են բանք մարգարեիցն եւ **աղբիւրք**՝ հոսմունք առաքելականք: **Չզետս**,<sup>867</sup> ասէ, **ի վերայ լերանց եւ զաղբիւրս ի դաշտս** վասն երեք պատճառի. Նախ՝ զի յառաջագոյն մարգարեքն էին եւ յետոյ առաքեալքն երեսեցան: Երկրորդ՝ զի մարգարեքն ի մէջ Իսրայելի, որք բարձրացեալ էին<sup>868</sup> օրինօք եւ առաքեալքն ի մէջ հեթանոսաց, որք խոնարհեալք էին<sup>869</sup> մեղօք: Երրորդ՝ զի զետք լերանց ի դաշտս իջանեն եւ ի դաշտաց ի լերինս ոչ ելանեն: Նոյնպէս ի մեզ հոսեցան բանք մարգարեիցն, իսկ առաքելոցն ի նոսա՝ ոչ, զի ոչ ընկալան նոքա: Իսկ **զետ** եւ **աղբիւր**. նախ՝ զի **զետք** ի սակաւ ուրեք եւ **աղբիւրք** ի բազում տեղիս բխեն: Նոյնպէս<sup>870</sup> մարգարեքն ի մէջ Իսրայելի եւ առաքեալքն յամենայն ազգս հեթանոսաց<sup>871</sup> քարոզեցին: Երկրորդ՝ զետն յոլով ունի ջուրս քան **զաղբիւրս**<sup>872</sup>: Եւ **աղբիւրք** յոլով են արդեամբք քան զզետս: Նոյնպէս<sup>873</sup> բազում են բանք եւ օրէնք ի մարգարեիցն<sup>874</sup>, այլ առաքեալքն սակաւոր զաշխարհս պտղաբերեցին: Երրորդ՝ զի<sup>875</sup> զետք եւ **աղբիւրք** ի միոյ ծովէ, նոյնպէս<sup>875ա</sup> առաքեալքն եւ մարգարեքն ի միոյ Հոգւոյն: Չորրորդ՝ զի<sup>876</sup> բազում ուրեք **աղբիւրք** ի զետոց հոսեն, նոյնպէս<sup>877</sup> առաքեալքն ի բազում տեղիս վկայութեամբ մարգարեիցն քարոզէին, նա եւ զհինն ի նորս փոխեցին: Հինգերորդ՝ զի<sup>878</sup> զետք եւ **աղբիւրք** ի միասին խառնին<sup>879</sup>, այսպէս հին եւ նոր կտակարանք այժմ ի նորս<sup>880</sup> եկեղեցի:

Իսկ **մայրն** եւ **տօսախն** (ԽԱ 19) եւ այլն, զոր յիշէ, թուով տասն են եւ մշտասաղարդք եւ անուշահոտք եւ բժշկականք եւ լուսաւորք<sup>881</sup> ի նոսա յետ դարձին զշինութիւն նշանակէ, նա եւ՝ զթագաւորութիւն եւ զքահանայութիւն<sup>882</sup>, զի ըստ ոմանց ի ներքոյ թագաւորաց կարգեալ են աստիճանքի<sup>883</sup> իններորդ, եւ թագաւորն տասն է ի վերայ նոցա: Այսպէս՝ եւ՝ քահանայապետն տասներորդ է, նոյնպէս ի<sup>884</sup> նորս եկեղեցի աստիճան քահանայութեան

ինն է եւ տասներորդ կոթողիկոսն, ըստ երկնայնոցն ինն դասուց եւ գերագունից տասներորդ է Աստուած: Այլեւ զանազան ներգոծութիւնս զմշտագուարճ ցանկութիւնս զբժշկութիւն հոգւոց, քաութեամբ մեղաց, զանուշահոտ վարս եւ զլուսաւոր շնորհս եւ զվարդապետութիւնս նշանակեն, որ ի մէջ եկեղեցոյ:

**Ասացէք, զոր ինչ առ յապա կամ արարէք չար կամ բարի, թէ աստուածք էք** (ԽԱ 23): Միայն Աստուծոյ է սեփական զլինելոցս յառաջագոյն ասել եւ առնել<sup>885</sup> այսինքն՝ տալ պարգէս եւ պատիժս, զի Աստուած չարս ոչ առնէ, այլ արդար հատուցմունք նորա մեզ չար թուի: Այլ թէ որ հարցանէ յիմար մտօք, թէ վասն է՞ր մարգարէս թողեալ զազդու զօրութիւնն, որ ի նոսա, զի կարեն բարի եւ չար առնել, եւ ընդ անմռունչ<sup>886</sup> պատկերսն այսչափ ճարտարաբանէ: Այսմ կրկին պատասխանէ սուրբ<sup>887</sup> Յոհան Ոսկէբերան. Նախ՝ այսպէս, թէ առաջինքն միայն պատկերս արարին եւ աստուածք<sup>888</sup> զնոսա պաշտէին, զորս կշտամբէ մարգարէս, այլ ազդմունք նոցա<sup>889</sup> եւ պատասխանիք, յետոյ ի հայթաթանաց կեղծաւորեալ մարդկանէ՝ մտին ի նոսա: Երկրորդ՝ պատասխանի<sup>890</sup>. թէ եւ ոչ նոքին իսկ դեւք մտեալ ի պատկերսն ոչ գիտէին՝ զի՞նչ է զառաջիկայն եւ ոչ կարեն բարի կամ չար<sup>891</sup> առնել, եւ յայտ է ի հրէիցն, որք թողին զճշմարիտն Աստուած եւ «դիւսաց երկիր պագին՝ զոհելով զուստերս եւ զդաստերս» (Մդմ. ԳԵ 37), եւ ոչ կարացին ինչ օգնել նոցա: Այլ եւ զժամանակ մարդեղութեանն Քրիստոսի ոչ կարացին գիտել, եւ թէ գիտացեալ էր՝ զխորտակումն իրեանց ի ձեռն խաչին ոչ էր մտեալ ի Յուդա: Այլ եւ ոչ պատերազմէր ընդ սրբոցն, յորժամ գիտէր, թէ յաղթահարի ի նոցանէ: Եւ թէ առնեն ուրեք ուրեք չար, որպէս ի խոզսն եւ ի խաչինս Յոբայ. այս<sup>892</sup> ի ներելոյն Աստուծոյ է, զի յորժամ ներէ Աստուած եւ մարդիկ մարդկան չար առնեն, եւ թէ երագով կամ ի ձեռն դիւթից պատասխանեն զլինելոցն, եւ այս եւս կամ ի ներելոյն Աստուծոյ լինի ի խնամս մարդկան եւ կամ սրատես մտօք կարծեն, որպէս եւ ճարտարս ի մարդկանէ ի շարժմանէ աստեղաց զլինելոցսն ասեն:

- ԼԳ -

**Յակոբ ծառայ իմ** (ԽԲ 1): Ու՞մ կարծեն հրէայքն զայս բանս, զի յայնմանէ<sup>893</sup>, որ ասէ. **Մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդ իմ** (Խ, 1), ասէ Աստուած<sup>894</sup>: Մինչեւ ի վերջք գրոցս Ասորեստանոյն եւ Եզեկիա այլ ճառ ոչ գոյ: Այլ եւ ոչ Ջօրաբաբելի յարմարի, զի ասէ ոչ **աղաղակեսցէ եւ ոչ վիճեսցի**, եւ ահա Ջօրաբաբել կոտորեաց զԵդամացիսն եւ զԳօդ: Այլ յարմարի Տեառն մերոյ Յիսուսի<sup>895</sup> Քրիստոսի, որպէս եւ Աւետարանիչն Մատթէոս զայս վկա բերէ թէ. Բարիոք խօսեցաւ Հոգին Սուրբ. «ի ձեռն Եսայեայ եւ ասէ<sup>896</sup>. «Ահաւասիկ մանուկ իմ, զոր ընտրեցի» (Մատթ. ԺԲ 18) եւ այլն: Այլ եւ ի Տէր մեր ոչ որպէս արիանոսքն կարծեն զԲանն արարած եւ ծառայ եւ կարօտ օգնականի, այլ ճշմարիտ ի մարմին նորա կատարի, ըստ որում. «Չկերպարանս ծառայի էառ» ( Փիլիպ. Բ 7):

**Օգնական եղև նմա՝** ի գործունեությունն սքանչելեացն եւ ասաց առ<sup>897</sup> նա. «Դա է Որդի իմ ընտրեալ ընդ որ հաճեցայ» ( Դուկ. Գ 22) եւ «Հոգին Սուրբ աղավանակերայ էջ ի վերայ նորա» (Դուկ. Գ 22): Եւ զի առ Յակոբ դնէ զբանս, որպէս այն. «Աստուած զիրաւունս քո Արքայի տուր եւ զարդարութիւնս քո [Որդոյ Թագաւորի]» (Սղմ. ՀԱ 2): Նոյնպէս եւ մարգարէս դէմք դնէ զՅակոբ եւ ի Քրիստոս խօսի: Եւ դարձեալ վասն այն յիշէ զՅակոբ<sup>898</sup>, զի յազգէ նորա ծնանելոց էր Քրիստոս:

**Օգնական եղէց նմա.** ըստ Աստուածութեանն ոչ է<sup>899</sup> կարօտ օգնելոյ, այլ ըստ տնօրէնութեանն, զի մարդ եղև, «Եւ հրեշտակք զօրացուցանէին զնա» (Դուկ. ԻԲ 43):

**Իրաւունս հեթանոսաց հանցէ.** Նախ՝ այն է զի ազատեսցէ զհեթանոսս ի ծառայութենէ սատանայի: Երկրորդ՝ զի ազատեսցի զանազան շաղաղմանէ մեղաց եւ ի պղծագործ զարշուծեանց եւ էած յարդարութիւն եւ ի սրբութիւն կենաց: Երրորդ՝ զի հրեայք, որք յօրէնս խոկային, վրիպեցան ի ճշմարտութենէն եւ հեթանոսք յիմարեալք հասին<sup>900</sup> ի գլխաւոր առաքինութիւն, Չորրորդ՝ զերկիւղ արդար դատաստանին սանձ եղ ի հոգիս, որով խոյս տամք ի չարէ: Եւ տես ոչ ասաց, թէ արասցէ այլ՝ **հանցէ**, զի գոր էր ի ծածուկ՝ յայտնի եհան, որպէս այն «եւ սերմահան» (Մտթ. ԺԳ 4) եւ յաստուածային գանձէն բաշխեաց պարգեւս աստուածայնոցս:

**Չեղէզն ջախջախեալ մի բեկցէ եւ զպատրոյզն առկայծեալ մի շիջուցէ** (ԽԲ, 3):

Նախ՝ հրեիցն ժողովուրդքն իբրև **ջախջախեալ եղեզն**<sup>901</sup> հակառակէին եւ<sup>902</sup> իբրև **զկայծ** վառեալ նախանձաբեկ լինէին: Թէ կամեցեալ էր, ասէ, ոչ իբրև զողջ **եղէզն**, այլ իբրև՝ **զջաղջախեալ**<sup>903</sup>, դիւրաւ խորտակէր եւ շիջուցանէր՝ կորուսանելով զնոսս, այլ ոչ կամեցաւ: Երկրորդ՝ ասեն ոմանք **եղէզն** ջախջախեալ<sup>904</sup> զնոյն ժողովուրդն, զոր ոչ երբէք այլ ողջացոյց, այսինքն՝ բժշկեաց: Իսկ **պատրոյզն առկայծեալ** զօրէնքն ասեն<sup>\*</sup>, զոր ոչ շիջոյց, այլ՝ կատարեց: Երրորդ՝ զի սուրբն Բարսեղ ասէ, **Եղեզն ջախջախեալ** նոքա են, որք արատով իւր կատարեն զօրէնսն, զոր ոչ է պարտ բեկանել, այլ՝ խրատել զնոսս, որպէս Տէրն ասէ<sup>905</sup> «Մի՛ առնէք զողորմութիւն կամ զպահքն ձեր ի ցոյցս մարդկան» (Մատթ. Զ 1) եւ Պօղոս ասէ. «Առանց տրտնջելոյ եւ քրթմնջելոյ եւ առանց զրգռութեան եւ պարծանաց արարէք» (Փիլիպ. Բ 14): Տրտնջելն այն է, որ յայտնապէս յիշեն եւ երախտեն զգործն, որպէս փարիսեցիքն ի տաճարին: Եւ քրթմնջելն, որ ի ծածուկ դժգոհեն եւ զգործն անարժան համարին ինքեանց: Գրգռութեամբ է, որ չար նախանձով հակառակին ընդ ոմանս եւ աղօթեն ստէպ եւ պահեն: Պարծանք<sup>906</sup> է, որ կամ ինքեանք բերանով պարծին զուղղութիւնս իւրոց կամ ի ցոյցս մարդկան առնեն, զի այլք զովեսցեն. այնպիսիքն անպիտան եւ **ջախջախեալ եղեզն** են: Իսկ պատրոյզն առկայծեալ նոքա են, որք<sup>907</sup> ոչ վառեալ ջերմութեամբ սիրովն Աստուծոյ<sup>908</sup>, այլ ծուլութեամբ եւ պղերգութեամբ պահեն

\*Ոսկերերան, Մեկն. Եսայեայ, էջ 288:

զպատուիրանս: Չնոսա յիշատակաւ դատաստանին պարտ է արիացուցանել, ասէ: Չորրորդ՝ **եղեգն ջախջախեալ**<sup>909</sup> ժողովուրդն է, որ բառնան գոծուարակիր օրէնսն Քրիստոսի, որ է նեղ եւ անձուկ ճանապարհն Քրիստոսի<sup>910</sup> եւ ոչ բեկանին տաղտկութեամբ կամ յուսահատութեամբ, այլ յուսով հանգստեան<sup>911</sup> լուծն քաղցր եւ բեռն թեթեւ թուի նոցա ի շնորհացն Քրիստոսի, որ ոչ բեկանէ, այլ կազդուրէ: Իսկ **պատրոյզն աղօսացեալ**, ասէ սուրբ Եփրեմ, Մարդեղութիւն է Տեառն մերոյ Յիսուսի<sup>912</sup> Քրիստոսի, որ ի տղայութեան հասակն կամէր շիջուցանել Հերոդէս, ընդ կոտորելն մանկանցն, եւ ոչ կարաց<sup>913</sup>: Նա եւ յորժամ կամէին քարկոծել եւ ի գահավեժ լերինն, եւ յորժամ խաչեցին հրեայքն կամէին շիջուցանել զկեանս Նորա, այլ Նա<sup>914</sup> առաւել ծագեաց, որպէս ասէ.

**Ծագեսցէ եւ մի շիջցի մինչեւ հանցէ ի ճշմարտութիւն զիրաւունս** (ԽԲ, 4), այսինքն՝ յայտնեաց, զի ամենայն իրք մարդկան, յաշխարհի<sup>915</sup> սնոտի եւ ընդունայն են, ըստ այնմ, թէ. «Ընդէ՞ր սիրէք զանանրութիւն եւ խնդրէք զստութիւն» (Սաղ. Գ, 3): Այլեւ թիւր էին իրաւունք դատաստանաց մարդկան, գորս ուղղեաց, թէ մի ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք» (Յովհ. Է 24): Եւ լինի թիւր դատաստան, ըստ վեց իրաց. Նախ՝ յերկիւղէ: Երկրորդ՝ ի ճարտար եւ ի տարտամախօսաց<sup>916</sup>: Երրորդ՝ յակնառութեանց: Չորրորդ՝ ի տգիտութեանց: Հինգերորդ՝ ի կաշառաց: Վեցերորդ՝ ի սուտ վկայից<sup>917</sup>: Եցոյց, թէ այնպիսեաց<sup>918</sup> դատաւորաց արդարապէս վճիռ հատուցանի աստ եւ ի դատաստանն Աստուծոյ, զի արդարութեամբ դատի եւ ակն մարդոյ ոչ առնու եւ<sup>919</sup> ոչ յումեքէ երկնչի եւ եւ ի կաշառաց ոչ պատրի<sup>920</sup>, ամենիմաստ է եւ ոչ կարօտ<sup>921</sup> այլոց վկայից, զի ամենայն ինչ մերկապարանոց կայ<sup>922</sup> առաջի նորա եւ «քննէ զսիրտ եւ զերիկամունս» (Սղմ. Է 10), որ եւ ինքեան, որ պատժապարտքն են իրաւունս<sup>923</sup> տան, որպէս Դաւիթ. «Ես ասէ Հովիւս մեղայ» (Բ Թագ. ԻԳ 17) եւ Կայեն ասէր. «Մեծ է վնաս իմ քան զթողութիւն մեղաց» (Ծննդ. Գ 13), Ադամ թաքչելովն յայտ արար, թէ՛ յանցաւոր եմ, և մեծատունն յորժամ լուաւ յԱբրահամէ, թէ՛ «ընկալար զբարիսն քո»՝ ոչ կարաց իրաւամբք ինչ<sup>924</sup> պատասխանել, եւ ոչ նա, որ հրամայեաց Տէրն. Կապել գոտս եւ զձեռս եւ հանել ի խաւարն արտաքին (Մատթ. ԻԲ, 13):

**Եւ յանուն նորա հեթանոսք յուսացին** (ԽԲ 4բ):

Հարց - Ընդէ՞ր ոչ հաւատացեն հեթանոսք յայն անունն<sup>925</sup>, որ իբրեւ զԷութիւնն գործ կատարէ: Նախ՝ զի որպէս Ինքն՝ Քրիստոս գղեւս հալածական առնէր, նոյնպէս եւ անուն նորա հալածէր<sup>926</sup>, որպէս որդիքն Սկեւեայ (Տե՛ս Գործք ԺԹ 14-17): Երկրորդ՝ զի որպէս ինքն կռապաշտութիւնն եբարձ եւ զպատկերս նոցա փշրեաց, ըստ այնմ՝ Շարժեսցին ձեռագործք Եգիպտացոցն, յորժամ եմուտ անդր տղա հասակաւն\*, նոյնպէս եւ սուրբքն յիշելով զանուն նորա<sup>927</sup> խորտակէին զկուռսն: Եւ թէ որ ասիցէ՝ որպէ՞ս բարձան կուռքն, զի<sup>928</sup> դեռեւս գոն կռապաշտք եւ մոլէզնեալք եւ կախարդք եւ այլն՝ պատասխանէ

Ոսկեբերանն<sup>929</sup>, Եթե Չսակաւ մնացորդս եթող Քրիստոս, զի ծանիցուք զերախտիս քարերարութեան Նորա,<sup>930</sup> թէ յորպիսի զագրալի գործոց եւ ի դառն տանջանաց ազատեաց զմեզ, նա եւ ջերմ սիրով փութացուք առ նա: Երրորդ՝ որպէս ինքն Քրիստոս թողոյր, նոյնպէս եւ անուն նորա զմեղս թողու, ըստ այնմ. «Մկրտեսցի իւրաքանչիւր որ<sup>931</sup> ի մենջ յանուն Յիսուսի ի թողութիւն մեղաց» (Գործք Բ 38): Չորրորդ՝ որպէս Ինքն ունէր զմեծամեծ սքանչելիսն ի կաղս, ի կոյրս եւ ի մեռեալս<sup>932</sup> եւ յայլս, նոյնպէս եւ անուամբն Քրիստոսի յարոյց Պետրոս զՏաբիթայն (տե՛ս Գործք Թ 40) եւ վազէր կաղն եւ օրհնէր զԱստուած, որ անկեալ դնէր ի դուռն տաճարին<sup>933</sup> (տե՛ս Գործք Գ 7-8): Հինգերորդ՝ որպէս նոյն Ինքն Քրիստոս ի կեանս յաւիտենականս պարգեւէ հաւատացելոց իւրոց, որպէս ասէ Աւետարանն. «Որոց հաւատացեն յանուն նորա, ետ նոցա իշխանութիւն՝ որդիս Աստուծոյ լինել եւ ժառանգակից Քրիստոսի» (Յով. Ա, 12):

**Որ հաստատեաց զերկիր (ԽԲ 5ա).** Նախ՝ զի ոչ ապականի ի ծփմանէ ջուրց շուրջանակի եւ ոչ այրի ի բորբոք ջերմութեանց: Երկրորդ՝ զի այնքան ծանրութիւն լերանց եւ դաշտաց ոչ շարժի ի տեղոջէ իւրմէ, այլ հաստատեալ<sup>934</sup> կայ եւ մնայ բանին Աստուծոյ: Եւ եթէ ուրեք երբեք շարժէ զերկիր՝ յայն սակս, զի ծանիցուք, թէ եւ<sup>935</sup> անշարժ պահելն ի ձեռս Նորա է, զի նա եղեր<sup>936</sup> յերկիր եւ տա դողալ սմա, ասէ մարգարէ, **որ ետ շունչ մարդկան, որ կոխեն զնա (ԽԲ 5բ),** Նախ՝ զի ցուցցէ թէ ի նմանէ է տուեալ<sup>937</sup> հոգիս մարդկան՝ իմաստնական եւ շունչ անասնոց՝ զգայական: Երկրորդ՝ զի պահելով նմա՝ մնան ի մարմնի, եւ յորժամ Նա կամի՝ արձակէ ի մարմնոյ: Երրորդ՝ զի Աստուծոյ<sup>938</sup> միայն է հոգի, **որ կոխեն** զերկիր եւ ոչ երկնի եւ երկրի եւ ծովու, որպէս հեթանոսք առասպելաբանեն:

**Հանն եւ զկապեալսն ի բանտ (ԽԲ 7)** այսինքն՝ զհոգիսն ի դժոխսց եւ զմարմինս՝ ի զերեզմանաց եւ զհեթանոսս՝ ի կռոցն, որք կապեալ եւ կաշկանդեալք էին մոլորութեամբ, եւ ոչ կարէին կանգնել, այլ **նստէին** յանգիտութեան **խաւարի**:

**Չփառս իմ այլում ոչ կամիմ (ԽԲ 8)** այսինքն՝ զանուն իմ հանեն<sup>939</sup> ի կռոցն: Այլեւ ասի մարդն Աստուծոյ փառք, ըստ Պօղոսի. «Առն ոչ է պարտ ծածկել զգլուխ իւր զի փառք Աստուծոյ է» (Ա Կորնթ. ԺԱ 7):

- ԼԵ -

**Օրհնեցէք զԱստուած յօրհնութիւն նոր (ԽԲ 10ա).** Հրեայքն յետ դարձին՝ իբր յարութենէ:

**Եւ անուն նորա ի ծագաց երկրի (ԽԲ 10բ)** ի բերանոյ նոցա, որք ի չորս կողմ որպէս ցրուեալք էին եւ ազատեցան ի զերութենէն: Այլ եւ ազգն հեթանոսաց նոր օրհնութիւն մատուցանեն Աստուծոյ: Չի թէ հրէիցն յետ<sup>940</sup> եւթանասուն ամին **նոր** էր օրհնութիւնն, քանի եւս՝ հեթանոսաց, որք հազար ամաւ յետոյ օրհնէին զԱստուած: Եւ զինչ է **նոր օրհնութիւն.** այն է, զի<sup>941</sup> ոչ ըստ հնոյն սովորութեան եւ ոչ ըստ օրինացս, այլ հոգեւոր օրհնութեամբ

\* «Գիրք տղայութեան Քրիստոսի». տե՛ս «Անկանոն գիրք նոր կտակարանաց», էջ 62:

օրհնենք զԱստուած: Ըստ այնմ. «Եկեսցէ ժամանակ, յորժամ ճշմարիտ երկրպագութիւն երկիր պագանիցեն Հօր հոգով եւ ճշմարտութեամբ» ( Յովհ. Դ 23). Նախ՝ զի մեր զԵրրորդութիւնն պաշտենք, իսկ նոքա միայն զՀայր գիտեն<sup>942</sup>: Երկրորդ՝ զի նոցայն մարմնական, իսկ մերս հոգեւոր օրհնութիւն. «Սիրտ սուրբ եւ հոգի խոնարհ, զոր Աստուած ոչ արհամարէ» (Սղմ. Թ 19): Երրորդ՝ նոքա յԵրուսաղէմ կամ ի նշանաւոր տեղս, իսկ մեր՝ ամենայն ուրեք օրհնենք զԱստուած կելով<sup>942ա</sup> յաղօթս, ըստ Պօղոսի. «Կամիմ զի արք կացեն յաղօթս, յամենայն տեղիս համբարձցեն զսուրբ ձեռս ի վեր» (Ա Տիմ. Բ 8): Դարձեալ, զի շնորհականքն եւ պարգեւք նոր է, որ արար զմեզ, այսինքն՝ զի ի սատանայէ փրկեաց: Եւ առաքիւնութիւնքն նոր, այսինքն՝ զի ոչ սոսկ մարդով կամ հրեշտակով փրկեցաք, այլ մարդ լինելովն Աստուծոյ, յաղագս որոյ պարտինք **նոր օրհնութեամբ** օրհնել զԱստուած:

Եւ զի մի՛ կարծեսցուք, թէ կարօտ է Աստուած օրհնութեանս մերում ասէ. **Իշխանութիւն նորա ի բարձունս փառաւորի**, այսինքն՝ բաց մտօք եւ տես յերկինս, որք բիւրք բիւրոց հրեշտակաց եւ հազարք հազարաց հրեշտակապետաց կան անդր ի փառաբանութիւնսն Աստուծոյ<sup>943</sup> ասելով. **Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց՝ լի են երկինք** (Ձ 3) եւ թէ՛ «Փառք ի բարձունս Աստուծոյ» (Ղուկ. Բ 14) եւ թէ՛ «Օրհնեալ են փառքն Տեառն ի տեղոջէ իւրմէ» (Հմմտ. Սղմ. Կէ 6), նա եւ ոչ նոցա փառաբանութեանցն է կարօտ, ուստի յայտ է, զի յառաջ քան զհրեշտակաց ստեղծանելն<sup>944</sup> անկարօտ էր փառաց նոցա: Այլ այն է շահն, զի որք օրհնեն զԱստուած, օրհնին ի նմանէ եւ<sup>945</sup> մերձաւորին Աստուծոյ: Չի որքան որ հայի<sup>946</sup> ի լոյսն, այնքան լուսաւորի ի նմանէ եւ լուսոյն ոչ ինչ է յաւելուած: Նոյնպէս եւ որք օրհնեն զԱստուած օրհնուին ի նմանէ, ըստ այնմ, որ զփառաւոր աչս իւր փառաւորէ, եւ տես զի ասէ. **Իշխանութիւն նորա ի բարձունս փառաւորի** (ԽԲ 10գ): Այլ ոչ եթէ էութիւնքն քննի ի նոցանէ, զի անհասանելի է բնութիւնս Աստուծոյ, ապա քանի առաւել մեզ, որ երկրաքարշ ենք խորհրդով եւ նուազ՝ տեսութեամբ, եւ մեզ ընդէ՞ր ոչ երեսի **իշխանութիւն նորա**: Այս ոչ վասն հեռաւորութեան, զի «Աստուած մեր յերկնի եւ յերկրի», ( Սղմ. ԾԺԳ 3), ասէ մարգարէն: Այլ վասն նուագութեան մերոյս բնութեան<sup>947</sup>, զի տկար է տեսութիւն մեր եւ ոչ կարենք հայել ի ճառագայթս աստուածային լուսոյն, որպէս յայնժամ տեսին աշակերտքն ի լերինն եւ թուլացան<sup>948</sup> յերկիւղէն: Եւ նոյն Ինքն իմանալի<sup>949</sup> զօրութիւնքն ոչ իշխեին<sup>950</sup> հայել ի փառս Նորա, այլ ծածկելով զերեսս եւ զոտս ահիւ եւ սրբութեամբ զերեքսրբեանն երգէին սրբասացութիւն:

**Եւ անուն նորա ի ծագաց երկրի** (ԽԲ 10դ): Այն, որ ասէ Դաւիթ. «Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա» (Սղմ. ԺԸ, 5) եւ յամենայն ազգաց եկին ի հաւատս Քրիստոսի<sup>951</sup>:

Եւ դարձեալ ի կատարածին. **Ամենայն լեզու խոստովան եղիցի** (ԽԵ 24). թէ «Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր» (Փիլիպ. Բ 11):

**Եթէ անցանիցես ընդ ջուրս ծովուն ընդ քեզ եւ եւ գետք զքեզ մի ողողեսցեն**<sup>952</sup>. (ԽԳ 2), որպէս յաւուրս Յետուայ:

**Եւ եթէ ընդ հուր անցանիցես՝ մի այրեսցես եւ բոցն զքեզ մի կիզցէ**, որպէս երեք մանկունքն ի մէջ հրոյն ոչ այրեցան եւ բարեւազիքն արտաքոյ այրեցան<sup>953</sup>, եւ թագաւորն ի տագնապի կայր: Նոյնպէս եւ ի հուրն ի կատարածի ատուրն զարդարսն ոչ այրէ, այլ՝ զամբարիշտս<sup>954</sup>, որք փայտ եւ խոտ ունին զգործսն: Իսկ այժմ ի կեանս յայս այնպիսի է առաքինութիւնն, որ ի մէջ վշտի<sup>955</sup> անխտով պահէ զառաքինութիւնսն<sup>956</sup>, իսկ չարն<sup>957</sup> թէպէտ ի խոր<sup>958</sup> խաղաղութեան իցէ<sup>959</sup> ի տագնապի պահէ զչարագործսն, զի հանապազ տանջին ի միտս իւրեանց, զոր օրինակ, յորժամ ջերմացան ի մարմինն լինի՝ ոչինչ է նմա օգուտ օդոյն քաղցրութիւնն, նոյնպէս եւ մեղաւոր հոգին չէին զյօգուտ գեղեցկութիւնն մարմնոյն եւ առողջութիւնն կամ զգեստքն կամ ուրախութիւնն արտաքոյ եւ այլն, զի «Իբրեւ զգերեզման բռեալ է արտաքոյ եւ ի ներքոյ լի է ժահահոտութեամբ» (Մտթ. ԻԳ 27), իբրեւ զդիակիր դագաղ է մարմինն նորա, զի թէպէտ ուտէ եւ ըմպէ եւ խօսի, սակայն հոգին ի նմա մեռեալ է եւ լի դառնութեամբ:

- ԼԶ -

**Գիտասցիք եւ հաւատասցիք, թէ ես եմ Աստուած** (ԽԳ, 10ա), վասն երեք պատճառի զերազանց է հաւատն քան զիմաստն.

Նախ՝ զի իմաստքն զերեւելիս քննէ, իսկ հաւատն զաներեւոյթն տեսանէ, ըստ առաքելոյ. «Հաւատն է յանդիմանութիւն, որոց<sup>960</sup> ոչն երեւին» (Եբր. ԺԱ, 1): Երկրորդ՝ զի իմաստքն զեղական իրս քննէ, իսկ հաւատն վերաբերէ ի յանդեղութիւնն Աստուծոյ որպէս ասէ. **Հաւատասցիք ինձ թէ Ես եմ** (ԽԳ, 10բ) յաղագս որոյ աստուածայինքն ամենայն հաւատով ճանաչի<sup>961</sup> մտօք ոչ քննի, զի տկարանան միտքն: Երրորդ՝ զի իմաստքն կարօտ է նիւթական ապացուցի, իսկ<sup>962</sup> հաւատքն<sup>963</sup> անկարօտ է, յաղագս որոյ թերահաւատք օրինակ խնդրեն գերագոյ երրորդական Անձանցն Աստուծոյ<sup>964</sup> տնօրէնութեան խորհրդոյն, զի ոչ ունին հաւատ կատարեալ եւ կամին զիտութեամբ հասանել անհասանելոյն:

**Յառաջ քան զիս ոչ եղէ այլ Աստուած եւ յետ Իմ ոչ եղիցի** (ԽԳ 10գ), այսինքն թէ՛ անեղ է եւ անկատարն, իսկ այլ եղականս<sup>965</sup> չեն Աստուած, այլ նա միայն է Աստուած: Եւ այս<sup>966</sup> ոչ եթէ զՈրդի եւ զՀոգի ի բաց վարէ վասն երեք պատճառի. Նախ՝ ասէ զի ոչ եղէ այլ Աստուած, իսկ Որդի եւ Հոգի<sup>967</sup> չեն արարեալք այլ բնութենակիցք Հօր, յեւթենէ<sup>968</sup> նորա ծնեալ եւ բխեալ: Երկրորդ՝ զի ասէ ոչ յառաջ եւ ոչ յետ իմ եղիցի, իսկ Որդի եւ Հոգի գոյակից են Հօր եւ ոչ յետս երբեք եւ ոչ յառաջ է, քան զՈրդի եւ զՀոգի, թէպէտ պատճառ է՝ որպէս հուրն ոչ է յառաջ քան զլոյսն եւ ջերմութիւն իւր, թէպէտ պատճառ է սոյնպէս եւ



Հօր<sup>969</sup>: Երրորդ՝ զի ասէ ոչ եղիցի այլ Աստուած, իսկ Որդի եւ Հոգի ոչ են այլ աստուածք ի Հօրէ, այլ երրորդ անձինքն են մի Աստուած, զի Աստուածութիւնն հաւասար է յերեսեանն,<sup>970</sup> որպէս եւ բնութիւնն եւ գօրութիւնն եւ այլն ամենայն, որպէս հոգիք քո եւ միտքդ եւ մարմինդ, եւ երեք է ըստ յատկութեան եւ մի է մարդ<sup>971</sup>, ըստ գոյացութեան, կամ որպէս հոգին եւ բանն, այսինքն՝ բանականութիւնն եւ կենդանութիւնն<sup>972</sup> մի եւ երեք են, եւ երեք են եւ մի, եւ<sup>973</sup> անհնար է սոցա թարց<sup>974</sup> միմեանց լինել, կամ յետ եւ առաջ, կամ որպէս արեգակն եւ լոյսն եւ ջերմութիւնն<sup>975</sup> եւ կամ հուրն, որպէս ցուցաւ:

Իսկ այս օրինակ եւ նա՝ ճշմարտութիւն: Եւ վասն երեք պատճառի անարգէ գողջակեզս եւ գայլսն. նախ զի մի՛ գայլ առաքինութիւնս անփոյթ առնիցեն եւ միայն ողջակիզաց պարապիցին<sup>976</sup>: Երկրորդ՝ զի մի՛ գիտասցեն, թէ ողջակիզացն է փրկութիւն, այլ՝ յԱստուծոյ: Երրորդ՝ զի գալստեամբն Քրիստոսի խափանելոց էին մարմնական զոհք անասնոցն, այլ պատարագ օրհնութեան եւ ողջակեզ կենդանի, որ է «սիրտ սուրբ եւ հոգի խոնարհ, զոր Աստուած ոչ արհամարհէ» (Սղմ. Ծ 19) եւ անարիւն զենումն Քրիստոսի: Վասն որոյ եւ Դաւիթ ասէր. «Ընդ զոհս<sup>977</sup> եւ ընդ պատարագս ոչ հաճեցար» (Սղմ. ԼԹ 7): Եւ թէ՛ «Ոչ ընդունին ի տանէ քումմէ զուարակս» (Սղմ. ԽԹ 9) եւ այլն:

**Ես եմ, որ ջնջեմ իբրեւ զամպ զանօրէնութիւնս քո** (ԽԴ 22) ըստ գրոցն, որպէս ասէ յառաջիկայդ. **ամպ** զգերութիւն բաբելացոցն եւ **մէզ** զնեղութիւն նոցա: **Ջնջեմ**, այսինքն՝ ի գերչացն ազատեմ զձեզ: Բայց գիտելի է, զի բազում իրօք մեղքն **յամպս** համեմատի:

Նախ՝ զի որպէս<sup>978</sup> **ամպն** ի գիճութենէ երկրի ելեալ խափանէ զլոյսն եւ զջերմութիւն արեգական: Նոյնպէս եւ մեղքն ի տղմային հոգոց եւ մարմնոց բարձրացեալ՝ արգիլէ գողորմութիւն եւ **զւէրն** Աստուծոյ, ըստ այնմ՝ **Սեղքն ձեր որոշեն ի մէջ իմ եւ ի մէջ ձեր** (ԾԹ 2). Երկրորդ՝ զի **ամպն** եւ **մէզն**<sup>979</sup> խառնակեն զպարզութիւն օդոյն եւ խաւարի<sup>980</sup>: Նոյնպէս եւ մեղքն զյատակատեսութիւն<sup>981</sup> մտացն պղտորէ եւ յիմարի մարդն: Ըստ այնմ՝ Ոգիք, ըմբռնեալք ի մեղս, ի մտաց եւս անկանին<sup>982</sup>: Երրորդ՝ զի փոքր ինչ ամպ ի սակաւ ժամանակս աճէ եւ բազմանայ: Նոյնպէս եւ ի փոքր ինչ մեղս յորժամ մեղկանայ մարդ ընդ նմին եւ այլքն ի ներքս մտանեն եւ բազմանան: Չի մեղքն նմանութիւն օձի, յորժամ սակաւ մասն գլխին<sup>983</sup> ի ներքս<sup>984</sup> մտանէ, ընդ նմին քարշէ եւ զբոլորն: Նոյնպէս եւ ցանկութիւն<sup>985</sup> մեղացն ի զգայարանսն ի ներս մտեալ եւ բոլորովիմբ ի կատարման<sup>986</sup> տանի, եւ մեռանի հոգին: Ըստ այնմ՝ «Յանկութիւն յղացեալ<sup>987</sup> զմեղս ծնանի եւ մեղքն կատարեալ զմահ ծնանին» (Յակ. Ա 15): Եւ յորժամ զմինն գործէ մարդ եւ այլքն ընդ նմին ըստ շղթայից: Չորրորդ՝ զի յամպոյն եւ որոտումն<sup>988</sup> եւ կայծակնունք թափին: Սոյնպէս եւ մեղաւոր հոգին հանապազ ի մէջ խռովութեան եւ տագնապի կայ այրեցեալ ի խղճէ մտացն<sup>989</sup>: Չայս<sup>990</sup> միտս ասէ եւ Պօղոս. «Չայս արարեալ կայծակունս հրոյ կուտեսցես ի գլուխ նորա» (Հռովմ. ԺԲ 20): Չի աստ մտօքն չարչարի<sup>991</sup> հանապազ, եւ անդ հոգովն մտանի ի նախանձ հրոյն,

որ ուտիցէ զհակառակորդս: Հինգերորդ՝ զի յամպոյն իջանեն սառնամանիքն, ձիւն, կարկուտ եւ այլն, ուստի խամբանան<sup>992</sup> ամենայն դալարիք: Նոյնպէս եւ մեղքն զհոգին սառնացնեն<sup>993</sup> ի սիրոյն Աստուծոյ: Եւ թէ իցէ ինչ բարեգործութիւն, զայն<sup>994</sup> եւս կորուսանէ եւ անպտուղ առնէ ըստ մարգարէին. «Յորժամ թողցէ զօրէնս իմ եւ արասցէ մեղս ոչ յիշեցիմ արդարութիւնքն, զոր յառաջ գործեաց» (Եզեկ. ԺԸ 24), ասէ: Վեցերորդ՝ Այլ եւ իջանէ անձրեւ յամպոյն եւ առնէ գնացս հողմոց, որպէս յաուրս Նոյի<sup>995</sup>, նոյնպէս եւ ի մեղացն հոսեն սաստիկ փորձութիւնք<sup>996</sup> զանազան ի վերայ մարդոյ. որոգայթք հիւանդութիւնք, գերութիւնք, գայթակղութիւնք եւ այլն: Ըստ այնմ, «Իջին անձրեւք, յարեան գետք» (Մտթ. Է 25, 27): Յերթերորդ՝ զի լինի ամպ, որ ոչ որոտայ եւ ոչ կայծէ, որպէս ի ձմեռն վասն սաստկութեան օդոյն<sup>997</sup> եւ կամ զի ոչ շնչէ այնպիսի հողմ, որ եւ ոչ անձրեւ եւ ոչ կարկուտ եւ ոչ ձիւն բերէ: Նոյնպէս եւ բազումք ի խորս մեղաց ըմբռնեալք ոչ ունին զկայծ խղճի մտացն, այլ որպէս խիստ հիւանդն ոչ զգայ ցան: Չի Աստուած ոչ ազդէ յայնպիսիսն<sup>998</sup>, այլ թողու ի ձեռաց, զի երթիցեն զհետ կամաց իրեանց: Որ եւ ոչ ինչ փորձութիւնք<sup>999</sup> հասանէ նոցա եւ ոչ տրտմականք, այլ՝ յամենայն կողմանց ուրախութիւն: Որպէս մեծատունն<sup>1000</sup>, որ զուարճացաւ ի կեանս յայս, եւ յորժամ մեռաւ՝ ի դժոխս ամբարձ զաչս իւր: Եւ այն է պատճառ, որ մեղաւորք ոմանք աստ տանջին եւ ոչ անդ, որպէս, ապաշխարողքն, եւ ոմանք անդ տանջին եւ ոչ աստ, որպէս մեծատուն, եւ ոմանք են, որ աստ եւ անդ տանջին, որպէս սողոմացիք եւ<sup>1001</sup> փարաւոն եւ այլն: Եւ դիւրին է նոցա, որ աստ զառհաւատչեայն<sup>1002</sup> կրեն, քան որք ոչ կրեն, որպէս եւ ասէ Տէրն. «Դիւրագոյն լիցի երկրին սողոմացոց» (Մտթ. Ժ 15): Եւ են մեղաւորք, որ ոչ աստ տանջին եւ ոչ անդ, որպէս նոր մկրտեալքն, որ զան ի հաւատս, զորս երանէ մարգարէն. «Երանի, որում թողութիւն եղեւ մեղաց» (Սղմ. ԼԱ 1): Ութերորդ՝ զի ի շնչել հողմոյ<sup>1003</sup> ջնջի տապն, նոյնպէս եւ ի շնչել հողմոյ սիրոյն Աստուծոյ դիւրաւ ջնջի մեղքն: Վասն որոյ ասէ. **Ես եմ, որ ջնջեմ զմեղս քո**<sup>1004</sup> **որպէս զամպ զանօրէնութիւնս** (ԽԳ 22): Չի թէպէտ մեծ եւ անհնարին թուի բազմութիւն մեղացն, այլ ի շարժել ողորմութեանցն Աստուծոյ, իբր զկայծ մի հրոյ անկեալ<sup>1005</sup> ի ծով, դիւրաւ շիջանի, ասէ Ոսկէբերան: Եւ տես, թէ որպէս դիւրաւ լուծան մեղքն պոռնկին քանանացոյն, մաքսաւորին, աւազակին եւ այլոցն, որ փութապէս արդարացան: Իններորդ՝ զի յորժամ լուծանի ամպն, ոչ թէ ի տեղիս<sup>1006</sup> ինչ ժողովի, այլ ամենեւին յանհետ լինի: Նոյնպէս եւ զմեղս յորժամ թողու Աստուած ոչ թէ վերստին յիշէ, այլ ամենեւին անհետ ջնջէ, որ եւ սպիտակքն ոչ երեւի, որպէս ասէ. **Չմեղս քո ոչ եւս յիշեցից**<sup>1007</sup> (ԽԳ 25). այսինքն՝ զի ոչ միայն ի պատժոցն ազատէ, այլ եւ ոչ յիշէ ամենեւին յօրինակ մեզ, զի չէ պարտ քահանային արեամբ կամ բանիւ, այլ եւ ի մտաց ամենեւին մոռանալ, որպէս Աստուած: Բայց թէ յորժամ վերստին դառնայ ի նոյն մեղս, որպէս շուն ի փսխած իւր (Հմմտ. Առակ. ԻԶ 11, Բ Պետ. Բ 22), յայնժամ եւ Աստուած վերստին յիշէ եւ զառաջինն եւ զվերջինսն,

որպես ասէ Յովհաննէս, թէ զառաջինն եւս պահանջեսցեն ի նմանէ: Տասներորդ` յորժամ ջնջի ամպն, վերստին պայծառանայ օդն յառաջին լուսաւորութիւն: Նոյնպէս յետ թողութեան յառաջին պայծառութիւն հասանէ հոգին, որպէս զձին սպիտակացեալ, ըստ Դաւթի. «Լուսս եւ քան զձին սպիտակ եղեց», եւ Եսայի ասէ-<sup>1008</sup> **Թէ իցեն մեղս ձեր իբրեւ զճանճախարիթ, որ է մուր, իբրեւ զձին սպիտակ արարից** (Ա 18) Եւ այս լիցի, յորժամ խոստովանի մարդ զմեղս իւր: Որպէս<sup>1009</sup> ասէ. **Ասայ դու նախ զանօրէնութիւնս քո, զի արդարացիս** (ԽԳ 26): Չայս Աստուած ասէ, այլ վերաբերի ի քահանայն, որ է<sup>1010</sup> յաստուածկոյս կողմանէն<sup>1011</sup>: Եւ այս վասն բազում պատճառի: Նախ **Ասայ դու**<sup>1012</sup> **զանարէնութիւնս քո**, զի իմացիս զերախտիքն իմ, ըստ այնմ. **Իսրայէլ, մի՛ մոռանայր զիս** (ԽԳ 21), եւ Սողոմոն ասէ. «Չերախտիս բարեկամի քո մի՛ մոռանայր» (Իմաստ. ԺԳ 26): Երկրորդ` **Դու ասայ նախ**<sup>1013</sup> **զանօրէնութիւնս, զի դու արդարացիս**, զի իմ ասելն ինձ է արդարութիւն, զի զոր ինչ ասաց մարդ, եւ կորոյս` թէ զմեղս եւ թէ՛ զարդարութիւն, որպէս փարիսեցիկն եւ մաքսատրն: Երրորդ` **Դու ասայ**. զի ասելն սրբութիւն է քեզ, զի<sup>1014</sup> թէ ես ասեմ` նախատինք է քեզ, ասէ Աստուած: Չորրորդ` **Դու ասայ**, զի քո ասելն<sup>1015</sup> զղջումն եւ խոնարհութիւն է քեզ, իսկ իմ ասելն` տրտմութիւն եւ ատելութիւն է քեզ<sup>1016</sup>:

Հինգերորդ` իմ ասելն մատնութիւն է քեզ, այլ` **դու ասայ** եւ մատնեա եւ ոտիս լեր անձին քում, որպէս ասէ Առակսն. «Արդարն ի պատասխանին ոտիս լինի զինքենէ» (Առակ. ԺԸ 17): Վեցերորդ` **Դու ասայ**, զի դու ասա, զի դու<sup>1017</sup> ամօք կրիցես, զի «անձն, որ մեղիցէ, նոյն եւ մեռցի» (Եզեկ- ԺԸ 4): Եւթներորդ` զի միոյն ասելն է եւ միւսոյն պատասխանելն: Արդ, եթէ ես ասեմ, դու ոչ կարես թողուլ, այլ **դու ասա**` եւ ես թողեմ զասացեալն քո, ըստ այնմ, ասացի թէ՛ «Պատմեաց ինձ զմեղս եւ դու թողեցիր» (Սղմ. ԼԱ 5): Ութերորդ` զի նախ հիւանդն<sup>1018</sup> ասէ զցաւն եւ ապա բժիշկն կազմէ զղեղն, վասն զի նախ խնդրելն է եւ ապա առնուլն, ըստ այնմ` «Խնդրեցէք եւ առնուցուք» (Գլուկ. ԺԱ 9, Մտթ. Է 8) եւ այլն: Իններորդ` **Դու ասայ**, զի մի՛ բռնութեամբ եւ ակամայ լիցի, որոց ոչ է վարձ ակամային եւ բռնադատելոյն, այլ քո կամօք, ըստ Դաւթայ<sup>1019</sup>. «Ես կամօք իմովք խոստովան եղեց անուան քում» (Սղմ. ԾԳ 8): Տասներորդ, զի դու գիտես զիրաքանչիւր գործեցեալն քո<sup>1020</sup> եւ ոչ քահանայն, վասն այն, **Դու ասայ**, որ գիտես: Եւ տես` զինչ ասէ. **զքո անօրէնութիւնսն ասայ** եւ ոչ զայոց: Չի պարտ է զտեսակ մեղացն ասել, այլ ոչ է պարտ զղէմս գործակցին յանուանէ<sup>1021</sup> յայտնել, զի այն մատնութիւն է ընկերին: Եւ նախ պարտ է<sup>1022</sup> մտածել զամենայն մեղս, զի մի՛ ինչ մոռացի ի խոստովանելն: Վասն որոյ ասէ.

**Բայց քեզ յուշ լիցի, եւ ապա ընդ միմեանս դատեսցուք** (ԽԳ 26): Այսինքն` խոստովանութեամբն, եւ այս մեծի գթութեան Աստուծոյ է: Չի ընդ ասելն զմեղս, արդարանայ մարդն:

**Մինն ասիցէ**<sup>1023</sup> **Աստուծոյ եմ ես**, այսինքն՝ ընտանի Աստուծոյ եւ ի հաշիւ նոցա իսրայէլացիքն, որ ազատեցան ի Բաբելոնէ եւ եղեն ծառայք Աստուծոյ:

**Եւ միսն խրախոյս քարձցէ յանունն Աստուծոյ Յակոբայ**<sup>1024</sup> (ԽԳ 5ա): Այն է, յորժամ ազատեցան ի Բաբելոնէ, բազումք ի բաբելացոցն ցանկացան ելանել յԵրուսաղէմ, յորժամ տեսին զգօրութիւն<sup>1025</sup> Աստուծոյ, որ ի Խաբող, զի խաբեցին զթշնամիս<sup>1026</sup> եւ բերին ի հնազանդութիւն Աստուծոյ իրեանց<sup>1027</sup>: Չի այն է խրախոյսն, որ քաջալերեցան եւ եկին ի հաւատս նոցա<sup>1028</sup>:

**Եւ միսն զիր հանցէ ձեռամբ իւրով, թէ Աստուծոյ եմ ես** (ԽԳ 5բ) այսինքն՝ ժողովորդք հեթանոսաց, որ ուխտեցին նոր ուխտ Աստուծոյ փոխանակ ժողովրդեանն հրէից, որ ստեաց զուխտն Աստուծոյ, զոր ուխտեաց ի Քորէր<sup>1029</sup>: **Եւ յանունն Իսրայէլի խրախոյս քարձցէ** (ԽԳ 5գ): Եւ Իսրայէլն Աստուծոյ էր եւ խաչեաց զՔրիստոս, նա, որ հաւատայ ի խաչն Քրիստոսի անուանի, այն է **յանուն Իսրայէլին**, զի էառ զանուն նորա:

**Դարձեալ մինն ասիցէ, թէ Աստուծոյ եմ ես** (ԽԳ 5դ), այն է՝ որ զանուն քրիստոնէութեան ունի ի ծածուկ, **եւ միսն խրախոյս քարձցէ**, այն է<sup>1030</sup>՝ որ ոմանք յայտնապէս ունին զանուն Քրիստոսի եւ խոստովան լինին առանց երկիւղի: **Եւ միսն զիր հանցէ ձեռամբ**, այն է՝ որ ունի զհաւատն եւ զգործն, եւ զքրիստոսեանն յայտնապէս արձան կացուցէ: Այս առաւել է, քան զառաջինսն: Դարձեալ՝ առաջինն երեսնաւոր է, եւ միջինն՝ վաթսնաւոր, եւ վերջինն՝ հարիւրաւոր, որ կատարեալքն են (տե՛ս Մտք- ԺԳ 23):

- ԼԹ -

Եւ զիտելի է, զի անթիւ զանազանութիւնք<sup>1030</sup> են ի մեջ կոռցն եւ Աստուծոյն ճշմարտի, որպէս Արարչի արարածոց, զի ոչ ինչ միաբանութիւն է լուսոյ ընդ խաւարի եւ ոչ Քրիստոսի՝ ընդ Բելիարայ (Բ Կորնթ- Չ 15): Այլ մարգարէս վասն կուրութեան մոլորելոցն ի բազում իրաց յայտնապէս ցուցանէ զճշմարիտն Աստուած նախ յանսկզբնութենէ եւ յանվախճանութենէ, որպէս ասէ, **Ես եմ Աստուած առաջինն եւ ես յաւիտեան** (ԽԳ 6): Իսկ նոքա ի նիւթոյ սկսեալք եւ դարձեալ լուծեալք, որպէս ասէ, «Կոտորեն զփայտ եւ ժողովեն արծաթ եւ ոսկի» (Ժող. Բ 8), եւ թէ՛ **Անկաւ Բել եւ կործանեցաւ Դագոն** (ԽԳ 1): Երկրորդ՝ ի միայնութենէ, ըստ այնմ՝ «Չգեցի զերկինս միայն» (Յովք Թ 8), եւ թէ՛ «Ես եմ Աստուած, եւ չիք այլ ոք» (Ելք Գ 14): Իսկ նոքա ոչ միայն, այլ բազումք են, զի այլ է ճանճիկն<sup>1032</sup> (Դ Թագ- Ա 2) եւ այլ է Աստղիկն, այլ՝ Հերմէս եւ այլ՝ Հերակլէս եւ այլն: Եւ բազում պատկերք սողնոց եւ անասնոց, ասէ: Երրորդ՝ յարարչութենէ, ըստ այնմ՝ **Նա է Աստուած, որ կանգնեաց զերկինս եւ հաստատեաց զերկիրս եւ որ ի նմա** (ԽԲ 5): Իսկ նոքա ոչ Արարիչ, այլ՝ արարած մարդկան, ըստ այնմ՝ «Ամաչեսցեն ամենեքեան, որ ստեղծանեն կուռս, եւ

որոշեն պատկերս» (Սղմ. ՂԶ 7): Չորրորդ՝ ի պարզեացն եւ ի պատժոյն, ըստ այնմ. **Ես եմ Աստուած, որ առնեմ զխաղաղութիւն եւ հաստատեմ զչար** (ԽԵ 7): Եւ նոցա ասէ. **Եթէ աստուածք իցեք՝ արարեք բարի կամ չար, զի տեսցուք**: Հինգերորդ՝ ի պահպանութենէ, եւ զի լսէ եւ կատարէ, ըստ այնմ **Ի ժամանակի ընդունելութեան, ասէ, լուս քեզ եւ յաւոր փրկութեան օգնեցի քեզ** (ԽԹ 8), եւ թէ՛ **Ես Տէր Աստուած, որ փրկեմ զձեզ**» (ԽԳ 3): Եւ վասն նոցա ասէ. **Այլ ոչ եւ զանձինս փրկեն** (ԽԴ 20) եւ **թէ որ կարդայ առ նոսայ՝ ոչ լսեն եւ ի չարեաց ոչ փրկեն** (ԽԶ 7): Վեցերորդ՝ ի նախագիտութեանցն, զի ասէ եւ Աստուած է, ըստ այնմ՝ **Խօսեցա եւ ածի, պատմեցի եւ փրկեցի** (ԽԳ 12), այսինքն՝ որ նախ պատմէր զգերիլն եւ զազատիլն, իսկ նոքա ոչ զլինելոցն եւ ոչ զեղեալսն պատմեն, ըստ այնմ՝ «Ո՞վ է ի Տեառնէ<sup>1033</sup> իբրեւ զիս յառաջ կացուցանէ<sup>1034</sup>, յորմէ հետէ<sup>1035</sup> արարի զմարդն, եւ զամենայն<sup>1036</sup> զլինելոցն պատմեսցէ»: Եւթներորդ՝ յամենհիմաստ գիտութեանցն, ըստ այնմ՝ **Չիք քննութիւն իմաստութեան Նորա** (Խ 28): **Այլ՝ չափէ զերկինս թգաւ եւ զերկիրս քլաւ** (Խ 12) եւ թուէ զբազմութիւն աստեղաց (Սղմ. ՃԽԶ 4): Իսկ վասն նոցա ասէ. **Վկայք դուք էք նոցա** (ԽԴ 9), զի ոչ տեսանեն եւ ոչ իմանան: Ութերորդ՝ յանկարօտութեան, որպէս ասէ. Աստուած ոչ քաղցիցէ եւ ոչ ծարաւիցէ<sup>1037</sup>, Իսկ վասն նոցա ասէ. քաղցիցեն եւ ծարաւեսցեն եւ ոչ արբեցան ջուր ի տկարութենէն (ԽԴ 12)<sup>1038</sup>: Իններորդ՝ յաննմա- նութեանց, զի ոչ ինչ է նման նմա, որպէս ասէ. **Ու՞մ նմանեցուցեք զՏէր եւ որո՞վ նմանութեամբ**» (Խ 18): Իսկ վասն<sup>1039</sup> նոցա, ասէ- **Առեալ փայտ, մածոյց սոսնձով եւ արար պատկեր առն եւ ի գեղ երեսաց մարդոյ** (ԽԴ 13): Տասներորդ՝ ի մեծաւքանչ զօրութեանցն, զի զոր ինչ եւ կամի առնէ, փոփոխէ զխորհուրդս եւ զեութիւնս, ըստ այնմ: **Ո՞ դարձուցանէ զիմաստունս յիմարութիւն** (ԽԴ 25): **Եւ Ասեմ ցԿիրոս, թէ իմաստնասջիր** (ԽԴ 28): **Եւ դարձեալ ասեմ ցանդունդս, թէ աւերեսջիր եւ զգետս ցամաքեցուցից** (ԽԴ 27), այսինքն է՝<sup>1040</sup> որ զլոյծ բնութիւն ծովուն հաստատեաց եւ Յորդանան ցամաքեցոյց, զհուրն ի ցօղ փոխարկեաց եւ զլոյսն՝ ի խաւար, զորս ոչ կարեն առնել աստուածք հեթանոսաց, եւ ոչ մի, զի եւ ոչ զինքեանս կարեն շարժել կամ հաստատել, որպէս ասէ. թէ՛ **Բարձեալ**<sup>1041</sup> **Բերեք ի վերայ ուսոյց, եւ թէ՛ դիտեք ի գետինն, ոչ շարժեսցինն** (ԽԶ 7):

Այսքան առ այս:

- Խ -

Այսպէս ասէ Տէր ցօծեալն իւր ցԿիրոս (ԽԵ 1).

Օծեալ է սա ոչ իւղով, որպէս քահանայքն եւ թագաւորքն եւ ոչ հոգով,<sup>1042</sup> [որպէս] մարգարեքն, այլ զօրութեամբ՝ ի վերայ թագաւորացն, զայն օծումն, որ արժանացաւ այնմ իշխանութեան, որպէս եւ զսա օծեալ կոչեաց, նոյնպէս եւ զԱսորեստանեայն զազան կոչէ. **Վա՛յ Ասորեստանոյն. զազան բարկութեան է իմ ի ձեռն նոցա** (Ժ 5): Եւ Եզեկիէլիւ ասէ. «Ծառան իմ Նաբուգոդոնոսոր աշխատեցաւ ի Ծուր» (Եզեկ. ԻԹ 19-20): Եւ վասն

Անտիոքա Չաքարիաի ասէ «Յարուցից<sup>1043</sup> ի վերայ երկրի հովի տգէտ, որ ուտէ զմիս ընտրանաց եւ զոտս նոցա փշրեցէ» (Չաք. ԺԱ 16): Այսու ամենայնի յայտ է, թէ Աստուած յարուցանէ զթագաւորս ի վերայ երկրի թէպէտ եւ ամբարիշտք իցեն:

- ԽԱ -

**Չորունս պղնձիս խորտակեցից եւ զնիզս երկաթիս փշրեցից (ԽԵ 2):** **Դրունք պղնձիք** էին բաբելացիքն, որ ամուր պահպանութեամբ փակեալ էին զգերեալսն եւ ոչ կամէին արձակել, **և նիզ երկաթի՝** շրջակա աշխարհն Հրեաստանի, որ յերուստ պնդէին, զի մի՛ ազատեսցին գերիքն: Իսկ ի միտս **դրունք պղնձի** եւ **նիզք երկաթի** հպարտութիւն եւ հնարքն էր սատանայի, որովք կապեալ էր զմարդիկ եւ զհոգիսն, զորս խորտակելով արձակեաց Տէր զհոգիսն ի դժոխսց եւ զմարդիկ՝ ի մոլորութեանց: Դարձեալ **դրունք պղնձի՝** մեղքն եւ **նիզք երկաթի՝** մահն, որովք կապեալ եւ բանդեալ էր մարդիկ, զոր Տէր մեր եբարձ եւ ազատեաց զմեզ:

**Ես եմ, որ հաստատեցի զլոյս եւ արարի խաւար (ԽԵ 7):** Այսինքն՝ ի մտանելն լուսաւորացն լինի խաւար, զի խաւար պակասութիւն լուսոյ է: Արդ, զշարժումն լուսաւորացոյ նա արար, ըստ այնմ. **Ես ամենայն աստեղաց հրաման տամ (ԽԵ 12):** Դարձեալ զքանչելիսն յԵգիպտոս. լոյս իսրայէլացոցն եւ խաւար եգիպտացոցն Ինքն արար: Նոյնպէս եւ ի խաչելութեան Տեառն մերոյ խաւարեցոյց զարեգակն եւ լուսաւորեաց, զի Արարիչ է նոցա: Դարձեալ լոյս<sup>1044</sup> ազատութիւն Իսրայէլի եւ խաւար՝ գերութիւն<sup>1045</sup> բաբելացոցն, լոյս փրկութիւն Չորաբաբելի եւ խաւար Գօգայ<sup>1046</sup> կորուստն: Նոյնպէս զԵգեկիա եւ զՀռաբսակայն, զԵսու<sup>1047</sup> եւ զքանանացոցն իմասցիս: **Ես եմ, որ առնեմ զխաղաղութիւն եւ հաստատեմ զչար (ԽԵ 7):** Որպէս **խաղաղութիւն** անուն է շինութեան առանց անձին: Արդ, ասէ զայս, զի Ինքն միայն է Արարիչ եւ Տէր եւ ոչ այլ ոք, զի տայ ի գերութիւն եւ արձակէ յորժամ եւ կամի, կամ զմինն ազատէ եւ զմիսն չարչարէ: Որպէս ասացաւ վասն լուսոյ եւ խաւարին, այլ ոչ եթէ բնութեամբ չար ինչ արար Աստուած կամ առնէ, այլ ամենայն յառաջ եկեալքն յԱստուծոյ բարի են, ըստ այնմ. «Ետես Աստուած, եւ ահա բարի են յոյժ» (Ծնդ. Ա 25): Այլ զպատուհաս զամենեսեան, որ յարուցանէ Աստուած եւ զպատուհաս մեղաց, որպէս հիւանդութիւն կամ այլ ինչ կամ զվրէժխնդրելն մահուամբ կամ այլ ինչ, զայնոսիկ չար կոչէ: Այլ սոքա ոչ թէ չար են, այլ արդարապէս հատուցմունք Աստուծոյ եւ կամ խրատ ուղղութեան, որպէս խրատէ հայր զմանուկ ստամբակ, եւ դարձուցանէ յուղղութիւն, նոյնպէս եւ Աստուած կամի: Այլ եւ զիտելի է, զի Կիրոս կոչեցաւ օծեալ հոմանուն ճշմարիտ օծելոյն Քրիստոսի: Բազում իրօք համեմատի նմա: Եւ այս Աստուծոյ մարդասիրութեան է, որ ոչ միայն զայլազգիս մարդ, այլ եւ զանսուրբ զազանս ըստ ժամանակին առնու յօրինակ Իւր. առիծ, ինձն, արջ ( Հմմտ. Եսայի ԼԱ 4, ԺԱ 6, 7) որպէս եւ Տէր մեր իսկապէս «Օծեալ ի քաղաքի Դաւթի», (Դուկ. Բ 11) ասէ հրեշտակն:

Երկրորդ՝ կոչի «աւարառու», յայլ թարքմանս. «Եւ Տէր մեր էառ աւար եւ բաշխեաց պարգեւս»: Երրորդ՝ կոչի «հովիւ», զի բարեպէս առաջնորդեաց, եւ Տէր մեր՝ «Հովիւ քաջ» (Յովհ. Ժ 14): Չորրորդ՝ Կիրոս արար զկամս Աստուծոյ, եւ Տէր մեր արար զկամս Առաքչին Հօր: Հինգերորդ՝ Կիրոս խորտակեաց զբռնաւորն քաղղեացոց, եւ Տէր մեր՝ զիմանալի քաղղեայն, որ հզօրացեալ էր ի տան խառնակութեան: Վեցերորդ՝ Կիրոս զդրոմս պողպատի եւ եհան զգանձս աներեւոյթս, եւ Տէր մեր խորտակելով զդրոմս դժոխց եւ եհան զգանձս հոգեացն, զի պատկեր են Աստուծոյ: Եւթներորդ՝ նա արդարութեամբ թագաւորեաց եւ Տէր մեր արդարութեամբ թագաւորեաց, զի<sup>1048</sup> ոչ բռնութեամբ, այլ ըստ կամաց հնազանդին նմա ազգ: Ութներորդ՝ նա զտաճարն շինեաց, եւ Տէր մեր կանգնեաց զկործանեալ յարկն Դաւթի (Հմմտ. Գործք ԺԵ 16), որ է նորս եկեղեցի: Իններորդ՝ նա ազատեաց զգերեալսն, եւ Տէր մեր՝ զհեթանոսս՝ ի կոռցն: Տասներորդ՝ նա պատարագս ընծայեաց, իսկ Տէր մեր՝ զմարմինն Իր. զոն եւ այլ եւս, թէ ոք կամիցի, զի հեզ էր Կիրոս<sup>1049</sup> եւ խաղաղարար եւ անկաշառ եւ այլնի փառս Քրիստոսի Աստուծոյ:

**Չի ի քեզ Աստուած գոյ** (ԽԵ 14) Տես զկատարեալ աստուածաբանութիւնդ<sup>1050</sup>. Աստուած յԱստուած, այսինքն՝ Հայր յՈրդի եւ Որդի ի Հայր, որպէս եւ ասէ. «Ես ի Հայր եւ Հայր ի յիս է» (Յովհ. Ժ 38): Չայս Աթանաս ասէ\*, այլ ոմանք Երուսաղէմի ասեն, թէ՛ **Ի քեզ Աստուած գոյ**: Այլ եւ ոչ այս խանգարէ զմիտս, զի Տէր մեր անտի երեւեցաւ մարմնով\*\* : Նա եւ հրեայն յամառի, թէ վասն Երուսաղէմի ասէ, առ որս ասեմք, թէ ըստ այսմ մեկնութեան ապա Երուսաղէմ է Աստուած եւ ոչ գոյ այլ Աստուած բաց ի նմանէ. զի ասէ կարգ բանին, թէ՛ **Ամենեքեան առ քեզ ելցեն եւ քեզ երկիր պագանիցեն եւ ի քեզ ուխտադիր լինիցին**<sup>1051</sup>, զի **ի քեզ Աստուած գոյ, եւ ոչ գոյ այլ Աստուած բաց ի քեն** (ԽԵ 14):

- ԽԲ -

**Յանձն իմ երդնում, թէ ամենայն**<sup>1052</sup> **որ ինչ**<sup>1053</sup> **ելանէ ի բերանոյ իմոյ արդարութիւն է** (ԽԵ 23): Ընդէ՞ր երդնու յԻնքն եւ յօրէնսն հրամայեաց. «Յանուն Տեսուն Աստուծոյ քում<sup>1054</sup> երդնուցուս (Ելք Ի 7, Բ օր. Ե 11): Իսկ զմեզ արգիլէ «ամենեւին մի՛ երդնուլ մի՛ յերկինս, մի՛ յերկիրս եւ յայլն» (Մտթ. Ե 34): Ոչ հրամայէ մարդոյ<sup>1055</sup> երդնուլ վասն բազում պատճառի: Նախ՝ զի երդումն վասն թերութեան է, իսկ Տէր մեր կամի զմեզ այնպէս ճշմարտախօս լինել մինչ, զի ոչ կարօտասցի երդման: Ըստ որում ասէ. «Եղիցի ձեր բանն այոն այո եւ ոչն՝ ոչ»: Երկրորդ՝ զի մի՛ սովորեցին եւ ի վերայ ամենայն իրաց համարձակ կոչեցեն<sup>1056</sup> զԱստուծոյ անունն, զոր սովոր են այժմ մարդիկ ի գինէվաճառ եւ յամենայն իրս զսարսափելի անունն վերակոչել: Վասն որոյ յօրէնսն պատուիրէ. «Մի՛ կոչեցես զանուն

\*Տե՛ս «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք..., թուղթք, ընդդիմասացութիւնք», Վենետիկ, 1898, էջ 49:

\*\* Տե՛ս Ոսկերեւրան, Մեկն. Եսայեայ, էջ 322-323:

Տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոսեաց» (Ելք Ի 7, Բ օր. Ե 11): Երբորդ՝ ասէ. «Մի՛ երդնուցուք», այսինքն՝ սուտ, զի սուտն ի սատանայէ է եւ որ երդնու սուտ այնպէս, որպէս թէ զսերմանս սատանայի կամի աճեցուցանել, որ է անհնարին մեղք եւ սաստիկ պատիժ, որպէս ասէ սոյն մարգարէ. **«Որ երդնուք յանուն Տեառն Աստուծոյ եւ ոչ՝ ճշմարտութեամբ եւ արդարութեամբ** (ԽԸ 1) Չորբորդ՝ ասէ մի՛ երդնուք զուրացական կամ զվկայական կամ այլ ինչ այսպիսի: Այն է ուրացականն, որ ասէ. Ուրացեալ է մարդն զԱստուած, զհաւատ եւ կամ զեկեղեցի, թէ այսպէս չէ, կամ թէ վկայ է Աստուած, կամ ի Խաչն, կամ այլ ինչ<sup>1057</sup>: Այլ թէ լինի մեծ հարկ եւ կարօտասցին երդման՝ այսպէս ասացեն- Գիտէ Տէր կամ սուրբ Խաչն կամ այլ սուրբս, որ այս այսպէս է: Որպէս եւ ասէ Պօղոս<sup>1058</sup>. «Առաջի Աստուծոյ ի Քրիստոս խօսիմք», (Բ Կորնթ. Բ 17) կամ ասա՛ Կենդանի է Տէր, որ այսպէս է: Որպէս ասէր Եղիա. «Կենդանի է Տէր եւ կենդանի է անձն քո» (Ա Թագ. Ի 3): Հինգերորդ՝ արգիլէ՝ մի երդնուլ ի գերագոյն քան զքեզ. «մի՛ յերկինս, զի Աթոռ է Աստուծոյ եւ մի՛ յերկիրս, զի պատուանդան ոտից Աստուծոյ է եւ մի՛ ի գլուխ քո» (Մտթ. Ե 34) զի կեանք քո ի ձեռս Աստուծոյ է, զի թէ գոյր քան զԱստուած գերագոյն եւ ոչ նա իշխէր երդնուլ, այլ զի ոչ ոք է, վասն որոյ յանձն իւր երդնու: Իսկ Աստուած երդնու վասն երեք պատճառի. նախ՝ զի թէպէտ անփոփոխ է<sup>1059</sup> էութիւն Աստուծոյ, նոյն եւ բանն Իւր, որպէս ասէ. **Բանք իմ ոչ եղծցին** (ԽԵ 23), այլ մարդս փոփոխական է, վասն որոյ զիջանելով ընդ մեզ բազում ինչ ասէ եւ ոչ առնէ, որպէս այն, որ հարիւր եւ քսան ամ խոստացաւ Նոյի եւ զքսան ամն կարճեաց եւ փութացոյց զջրհեղեղն: Եւ Եզեկիա եւ Նինուէի վճիռ մահու ետ եւ վասն արտասուացն փոխեաց ի կեանս: Իսկ զոր ինչ ասէ<sup>1060</sup> երդմամբ անփոփոխ է, ըստ Պօղոսի: Երկրորդ՝ Անփոփոխելի իրօք, որովք<sup>1061</sup> անհնար է ստել Աստուծոյ, այսինքն՝ որ երդուաւ Աբրահամու, թէ՛ «Ի զաւակէ քումմէ» ( Ծնդ. ԺԲ 7), երդուաւ Դաւթի ճշմարիտ վասն Քրիստոսի ծնանել յազգէ Նորա (Սղմ. ԾԹ): Երկրորդ՝ որպէս ասացաք, յանձն իւր երդուաւ, թէ ունէր քան զԻնքն գերագոյն՝ ոչ իշխէր երդնուլ: Երբորդ՝ բազում ինչ վայելչական է Աստուծոյ, զի առնէ եւ զմեզ հրաժարեցուցանէ, որպէս ասէ. «Մի՛ սպանանէր» (Ելք Ի 12). Եւ Ինքն ասէ. «Ես սպանեմ» ( Բ օր. Ժ. 20) Մեզ ասէ. «Մի՛ դատիք» (Մտթ. Է 1) եւ վասն Իւր ասէ «Իմ է վրէժխնդրութիւնդ»<sup>1062</sup> (Հռովմ. ԺԲ 19): Ոչ է պարտ մարդոյ զմարմին եւ զարիւն ընկերին ուտել, այլ Ինքն ետ մեզ եւ ասէ «Մարմին իմ ճշմարիտ կերակուր է եւ արիւն իմ ճշմարիտ ըմպելի» (Յովհ. Զ 56): Նոյնպէս եւ երդումն: Իսկ որ ասէ յՕրէնս. «Յանուն Տեառն Աստուծոյ քում երդնուցուս» ( Բ օր. Զ 13): Զի այնու<sup>1063</sup> որոշեցէ զնոսա ի հեթանոսաց, զոր սովոր էին երդնուլ ի կուռս<sup>1064</sup> իւրեանց, վասն այն ասէ. Դուք երդնուցուք յԱստուած ճշմարիտ: Եւ յորժամ յայտնի եղեւ աստուածպաշտութիւն ի Քրիստոս, եւ կուրութեամբ պաշտեմք կռոցն, յայնժամ եբարձ եւ զերդմունս թիրութեանցն<sup>1065</sup>, որպէս երբեմն ընդունէր զգոհս եւ զպատարագս մարմնական տղայաբարոյիցն, եւ յետոյ եբարձ ի



կատարելութեանս<sup>1066</sup>, ըստ այնմ «Ընդ գոհս եւ ընդ պատարագս ոչ հաճեցար»<sup>1067</sup> (Սղմ. ԼԹ 7)՝ եւ թէ՛ «Ոչ ընդունին ի տանէ քումմէ գուարակս» (Սղմ. ԽԹ 9): Այլ զի՞նչ մատոյ Աստուծոյ պատարագ օրհնութեան- զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ (Սղմ. Ծ 19), զոր Աստուած ոչ արհամարհէ:

**Զի Ինձ կրկնեսցի ամենայն ծունր**<sup>1068</sup> (ԽԵ 24): Եւ առ այս զինչ ասիցեն հրէայքն, թէ ուր կատարեցաւ, զի երդմամբ է հաստատեալ եւ ամենայն հարկիւ պարտ է լինել: Զի ահա ի դարձին այս ոչ եղեւ եւ ինքեանք մի լեզու են եւ ոչ ամենայն: Ապա ուրեմն յայտ է, թէ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս կատարեցաւ: Որպէս ասէ Պօղոս թէ՛ «Յանունն Յիսուսի Քրիստոսի կրկնեսցի ամենայն ծունր» (Փիլիպ. Բ 10): Զի այժմ յամենայն ազգաց խոստովան եղեն Քրիստոսի եւ ի կատարածին՝ առ հասարակ ամենայն: Եւ զո՞րսն ուրանան հրէայքն. միթէ՞ ոչ է կատարելոց երդմամբ հաստատեալս, կամ թէ ո՞չ է ժամանակ զալստեան Քրիստոսի կամ թէ ո՞չ են խափանեալ մարգարէք եւ թագաւորք նոցա, կամ թէ ո՞չ են ամենայն ազգ հնազանդեալ Քրիստոսի եւ արդարութիւն եւ փառք առ նա ժողովեալ:

**Ոչ գոյ ուրախութիւն ամբարշտաց, ասէ Տէր.** (ԽԼ 21): Ասէ Սաղմոսն. «Ի վաստակս մարդկան չեն նոքա եւ ըստ մարդկան ոչ տանջին» (Սղմ. ՀԲ 5)<sup>1069</sup>: Եւ Յոր ասէ. «Ճանապարհք ամբարշտաց յաջողեալ են» (Յոր ԻԱ 7) եւ «Մեծատունն ազանէր բեհեզ եւ ուրախ լինէր հանապազօր» (Գուկ. ԺԶ 19): Իսկ սա ասէ. **Ոչ գոյ ուրախութիւն, ամբարշտաց**<sup>1069ա</sup>, վասն զի ամբարիշտքն ոչ ունին զճշմարիտ ուրախութիւն, որ անվախճանն է եւ անթառամն, զի որպէս Աստուած անվախճան է, նոյնպէս եւ ուրախութիւն, որ յԱստուած, անեղծ եւ անապական է, որ է<sup>1070</sup> արդարոցն, զորմէ ասէ Սաղմոսն. «Ուրախ լերուք եւ ցնծացէք, արդարք (Հմմտ. Առակ. ԻԹ 6) ի Տէր». աստ՝ յուսով եւ անդ՝ դէմ յանդիման գործովք<sup>1071</sup>: Իսկ ուրուական ուրախութիւն մեղաւորաց է, որպէս ծիծաղելն կապկաց նմանութեամբ եւ ոչ իսկութեամբ. զի հոգս աշխարհիս եւ պաշարումն խղճմտանացն խառնին ընդ յիբեար<sup>1072</sup> եւ հանապազ, լի տրտմութեամբ եւ խռովութեամբ պահեն, որպէս Կայէն, զի երերէր եւ տատանէր, այսինքն՝ հոգով եւ մարմնով, նոյնպէս եւ ամենայն մեղաւորք, որպէս լցեալ անձն տենդիւ, թէպէտ եւ սեղան ամենառատ առաջի դնիցի եւ բժիշկք զանազանք<sup>1073</sup> հանդերձ ուրախութեամբ, այլ նա ոչ կարէ ուրախանալ վասն ի ներքոյ ցաւին: Նոյնպէս եւ մեղաւոր հոգին ոչ ուրախանա արտաքին ուրախութեամբ, վասն ի ներքուստ տրտմութեանցն\*:

- ԽԳ -

**Եղ զբերան իմ որպէս սուսեր սուր** (ԽԾ 2): Բանս այս յարմարի ի վերայ Տեառն մերոյ եւ մարգարէիցն եւ առաքելոցն նորա եւ ամենայն ժողովրդեանս: «Պողովատիկ» սուսեր է բերանն Քրիստոսի: Նախ զի յայնմանէ պատիժք յանցաւորաց, որ անցանէ մինչեւ

\* Տե՛ս Ոսկեբերան, Մեկն. Եսայեայ, էջ 344-345:

ցորոշումն շնչոյ եւ ուղղոց<sup>1074</sup>: Երկրորդ՝ զի հատանէր զցաւս եւ զհիւանդութիւնս մարմնոց: Երրորդ՝ զի խորտակէր զամենայն արգելս բանի Իւրոյ: Չորրորդ՝ զի զահագինս բարբառէր ի վերայ դիւացն եւ հալածէր զնոսա: Հինգերորդ՝ զի բանիւ զմեղս բաժանէր ի հոգւոց: Վեցերորդ՝ զի որոշէր զհաւատացեալս յանհաւատիցն: Եւթներորդ՝ զի փշրէր զկուռսն եւ եքարձ զկռապաշտութիւն<sup>1075</sup>: Ութներորդ՝ զի սաստեաց ծովուն եւ լռեցին: Ինններորդ՝ զի ձայնեաց<sup>1076</sup> ի սանդարամետաց եւ արձակեաց զհոգիսն: Տասներորդ՝ զի հոգով բերանոյ Իւրոյ<sup>1077</sup> սատակէ զՆեռն: Մետասաներորդ՝ զի ի կատարածին բաժանէ զօղիսն յայծեաց եւ զանհաւատսն ընդ մեջ կտրեսցէ: Այլ եւ սուր էր բերան մարգարէիցն, զի ամենայն ինչ հնազանդէր նոցա, որպէս Մովսէսի՝ ծովն եւ վեմն եւ օղն եւ գետն եւ այլքն:

Այլ եւ սուր էր բերան առաքելոցն, զի հալածէին զդէսս եւ բժշկէին զցաւս, եւ սատակէին զյանցաւորս, որպէս զԱնանիա եւ զՍափիրա (Տե՛ս Գործք Ե): Այլ եւ սուր են բերանք հաւատացելոց, զի զամենայն ինչ աղօթիւք վճարեն, զիրամանն Աստուծոյ դարձուցանեն, որպէս նինուէացիքն (Տե՛ս Յովնան Գ), զհուրն շիջուցանեն, որպէս երեք մանկունք (Տե՛ս Դան. Գ), զգազանաց բերանս կապեն<sup>1078</sup>, որպէս եւ Դանիէլ (Տե՛ս Դան. Զ), եւ զբազմութիւն զօրացն սատակեն, որպէս աղօթիւքն Եզեկիայի<sup>\*\*</sup>: Եւ ամենայն անհնարիմք հնարաւոր լիցին հաւատով խնդրողացն:

**Եդ զիս իբրեւ զնետ մի ընտիր եւ ի կապարճս իւր թագոյց զիս** (ԽԹ 2): Նետ էր, զի ի հասարակաց մարմնոյ եւ հոգոյ եւ մտաց էր մարդացեալ Աստուածն Բան: Որպէս եւ է **նետն** ի փայտէ յերկաթոյ եւ ի թելոյ: Այլ **ընտիր**, ասէ, այսինքն՝ զերազանցեալ խորհրդով քան զամենայն մարդիկ, զի Աստուած էր մարդացեալ, եւ զի մարգարէիւքն էր գուշակեալ եւ զի զմեծամեծսն կատարէր<sup>1079</sup>: Եւ զի ոչ արար զմեղս եւ այլն ամենայն զանազան ընտրութիւն, որպէս ի մեջ Արարչի եւ արարածոց: Այլ որ այժմ **նետ** կոչէ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, ոչ է պարտ զանց առնել, զոր բազում պատճառաւ համեմատի ի **նետ**: Նախ՝ զի որպէս **նետն** թագոյց ի կապարճն յետոյ երեւի<sup>1080</sup>: Նոյնպէս եւ Տէր մեր ծածկեալ էր ի մեջ մարդկան եւ յետոյ յայտնեցաւ ի ձեռն Խաչին, յորժամ զօրացաւ ի վերայ հզօրին եւ զերեաց զգերութիւն նորա: Երկրորդ՝ **նետն** հարեալ զթշնամին սպանէ: Նոյնպէս եւ Տէր մեր եհար զթշնամին սատանայ, որ հանապազ հարկանէ զմեզ ընդ խաւար ձգել ի վերայ ուղղոցն սրտիւք<sup>1081</sup>, ըստ մարգարէիցն: Երրորդ՝ զի որպէս **նետն** խոցէ եւ վիրաւորէ, սոյնպէս եւ ի սերն Քրիստոսի հարեալ վիրաւորեցան ամենայն սիրելիք նորա մինչ զի ոչ ինչ կարէր մեկնել զնոսա ի սիրոյ անտի (տե՛ս Հռովմ. Ը 35), ըստ առաքելոյ: Չորրորդ՝ զի որպէս<sup>1082</sup> **նետն** սաստկապէս արձակեալ ի լայնալիճ աղեղանէ եւ անցեալ ընդ օղ հարկանէ զնպատակն, սոյնպէս եւ **նետ** սրտմտութեան Քրիստոսի արձակեալ ի սաստիկ զօրութենէն ի ձեռն օղոյ, այսինքն՝ հրեշտակի կամ առաքելոյ, իբրեւ<sup>1083</sup> զնպատակ հարկանէ

\*\* Տե՛ս Բ Թագ. ԺԸ- Ի, Մնաց. ԻԹ-ԼԲ, Եսայի ԼԶ-ԼԸ:

զամբարիշտս: Վասն որոյ ասէ. «Չաղեղն իւր լարեալ եւ գնեսս իւր այրեցելովք է գործեալ» (Մղմ. Է 13), եւ թէ՛ «Նետիւք ինովք սպանեցից գնոսս» (Բ օր. ԼԲ 23): Հինգերորդ՝ զի որպէս նետն զմին մասն հարկանէ<sup>1084</sup>, սոյնպէս եւ արդար հատուցմունքն Աստուծոյ՝ ի մէջ բազմացն. զմինն անմոլար պատժէ, զի «Անձն, որ մեղիցէ նոյն եւ մեռցի» (Հմմտ. Ղեստ Ե 17), զի դարձցին ցաւք ի գլուխ նոցա<sup>1085</sup>, ասէ: Վեցերորդ՝ **նետն** ոչ միայն, զորս ի յերկրի, այլ զբարձրացեալ թռչունս յերկիր ընկեմու, նոյնպէս եւ Տէր մեր ոչ միայն զխոնարհս ի մարդկանէ, այլ եւ զբարձրացեալսն խոնարհեցոյց եւ յերկիր ընկեց զհպարտացեալսն զհտութեամբ եւ զբռնաւորսն: Ըստ այնմ, որ ասէ. «Տեսանէի զսատանայ անկեալ<sup>1086</sup> յերկնից»<sup>1086ա</sup> (Ղուկ. Ժ 18), եւ առաքեալ. «Չէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ հոգեւոր» (Բ Կորնթ. Ժ 4), որով<sup>1087</sup> խոնարհեցուցանեմք զամենայն միտս հպարտացեալ ի վերայ զհտութեան Աստուծոյ եւ<sup>1088</sup> զերեմք զամենայն մարդիկ ի հնազանդութիւն Քրիստոսի<sup>1089</sup>: Երկերորդ՝ որպէս **նետն** մինչ ի ձեռս կայ՝ ոչ վիրաւորէ, այլ ելեալ յաղեղանէ եւ ուր դիպեալ՝ սաստիկ տանջէ: Նոյնպէս եւ Տէր մեր այժմ ներէ մինչ ի կատարած եւ յետոյ իջեալ յերկնից սաստիկ բարբառով տանջէ զմեղաւորս ի հուր գեհեմին: Ուրբերորդ՝ որպէս նետն ընդ երկար միջոցք առեալ եւ յորժամ հասանէ յանկարծադէպ<sup>1090</sup> ժամու յարկանէ: Նոյնպէս եւ քաղցրութիւն Քրիստոսի ներէ յերկար ժամանակս, եւ յորժամ ոչ դառնան, յեղակարծ<sup>1091</sup> ժամու շարժի բարկութեամբ եւ յանխնայ կորուսանէ, ըստ այնմ՝ «Թէ զներելովն Աստուծոյ արհամարհեսցես<sup>1092</sup>, զանձես անձին քում բարկութիւն յաւուր արդար դատաւորութեան Աստուծոյ» (Հռոմ. Բ 4-5): Իններորդ՝ զի գոյ բժշկութիւն<sup>1093</sup>. Է **նետ**, որ սակաւ վիրաւորէ եւ է, որ ի խոր խոցէ, որոյ գոյ բժշկութիւն, եւ է, որ ամենեւին սպանանէ: Նոյնպէս եւ սաստն Աստուծոյ, ըստ զանազան մեղաց է, որ յարտաքինս հարկանէ<sup>1094</sup> յինչս կամ ի զաւակս եւ՝ է<sup>1094ա</sup> որ հիւանդութեամբ ի մարմինն: Վասն որոյ եւ ճեպով հորդելով<sup>1095</sup> զան հարուածք ի վերայ աշխարհիս<sup>1096</sup>, այսինքն է<sup>1097</sup> յանդս եւ յանդեայս եւ<sup>1098</sup> ի մարմինն, եւ զայս նախ ի հեռաւորս, ապա ի մօտաւորս: Ի սոցանէ բժշկիմք ապաշխարութեամբ եւ է որ ամենեւին առանց բժշկութեան ածէ զմահն, ըստ այնմ. «Լարս առանց բժշկութեան» (Բ օր. ԼԲ 24): Աստ մարմնով եւ անդ հոգով եւ մարմնով կորուսանէ ի գեհեմին (Մտթ. Ժ 28) ասէ: Տասներորդ՝ զի կարելի է յետս արգելել<sup>1099</sup> **զնետս**, որպէս վահանաւ կամ այլ իրօք: Նոյնպէս աղօթք<sup>1100</sup>, արտասուք եւ այլն, զսաստիկ հրամանն Աստուծոյ յետս արգիլեն, որպէս Եզեկիա եւ նինուէացիքն:

**Տէր Տէր առաքեաց զիս եւ Հոգի նորա** (ԽԸ 16). տես, զի Հոգին Սուրբ ի Հօրէ եւ առ Հօր հաւասարափառ է նմա, ըստ որում առաքէ զառաքեալս եւ զմարգարէս: Դարձեալ իմայ ինձ աստ գերերանձնեա Աստուածութիւն. Տէր Հայր, Տէր Որդին եւ Սուրբ Հոգին:

Հարց. **Ի ժամանակի ընդունելության, աստ, լուս քեզ եւ յաւոր փրկութեան օգնեցի քեզ (ԽԹ 8):** Եւ յանդէպ ժամանակի ոչ լսէ եւ ոչ փրկէ:

Պատասխան - Ոչ երբէք, որպէս յայտ է յիմար կուսանացն եւ ի մեծատանէն, որ ոչ գտան օգնութիւն, զի այս է ժամանակ փրկութեան մինչ ի մարմնի եմք, որպէս ասէ Պօղոս. «Ահա ժամանակ ընդունելի» (Բ Կորնթ. 2) եւ այլն:

Հարց. Ապա ուրեմն երեւի, թէ Աստուած կարօտ է ժամանակի, եւ ողորմութիւն նորա ժամանակին հետեւին.

Պատասխան. Ոչ է Աստուած կարօտ ժամանակի, այլ՝ մեք, զի առ Աստուած ժամանակն ոչ փոփոխի, այլ առ մեզ փոփոխի: Եւ ողորմութիւն նորա ժամանակի ոչ հետեւի, այլ՝ քաղցրութեան կամացն, զի յորժամ քաղցրանայ կամքն Աստուծոյ, այն է ժամանակ ընդունելի:

Հարց. Եւ յորժամ լինի կամքն Աստուծոյ քաղցր.

Պատասխան. Երեք ժամանակ գոյ հաճոյ կամացն Աստուծոյ. առաջին ժամանակ՝ աղօթիցն, յորժամ յամենայն ուստէք զմիտս առ Աստուած ամփոփեմք եւ խօսակցիմք ընդ մնա. «Ընդ երեկոյս, ի վաղորդայն, ի հասարակ աւուրն» (Մղմ. ԾԳ- 18) եւ յայլսն<sup>1101</sup>: Իսկ այլ ժամանակքն<sup>1102</sup>, յորժամ պարապ լինիմք եւ կամ՝ ի հոգս աշխարհիս, չէ հաճոյ մնա: Երկրորդ՝ հաճոյ է Աստուծոյ ժամանակն ապաշխարութեան յորժամ դառնամք ի մեղաց եւ բարի գործեմք<sup>1103</sup>: Իսկ որք անգեղջ մնամք ի մեղս՝ չէ հաճոյ Աստուծոյ: Երրորդ՝ ժամանակ ընդունելի է բոլոր կեանքս այս, իսկ յետ մահու՝ ոչ, զի ի կեանս յայս բազմեալ է յաթոռ շնորհաց եւ ի հանդերձեալն՝ յաթոռ դատաստանաց, որ է արդար հատուցմունք, որպէս եւ<sup>1104</sup> հրաւիրէ Պօղոս. «Եթէ անկցուք առաջի Աթոռոյ շնորհաց նորա՝ եւ ընկալցուք գողորմութիւն ի դէպ<sup>1105</sup> ժամանակի» (Եբր. Գ- 16) որպէս շնորհեցաւ մնա, որ պարտ էր զհինգհարիւր դահեկան, վասն զի աղաչեաց աստ: Իսկ ի հանդերձեալն ասէ. «Հանէք ի խաւարն արտաքին» ( Մտթ. ԻԵ 30), եւ թէ՛ «Ոչ զիտեմ զձեզ, ի բաց կացէք յինէն» ( Մտթ. ԻԵ 12) եւ այլն:

**Տեց մէցամէս կերիցէ զձեզ (Ծ 9):** Եւ Թէոդիտոն ուտիճ ասէ, եւ Սիմաքոս<sup>1106</sup> երբ՝ \* : Ամենեքեան նշանակիչք են ապականութեան: Այլ **ցեցն** այն է, որ զգամաք իւր ուտէ, որպէս զհանդերձս, **մէցն** այն է, որ զգեճ<sup>1107</sup> իր ուտէ, որպէս զմիսն եւ զայլն: Իսկ «ամէս»-ն յօդ է որպէս յիմովսանն<sup>1108</sup> ասեն<sup>1109</sup> եւ յիւրեանց՝ այլոցն: Եւ ուտիճ է, որ զգեճն եւ զգամաքն ուտէ, եւ երբ է, որ զհոտեալ, տրորեալ, շարաւ եւ յաւել լուծեալ եւ ապականեալ, փտեալ եւ բորբոսեալ մարմինս նշանակէ: Եւ **ցեց մէցամէս** վասն այնորիկ առ միմեանս յօդէ, որ

\* «Ակիւղաս ուտիճ ասէ եւ Սիմաքոս՝ երբ». տե՛ս Ոսկեբերան Մեկն- Եսայեայ, էջ 362:

նշանակել ուտել զգեճ եւ զչոր, այսինքն՝ զմարմին եւ զոսկերս: Կամ վասն բարկութեան Աստուծոյ ասէ զայս կամ թէ սոյնպէս լուծան մարմինք նոցա: Իսկ որ ասէ.

- ԽԵ -

**Ահաւարդիկ դուք ամենեքեան իբրեւ զձորձս հնասջիք** (Ծ 9) բազում ունին հմտութիւնս, այսինքն՝ զգեստն եւ մարմին մեր: Նախ՝ որպէս առաւել ի զանազան նիւթից կազմեմք զգեստս, նոյնպէս եւ ի նիւթոյ զանազան տարերց ձեւանայ մարմինն: Երկրորդ՝ որպէս հանդերձն ծածկէ<sup>1110</sup> զմարմինն եւ մարմինն՝ զհոգին, վասն որոյ արտաքին եւ<sup>1111</sup> ներքին մարդ անուանէ Պօղոս ( տե՛ս Հռոմ Է 22): Երրորդ՝ որպէս<sup>1112</sup> հանդերձն հնանայ եւ նուազի զօրութիւն եւ թափի գեղեցկութիւն, նոյնպէս եւ ծերացեալ մարմինն նուազի ի զօրութենէ եւ սօգեղանայ գեղն: Չորրորդ՝ որպէս հանդերձն ժամանակ մի է ի վերայ մարդոյ եւ յետոյ փտեալ լուծանի եւ կոխան լինի, նոյնպէս եւ մարմինք մեր ժամանակ մի փառաւորեալ եւ յետոյ ի հող լուծեալ եւ զազրացեալ կոխան լինի ամենեցուն, եւ երթ գնա ի գերեզմանս: Եւ տես զիշխանս եւ զմեծամեծսն, որք արժանաւորաց էին տեսանելի եւ համբուրելի, այժմ անարգեալ, անկեալ եւ ի շանց եւ յանասնոց կոխեալ: Հինգերորդ՝ Հանդերձն կերակուր է ցեցոյ, որպէս ասէն, նոյնպէս եւ մարմինք մարդկան կերակուր են որդան աստ ի կեանս եւ ի մահ, եւ ի հանդերձեալն՝ մարմինք մեղաւորաց անքուն որդանցն. «Ուր որդն ոչ մեռանի եւ հուրն ոչ շիջանի» ( Մրկ. Թ 47), ասէ: Վեցերորդ՝ փոփոխական է զգեստն<sup>1113</sup>, որպէս մտեալ յանկողին<sup>1114</sup> մերկանան եւ դարձեալ առաստուն զգեմուն, սոյնպէս՝ մտեալ ի գերեզման մերկանամք զմարմին եւ յառաւօտն յարութեան դարձեալ զգեմունք ի խօսել հաւուն, այսինքն՝ ի գոչման փողոյն, եւ ի ծագել իմանալի Արեգականն յերկնից: Երօներորդ՝ որպէս զարթուցեալ իւրաքանչիւր ոք զիւրն զգեմու հանդերձ, նոյնպէս եւ ի յարութեանն իւրաքանչիւր ոք իւրովն յառնէ մարմնով (տե՛ս Հռովմ. Զ 5), ըստ Պօղոսի: Զի ճանաչէ հոգին զիւր մարմինն բնական կապակցութեամբն, այսինքն՝ անձնական յատկութեամբ<sup>1115</sup>: Ուրերորդ՝ Որպէս<sup>1116</sup> զգեստին որոշեն ի միմեանց տէր եւ ծառայ եւ այլն, սոյնպէս եւ ի փառաւոր մարմնով ի հանդերձեալն որոշեսցին արդարք եւ մեղաւորք, որպէս այն<sup>1117</sup>, որ ոչ ունէր հանդերձ<sup>1118</sup> հարսանեաց, եւ այսոքիկ յետոյ (Տե՛ս Մտթ. ԻԲ 11-12): Իններորդ՝ որպէս եւ աստ ոմանք ունին<sup>1119</sup> զգեստ պատուական եւ ոմանք՝ անարգութեան<sup>1120</sup>, սոյնպէս եւ մարմինքն ոմանց<sup>1121</sup> պատուական են սուրբ գործովք<sup>1034</sup> եւ ոմանց<sup>1035</sup> անարգ՝ պղծութեամբ, մեղօք: Տասներորդ՝ որպէս աղտեղեալ զգեստն պայծառանայ լուացմամբ ջրոյ<sup>1124</sup>, նոյնպէս մեղօք աղտեղեալ մարմին<sup>1125</sup> ջրով արտասուաց եւ ողորմութեամբ եւ չարչարանօք վերստին պայծառանայ եւ քան զձին սպիտակ եղիցի (Հմմտ. Եսայի Ա 18), ասէ<sup>1126</sup> մարգարէն:

Եւ այսքան առ այս:

«Աւրեմք յԻնէն ելցեն եւ դատաստանք իմ ի լոյս հեթանոսաց եւ ի բազուկ իմ հեթանոսք յուսասցին (ՃԱ 4-5) եւ թէ՛ Եղի գրեզ յովստ ազգին եւ ի լոյս հեթանոսաց, եւ՝<sup>1127</sup> թէ՛ նորոգեցարուք առ իս կղզիք (ԽԵ 17), եւ թէ՛ Ուրախ լեր անապատ ծարաւի, (ԼԵ 1), եւ թէ՛ Գետ բխեսցէ յանջուրս երկրի (ԽԱ)<sup>1128</sup> եւ թէ՛ տեսցէ ամենայն մարմին եւ ամենայն ծագ աշխարհի զփրկութիւն Աստուծոյ մերոյ եւ եթէ՝<sup>1129</sup> Ինձ կրկնեսցի՝<sup>1130</sup> ամենայն ծունր եւ ամենայն լեզու խոստովան լիցի Աստուծոյ (ԽԵ 24), եւ թէ՛ Որոց ոչ պատմուեցաւ, ի միտս առցեն՝<sup>1131</sup>, եւ թէ՛ Ուրախ լեր ամուլ, որ ոչ ծնանէիր, եւ թէ՛<sup>1132</sup> Բազում են որդիք սկնդկիդ, (ԾԴ 1), այսինքն՝ այրույղ քան զարամբոյն, եւ թէ՛ Յանուն նորա հեթանոսք յուսասցին (ԽԲ 4), եւ թէ՛ Չաւակ նորա զհեթանոս ժառանգեսցէ (ԾԴ 3), եւ թէ՛ Ծառք անտառի ծափս հարցեն (ՃԵ 12) եւ թէ՛ Սի՛ ասիցէ օտարազգին (ՃԶ 3), եւ թէ՛ Տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց (ՃԶ 7), եւ թէ՛ Երթիցեն հեթանոսք ի լոյս քո եւ թէ որդիք օտարաց շինեսցեն զպարիսպս քո (Կ 10): Սորա եւ այլ բազումք նշանակեն զդարձն հեթանոսաց: Տես եւ ի միտ առ. **Օրէնք յԻնէն ելցէ**, ասէ, որ նշանակէ զնորս, զոր եղ Քրիստոս, զի հին եղեալ էր, ըստ այնմ. Կացոյ Տէր օրէնս: Եւ օրէնս դիր ի վերայ:՝<sup>1133</sup> Չի առանց օրինաց մարդս առաւել է քան զնա անասուն՝<sup>1134</sup>, զի անասունն, յորժամ բարկանայ՝ եւ շիջանի, իսկ մարդս յետ բարկութեան յոխակալութեան փոխի: Անասուն ընդ սահմանաւ ունի զկարեւոր ցանկութիւնն արուն առ եզն, իսկ մարդս յարժամ յախտս զազրալիս շաղախի: Վասն որոյ Տէրն զգուշացոյց զհաւատացեալս իւր ի ձեռն նոր օրինացս, որպէս ասէ. ասացաւ այն ինչ, այլ ես ասեմ ձեզ զայս ինչ:

- ԽԶ -

**Երկինք իբրեւ զծուխ հաստատեալ են եւ երկիր իբրեւ զձորձս մաշեսցի**<sup>1135</sup> (ՃԱ 6): Աստ զգոյացութիւն սոցա ընդ միմեանս նշանակէ, զի զանաւազն հարուստ արար եւ զհարուստն անաւազ, ասէ, այսինքն՝ զերկինք եւ զերկիր: Տես, զի զանաւազն երկուցն ասէ, զի Մովսէս զերկինս ասէ աւազ, եւ Դաւիթ՝ զերկիր: Եւ երկոքեանն անաւազ, որ է՛ կրտսեր կամ աղքատ եւ յետ Աստուծոյ: Կամ անաւազ է երկիր, քան զիրեղէն երկին եւ անաւազ է հաստատութիւնդ քան զերկիր: Եւ երկոքեանն են հարուստ. մինն՝ թանձրութեամբ եւ միւսն՝ հաստատութեամբ: Դարձեալ ընդդէմ միմեանց են. զի մինն թանձր է եւ մինն՝ անօսր, մինն տեւական եւ մինն՝ մաշական է: Այլ վասն բազում պատճառի իբրեւ **զծուխ հաստատեալ**, ասէ, զերկինս: Նախ՝ զի **ծուխն** լուծական է եւ ոչ որ կարէ հաստատուն պահել: Նոյնպէս եւ զերկինս պնդեալ ունի ձեռն ամենագոր,՝<sup>1136</sup> որ արար զնա: Երկրորդ՝ ըստ որակ զինույն, զի կապուտակ է, եւ **երկինքն իբրեւ զծուխ**: Երրորդ՝ անօսր է **ծուխն** եւ միայն աչաց տեսանի: Նոյնպէս եւ՝<sup>1137</sup> երկինքն ոչ ձեռօք շօշափի: Չորրորդ՝ թեթեւ է **ծուխ**, նոյնպէս եւ երկինքն՝ քան զերկինս<sup>1138</sup>: Հինգերորդ՝ վերընթաց է **ծուխն**, նոյնպէս եւ բարձրագոյն է երկինքն<sup>1139</sup>: Վեցերորդ՝ շարժական է **ծուխ**, սոյնպէս եւ երկինքն միշտ շարժին<sup>1140</sup>: Եւթներորդ՝ օդ է

**ծուխ**՝ բաժանեալ ի նիւթոց: Եւ զերկինս օղեղէն ասեն ոմանք: Ութերորդ՝ նախ է նիւթն եւ ապա ծուխն երեւի: Նոյնպէս է նախ<sup>1141</sup> երկին **երկինս** եւ ապա հաստատութիւն, ըստ Մովսէսի: Իններորդ՝ ցամաք եւ ջերմ է **ծուխն**, սոյնպէս եւ հաստատութիւն ի սրնթաց շարժմանէն<sup>1142</sup>, վասն որոյ եղեւ բազմութիւն ջուրց, զի բարեխառնեցէ գնոսա<sup>1143</sup>: Տասներորդ՝ **Ծուխն** ի հեռուստ տեսանի եւ զօրեղն նշանակէ եւ երկինքն յամենայն կողմանց երեւի եւ տա իմանալ զօրեղն իւր ի շարժմանէն ի զարդուցն եւ ի մեծութենէն, ըստ Դաւիթի՝ «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ» (Սղմ. ԺԸ 2):

**Եւ երկինս իբրեւ զձորձս մաշեցի:** Նախ՝ զի թանձր է **ձորձն**, քան զծուխ եւ<sup>1144</sup> երկինս՝ քան զերկիր: Երկրորդ՝ որպէս **ձորձ** հնանայ եւ մաշի<sup>1145</sup>, եւ երկիրս՝ ի զօրութեանց եւ ի գեղեցկութեանց, որպէս յայտ է ի ժամանակս ձմերայնոյ<sup>1146</sup> խամրացեալ ի բուսոյ, վասն որոյ ասէ Դաւիթ. «Մաշեցաւ երկիր եւ ամենայն բնակիչք» ( Սղմ. ՀԳ 4), սակայն յախտենական կայ զօրութեամբ Արարողին զայ: Երրորդ՝ **ձորձն** պահէ ի ցրտոյ եւ ի տոթոյ, եւ երկիրս<sup>1147</sup>, զորս յինքեան, որպէս զբոյսս ի ձմերան եւ զաղբիւրս յամարայն: Նոյնպէս զմարդ եւ զայլ կենդանիս յարկս իւր<sup>1148</sup> պահէ: Չորրորդ՝ զի **ձորձն** ծածկոյթ է մարմնոյ եւ երկիրս ծածկէ զամենայն զարշոթիւնս, որպէս զմեռեալս եւ զայլ ինչ, իբրեւ զմայր եւ զղայեակ մեզ: Հինգերորդ՝ **ձորձն** ունի այլ եւս վերարկու, նոյնպէս եւ երկիրս ջուրք, որպէս զգեստ վերարկու է<sup>1149</sup> նորա ասէ: Վեցերորդ՝ թէպէտ ոմանք գործեն **զձորձս**<sup>1150</sup>, այլ ամենեքեան զգեմուն, եւ թէպէտ ոմանք գործեն զերկրի, այլ ամենեքեան հաղորդին<sup>1151</sup> բարութեանցն: Եւթներորդ՝ թէպէտ փոփոխեմք զձորձս, այլ ի հանդերձէ ոչ ելանեմք, եւ թէպէտ փոխեմք զերկիրս<sup>1152</sup> աստի անդ, սակայն ամենայն ուրեք յերկրի եմք: Ութներորդ՝ ոմանք մի եւ նոյն եւ ոմանք բազում են զանազան զգեստիւք կան: Նոյնպէս եւ զերկինս ոմանք բազմաց բուռն հարեալ ունին եւ զբաղին նոքօք, այսինքն՝ ի դրախտս<sup>1153</sup>, յայգիս, ի վաճառս, յիշխանութիւնս<sup>1154</sup> եւ յայլն: Եւ ոմանք սակաւութ շատանան, այսինքն՝ կերակրովք եւ զգեստիւք, ըստ առաքելոյ՝ «Ունիմք կերակուրս եւ հանդերձս, եւ այնու շատասցուք» (Ա Տիմ- Չ 8): Իններորդ՝ որպէս հանդերձն աղտեղեալ երկր<sup>1155</sup> սրբի. **ա՛** թափելով<sup>1156</sup>, **բ՛** ջրով, **գ՛** հրով: Նոյնպէս եւ երկիրս աղտեղեալ ի մեղաց, թօթափի ի բնակչաց մահուամբ կամ գերութեամբ, եւ լինի ատերակ, եւ երբեմն ջրով, որպէս առ Նոյի եւ հրով՝ որպէս ի Սոդոմ, եւ ի կատարածին «լերինք որպէս մոմ հալին» (Սղմ. ԳԶ 5): Տասներորդ՝ ընդ մեռանելն բազում ձորձոցն ոչ ինչ կարեմք տանել, բայց միայն զպատանս, որ եւ այն փտի, եւ մերկ յառնեմք: Նոյնպէս եւ յամենայն երկրէս ոչ ինչ տանիմք<sup>1157</sup> ընդ մեզ, բայց սակաւ ինչ հող<sup>1158</sup>, որ եւ զայն եւս թողուք ի գերեզմանս, զի «ոչ ինչ բերաք յաշխարհս եւ ոչ տանել կարող եմք» ( Ա Տիմ. Չ 7), ասէ:

Հարց. Աստ ասէ. **Սի՛ երկնչիք ի նախատանաց եւ ի բամբասաց**<sup>1159</sup> **մարդկան** (ԾԱ 7), իսկ Դաւիթ մարգարէն<sup>1160</sup> ասէ. «Փրկեա զիս ի զրպարտչաց<sup>1161</sup> (Սղմ. ԾԺԸ 134): Նա եւ

Եզեկիա ասէր. «Լուիցէ Տէր զպատասխան Ռափսակայ» (Դ Թագ. ԺԹ 4, Եսայի ԼԷ 4): Միթէ՞ ընդդէմ միմեանց են:

Պատասխան. Ոչ են ընդդէմ, այլ նշանակեն զկրկին գործս նախատանաց, այսինքն՝ զի նախատինք եւ բամբասանք բամբասողացն պատիժ են եւ բամբասելոցն՝ պարգևք: Եւ զի՞ պատժին նախատողքն<sup>1162</sup>, յայտ է՝ ի յՌափսակայ, որ նախատեաց զԱստուած կենդանի եւ կորուսաւ զօրօքն: Եւ Միմէր նախատեաց զԴաւիթ, եւ արեամբ հանդերձ ի դժոխս էջ: Յուցանեն սոքա, թէ ամենայն ոք, որ նախատէ եւ բամբասէ՝ ինքն կորնչի<sup>1163</sup>, եւ ոչ նախատելն, որպէս ասէ Առակսն: «Որ փորէ խոր ընկերին՝ անձամբ իրով լցցէ զնայ» (Առակ. ԻԶ 27): Իսկ պարգևք նախատելոյն, զի որքան նախատի, այնքան վարձն առաւելու, ըստ այնմ. «Յորժամ նախատեն զձեզ ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձ ձեր բազում են յերկինս» (Մտք. Ե 12, Դուկ. Զ 23): Նա եւ<sup>1164</sup> ի կեանս յայս բազում ողորմութիւն<sup>1165</sup> գտանէ համբերողն, որպէս ասէ Դաւիթ առ Յովսափ. Թող նախատէ դա, զի տեսցէ Աստուած եւ ողորմեսցի մեզ (Բ, Գ, Թագ.): Որպէս եղի իսկ: Մոյնպէս եւ ամենեցուն է լինելոց:

**Չրի վաճառեցայք եւ ոչ արծաթով բժշկեսցիք** (ԾԲ 3) նախ ի հրեայսն, զի ոչ արծաթով վաճառեցին<sup>1166</sup> ի գերութիւն եւ ոչ դարձեալ արծաթով զնեսցին<sup>1167</sup>, որպէս ասէր, թէ՛ Ես արձակեցի կամ վաճառեցի զձեզ. ու՞ր է գրաւականն կամ թողթ ապահարգանին: Այլ զի՞ ոչ վասն մեղաց գերեցայք եւ վասն արդարութեան ազատիք<sup>1168</sup>, որպէս ասաց «Թողեալ լիցին ձեզ մեղք ձեր» (Դուկ. Է 48, 49): Չի ընկալայք ի Տեառնէ կրկին զհատուցումն: Դարձեալ՝ «Վասն բարկութեան իմոյ գերի վարեցայք եւ վասն քաղցրութեան իմոյ դարձեալ ազատիմք» (Հմմտ. Եսայի Կ 10)<sup>1169</sup>: Իսկ առ ի միտս եկեղեցի ձրի վաճառեցաւ ոչ<sup>1170</sup> վասն մեղաց եւ ոչ արծաթով փրկեցաւ, այլ շնորհօք, այսինքն է՝ ամբիժ արեամբ Գառնին Աստուծոյ: Այլ եւ հարուածքն ձրի էին, վասն այն եւ ձրի էր պատանքն, որ զնա պատեաց մարդս էր բժիշկն: Մարդս ոչ ինչ մեղաւ սատանայի, որ եհարն զսա եւ ոչ ետ ինչս<sup>1171</sup> բարերարին, որ բժշկեացն զսա: Վասն որոյ եւ մեզ ասաց. «Չրի առէք եւ ձրի տուք»:

**Վասն ձեր անուն իմ հայհոյի ի մէջ հեթանոսաց** (ԾԲ 5): Կամ<sup>1172</sup> այն է, զոր ինքեանք հայհոյէին, վասն վշտին ի մէջ այլազգեացն եւ կամ հեթանոսքն հայհոյէին,<sup>1173</sup> եւ այս յերկուց կողմանց: Չի թէ գերի տամ՝ հայհոյեն, թէ տկար եւ անզօր է Աստուածն ձեր, եւ կամ անզօր եւ անազորոյն եւ կամ թէ աստուածքն մեր կարող են վասն այն գերեմք զձեզ<sup>1174</sup>: Իսկ թէ ազատեն բարձր բազկաւ եւ հզօր ձեռամբ՝ եւ այնպէս հայհոյեն, թէ որպէս ապերախտ ազգի առնէ զայս ամենայն բարութիւնս: Այլ եւ դուք վասն ձեր արժանեաց կարծէք, նա եւ յետոյ հեշտանայք եւ մոռանայք զԻս: Նոյնպէս եւ այժմ ի մեզ յազգս քրիստոնէից հայհոյի ահեղ անունն քրիստոնէութեան ի մեր ծուլութեանցս ի մեզ ամենայն ազգաց<sup>1175</sup>:



Իբրև զի գեղեցիկ են ի վերայ լերանց ոտք անտաքանչացն<sup>1176</sup> խաղաղութան եւ բարութան (ԾԲ 7). Ըստ կարգին այն է, որ հրաման էլ ի մեծ թագաւորացն ի<sup>1177</sup> Կիրոսէ եւ ի Դարեհէ յամենայն իշխանութիւնս իրեանց՝ ազատ լինել հրէիցն եւ<sup>1178</sup> գնալ յԵրուսաղէմ, շինել զտաճարն եւ զպարիսպ քաղաքին եւ զդրունսն եւ զշրջակայիցն հրամայեցին օգնական լինել նոցա, որպէս պատմէ Եզր եւ Նէէմի: Արդ, քաղցր եւ ախորժելի եւ վայելչական են ընթացք այնպիսի անտաքերց ի<sup>1179</sup> խաղաղութան եւ բարութան, ասէ: Իսկ ըստ ճշմարտութեան **գեղեցիկ ոտք**. առաքելական ի վերայ<sup>1180</sup> հպարտացեալ լերանցն, որք<sup>1181</sup> կոխեցին զօձս եւ զկարիճս: **Գեղեցիկ են ոտք նոցա**, քան զճառագայթս արեգականն, զի նա՝ զոմանս, իսկ նոքա զամենեսեան լուսաւորեցին: Նա երբեմն լուսաւորէ եւ նոքա՝ միշտ, նա զգալի աչս, նոքա՝ զիմանալի միտս պայծառացուցին եւ բերին մեզ զխաղաղութիւն երեքկին: Եւ բազմապատիկ է<sup>1182</sup> պատերազմն, զոր ունէաք<sup>1183</sup> առ Աստուած եւ առ միմեանս եւ առ անձինս: Ջոր Ռոդին Միաժին էջ եւ արար հաշտութիւն առ Աստուած եւ սէր առ միմեանս, եւ տնկեաց<sup>1184</sup> ուղղութիւն ի հոգի եւ ի մարմին մեր, եւ այնպիսի<sup>1185</sup> բարութեամբ լցոյց զմեզ, զոր ոչ միտք իմանան եւ ոչ լեզուք ճանեն:

**Ահաւաղիկ ի միտ առցէ մանուկ իմ** (ԾԲ 13): Ոմանք ի Դանիէլ եւ կէսք ի Ջօրաբաբէլ եւ այլք ի ժողովուրդն<sup>1186</sup> մեկնէն զայս, զոր ոչ յարմարի կարգ բանիս ի վերայ նոցա: Այլ իսկապէս ի Տէր մեր կատարի բովանդակ այս ճառ: **Մանուկ** կոչէ զնա<sup>1187</sup> Աստուած Հայր, ըստ տնօրէնութեան, որ զկերպարանս ծառայի էառ, որպէս ասէր. **Մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ** (Թ 6), եւ թէ՛ «Որդի իմ ես դու եւ ես այսօր ծնա զքեզ» (Սղմ. Բ 7): **Ի միտ առցէ**, այսինքն՝ զբանս զրոցն ի մարգարէսն: Դարձեալ **ի միտ առցէ** ընդդէմ է նոցա, որ անջատեն զմիտս<sup>1188</sup> ի մարդէղութենէն Քրիստոսի, եւ ասեն՝ միայն զմարմին առեալ, եւ զկատարեալ փրկութիւն մեր թերակատար համբաւեն, զի զոր ինչ էառ զնոյն եւ փրկեաց՝ եթէ՛ զմարմին եւ եթէ՛ զհովին, ապա ըստ նոցա միս անգամ զալոց է առնուլ զհոգի եւ փրկել զնա: Արդ, ասէ **ի միտ առցէ**. եւ զիա՞րդ առնու ի միտ, թէ ոչ ունի միտս, նա եւ Աւետարանն ասէ. «Աճէ՛ լի իմաստութեամբ» (Դուկ. Բ 40): Դարձեալ **ի միտ առցէ**, որ է<sup>1189</sup> ցանկասցի, այսինքն՝ զխաչն նորա<sup>1190</sup>, որպէս ասէր. «Յանկանալով ցանկացայ զայս պատէք ուտել» (Դուկ. ԻԲ 15), զի մի՛ թուեսցի ակամայ եւ ի հարկէ գալ ի Խաչն, այլ՝ յօժար կամօք, վասն որոյ եւ փառս կոչէ զԽաչն զնոսա<sup>1191</sup> վերասցի եւ բարձրասցի եւ փառաւորեսցի յոյժ<sup>1192</sup>: Նախ ի ձեռն զօրութեան սքանչելեացն դարձեալ յորժամ բարձրացաւ ի Խաչն փառաւորեցաւ յոյժ, զի ամենայն ազգ երկիր պագանեն Խաչելոյն, որպէս ասէր. «Յորժամ բարձրացուցանիցէք զՌոդի մարդոյ յայնժամ ծանիջիք, թէ ես եմ» (Յովի. Ը 28), այսինքն՝ ի սքանչելեացն, որ եղեն յայնժամ, զի լուսաւորքն խաւարեցան, երկիր շարժեցաւ<sup>1193</sup> (Մտթ. ԻԷ 51, Դուկ. ԻԳ 44) եւ այլն: Եւ դարձեալ խաչն անարգութեան եւ մահու եւ անիծից էր<sup>1194</sup> պատճառ: Այլ

նովալ փառաց եւ կենաց եւ օրհնութեան եղև առիթ, ըստ այնմ «Ես յորժամ քարձրացուցանեմ զամենայն» ( Յովհ. ԺԲ 32) եւ «Թէ տնկակից եղաք նմանութեան մահու նորա» (Հռովմ. Չ 5), եւ թէ՛ «Քրիստոս զնեաց զմեզ յանիծից օրինացն» (Գաղատ. Գ 15) եւ այլն:

**Չորօրինակ զարմասցին քազումք ի վերայ քո, այնպէս անշքեսցի տեսիլ քո ի մարդկանէ** (ԾԲ 14): Չարմանալ յորժամ ասէին՝ «Այսպիսի այր ոչ երբէք երեւեցաւ յԻսրայէլի» ( Մտք. Թ 33), եւ թէ՛ «Արդարեւ Որդի Աստուծոյ է սա» (Մտք. ԻԷ 54), այսինքն՝ ի տես մեծամեծ նշանացն, զոր առնէր եւ յիմաստութեանցն, որ խօսէր, զի զարմանալին ընդ քանս շնորհացն, որ ելանէին<sup>1195</sup> ի բերանոյ նորայ: Իսկ **անշքեսցի տեսիլ քո ի մարդկանէ**, այսինքն՝ ամենայն արան, որ վկայեսաց. «Դա է Որդի իմ ընտրեալ» (Մտք. ԺԷ 5) անարգեսցի կերպարան քո՝ ոչ յԱստուծոյ եւ ոչ յաստուածայնոց արանց<sup>1196</sup> (Մտք. ԺԷ 5), եւ ծերն Սիմէոն Տէր մահու եւ կենաց<sup>1197</sup> աղերսէր ( տե՛ս Դուկ. Բ 25-32), եւ Յովհաննէս՝ Բարձող մեղաց աշխարհի (Յովհ. Ա 29): Այլ յումե՞ անարգեսցաւ, ի մարդկանէ, ասէ, որ միայն մարդիկ էին մարմնաստրք: Արդ, նախ այն է անարգութիւն, որ ասէին. Սայ է որդի հիւսանն, Սամարացի եւ մոլեգնեալ կոչէին (Մտք. ԺԳ 55, Յովհ. Ը 48): Երկրորդ՝ զի տեսանէին աղքատ կերպիւ եւ ոչ մարմնական ճոխութեամբ, որպէս եւ վայել էր իսկ: Երրորդ՝ **անշուք** կերպարանք<sup>1198</sup> մարմնոյ եւ ոչ թէ տգեղ էր դիմօք, այլ գեղեցիկ<sup>1199</sup> տեսլեամբ քան՝ զամենայն որդիս<sup>1200</sup> մարդկան, սակայն առ աստուածութիւն անշուք էր կերպարան մարմնոյն: Չորրորդ՝ դարձեալ<sup>1201</sup> **անշուք** ասի կերպիւ ինչ, ըստ Աստուածութեան, զի Տէրն ծառայ եղև եւ Արարիչն՝ արարած: Հինգերորդ՝ անշքացեալ, այսինքն՝ ի վերայ խաչին մերկացեալ, ձաղեալ, ապտակեալ, թքեալ, նախատեալ, բեւեռեալ, մեռեալ: Այլ տես ի մեջ անարգութեան զմեծասքանչ զօրութիւն. Արեգակն խաւարեալ. վեմք պատառեալ, երկիր շարժեալ, գերեզմանք բացեալ եւ այլն: Չի եթէ յանարգութիւն այնքան ահաւոր<sup>1202</sup> էր զօրութեամբ՝ քանի եւս յորժամ զայցէ փառօք Հօր ահեղ եւ սաստիկ զօրութեամբ ի դատել զերկիր: Այլ ոմանք զանշքասցին. այլափոխեսցի տեսիլ քո ի մարդկանէ, ասեն, այսինքն՝ զի այլակերպեցաւ ի Թաքօր եւ կամ զի այլակերպէ հանապազ զծնեալս աւագանաւն ի կերպ որդէգրութեան Աստուծոյ:

- ԽԸ -

**Տէր ո՞ հաւատաց ի լուր մեր եւ քազուկ Տեառն ու՞մ յայտնեցաւ** (ԾԳ 1): Չորս միտք է բանիս<sup>1203</sup>: Նախ՝ ամբաստանութիւն զԻսրայէլէ առ Աստուած, զի ոչ հաւատացին մեծասքանչ զօրութեանն եւ բանից մարգարէիցն եւ պատմութեանց նոցա: Երկրորդ՝ թէ ոչ զմեր ինչ քան խօսեցաք, այլ **զլուրն**, որ ի Քէն լուայք, որպէս Ամբակում ասէ. «Տէր լուր քո լուայ» (Ամբ. Գ 2), եւ Դաւիթ՝ «Ահա լուայք զմմանէ» (Սղմ. ԴԼԱ 6), ասէ, եւ ոչ այսմ ականջով<sup>1204</sup>, այլ՝ մարդկան, որպէս ասէ.

**Յառել ինձ ունկն ի լսել** (Ծ 4): Երրորդ՝ գոր լուսք մեք եւ քաղցրացաք այլոց: Չորրորդ՝ յայտ առնէ, թէ ոչ զննութեան<sup>1205</sup>, այլ հաւատոց պէտք են յաստուածայինսն:

**Եւ քազուկ Տեառն ու՞մ յայտնեցաւ:** **Բազուկ** եւ աջ եւ զօրութիւն է Հօր Որդին Միածին, որով արար զամենայն, եւ դարձեալ վերստին նորոգեաց, եւ հրաշափառէ: Երկրորդ՝ արարչութիւնս քան զառաջինն, վասն կրկին պատճառի. նախ զի այն կամօք եւ բանի միայն, իսկ զայս՝ մարդեղութեամբ եւ չարչարանօք: Երկրորդ՝ սեպհական է Աստուծոյ առնել արարած, այլ օտար է լինել Աստուծոյ՝ արարած, որ առաւել է<sup>1206</sup> զարմանալի: **Ու՞մ յայտնեցաւ.** նախ քան զմարդ լինելն մարդ ոչ յայտնեցաւ: Երկրորդ, զի ոչ յայտնութեամբ ծանեան, զի այլ է յայտնութեամբ ճանաչելն եւ այլ՝ ի ձեռն սքանչելեացն: Ուստի յայտ է, զի ամենեքեան տեսանէին զսքանչելիսն, այլ միայն աշակերտացն ասէր. «Ձեր երանի աչացդ<sup>1207</sup> է<sup>1208</sup>, որ տեսանէքդ» (Մտք. ԺԳ 16): Իսկ վասն յայտնութեան ասէ. «Երանի է քեզ Սիմոն, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ, որ յերկինս է» (Մտք. ԺՁ 17):

Եւ լուծանի աստ տարակոյս ինչ:

Հարց. Վասն է՞ր, յորժամ Նաթանայել (Յովհ. Ա 45-51) եւ քոյրն Ղազարու զնոյն դաւանեցին Որդի Աստուծոյ: Եւ ոչ երանեացն որպէս զՊետրոս:

Պատասխան. Չի նոքա՝ ի սքանչելեացն<sup>1209</sup>, իսկ Պետրոս՝ ըստ<sup>1210</sup> յայտնութեան: Վասն որոյ եւ երանեցաւ որպէս եւ Պօղոս. «Մեզ յայտնեաց, ասէ, զամենայն<sup>1211</sup> Հոգովն Իրով (Ա Կորնթ. Բ 10): Վասն որոյ պարտ է ստանալ զերկիւղ, զի «Ձօրութիւն տայ Տէր երկիւղածաց» (Սղմ. ԻԳ 14):

**Պատմեցաք առաջի նորա իբրեւ զմանուկ** (ԾԳ 2):

Եւ զի մի՛ ասիցեն, թէ ոչ պատմեցաւ մեզ, վասն այն ոչ հաւատացաք, ասէ՛ **պատմեցաք** ձեզ, եւ ոչ՝ յետոյ, այլ յառաջ, քան զմարդեղութիւն նորա: Եւ զօրինակն առաջի դնէ. **իբրեւ զմանուկ:** Այն, որ ասէ. **Ի միտ առցէ մանուկ իմ** (ԾԲ13) եւ թէ՛ **Մանուկ մտադիւր արկցէ զձեռն իւր ի բոյնս իժից** (ԺԱ 8) եւ այլն: **Իբրեւ զմանուկ** ասէ եւ ոչ՝ մանկտի, զի ոչ սոսկ մարդ էր Քրիստոս եւ ոչ մերկ Աստուած, այլ՝ Աստուած մարդացեալ **իբրեւ զարմատ ի ծարատուտ երկրի:** **Երկիր ցամաք** ասէ զկոյսն Մարիամ որպէս եւ այլոր՝ **Ամպ թեթեւ** (ԺԹ 1) ասէ: **Երկիր ծարատուտ** էր, զի անշաղախ էր ի զիճութեանց աշխարհի եւ յանձրեաց՝ սերման: Այլ կուսութեամբ մայր եղեւ Արմատոյն կենաց, ըստ այնմ՝ **Կոյսն յղասցի եւ ծնցի Որդի** (Է 14): **Մանուկ** ասելով եցոյց զհաւասարութիւն ընդ մեզ, իսկ **արմատ՝** զազնուականութիւն: Դարձեալ **իբրեւն**<sup>1212</sup> ասելով **արմատ՝** նշանակէ՛ նման եւ անման զոլ արմատոյն: Այլ եւ<sup>1213</sup> անմանութիւն խոստովանելի է յամենեցունց. եւ ոչ գոյ տարակոյս: Իսկ թէ զի՞նչ է<sup>1214</sup> նմանութիւն, առ դիցուք, նախ զի **արմատն** ասելով նշանակէ զառանց սերման ծնանելն<sup>1215</sup>, այլ որպէս **արմատն** ի հողոյ ի կուսական յարգանդէն երեւեալ:

Երկրորդ՝ զի որպէս **արմատն** նոյն է ըստ բնութեան բուսոցն եւ աննման՝ որակօք, նոյնպէս եւ Տէր մեր<sup>1216</sup> նոյն է ըստ բնութեան, այլ աննման է աստուածահրաշ ներգործութեամբն եւ էութեամբ: Երրորդ՝ զի որպէս **արմատն** նախ խոնարհի ի հողն եւ ապա բարձրանայ, նոյնպէս եւ Տէր մեր նախ խոնարհեցաւ յերկնից եւ ապա մարմնով երեւեցաւ յերկրի, եւ ապա համբարձաւ առ Հայր: Չորրորդ՝ մի արմատ տնկելով յերկրի բարձրանայ ի բոյսս ի տերեւս, ի ծաղիկս եւ ի պտուղս, նոյնպէս եւ Տէր մեր միայն էջ յերկիր եւ ի դժոխս եւ բազմօք ել առ Հայր, որպէս ասէ. «Ես եմ հատն ցորենոյ» (Հմմտ. Յովհ. ԺԲ 24): Հինգերորդ՝ նախ արմատն եւ ապա բոյսն ի նմանէ, սոյնպէս եւ Տէր մեր է. նախ որպէս **գարմատ** եւ սկիզբն մեր ըստ արարչութեան եւ ըստ նորոգութեան, որպէս ասէր. «Ես եմ որթ եւ դուք ուռ» (Յովհ. ԺԵ 5): Վեցերորդ՝ զի որպէս արմատն առեալ զհիւթն եւ ինքեամբ տայ ի բոյսն, նոյնպէս եւ Տէր մեր զամենայն պարգեւս շնորհաց Հոգւոյն ինքեամբ սփռէ յանդամս եկեղեցւոյ Իւրոյ՝ զլուխ գոլով մեզ: Եւթներորդ՝ ծածուկ գոլով արմատն տա զագոյումն բուսոցն, ըստ իւրաքանչիւր պատշաճի տերեւոցն<sup>1217</sup>, պտղոցն եւ այլոցն: Նոյնպէս եւ Տէր մեր, ծածուկ գոլով, զգայութեանց<sup>1218</sup>, կատարէ զամենայն խորհուրդս եկեղեցւոյ եւ շարժէ զիւրաքանչիւր որ ի գործս առաքիւնութեան, ըստ այնմ՝ «Ձի առանց իմ ոչ ինչ կարէք առնել»<sup>1219</sup>, ասէ: Ութներորդ՝ զի որքան յարմատս են հաստատեալ բոյսք՝ կենդանի են, եւ հատեալ ի նմանէ՝ չորանան: Նոյնպէս եւ մեք. որք հաւատով եւ գործով հաստատուն ենք, ունինք զկենդանութիւն հոգեւոր, եւ յորժամ յատանի որ անհաւատութեամբ եւ չար գործովք, բաժանի ի շնորհաց նորա, ըստ այնմ. «Ել նա արտաքս իբրեւ գուռն, որ ոչ է հաստատեալ յիս»: Իններորդ՝ զի թէպէտ եւ կտրին ճիւղքն կամ շարժին ի հողմոց, այլ արմատն հաստատուն մնայ եւ ոչ հատանի: Եւ վասն Տեառն մերոյ ասէ Պօղոս «Եւ թէ ուրանամք եւ նայ ուրանայ զմեզ եւ թէ չհաւատամք, նա հաւատարիմ մնայ» (Բ Տիմ- Բ 12). ուրանալ զանձն Իւր ոչ կարէ: Տասներորդ՝ զի որպէս բոյսք չորացեալք ի ձմեռան դարձեալ յարմատոյն կենդանանան<sup>1220</sup> ի գարնան, նոյնպէս եւ մեղքն՝ ի ձեռն Քրիստոսի, ըստ այնմ. «Լուիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ եւ ելանեն արտաքս» (Յովհ. Ե 25):

**Ոչ գոյր նորա տեսիլ եւ ոչ փառք»** (ԾԳ 2): **Ոչ գոյր տեսիլ**՝ իբրեւ զիրեշտակի, եւ **ոչ փառք**, որպէս զՄովսէսի: Դարձեալ ոչ զայն<sup>1221</sup> ասէ, թէ տգեղ էր դիմօք, զի «զեղեցիկ էր տեսլեամբ քան զամենայն որդիս մարդկան»: Այլ ոչ էր տեսչութեամբ, որպէս փառաւորք աշխարհի՝ բռնաւորք եւ իշխանք, այլ խոնարհ եւ աղքատ կերպարանաւ<sup>1222</sup>:

**Տեսաք մեք**<sup>1223</sup> **զնա, եւ ոչ գոյր նորա տեսիլ** (ԾԳ 2): Տեսին զնա մարգարեական աչօք, որ մեզ անգիտելի է, այլ զի **տեսաք** եւ **ոչ տեսաք** ասէ. այն է, որ զանճառն եւ զանհասն ոչ տեսին, ըստ «Ոչ որ տեսնէ զերեսս Իմ եւ ապրի» (Ելք ԼԳ 20): Այլ տեսին կերպարանօք իմն ի ձեռն օրոյ լուսոյ կամ հրոյ եւ այլ ինչ: Դարձեալ տեսին ընդ աղօտ եւ մասնաւոր ինչ, այլ ոչ՝ զբոլորն, գոր օրինակ ընդ լուսանցս զմասն երկնից տեսանենք եւ ոչ զբոլորն, ըստ

օրինակ ընդ լուսանցս զմասն երկնից տեսանենք եւ ոչ զբոլորն եւ զմասն ծովու տեսանենք եւ ոչ զբովանդակն:

**Այլ տեսիլ նորա անարգ նուագեալ, քան զամենայն որդոց մարդկան (ԾԳ 3).** Նախ՝ ի մարմնաւորութիւն եւ ապա առ Խաչն: Չի ի մարդ լինելն յաղքատ մօրէ, ծնաւ յայրի եւ ի մտոր եղաւ, եւ յԵգիպտոս փախեալ: Սոքա ամենեքեան<sup>1224</sup> անարգութեան են նշանակ, այլ եւ յաշխարհագիրն ենուտ եւ ընդ Սիմոնի հարկս ետ կայսեր: Այլ եւ առ Խաչն. Նախ՝ զի կատակեցաւ, ձաղեցաւ եւ անարգեցաւ եւ ապա զի Խաչի մեռաւ<sup>1225</sup>, որ էր անիծից եւ անարգանաց մահ, եւ ապա զի ի մէջ աւագակացն **ընդ անօրէնս համարեցաւ (ԾԳ 12):**

**Այր մի ի հարուածս եւ զիտէ համբերել ցաւոց (ԾԳ 3):** Ոչ ասաց<sup>1226</sup>, թէ՛ համբերէ, այլ թէ՛ **զիտէ համբերել ցաւոց:** Նախ՝ զի հաբերութիւն ի հարկէ է, այլ նա ասէ՛<sup>1227</sup> **զիտէ համբերել.** այսինքն՝ կամաւ համբերէ եւ ոչ՝ ի հարկէ: Երկրորդ՝ զիտէ զշահս<sup>1228</sup> համբերելոյն, զի ոչ մարդ է եւ ոչ սոսկ Աստուած, այլ Աստուած մարդացեալ: Վասն որոյ, զի մարդ է<sup>1229</sup> համբերէ եւ զի Աստուած է՝ զիտէ զշահն. վասն այն համբերէ նախատանաց եւ նենգութեան հրէիցն եւ աշակերտացն: Երրորդ՝ **զիտէ համբերել ցաւոց,** այսինքն՝ զիտէ յինքնն<sup>1230</sup> ամենայն ցաւածաց<sup>1231</sup> օգնական լինել, որպէս ասէ, թէ՛ «Որ զփորձ առեալ է կարող է եւ փորձանաւորացն օգնական լինել» (Եբր. Բ 18): Չորրորդ՝ **զիտէ,** թէ՛<sup>1232</sup> առանց այնմ անհնար է լինել բժշկութիւն մարդկան: Վասն որոյ համբերէ ցաւոց, որպէս որ զախտացեալ մասն անդամոցն տայ ի հատումն, եւ համբերէ, ցաւոցն, զի մարմինքն<sup>1233</sup> ապրեսցին, նոյնպէս եւ ախտացեալ էաք մեղօք եւ Քրիստոս վասն կենաց մերոց ետ զինքն ի մահ զանմեղ եւ զանմահ եւ զանախտ մարմինն վասն մեղաց մերոց վիրաւորեաց եւ բժշկեաց զմեզ ի մեղաց մերոց<sup>1234</sup>:

**Չի դարձուցեալ զերեսս իւր՝ անարգեցաւ եւ ոչ ինչ համարեցաւ (ԾԳ 3):** Չի ոմանք<sup>1235</sup> ասեն. Դարձուցաք զերեսս ի նմանէ, որ զամենեցունդ երեսս առ Ինքն դարձոյց<sup>1236</sup>, այսինքն՝ երկրպագութեամբ, եւ ոչ ինչ համարեցաք, զի ընդ Սիմոնի հարկս պահանջեցաք ի նմանէ: Իսկ ըստ երթանասնիցն: **Դարձուցեալ զերեսս իւր՝ անարգեցաւ.** որպէս որ դարձուցանէ զերեսն<sup>1237</sup>, եւ ի թիկանց ոչ որ ճանաչէ զնա, թէպէտ յընտանեաց իցէ, զի ծանօթութիւնն ի դիմաց է, նոյնպէս եւ Տէր մեր զԱստուածութիւն ծածկեաց ի մարդկանէ: Չի թէ էր ծանուցեալ՝ «ո՞չ արդեք զՏէրն փառաց ի Խաչին» (Ա Կորնթ. Բ 8): Եւ զի դարձուցեալ զերեսս Իւր եւ ծածկեաց զԱստուածութիւն: Վասն այն անարգեցաւ, ատեցաւ, յամենեցունց յաչաց ել եւ ոչ ինչ համարեցաւ:

**Նա զմեղս մեր բառնաւ եւ վասն մեր չարչարի (ԾԳ 4):** Օրինադրեաց մարգարէիւն<sup>1238</sup>, թէ «Անձն, որ մեղիցէ, նոյն եւ մեռցի» (Հմմտ. Գևտ Ե 17): Իսկ Տէր մեր ոչ ունէր մեղս, այլ կամեցաւ Ինքն չարչարիլ վասն մեր մեղացն եւ արդարացնել զմեզ:

**Եւ մեր համարեցաք զնա ի ցաւս եւ ի չարչարանս իբրեւ յԱստուծոյ:** (ԾԳ 4): Այնպէս զիտացաք, թէ չարչարանք նորա պատիժ է յԱստուծոյ վասն յանցանաց ինչ: Բայց նա վասն մեղաց մերոց վիրաւորեցաւ եւ պատժեցաւ: Դարձեալ ուղղակի մտօք համարեցաք մեր<sup>1239</sup> զչարչարանս նորա յԱստուծոյ գոլ, ըստ այնմ. «Այնչափ սիրեաց Աստուած զաշխարհս մինչեւ զՌոդին Իւր Միածին ետ (Յովհ. Գ 16), այսինքն՝ ի չարչարանս եւ ի<sup>1240</sup> մահ:

**Խրատ խաղաղութեան մերոյ ի մնա**<sup>1241</sup> (ԾԳ 5): Այսինքն Նա եբարձ զպատերազմ եւ արար խաղաղութիւն հրէից եւ հեթանոսաց, հրեշտակաց եւ մարդկան: Դարձեալ **խրատ խաղաղութեան**, այսինքն՝ չարչարանք նորա մեզ խրատ<sup>1242-1243</sup> եղեւ, զի զխրատն զայն մեր պարտեաք կրել<sup>1244</sup>, որ նա յանձն<sup>1245</sup> Իւր էառ: Որպէս դատաւոր ոք կամի<sup>1246</sup> պատուհասել զմահապարտս, եւ եղբայր սիրելի տայ<sup>1247</sup> զինքն վասն նորա ի մահ եւ արձակէ<sup>1248</sup> զնա, յայնժամ հաշտի ընդ նա դատաւորն: Նոյնպէս եւ Տէր մեր վասն մեր մեռաւ եւ հաշտեցոյց զԱստուած ընդ մեզ:

**Եւ նորա վիրօքն բժշկեցաք** (ԾԳ 5): Այսինքն զհոգոյ բժշկութիւն, որ ընդ զգայութեանս<sup>1249</sup> ի ներքս<sup>1250</sup> խոցեալ, զի ամենայն ինչ հեշտութիւնք մարմնական խոցեն զհոգին, որպէս յայտ էլի նախաստեղծքն- զի ականջօք տեղի ետուն պատրողին, աչօք տեսին զգեղեցկութիւն պտղոյն, ոտիք ընթացան մերձ, ձեռօքն<sup>1251</sup> կթեցին, բերանով ճաշակեցին եւ մահու խոցեցան ոգով: Իսկ Տէրն մեր ընդդէմ սոցա կրեաց յիրաքանչիւր զգայութիւնս զվերս եւ զվիշտս եւ բժշկեաց զնոսա. ականջօք լուսւ<sup>1252</sup> զհայիոյութիւնս, զաչսն կափոյց ի վերայ Խաչին, ձեռօքն եւ ոտիքն բեւեռեցաւ եւ զլեղին ճաշակեաց եւ այլն:

**Ամենեքեան իբրեւ ոչխարք մոլորեալք** (ԾԳ 6): Նախ ցուցանէ, թէ ոչ մասնաւոր ոմանք, այլ ամենեքեան խոտորեցան ի միասին, որպէս ասէ Դաւիթ, եւ ապա զի փրկութիւն Տեառն մերոյ ամենեցուն առ հասարակ եղեւ: Իսկ զի **յոչխար** առակէ՝ նախատանաց է: Նախ՝ վասն անբանապէս յիմարութեան, որպէս ասէ. «Հաւասարեցան անասնոց» անբանից<sup>1253</sup> (Մովս. ԽԸ 13, 21) Եւ երկրորդ՝ վասն յոյժ մոլորութեան: Եւ յերից իրաց մոլորի ոչխարն կամ հեռացեալ ի հովուէն կամ զհետ օտարի ընթացեալ կամ ի գայլէ ցրուեալ: Այսպէս եւ ազգ մարդկան, հեռացան յԱրարչէն եւ պաշտեցին զկոռս: Վասն որոյ ասէ. Ոյք հեռացան ի քէն՝ կորիցեն եւ զհետ զնացեալ հեշտութեանց մարմնոյ՝ մոլորեցան, եւ<sup>1254</sup> յիմանալի զազանէն զէշ զէշ պատառեցան եւ ցրուեցան:

**Այր ի ճանապարհի իւրում մոլորեցաւ** (ԾԳ 6): Այսինքն՝ նախ զգալուստն Քրիստոսի: Զի թէպէտ<sup>1255</sup> մի ճանապարհ է ի ծննդէն մինչ ի գերեզմանն, սակայն բազում են շաւիղք մարդկան, զի այլ է շաւիղ մարդկան, զի այլ է շաւիղ թագաւորաց եւ այլ՝ ուսմկաց,

քահանայից եւ արուեստագիտացն եւ այլոցն: Որպէս ասաց<sup>1256</sup> առ Նոյին, թէ՛ «Ապականեցաւ ամենայն մարմին» (Ծնդ. 2 17):

**Եւ Տէր մատնեաց զնա առ մեղս** (ԾԳ 6ա): Այն է, որ կամեցաւ Հայր զչարչարանս Միածնին<sup>1257</sup> Իւրոյ վասն մեր, որպէս ասէ՛ «Այնչափ սիրեաց Աստուած զաշխարհս մինչեւ զՈրդին իւր Միածին ետ» (Յովհ. Գ- 16): Եւ զի մի՛ կարծեսցի բռնութեամբ ուստի յայտ է, զի նախ Ինքն խղրեաց, թէ՛ «Արբից զբաժակն» (Մտթ. Ի 22-23), եւ թէ՛ «Ես Ինձէն դնեմ զանձն իմ» (Յովհ. Ժ 17):

**Եւ նա առ վշտին ոչ բանա զբերան իւր** (ԾԳ 6բ) :

Որպէս ասէ Դաւիթ. «Եղէ ես որպէս մարդ, որ ոչ լսէ» (Սղմ. ԼԷ 15) և այլն: Եւ թէ ասիցէ<sup>1258</sup> որ, թէ ընդէ՞ր ոչ տայր պատասխանի- ի հարցանելն զնա ասեմ վարդապետք, թէ վասն հինգ պատճառի. նախ՝ զի զամենայն գործ սքանչելեացն տեսին եւ ոչ հաւանէին, նոյնպէս եւ բանիցն ոչ հաւատային: Երկրորդ՝ զի ոչ դատաստանաւ հարցանէին, այլ ճոխութեամբ եւ կամէին սպանել<sup>1259</sup> զնա: Երրորդ՝ զի հեզ բարբառով խօսեցաւ սակաւ ինչ եւ ոչ լուան, որպէս այն. «Ձի՞ հարկանես զիս» (Յովհ.. ԺԸ 23), եւ թէ՛ «Վկայեա վասն չարին» (Անդ), եւ թէ զամենայն պատասխանէր եւ ոչ զայն լսէին, որ եւ ոչ երազ կնոջն Պիղատոսի հաւանեցոյց<sup>1260</sup> զնոսա՝ եւ ոչ խեղդ մատնիչին (տես՝ Մտթ. ԻԷ 5) եւ ոչ ամաչելն սուտ վկայիցն: Չորրորդ՝ զի թէ վերին իմաստութիւն խօսեցեալ էր՝ ստորին յիմարութիւնս ոչ կայր առաջի, յայնժամ խափան լինէր մահուն եւ փրկութեան աշխարհի: Հինգերորդ՝ յօրինակ մեզ, զի ի ժամ այնպիսի մահուանն մի պատասխանեցուք զինչ եւ թէ խօսեցուք մեղմով եւ հեզութեամբ որպէս Տէր մեր: Ձի թէ մեք լռենք՝ ոչ ինչ է մեծ, զի այն յերկիւղէ լինի: Իսկ նորա այն մեծ էր լռութիւն Ամենագօրին: Ձի ընդ ասելն, թէ՛ «զո՞ խնդրէք՝ զարկան զգետնի» (Յովհ. ԺԸ 4, 6)<sup>1261</sup>: Եւ տես, զի ոչ միայն հակառակ ինչ ոչ ասաց նոցա,<sup>1262</sup> այլ եւ աղօթս առնէր ի վերայ, որ զկամաւոր մահն նշանակէր:

**Իբրեւ գոչխար ի սպանդ վարեցաւ** (ԾԳ 7):

Նախ վասն լռութեան, զի ամենայն կենդանի ի զենումն ածեալ մեծ կամ նուազ ձայն արձակէ, իսկ ոչխար յաղեաց ոչ: Նոյնպէս եւ Տէր մեր ի դատապարտելն ոչ ինչ տայր<sup>1263</sup> պատասխանի վասն ասացեալ պատճառաց<sup>1264</sup>: Երկրորդ՝ վասն պատարագելոյն, որպէս յայտ է յօրէնսն, զի քաւէր զմեղս, եւ Տէր մեր պատարագովն ի Խաչին եբարձ զմեղս աշխարհի, որպէս վկայեաց Յովհաննէս. «Մա է գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» (Յովհ. Ա 29): Երրորդ՝ զի զգեցոյց զմերկութիւն այնու, որ մերկացաւ ի վերայ խաչին, զի «Որք ի մահն Քրիստոսի մկրտեցաք՝ զՔրիստոս զգեցաք» (Գաղատ. Գ 27), ասէ Պօղոս: Չորրորդ՝ զի կերակրեաց Ինքեամբ եւ արբոյց ի կողիցն, ուստի եւղ շնորհաց եւ լոյս

\* §Յիշատակարանք որ եղեն վասն Քրիստոսի, առաջի Պոնտացոյ Պիղատոսի իշխանի Յրեաստանի՝ տես Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1898, էջ 317 – 318:

աչաց: Հինգերորդ՝ վասն օձահալած բնութեան. ըստ որում դատապարտեաց եւ ընկեց արտաքս եւ բեւեռեաց զնա ընդ խաչափայտին, որ եւ «ետ մեզ իշխանութիւն՝ կոխել զօձս եւ զկարիճս» (Բուկ. Ժ 19): Չորրորդ՝ վասն անմեղութեան, ըստ Երեմիայ. «Ես իբրեւ զգառն անմեղ» (Երեմիա ԺԱ 19):

**Առաջի կտրողի (ԾԳ 7):** Նախ՝ զի կամսան խոնարհեցաւ եւ երկրորդ՝ զի կենդանի էր ի մահուն:

**Առ խոնարհութեան նորա դատաստան նորա բարձաւ (ԾԳ 8),** զի այնչափ խոնարհեցոյց զանձն, զի եւ մի բան չտային խօսել, զի մի՛ գոցի օգնականութիւն յիրաւանց, որպէս գիտէք իսկ, որ զկարի աղքատս եւ զոնանկս զրկեն յիրաւանց եւ ոչ տան բան առ բան խօսել: Այսպէս եւ արարին Քրիստոսի. զի ի քննելն, յորժամ ասաց Պիղատոս. «Ես ի դմա վնաս ինչ ոչ գտանեմ» (Յովհ. ԺԹ 4), զաղաղակ բարձին. «Թէ զղա արձակես՝ չես բարեկամ կայսեր» (Յովհ. ԺԹ 12)

Հարց. Վասն է՞ր այնչափ հեշտացեալ յամէ ի ճառս նուաստական:

Պատասխանի. Վասն կրկին պատճառի. Նախ՝ զի նուաստականքս այսոքիկ եղև մեզ փրկութեան եւ փառաց պատճառ: Երկրորդ՝ զի մեծամեծքն ամենայն սեպիական է Աստուծոյ: Այլ եւ<sup>1265</sup> այս է առաւել զարմանալի եւ պարծանաց<sup>1266</sup> պատճառ, զոր եւ Պօղոս. «Ինձ մի՛ լիցի, ասէ, յայլ ինչ պարծել, բայց միայն ի Խաչն Տեառն» (Գաղատ. Զ 14):

**Եւ զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ (ԾԳ 8)-**

Այժմ զբարձրագոյնսն<sup>1267</sup>, զի մի՛ գայթակղեսցին թերակատար մտօք եւ աստ. մի՛ ինձ ասիցես զվերին ծննդեմն, զի այն անհայտ էր: Այլ անպատմելի ասեմ եւ<sup>1268</sup> զայս ծնունդս, որ ի խոնարհս էր, թէ՛ զիա՞րդ մարդ ի կուսէ եւ զիա՞րդ առանց ամուսնութեան երկունքն եւ զիա՞րդ երկունքն առանց ցաւոց. զի «գտաւ ասէ յղացեալ<sup>1269</sup> ի Հոգւոյն Սրբոյ» (Մտք. Ա 18): Այլ թէ որպէ՞ս. ոչ գիտեմ, բայց թէ ասիցէ որ. «Հոգին Սուրբ եկեսցէ» (Բուկ. Ա 35) ասաց հրեշտակն, ապա յայտ է, թէ Հոգին Սուրբ արար զնա: Եւ զիա՞րդ արար, աղէ, ասա ինձ, որպէս զԱդամն Աստուած կամ որպէս զԵւա՞յ ի կողմն<sup>1270</sup>. այս չէ ի դէպ, մա՞սն ինչ էառ յարգանդէն եւ ստեղծ: Եւ զայս չառնում յանձն: Առանց Կուսին արդե՞ւք, եւ ոչ է<sup>1271</sup> ասել, զի ոչ ի նմանէ լինէր մարմինն: Իսկ թէ որպէ՞ս խոստովանիմք զոկարութիւն՝ ասեմ, թէ ոչ գիտեմ<sup>1272</sup>: Խոստովանիմ, թէ ի Կուսէն առ ճշմարիտ մարմինն, այլ թէ՛ զիա՞րդ, ոչ գիտեմ. չեմ ճարտար քան զմարգարէն եւ իսելամուտ քան զՀոգին Սուրբ, որ<sup>1273</sup> ոչ ետ աւելի ինչ ճառել մարգարէին, քան զայն, թէ՛ **զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ:**

**Զի բառնան յերկրէ կեանք նորա (ԾԳ 8):** Նախ այսպէս<sup>1274</sup> բարձրացեալ գերազանցեալ յերկրաւորացս կեանք նորա: Նախ վերաբերի այս ի ծնունդն Աստուծոյ մարդանալոյն, զի անհամեմատ է օրինակաց եւ անհաս մտաց, որպէս ցուցաւ: Երկրորդ՝ **բարձրացեալ** մահ նորա, զի ոչ պատժապարտ էր յանցանացն, եւ ոչ դատապարտ լիցի մահու, այն վասն



այլոց չարչարի: Երրորդ՝ **բարձրացեալ** է յարութեամբն փութանակի, եւ «մարմինն նորա ոչ ետես զապականութիւն» (Գործ Բ 31): Չորրորդ՝ **բարձրացաւ** վերացմամբն յերկինս՝ նստելով ընդ աջմէ Հօր, որպէս ասէ Պօղոս, «Վասն որոյ զնա առաւել բարձրացոյց» (Փիլիպ. Բ 9): Հինգերորդ՝ **բարձրացեալ** է, զի կեանքն եւ փառքն մեր ի նմանէ է, որպէս ասէ. «Կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսիւ յԱստուած» (Կողոս. Գ 3), եւ «Յորժամ նա յայտնեսցի եւ դուք ընդ նմին յայտնիջիք փառօք» (Կողոս. Գ 4): Վեցերորդ՝ դարձեալ կրկնեսցուք, զի **բարձրացեալ** եւ աննման է մահ նորա ի մահուանէ մեր: Չի եւ<sup>1275</sup> մեք ի մեռանելն նովին մարմնովն ոչ եմք կենդանի, թէպէտ հոգին կենդանի է: Այլ Տէր մեր, մեռեալ<sup>1276</sup> էր մարմնովն, եւ նոյն ինքն մարմինն կենդանի էր Աստուածութեամբն Իւր<sup>1277</sup>: Եւ յայտնէ զայս արիւնն ի կողիցն բղխեալ եւ մի՛ ասիցես բաժանմամբ, այսինքն թէ՛ Աստուածութիւն կենդանի էր եւ մարդկութիւն մեռեալ, զի այս բաժանողացն է<sup>1278</sup>: Այլ նոյն Բանն Աստուած մարմնովն Իւրովն<sup>1279</sup> մեռեալ էր եւ նոյն մարմինն Աստուածութեամբն կենդանի էր: Որպէս ասի ի դաւանութիւն Նիկիայ. «Աստուած յԱստուծոյ իջեալ յերկնից մարմնացաւ,<sup>1280</sup> մարդացաւ, մեռաւ, թաղեցաւ, յարեաւ եւ ընդ աջմէ Հօր նստաւ նովին մարմնով»\*: Նոյնպէս եւ զամենայն գերգործութիւնսն մի՛ որոշաբար զբարձրագոյնսն Աստուծոյ եւ զխոնարհագոյնսն մարդոյ<sup>1281</sup> տալ, այլ՝ միաւոր միոյ դիմաց: Այսպէս եւ Բանն Աստուած իջեալն յերկնից կրէր զնուաստականսն մարմնով Իւրով եւ նոյն Բանն Աստուած գերգործէր զմեծամեծ հրաշս մարմնով Իւրով: Այս է ուղղափառացն բան<sup>1282</sup>: Իսկ որք<sup>1283</sup> որոշեն գերգործութիւնսն ի Քրիստոս ի դէմ նոցա ասէ Աստուածաբանն ի ճառին<sup>1284</sup>, որ առ Կղեդօնիոս. «Ո՞ք ընդ նոսա արդէք ոչ սքանչասցի յաղագս իմաստութեան, որք յայտնապէս ինքեանք զՔրիստոսիսն որոշեն գերգործութիւնսն»\*\*: Դարձցուք այժմ յառաջիկա բանս. թերեւս ընդարձակեցաւ սակս պիտոյից ինչ:

**Յանօրէնութեանց ժողովրդեան իմոյ ի մահ վարեցաւ**»(ԾԳ 8): Կրկին անօրէնութիւն էր հրէիցն: Նախ զի յօրէնսն անօրինեցան, զի զոր նախագրութեամբ մարգարէիցն երկնի փառաւորեալ զնոսա զնա սպանին: Երկրորդ՝ զի ամենայն երախտեացն, զոր արար նոցա մարմնովն. հատուցին նմա Խաչ:

**Եւ տաց զչարս փոխանակ գերեզմանի նորա եւ զմեծամեծս՝ փոխանակ մահու նորա** (ԾԳ 9): Միեւնոյն է մահն եւ գերեզմանն, զի որ մեռնի, դնի ի գերեզմանի: **Տաց զչարս**, այսինքն՝ զմեղս, զոր մեղաւ մարդն, շնորհես վասն անպարտ մահու նորա, եւ **զմեծամեծ** պարգեւսն, զոր կորուսին, տաց վասն գերեզմանի նորա: Դարձեալ **տամ զչարս**, այսինքն՝ զազգն հրէից ի գերութիւն Հռովմեացոց վասն գերեզմանի նորա ոչ զի թաղեցաւ, այլ զի արգելուին եւ ոչ տային թաղել: Եւ դարձեալ, զի ծածկեալ կամէին զմեծահրաշ յարութիւն եւ

\* Նիկիո հանգանակի իմաստային հառաջաբերութիւնն է. տե՛ս Մ. Ստերյան «Յրահանգ քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Յայաստանեայց», Մոսկվա, 1850, էջ ԻԴ-ԻԶ:

**զմեծամեծ** մահու նորա: Նոքա հրեայք<sup>1285</sup> էին մեծատունք, յայնմ ժամանակին նոյնպէս եւ ի մահն կրկնակի յանցեան. նախ՝ զի տիրասպանք եղեն եւ երկրորդ՝ զի ոչ ի միտ առին զմեծամեծ զսքանչելիսն, որ եղեւ առ մահուանն եւ առ գերեզմանին: Նախ՝ զի մթնացաւ երկինքն, երկրորդ՝ զի շարժեցաւ երկիր, երրորդ՝ զի պատառեցան վեմք<sup>1286</sup>, չորրորդ՝ զի ի գերեզմանք բացան, հինգերորդ՝ զի հերձաւ վարագոյրն, վեցերորդ՝ զի խեղդեցաւ մատնիչն, եւթներորդ՝ երազ կնոջն Պիղատոսի, ութերորդ՝ հարիւրապետին<sup>1287</sup> հաւատալն, իններորդ՝ բարձրաձայն աղաղակեաց ի յաւանդելն զհոգին, տասներորդ՝ աղբիւրք կողիցն ջուրն եւ արիւնն: Նոյնպէս եւ առ գերեզմանին ունէին բազում պատճառս հաւանութեան: Եւ ոչ ի միտ առին: Նախ զի կեցուցին պահապանս եւ այն յօտարաց, զի եղովմայեցիք էին, երկրորդ՝ զի ինքեանք մատանեալ<sup>1288</sup> կնքեցին, երրորդ՝ զի ոչ էին մերձ աշակերտք նորա, չորրորդ՝ զի ստրջացան զինուորքն, որոց ետուն արծաթս, հինգերորդ՝ շարժումն մեծ, վեցերորդ՝ թաւալումն վիմին, եւթներորդ՝ լուսափայլ երեսումն զուարթնոյն. ութերորդ՝ հրեշտակացն բարբառք վասն յարութեան, իններորդ՝ պատանքն ծալեալ եւ ունայն ի մարմնոյն տասներորդ՝ մեռեալքն յարուցեալ<sup>1289</sup> մտին ի քաղաքն (տե՛ս Մտթ. ԻԷ 53): Մանաւանդ, թէ զիտէին զվկայութիւն մարգարէիցն: Վասն այսոցիկ, յառաջագոյն եւ զայս ամենայն ոչ առին ի միտ, յիրաւի չարաչար կորեան:

**Անօրէնութիւն ոչ գործեաց եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա** (ԾԳ 9)- Նախ այն է, որ ասաց. «Ես յաղթեցի աշխարհի» (Յովի. ԺԶ 33), եւ զի<sup>1290</sup> ոչ ուրացաւ, թէ չեն Աստուած, յորժամ հարցանէին: Դարձեալ ոչ առնել անօրէնութիւն եւ ոչ յանցանել բանիւ այլ ումեք ոչ վայել է, բայց միայն՝ Քրիստոսի: «Չի թէ միօրեայ է կեանք մարդոյ՝ անհնար է առանց մեղաց լինել (Հմմտ. Յովբ. ԺԳ 4), ասէ Յոբ: Եւ Սիրաքն<sup>1291</sup> ասէ՝ «Չիք որ, որ ոչ գայթակղեսցի լեզուաւ» (Հմմտ. Սիր. Ի 20): Եւ<sup>1292</sup> որպէս աստ զգործոցն եւ զբանիցն ասէ եւ այլոր՝ զմտացն ասաց. Անդ, ուր ասէ մինչ չեւ ախորժեալ իցէ մանկանն զբարի կամ զչար, անարգեսցէ զչարն եւ ընտրեսցէ զբարին. զի մտացն ընտրելն: Դարձեալ ոչ ինչ էանց յօրէնսն. ո՛չ գործով եւ ո՛չ բանիւ յայտ է, եւ<sup>1293</sup> ոչ խորհրդով, այլ զամենայնսն կատարեաց եւ զի ամենեւիմբ անմեղ էր, վասն այն մահն նորա պատիժ լինէր իւր յանցանացն: Ամենայն ումեք ի մարդկանէ եւ ոչ կարէր արդարացուցանել զմեզ բաց ի Քրիստոսէ, որ անպարտ մահուն իւրով զմեզ արդարացոյց:

**Եւ Տէր կամի սրբել զնա ի վիրաց անտի** (ԾԳ 10).

Աստ զառանց ապականութեան յարութիւն<sup>1294</sup> նշանակէ, որպէս վերոյ ասացաւ, թէ՛ **բառնան յերկրէ կեանք նորա** (8), եւ զի անապական մարմնով յարեաւ, ասէ մարգարէս. **Սրբեաց**<sup>1295</sup> **զնա Տէր ի վիրացն:** Եւ զի ի գերեզմանին անապական էր մարմինն (տե՛ս Գործ. Բ 31), որպէս ասէ Դաւիթ: Եւ նախ քան զիսաչն անապական էր մարմինն, յիւնքն<sup>1296</sup> վկայէ

\*\* Տե՛ս ՄՄ ձեռ- 1500, թ- 828ա - 831ա:

յետ յարութեան՝ ասելով. «Շօշափեցէք զԻս եւ տեսէք» (Ղկ. ԻԳ 39). այսինքն՝ ոչ փոփոխեալ: Եւ ուստի՞ լինէր ապականութիւն, զի ոչ ի սերմանէ, այլ՝ ի մաքրեալ յարեմէ Կուսին գոյացեալ խառնեցաւ ընդ Բանին մարմինն: Դարձեալ Քրիստոս զլուխ է անդամոցս եկեղեցւոյ, իսկ մեր անդամք վիրաւորեալ յոտից մինչեւ ցզլուխ: Եւ զլուխն մեր առնոյր զգայութիւն ցաւոցս<sup>1297</sup>: Իսկ յորժամ վիրօք իւրովք բժշկեաց զմեզ. ըստ այնմ. թէ՛

**Նորա վիրօքն բժշկեցաք**, յայնժամ եւ Ինքն բժշկեցաւ ի ցաւոցս, որ վասն անդամոցս ունէր: **Եթէ տաջիք զվասն մեղացն՝ անձինք ձեր տեսցեն զաւակս երկայնակեացս** (ԾԳ 10ա)- Ասաց թէ վրէժս տալոց են նոքա<sup>1298</sup>, որպէս ասէ. **Տաց զչարս փոխանակ գերեզմանի** (ԾԳ 9): Այժմ ասէ, թէ գոյ հնար անցանելոյ պատժին, թէ կամեսցին: Եւ զի՞նչ տացեն. ո՛չ արծաթ, ո՛չ ոսկի, այլ թէ՛ հաւատացէք միայն եւ քաւեսցին մեղք ձեր: Դարձեալ յօրէնսն հրամայեաց Աստուած. «Թէ որ յանցանիցէ<sup>1299</sup> ականայ, առցէ ոչխար եւ դիցէ մեղուցեալն զձեռն ի վերայ գլխոյ նորա, եւ խոստովան լիցի զմեղս իւր: Եւ զայն սպանցէ քահանան եւ զարիւն ցանեսցէ առաջի Տեառն եւ քաւեսցին մեղքն» (Ղեւտ Գ 22-26): Այս օրինակ էր Տեառն մերոյ, որ եղև մարմնակից եւ եղբայր մեր եւ վասն մեր մեղացս պատարագելով ընծայեաց զարիւնն առաջի Հօր եւ քաւեսց<sup>1300</sup> զմեղս մեր: Արդ, եթէ պատարագի նա վասն մեր, որպէս ես տեսի իմանալի աչօք եւ դուք տեսանէք նովաւ փրկեալս զձեզ: Եւ **երկայնակեաց՝** ի մշտնջենաւոր կեանսն:

**Եւ կամի Տէր ի ձեռն նորա բառնալ ի ցաւոց անձին նորա** (ԾԳ 10բ): Չայս ոմանք ի յարութիւն մեկնեն եւ ոմանք՝ ի ժողովորդն, որ թեւօք նախախնամական բժշկեաց, ըստ<sup>1301</sup> այնմ «Բժշկութիւն է ի թեւս նորա» (Մաղաք- Գ 2), զոր ոչ միայն բժշկեաց<sup>1302</sup> այլ եւ աստուածգիտութեամբ լուսաւորեաց: Իմանալի արեզակն այն, որ «լոյս եկն յաշխարհ» (Յովհ. ԺԲ 46), զի<sup>1303</sup> որպէս ասէ. **ցուցանել նմա լոյս**, յայտ է բժշկելոցն:

**Եւ ստեղծուլ իմաստութեամբ** (ԾԳ 11ա). Կարելի է խոցեալ էր, եւ սպեղանեօք ոչ բժշկէր, վասն որոյ նոր ստեղծագործեաց<sup>1304</sup> եւ զի՞նչ<sup>1305</sup> իցէ **իմաստութեամբ ստեղծնուլ**, այսինքն՝ զի կաւագործք եւ ոսկեգործք զառաջին ձեռն ապականեն եւ ապա զերկրորդ կազմեն: Իսկ Տէր մեր ոչ այսպէս, այլ ամենասքանչ իմաստութեամբ զառաջին կերպարան անապական պահելով նոր ստեղծագործեաց<sup>1306</sup>, այսինքն՝ աւագանին աստուածագործ նորոզմամբ:

**Արդարացուցանել զարդարն** (ԾԳ 11բ)- Եւ զի արդար եւ անմեղ էր, վասն այն ոչ ասէ, թէ՛ **արդարացուցանել** զնա, այլ թէ՛ **զարդարն**, այսինքն՝ յայտնի ցուցանել, թէ Ինքն արդար է եւ վասն այլոց մեղաց մեռանի<sup>1307</sup>:

**Որ մտադիւրն ծառայեաց բազմաց** (ԾԳ 11գ):

Որպէս ասէր. «Ես եմ ի միջի ձերում իբրեւ սպասաւոր մի»:

**Եւ զմեղս նոցա նա վերացուցէ** (ԾԳ 11դ): Այսինքն՝ բարձցէ, որպէս ասէր Յովհաննէս. «Սա է զառն Աստուծոյ» (Յովհ. Ա 29): Յայտ է ի ձեռն մաքրութեան ջրոյն:

**Վասն այսորիկ ժառանգեսցէ զբազումս** (ԾԳ 12ա): Ժառանգութիւն սեպհական ստացուածն է. եւ սեպհական ստացուած Տեառն մերոյ մարդս է. նախ՝ ըստ արարչութեան, երկրորդ՝ նախախնամութեամբն, երրորդ՝ աւագանին ծննդեամբն, չորրորդ՝ գնելով արեամբն: Ապա յայտ է, թէ չենք անձանց տեսրք. «Գնոց գնեցաք» (Ա Կորնթ. Զ 20):

**Եւ զաւարն հզօրաց բաշխեսցէ** (ԾԳ 12բ). Այն է, որ ել ի բարձունս խաչելութեան եւ կապեաց զհզօրն սատանայ, որ հզօրացեալ էր խաբէութեամբ մարդկան եւ գերեաց զգերութիւն ի նմանէ եւ ետ պարգեւս մարդկան, որպէս ասէ մարգարէն Դաւիթ (տե՛ս Սղմ. ԿԷ 19): Զնոյն երկրորդէ Պօղոս (տե՛ս Եփես. Դ 8): Դարձեալ հզօրք էին առաքեալքն, որ զօրացեալք եղեն ի Քրիստոսէ: Բաշխեսցաւ աւար նոցա զմարդկայինս ազգ, ումենմ՝ զհրէայքս<sup>1308</sup>, եւ ումենմ՝ զհեթանոսս եւ այլոցն: Նոյնպէս՝

**Փոխանակ զի ի մահ մատնեցաւ անձն նորա եւ ընդ անօրէնս համարեցաւ** (ԾԳ 12գ): Նախ ցուցանէ, թէ արդար էր, յորժամ **համարելով է ընդ անօրէնս**: Երկրորդ՝ այն է, որ ասէին. «Թէ չէր չարագործ այրն այն՝ ոչ մատնեաք զնա<sup>1309</sup> (Յովհ. ԺԸ 30): Երրորդ՝ զի ընդ աւագակսն խաչեցաւ, որպէս այլք ասեն, թէ վնասակարս թուեցաւ:

**Եւ նա զմեղս բազմաց վերացոյց, եւ վասն անօրէնութեանց նոցա մատնեցաւ** (ԾԳ 12): Ստե՛յ կրկնէ, թէ վասն այլոց մեղաց պատժեցաւ, զի Ինքն անմեղ էր, իսկ **վերացոյց եւ վերացուցէ** ասելն նշանակէ ի ձեռն Խաչին զվերացումն մեղաց, զի Խաչն է լուծումն մեղաց, ըստ այնմ. «Որ կայր մեզ հակառակ, եբարձ զայն ի միջոյ եւ բեւեռեաց» (Կողոս. Բ 14):

Զայսքան մեծ շնորհս աստուածային տեսեալ մարգարէս, ձայնէ բարբառ ուրախութեան յեկեղեցիս հեթանոսաց.

**- ԽԹ -**

**Ուրախ լեր, ամուլ** (ԾԳ 1ա), որ յաւորցն աշտարակի մինչեւ ցայժմ ոչ ծնար: **Ամուլ** էին հեթանոսքն, զի յօրինացն եւ ի մարգարէիցն օտարք էին, որք զսերմն բանին արկանէին ի սիրտս մարդկան: Դարձեալ ամուլ էր յառաքիւնութեանց եւ անպտուղ ի բարեաց: Իսկ այժմ՝ արքայուհի եւ բազմորդի:

**Զի բազում եղեն որդիք այրոյդ, այս է՝ սկնդկիդ** (ԾԳ 1բ), զի բազմացան քան զթիւ ծնունդքն սուրբ աւագանին:

**Եւ քան զորդիս արամբոյն, այսինքն՝ ժողովրդեանն ծննդկանի յելիցն Եգիպտոսի եւ այսր:**

**Ընդարձակեալ գտելի խորանի քո** (ԾԳ 2ա)-

Զեկեղեցի ասէ, որ ի ձեռս առաքելոցն յամենայն տեղիս<sup>1310</sup> շինեցաւ ի վերայ հաստատուն վիմին Քրիստոսի: Զի ի բազմանալ ժողովրդեանն պարտ էր եւ բազմանալ<sup>1311</sup>

կաթողիկե եկեղեցւոյ: Իսկ փեղկ սրահիցն է, որ ի ձեռս եւթանասուն եւ երկու աշակերտացն յամենայն տեղս տարածեցաւ:

**Երկայնեա զապաւանդակս քո** (ԾԳ- 2բ), որ է լար եւ չուան խորանին, որ է սիրոյն հաստատութիւն:

**Հաստատեա**<sup>1312</sup> **զցիցս քո**, որ են վարդապետք:

**Յաջ**<sup>1313</sup> **եւ յահեակ թռուսջիր** (ԾԳ- 3ա)- Այսինքն՝ նախ ի հրեայքն<sup>1314</sup>, զի աջ եւ զիտունք էին օրինացն. Եւ **յահեակ**՝ հեթանոսք, զի<sup>1315</sup> տգէտքն: Դարձեալ **աջ** է արեւելք աշխարհի, ուստի լոյսն ծագէ եւ **ահեակ**՝ արեւմուտք, որ է խոր խաւար, ուստի յայտ է, թէ ի չորս կողմ աշխարհիս ասէ:

## Ծ

**Չաւակք**<sup>1316</sup> **քո զհեթանոսս ժառանգեսցեն**<sup>1317</sup> (ԾԳ- 3բ): Այսինքն՝ առաքեալքն եւ հետեւողք նոցին հայրապետք եւ վարդապետք:

**Չքաղաքս ւաւերեալս շինեսցես** (ԾԳ- 3գ)- Այսինքն՝ մարդոյս բնութիւն, զի ւաւերեալ էր իբր ի գործոց:

**Ահաւասիկ պատրաստեմ կարկեհան զքարինս քո եւ զհիմունս քո շափիղա** եւ այլն (ԾԳ- 11): Բանս այս զգալապէս ոչ յարմարի ի վերայ Երուսաղէմի, զի զի՞նչ օգուտ էր այնպիսի արեամբք շինել զքաղաքն: Այլ եւ ոչ ի հանդերձեալ ատուրն յարմարի ի վերայ քաղաքին, որոյ ճարտարապետ Աստուած է: Ձի զի՞նչ օգուտ է յարութենէն, թէ դարձեալ յայսպիսի մարմնաւոր կեանս դառնալոյ ենք: Այլ ասէ զայս, զի յորդորեսցէ զնոսա ելանել ի գերութենէն: Եւ դարձեալ, որպէս այն, որ ասէ մարգարէն Դաւիթ: «Թեք աղանոյ արծաթապատ» (Սղմ. ԿԷ 14): Ոչ եթէ այնպիսի աղանի ետես ոք, այլ այնու զբարութիւն, որ լինելոց էր ի մէջ եկեղեցւոյ. յիջմանէ Հոգւոյն Սրբոյ նշանակէ: Նոյնպէս եւ աստանօր զհոգեւոր արս, որ լինելոց էր ի մէջ եկեղեցւոյ, կանխադրոշմէ:

**Արկանեմ զհիմունս քո շափիղա.** որ է Տէր մեր Վէմ ընտիր, հիմն եւ զլուխ անկեան եկեղեցւոյ: Ըստ այնմ. «Հիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս» (Ա Կորնթ. Գ 11), զոր եղ Հայր Աստուած առաքմամբ եւ մարգարէքն՝ նախագուշակութեամբ:

**Եւ կանգնեցից զաշտարակս քո յասպիսի** (ԾԳ- 12ա)-

Չամբութիւն եկեղեցւոյ նշանակէ, զի որպէս պարսպին ամբութիւն բրգունքն են, նոյնպէս եւ եկեղեցւոյ՝ առաքեալքն, եւ մարգարէքն, զորս եղ Աստուած յեկեղեցւոջ, որպէս ասէ Պօղոս. «Եւ նոքա պատուականք են<sup>1318</sup> քան զականս պատուականս» (Հմմտ. Ա Կորնթ. Գ 12):

**Եւ դրունս քո յականց վանեայց** (ԾԳ- 12բ)- **Դրուն** է Տէր մեր, որպէս ասաց. «Ես եմ դրուն» (Յովհ. Ժ 9), զի հաւատացեալս փակէ, ըստ իմաստուն եւ յիմար կուսանաց, որպէս

ասէ. «Որ հնազանդի Որդոյ՝ տեսցէ զկեանս եւ որ ոչ հնազանդի՝ ոչ տեսցէ զկեանս, այլ՝ քարկութիւն Աստուծոյ մնա» (Յովհ. Գ 36):

**Եւ ամից շուրջ զքեւ պարիսպ յընտիր ընտիր ականց պատուականաց** (ԾԴ 12)- Պարիսպ՝ շրջափակ եկեղեցւոյ, եւ բազմութիւնք մարտիրոսաց եւ համօրէն ընտրելոցն, որք օրինակ եւն աշխատի պատուական ականց վասն բազում պատճառի: Նախ՝ զի որպէս ակունքս այս զանազան զօրութիւնս ունին, այսպէս եւ դասք առաքելոց սրբոցն՝ զանազան առաքիւնութիւնս, այսինքն՝ ոմանք խոհեմութիւն, այլք՝ արիութիւն, կէսք՝ ողջախոհութիւն, այլք՝ պահոց պնդութիւն, ոմանք մարտիրոսական չարչարանս եւ այլն: Չորոց ասէ Պօղոս ի Հռովմայեցոց քրթին- «Ոմն օրհնէ օր ըստ օրէ եւ ոմն՝ զօրհանապագ» (Հռովմ. ԺԴ 5), եւ դարձեալ ասէ յԵբրայեցոցն- «Կէսք կոշկոճեցան, քարկոծեցան» (Եբր. ԺԱ 35) եւ այլն: Երկրորդ՝ զի ազգի ազգի եւն որակ զունոյն, նոյնպէս եւ նոքա ազգի ազգի<sup>1319</sup> շնորհօք, որպէս թուէ առաքելոցն<sup>1320</sup> «Ումեմն ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան» (Ա Կորնթ. ԺԲ 8) եւ այլն: Երրորդ՝ զի ակունքն կարծրագոյն եւն հաստատեալ, այսպէս եւ նոքա ժուժկալք եւն ի համբերութիւնս վասն Քրիստոսի, որպէս ասէ առաքեալն. «Ո՞ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի. ոչ նեղութիւն» ( Հռովմ. Ը 35) եւ այլն: Չորրորդ՝ զի թէ որ մասնաւորէ զնոսա՝ դեռ եւս զնոյն ազգումն ունին եւ զպատիւ, նոյնպէս եւ նշխարք, սրբոցն իւրաքանչիւր մասունքն զնոյն կատարեն զօրութիւն, որպէս բոլորն կենդանի գոլով. ուստի՞ յայտ է. զի<sup>1321</sup> ոսկերք Եղիսէի զմեռեալն կենդանացոյց (տե՛ս Դ Թագ. ԺԳ 21)<sup>1322</sup> եւ այլքն զդէս հալածին եւ զազգի ազգի ցաւս բժշկեն: Հինգերորդ՝ պայծառանան լուսով եւ լուսաւորեն զայլս վասն առաւել պարգութեան: Նոյնպէս եւ սուրբքն վասն առաւել պայծառութեան իրեանց ընդունին զծագումն շնորհացն Աստուծոյ եւ սփռեն յայլս, ի դէմս որոց ասէ Տէրն. «Դուք էք լոյս աշխարհի» (Մտթ. Ե 14), եւ թէ՛ «Դնելով զձեռս՝ տային<sup>1323</sup> զՀոգին Սուրբ» (տե՛ս Գործք Ը 18): Վեցերորդ՝ զի որպէս ակն ի վաղուց ծածկեալ է ի սիրտ երկրի, թէպէտ յետոյ երեւի: Նոյնպէս եւ վասն սրբոց ասէ առաքեալն. «Յառաջ քան զլինել աշխարհի ընտրեաց զմեզ» (Եփես. Ա 4), այսինքն է՝ զի նախածանօք ընտրութեամբ եւն ի զիտութիւն Աստուծոյ, թէպէտ յետոյ իւրաքանչիւր ժամանակս երեւին: Եւթներորդ՝ զի ակն ունի բնական զանազանութիւն, այլ ի ձեռն ճարտարաց առաւել գեղեցկանան: Նոյնպէս եւ սուրբքն ունին զանազանութիւն հաւատոյն յինքեանս, այլ ի ձեռն չարչարանաց առաւելու պսակ փոխարինացն, զոր օրինակ սուրբն Ստեփանոս ունէր միայն զաշակերտութեան պատիւ, այլ քարկոծմամբն եւ զմարտիրոսականն ընկալաւ զպսակն: Նոյնպէս եւ այլքն: Վասն որոյ ասէ առաքեալ. «Բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել զայն հանգիստն» (Եբր. Դ 11): Ութերորդ՝ զի ակունքն այնոքիկ անպատիւ եւն յաչս սոգիտաց, նոյնպէս եւ սուրբքն ոչ միայն անպատիւք, այլ եւ ատելիք եւն աշխարհասիրացն, որպէս ասէ Տէրն. «Եթէ աշխարհ զձեզ ատեաց, զիտասօշիք, զի նախ զԻս ատեաց, զի աշխարհն զիրն սիրէ»

(Յովհ. ԺԵ 18) եւ այլն: Եւ դարձեալ, թէ՛ «Եղիջիք ատեցեալք յամ[ենայն ազգաց վասն անուան Իմոյ]». եթէ «որ սպանիցէ զձեզ» (Մտթ. ԻԴ 9): Իններորդ՝ որպէս պատուական ակունքն հրով կամ ազդմամբ որոշին յայլոցն, որք նման գունով եւ ձեւով, նոյնպէս եւ իսկապէս սուրբքն ի կեղծաորացն զանազանին կամ ի ձեռն սքանչելեացն կամ համբերութեամբ փորձանացն, որք անշարժ մնան՝ շինեալք ի վերայ հաստատուն վիմին, իսկ կեղծաորքն կործանին, ըստ այնմ. «Իջին անձրեւք եւ յարեան գետք» (Մտթ. Է 25) եւ այլն, եւ առաքեալ ասէ. «Որ շինէ ի վերայ հիմունս այս ոսկի արծաթ, ականս պատուականս օրն ընտրեսցէ» (Ա Կորնթ. Գ 12-13) եւ այլն: Տասներորդ՝ զի ակն<sup>1324</sup> առաւել ծածուկ պահի, եւ յորժամ յայտնի՝ պատուական նիւթով գեղեցկապէս շքեղասցի, որպէս ի թագ կամ յայլսն: Նոյնպէս եւ այժմ սուրբքն անդրժեյի ի չարեաց պահպանին, եւ յորժամ յայտնեսցին թագակիցք ընդ Քրիստոսի Աստուծոյ<sup>1325</sup> պայծառապէս երեւեսցին, եւ կացցեն բազում համարձակութեամբ ընդդէմ<sup>1326</sup> նեղչաց իրոց, որպէս ասէ յԱռակսն (տե՛ս Իմաստ. Ե 1):

**Որք մի անգամ ոչ ունիք արծաթ, երթայք գնեցէք առանց արծաթոյ (ԾԵ 1):**

Ըստ ճառին զլիութիւն նշանակէ, զի յամենայն կողմանց առատութիւն լինէր, մինչ զի ոչ գնէին միս եւ զինի արծաթով: Իսկ առ ճշմարտութիւն՝ որք ոչ ունիք արծաթ, այսինքն՝ զԲանն Աստուծոյ, եւ տգէտք էք՝ **երթայք գնեցէք առանց արծաթոյ**, այսինքն՝ առաքինութեամբ, որպէս դասք ձկնորսացն ընկալան գպարգես ի Հոգւոյն:

**Եւ զճարպն բնաւ ընդէ՞ր<sup>1327</sup> գնէք արծաթոյ եւ ոչ հացի (ԾԵ 2):** Ըստ ճառին զլիութիւն նշանակէ, զի ոչխարաբոյծքն սովոր են վաճառել զմիս եւ զճրագու եւ առնուլ հաց ոչ վասն աղքատութեան, այլ զի ոչ պարապին գործել զհաց՝ ի դարմանս խաշանց գոլով: Իսկ հոգեւորապէս **ճարպն** զօծումն շնորհաց նշանակէ, որ ոչ գնի ապականացու արծաթով, այլ հացին, որ էջ<sup>1328</sup> յերկնից, որ է Բանն Աստուած, յոր հաւատալով ընդունիմք զշնորհս Հոգւոյն: Ուստի յայտ է, զի ի ժամ մկրտութեան նախ խոստովանիմք զդաւանութիւն եւ ապա մկրտիմք:

**Վաստակն ձեր ոչ ի յագուրդ, այսինքն՝ վաստակք հրէիցն եւ հեթանոսաց, որք ընդ կռոցն կային<sup>1329</sup>, չէին ի յագումն:** Նոյնպէս եւ ամենայն անօրէն շատ տառապի եւ ջանայ յաշխատանս եւ նուազեալ լինի անօրէնութեամբ ժողովեալն: Վասն որոյ Անգէաս<sup>1330</sup> մարգարէն ասէ. «Արկանէիք յամանս ձեր քսան քոռ գարոյ եւ լինէր տասն քոռ» (Անգ. Բ 17):

**Եղից ընդ ձեզ ուխտ յաւիտենից զսրբութիւնսն Դաւթի զհաւատարիմս իմ (ԾԵ 3)-** Այսինքն՝ թէ՛ որպէս նորա խոստմունքն ճշմարիտ եղեն «Ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա» (Գործք Բ 30), նոյնպէս եւ ձերն հաստատուն լիցի: Իսկ **սրբութիւն<sup>1331</sup>** Դաւթի է ուղիղ կարգն, բարեկեցութիւնքն, յաջողութիւնքն: Իսկ այլք

գողորմութիւնսն Դաւթի ասէն: Դարձեալ **սրբութիւն** զիշխանութիւն ասէ, որ հաստատուն եկաց: Բայց ինձ թուի, թէ սրբութիւն Դաւթի գՔրիստոս ասէ, որ «Ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա» (Հմմտ. Սղմ. ՃԼԱ 11), զոր ոչ միայն Դաւթի, այլ եւ ամենայն աշխարհի սրբութիւն եղեւ<sup>1332</sup>:

## ԾԱ

**Խնդրեցէք զՏէր եւ յորժամ գտանիցէք զնա, կարդացէք առ նա** (ԾԵ 6): Նախ զայն ասէ, թէ **խնդրել** եւ **գտանել** եւ **կարդալ** ոչ միայն զլոկ ճանաչումն ասէ եւ զսոսկ բանի կարդալն, այլ պարկեշտ եւ ուղիղ վարուք ճանաչեսցեն զԱստուած: Զի «ոչ ամենայն, որ ասէ ցԻս Տէր Տէր մտցէ յարքայութիւն, այլ՝ որ արասցէ զկամս Հօր իմոյ» (Մտթ. Է 21): Դարձեալ մարգարէս զհեղգութիւն հրէիցն զարթուցանէ. **խնդրէք զՏէր**, այսինքն՝ ակնկալէք զալուստն յաշխարհս<sup>1333</sup> եւ **յորժամ գտանիցէք** մարմնով եկեալ հաւատացէք ի նա՝ **կարդալով** զնա Աստուած: Եւ որք այսմ հրամանի ունկնդիր եղեն՝ **գտին** գՔրիստոս, որպէս առաքեալքն Անդրեաս եւ Փիլիպպոս ասէին, թէ՛ «գտաք զՄեսիս» (Յովհ. Ա 41), եւ թէ՛ «Զորմէ գրեաց Մովսէս եւ մարգարէքն՝ գտաք զՅիսուս ի Նազարեթ» (Յովհ. Ա 45): Եւ իբրեւ **գտին**, ոչ միայն կարդացին<sup>1334</sup> բանի, այլ թողին զամենայն եւ զնացին զհետ նորա<sup>1335</sup>:

**Թողէ ամբարիշտն զճանապարհ իւր եւ այր անարէն զխորհուրդս իւր** (ԾԵ 7): **Ճանապարհք** գործքն է եւ **խորհուրդ**՝ արմատ մեղացն, զորս պարտ է զարմատն եւ զառաջ եկեալսն կորզել<sup>1336</sup>: Դարձեալ գործով զմարմին եւ **խորհրդով** զհոգին խրատէ սրբել: Զի յորժամ իշխան՝ հոգին առողջ լինի, յայնժամ եւ նոքա, որ ընդ իշխանութեամբ են՝ բանն եւ խորհուրդն, առողջ լինին: Որպէս ասէ ոմն ընդ իշխանի քաղաքի եւ պաշտօնեայք նորա<sup>\*</sup>, եւ այս ոչ միայն առ քաղաքս, այլ եւ՝ առ մեր խորհուրդս:

## ԾԲ

**Այսպէս ասէ Տէր. զգոյշ կացէք իրաւանց եւ գործեցէք զարդարութիւն** (ԾԶ 1): Զգուշութիւն յամենայն իրս պիտանացու է, մանաւանդ՝ ի պատուիրան Աստուծոյ. այս է՝ զի արդար իրաւամբք ուղղապէս ընտրեսցէն եւ կատարեսցեն: Վասն երեք պատճառի խրատէ զգուշանալ: Նախ՝ զի<sup>1337</sup> յորժամ կամի ապրեցուցանել ի պատժոց՝ զլսողսն խրատէ, զի զգուշացին եւ խափանեսցի պատիժն, որպէս մինուէացոցն (տե՛ս Յովնան Գ): Երկրորդ՝ զի յորժամ կամի բարի առնել՝ խրատէ, զի մի՛ ծուլացեալք մերժեսցեն զբարիսն, զի թէպէտ մարդասէր է Աստուած, այլ արժանաւորացն տայ զբարին եւ<sup>1338</sup> գողորմութիւն, որպէս ասէր առ Մովսէս- «Ողորմեցայց, որում ողորմեցայց եւ գթացայց յոր գթացայց ( Ելք ԼԳ 19): Երրորդ՝ զգուշացուցանէ, զի մի՛ ի դիւրութիւնսն զերախտիսն<sup>1251</sup> մոռացին, եւ զպարզելքն

\* [Յովհաննէս Երզնկացի, Թուրք առ իշխանս Եկեղեցաց զաւառի], տե՛ս Է. Մ. Բաղդասարյան, Յովհաննէս Երզնկացին և նրա խրատական արձակը, Եր., 1977, էջ 209, տող 26-30:



Աստուծոյ<sup>1340</sup> ծուլութեան պատճառ առնուցուն, ըստ այնմ թէ՛ «Գիրացաւ, ստուարացաւ եւ լայնացաւ եւ եթող զՏէր Աստուած զԱրարիչ իւր» (ԲՕ Օր. ԼԲ 15):

**Չի եկեալ հասեալ է փրկութիւն իմ** (ԾՁ 1)- Այսինքն՝ մերձ է եւ ոչ հեռի:

**Եւ յայտնելոց է ողորմութիւն իմ:** Տե՛ս, ոչ ասաց, թէ՛ լինելոց է, զի ցուցէ, թէ ողորմութիւն Իմ հանապազ<sup>1341</sup> եւ պատրաստ կայ: Եւ դուք ծածկէք բազմութեամբ մեղաց ձերոց ըստ այնմ. **Մեղք իմ որոշեն ի մէջ իմ եւ ձեր** (ԾԹ 2ա):

**Երանի է մարդոյ, որ պահիցէ զշաբաթս իմ** (ԾՁ 2բ): Մին ի Տասնաբանեան օրինացն է պահպանութիւն շաբաթուն: Եւ թէ որպէս պարտ էր<sup>1342</sup> պահել, յայտ է<sup>1343</sup> օրինաց անտի, որ յոյժ պնդութեամբ հրամայեաց՝ մի՛ ինչ գործել բնաւ զմարմնաւորական իրս. ոչ ի վաճառ, ոչ ի ճանապարհ եւ յայլսն, բայց ի յոյժ կարեւորացն, եւ այսու զառ ի չարեաց դատարկանալն օրինադրեր: Չի թէ զամենայն աւուրս այնպէս դատարակ լինէր ի մեղաց, որպէս հրեայքն ի գործոց յաւուր շաբաթու, չէր ինչ պակաս ի հրեշտակաց մարդկան բնութիւնս: Չի երթներորդ աւուր շաբաթուն եւ յետ եւթն շաբաթուց զկնի զատկին, տօն տուչութեան եւ յերթներորդ ամսեան կարգեալ տօնքն քաւութեան: Նշանակք էին յաւիտենական<sup>1344</sup> հանգստեան յետ եւթն դարուց կենցաղոյս: Չի թէպէտ ի հարկէ էր, սակայն կապէր զձեռս նոցա օրէնքն, զի մի՛ կամաւ եւ ակամա մեղանչիցեն, որպէս ասէ.

**Եւ պահիցէ<sup>1345</sup> զձեռս իւր յառնելոյ զանօրէնութիւն** (ԾՁ 2գ): Ի բազում իրս պիտանացու է **ձեռք**, այսինքն՝ ի տուր եւ առ, գործել եւ պահել, հարկանել եւ բժշկել, սրբել եւ սպասարկել: Արդ, տուր եւ առ, որպէս ի վաճառս զմերն տամք եւ յայլմէ առնումք, կամ աղերս մեծաց եւ պարգեւս շնորհաց: Այլ եւ սովաւ գործենք զամենայն արուեստս եւ պահպանենք զամենայն անդամս: Սովաւ հարեալ խոցենք զթշնամիս, սովաւ բժշկենք զվէրս, սայ սրբէ զամենայն աղտս<sup>1346</sup> եւ սպասէ ի պէտս կենաց, այլ եւ սպասաւոր է բանի՛ շարժելով զրչով և թուլով<sup>1347</sup>: Սոքա եւ այլ սոյնպիսիք մարմնականք: Նոյնպէս եւ ի<sup>1348</sup> հոգեւորքն<sup>1349</sup> պիտոյանան<sup>1350</sup> Աստուծոյ: Որպէս եւ անդ տուր եւ առ ի վաճառն, նոյնպէս<sup>1351</sup> եւ աստ ողորմութեանն վաճառն, զի ողորմութեամբ ստանամք ողորմութիւն, որպէս ասէ. «Ողորմածք զողորմութիւն զտցեն» (Առակ. ԺԷ 5): Այլ եւ տարածմամբ ձեռաց աղերսենք Աստուծոյ զաղօթս, եւ առնումք զպարգեւս խնդրոյն, ըստ այնմ. «Համբարձումն ձեռաց իմոց<sup>1352</sup> պատարագ երեկոյի» ( Մղմ. ԴԽ 2), եւ Սողոմոն ասէ, թէ՛ Համբարձցեն զձեռս իւրեանց ի վերայ նոցա: Դու լուիցես նոցա եւ կատարեսցես զհայցումն: Նա եւ որպէս ըստ մարմնոյ զամենայն ինչ ձեռօք գործեալ ենք<sup>1353</sup>: Նոյնպէս եւ հոգեւորն. զձնունդն սուրբ աւագանիւն ձեռօք կատարենք, եւ զբաշխումն մարմնոյ եւ արեան եւ զամենայն շնորհս, որպէս ասէ ձեռն դնէին առաքեալք եւ առնուին Հոգի Սուրբ, վասն որոյ մեք զաջ քահանային համբուրենք, եւ ոչ՝ զգլուխն, զի ամենայն ինչ ձեռացն հաստատեցաւ, եւ որպէս ձեռօք պահենք զամենայն անդամս մարմնոյ, սոյնպէս եւ ձեռօք կնքենք եւ

պահպանենք զամենայն զգայարանս, զհոգի եւ զմարմին զօթեանս եւ զայլն, ըստ այնմ որ խաչանիշ դրոշմամբ ասենք. «Դիր Տէր պահպանութիւն [բերանոյ]» (Մղմ. ՃԽ 3)\* : Այլ եւ<sup>1354</sup> տարածմամբ ձեռացն հարկանենք զթշնամին մեր զսատանայ, զի աղօթք սրբոցն խոցոտիչ<sup>1355</sup> է դիւաց, որպէս տարածմամբ ձեռաց Մովսէսի ի կոտորումն Ամադեկի (տե՛ս Ելք ԺԷ 8-16): Եւ տարածեաց զԵզեկիայ զձեռս իւր, եւ սատակեցաւ զօրքն ասորոց (տե՛ս Բ Թագ. ԺԸ-Ի) յօրինակ սատանայի, որ եւ Տէրն մեր տարածմամբ ձեռացն բեւեռեաց զնա ընդ խաչափայտին<sup>1356</sup>: Այլ եւ ձեռօք լինի բժշկութիւն հոգեւոր եւ մարմնաւոր, որպէս Տէր ձգեաց զձեռն Իւր եւ հասոյց ի բորոտն եւ ի կոյրն, որ եւ ընդ մարմնոյն բժշկեաց եւ լուսաւորեաց զհոգիս նոցա, որ եւ ձեռս դնելով առաքեալքն բժշկէին զամենայն ցաւս: Մինչ զի եւ այժմ քահանայք<sup>1357</sup> առնեն զնոյն: Այլ եւ ձեռօք կատարի ամենայն սրբութիւն առ մեզ եւ առ այլսն, որպէս բախելով զկուրծսն եւ օծմամբ հոգեւոր, խաչանիշ դրոշմամբ սրբելով զանօթս ինչ եւ զկերակուրս, եւ որպէս անդ սպասաւորէ բանի եւ աստ, որպէս այժմ տամք զխաղաղութիւն եւ կնքենք ի վերայ ժողովրդեան, եւ յիշելով զՀոգին Սուրբ խաչակնքենք յերեսս, զի խաչին պարգեւեցաւ Հոգին Սուրբ ազգի մարդկան ընդ աղօթելն<sup>1358</sup> եւ ընդ գոհանալն համբարձումն ձեռաց. գոհացողական եւ մաղթողական եւ այլն: Եւ զհարաքանչիւր գործս բարեաց անջինջ յիշատակաւ գրենք ի կենաց դպրութիւն: Վասն որոյ ասէ մարգարէս. **Միւսն զիր հանցէ ձեռամբն իւրով** (ԽԴ 5): Արդ, այսպէս եւ այլ<sup>1359</sup> սոյնայիսիք բարիոք հոգեւոր եւ մարմնաւոր ի ձեռաց ներգործի: Նա եւ բազում չարիք ի սմանէ զան յառաջ, որպէս գողութիւնք, սպանութիւնք եւ այլ ինչ ոճրագործութիւնք: Վասն որոյ զգուշացոյց<sup>1360</sup> զձեռն<sup>1361</sup> յառնելոյ զանօրէնութիւն: Չի յինչ եւ իցէ իրս, զոր Աստուած ոչ հրամայէ, չէ պարտ հասուցանել զձեռն, զի անիրաւութիւն է, զոր ցուցաք բազում օրինակաւ, զի թէ նախաստեղծքն զգուշացեալ էին ի ձեռաց՝ ոչ կրէին զպտուղն եւ զրկէին ի կենացն, եւ թէ զգուշացեալ էր Կայէն՝ ոչ սպաննէր զեղբայրն: Եւ յետոյ թէ զգուշացեալ էին ձեռք՝ ոչ շինէին զվաղափուլ ամբարտակն: Եւ թէ զգուշացեալ էր փարաւոն՝ ոչ խեղդէր զմանկունսն<sup>1362</sup> (տե՛ս Ելք Ա): Եւ թէ զգուշացեալ էր Աքար՝ ոչ գողանայր ի նզովիցն Երիքովի (տե՛ս Յեսու Զ 18, Է 1-26, Ա Մնաց. Բ 7): Եւ եթէ զգուշացեալ էր Իսրայէլ ձեռացն՝ ոչ հնազանդէին արեամբ մանկանցն եւ ոչ կանգնէին կուռս եւ ի գերութիւն մատնէին: Նա եւ<sup>1363</sup> յետոյ թէ զգուշացեալ է<sup>1364</sup> ձեռաց ոչ խաչ հանէին զՏէրն փառաց, զիխատեաց Հերովդես զՅովհաննէս եւ ինքն որդնալից սատակեցաւ, եւ մանկակոտորն չարաչար կորեաւ<sup>\*1365</sup>: Եւ ամենայն ոք, որ ոչ պահէ զձեռն իւր յանօրէնութենէ<sup>1366</sup>, նմանապէս չարաչար պատժելոց է: Յաղագս որոյ խրատէ պահեալ զձեռս յազգի ազգի անիրաւութեանց եւ վնասուց:

\*Կանոն դրոշմի- տե՛ս «Մաշտոց», Վաղարշապատ, 1905, էջ 55:

**Մի՛ ասիցէ ներքինին, թէ՛ Ես եմ փայտ չոր** (ԾՁ 3)- Այսինքն՝ արդարն, թէ՛ անպտուղ եմ ես, զոր երանէ Սողոմոն- «Երանեալ է ամուլն անարատ, զոր ոչ զիտաց զանկողինս յանցանաց» (Իմաստ. Գ 13): Որ եւ զհետագայն ասէ. **ցներքինիսն, որ կացցեն յուխտին՝ իմում**<sup>1367</sup> **տաց նոցա ի տան իմ** (ԾՁ 4-5) որ եւ բազում առաւելութիւն տեսանի առաքելոյն, որ ծնանի զհոգեւոր զաւակս, քան զմարմնատրաց: Նախ՝ զի որքան առաւել է հոգի քան զմարմինն, նոյնքան առաւել է զհոգեւոր զաւակն, որ է բարեգործութիւն, քան զմարդ: Երկրորդ՝ զի այն, որ մարմնատր<sup>1368</sup> զաւակն է, ի հարկէ բնութենէ է եւ այս՝ ըստ կամացն, եւ պատուական՝ կամօք ստացեալն քան՝ զհարկին: Երրորդ՝ զաւակ քան ըստ մարմնոյ սակաւք<sup>1369</sup> են եւ հոգեւորք<sup>1370</sup> բազումք: Չի ըստ որքանութեան գործոցն նոյնքան են եւ զաւակքն, որպէս ասէ մարգարէս. «Բազում են որդի սկնդկիքն առաւել քան<sup>1371</sup> զարամբոյն (Գաղատ. Դ 27): Չորրորդ՝ զի ըստ մարմնոյ զաւակք հեռանան ի ծնօղացն ի կեանս կամ ի մահ, եւ այս՝ ոչ երբէք. զի գործքն ընդ կեանս եւ ընդ մահ ներգործութիւն են, որպէս ասէ<sup>1372</sup> Տէրն. «Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ մեկնեսցէ» (Գլկ. Ժ 42): Հինգերորդ՝ զի մարդ անիծէ<sup>1373</sup> զաւակն տրտմութեամբ ծնեալն, եւ սա՝ օրհնութեամբ եւ ուրախութեամբ, ըստ այնմ. «Բնակեցուցանէ զամուլն ի տանու» (Սղմ. ԾԺԲ 9): Յայս միտս ասէ եւ Սողոմոն. «Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր եւ որդի անմիտ տրտմեցուցանէ զմայր» (Առակ. ԺԷ 21)<sup>1374</sup>: Եւ սոյն մարգարէ ասէ. «Ոչ եւս ծնանիցին յորդիս յանձն, զի զաւակ օրհնութեան են նոքա յԱստուծոյ, եւ ծնունդք նոցա ընդ նոսա (Կե 23): Վեցերորդ՝ նա յայսմ աշխարհի աճէ եւ սա՝ ի հանդերձեալն: Վասն որոյ երանէ զայն **որ ունիցի զաւակ ի Սիոն, եւ ընտանեակն՝ յԵրուսաղէմ վերին** (ԼԱ 9): Եւթներորդ՝ զի մարմնատր հարք զորդիս խրատեն: Իսկ հոգեւոր զաւակքն զծնօղսն<sup>1375</sup> խրատեն<sup>1376</sup> եւ ուղղեն: Ութներորդ՝ ծնօղն<sup>1377</sup> մարմնատր պարսաւի վասն չար զաւակացն<sup>1378</sup>, ըստ այնմ՝ **Որդիք պռոնկորդիք** (ԾԷ 3) եւ այլն: Իսկ հոգեւորն գովի եւ բարեբանի վասն բարի գործոցն: Իններորդ՝ զի մինն<sup>1379</sup> մեղք եւ դժոխք պատրաստէ եւ միւսն՝ արքայութիւն: Տասներորդ՝ զի մին ժամանակաւ եւ ջնջել<sup>1380</sup> է յիշատակն եւ միւսն՝ անջինջ եւ յաւիտենական: Որպէս ասէ **Անուն յաւիտենական տաց նոցա եւ մի՛ պակասեսցին** (ԾՁ 5), այսինքն՝ ի կեանս յայս, եւ ի հանդերձեալն:

**Ամենեքեան իբրեւ զշուն համբացեալք, որ ոչ կարիցեն**<sup>1381</sup> **հաչել** (ԾՁ 10): Քան զամենայն անասունսն բարեբարոյ է շունն: Վասն որոյ իմաստունք յունաց յօրինակս առնուն յիմաստնոց ըստ հինգ<sup>1382</sup> կերպից. նախ՝ վասն ընտրութեան, զի որոշեսցէ զընտրանիսն եւ զօտարսն: Նոյնպէս եւ իմաստունքն ընտրեն<sup>1383</sup> զչարսն ի բարեաց: Երկրորդ՝ զի յօտարսն հաչեն<sup>1384</sup>, եւ նոքա ընդդէմ օտարացն հակառակեն: Երրորդ՝ զի տիրասէրք են, մինչ զի թէ ի<sup>1385</sup> սովոյ մեռնին, ոչ թողուն զտեարս իւրեանց, նոյնպէս եւ

\*Տե՛ս «Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինապօլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Սատթես, Գիրք կրկին», Վենետիկ, 1826, էջ 131:

իմաստունքն սիրեն զբարերարս իւրեանց: Չորրորդ՝ զի հոտով զհետս գտանեն, եւ իմաստունքն խոկան զբանս առաջնոցն ասացեալ: Հինգերորդ՝ զի որսականք են, եւ իմաստունքն զգիտութիւնս որսան: Ուղղի եւ սոյնալէս բարքն սորա ի վերայ արդարոցն, որք տիրասէրք են եւ զթշնամին աստանայ ատեն եւ այլն: Նախ ի վերայ վարդապետաց ուղղի, որպէս ասէ Ոսկէբերան ի դէմս առաքելոյն. «Շանդ ասեմ տիրասիրիդ եւ որսկանիդ»: Իսկ հրէայք զընդդէմն արարին Տեառն իւրեանց, կատաղեցին եւ հաչեցին<sup>1386</sup> եւ Սամարացի եւ դիւահար կոչելով (տե՛ս Յովհ. Ը 48), եւ զթշնամին աստանայ սրեցին եւ զկամս նորա կատարեցին: Նոյնալէս եւ ամենայն մեղաւորք առնեն, զբարերարն Աստուած մոռանան եւ ատեն, եւ զաստանայ սիրեն, եւ զհետ կամաց նորա վազեն:

**Տեւե՞ք, զի յերեսաց անիրաւութեան բառնայ արդար, եւ ոչ որ հայի** (ԾԷ 1)- Չայն ասէ, թէ յորժամ մեռանի արդարն ոչ<sup>1387</sup> իմանան մեղաւորք, թէ չարիք գալոց են ի վերայ աշխարհիս: Վասն այնորիկ նա մեռաւ: Մեռանի յառաջ<sup>1388</sup> արդարն, զի մի՛ ընդ մեղաւորացն<sup>1389</sup> պատիժս կրեսցէ, որպէս բարեպաշտն<sup>1390</sup> Յովսիփա մեռաւ, զի մի՛ ի գերութիւն վարեսցի\* : Այլ<sup>1391</sup> մեռանի արդարն, զի մի՛ բարեխօսեսցէ վասն յանցաւորացն, զոր օրինակ ճրագն շիջանի<sup>1392</sup> լոյսն խաւարի: Այլ<sup>1393</sup> եւ մեռանի, զի հանգիցէ յաշխատանացն<sup>1394</sup>: Որպէս ասէ.

**Եղիցի խաղաղութեամբ գերեզման նորա<sup>1395</sup>, զի բարձաւ ի միջոյ** (ԾԷ 2)- Այսինքն է՝ զի արդարոյն մահն եւ կեանքն խաղաղութեամբ է, իսկ մեղաւորաց մահ եւ կեանքն լի են խռովութեամբ<sup>1396</sup>: Որպէս ասէ մարգարէս. **Անօրէնք իբրեւ զծով<sup>1397</sup> ծփեսցին<sup>1398</sup> եւ հանգիստ մի գտցեն<sup>1399</sup>** (ԾԷ 20), եւ «Մահ մեղաւորին չար է» (Սղմ. ԼԳ 22), **զի ոչ գոյ խաղաղութիւն ամբարշտաց** (ԾԷ 20), ասէ:

**Որդիք պոռնկորդիք** (ԾԷ 3), եւ նոցա զի՞նչ է մեղադրութիւն. ծնօղացն պոռնկութիւն, զի «Անձն, որ մեղիցէ նոյն եւ մեռցի» (Գեւտ. Ե 17), ասէ<sup>1400</sup>: Արդ, ասէ զայս վասն երկու պատճառի. առաջին՝ զի պոռնկորդի կոչիլն<sup>1401</sup> անարգութիւն է որչափ եւս<sup>1402</sup> թէ եւ ինքեանք պոռնկեսցին<sup>1403</sup>: Երկրորդ՝ զի յորժամ ինքեանք պոռնկեսցին առաւել ի պատիժս կրեսցեն՝ զիտելով զնախատիսն: Այլ ոմանք ասեն, եթէ կոչէ զնոսա **պոռնկորդիք<sup>1404</sup>**, զի սկզբնական մեղօքն ծնանէին, ըստ այնմ. «Անօրէնութեամբ յղացաւ եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ» (Սղմ. Ծ 7):

**Այսպէս ասէ Բարձրեալն որ բարձունս բնակեալն է յաիտեան** (ԾԷ 15): Ի բանիցս յայս ցուցանի նախ<sup>1405</sup> ամենագորութիւն Աստուծոյ: Երկրորդ՝ մշտնջենաւորութիւն. դարձեալ կարծէին հեթանոսք, թէ ի ներքոյ անտառախիտ ծառից իցեն աստուածք կամ ի խորածորս, ասէ ընդդէմ նոցա, թէ՛ **Բարձրեալն որ ի բարձունս բնակեալ է**: Իսկ Հրէայքն միայն տաճարն կարծէին ասէ թէ՛ **Ի սուրբս հանգուցեալ է**, որ է նորս<sup>1406</sup> եկեղեցի: Իսկ այն, որ ասէ

\* Տե՛ս Դ թագ. ԻԲ, ԻԳ, Բ Մնաց. ԼԴ, ԼԵ, Չաք. ԺԲ 11:

**բնակեալ է<sup>1407</sup> ի բարձունս.** ոչ թէ պարունակեալ է ի տեղոջ ուրէք, այլ ընդ մեզ զիջանելով<sup>1408</sup> ասէ: Չայս զբարձունս Աստուծոյ վայելչական, ասէ,<sup>1409</sup> գոյ:

**Որ տայ երկայնատութիւն տարակուսելոց,** այսինքն՝ կարճամտացն, զի մխիթարէ ի վշտացն, ի մէջ նեղութեան զհամբերութիւն տայ: Եւ դարձեալ նա ազատէ ի նեղութեանցն, զի թէպէտ զմիտս փոփոխէ՝ զամենայն ինչ կարող է առնել:

**Ոչ յախտեան խնդրեցից վրէժս ի ձեռնք եւ ոչ ցանգ<sup>1410</sup> բարկացայց ձեզ** (ԾԷ 16): Ըստ այնմ մարմնաւորին ոչ միշտ ի նեղութեան պահեմ զձեզ: Այլ եւ<sup>1411</sup> ազատեմ եւ ըստ հոգեւորին, զի յորժամ գործէ որ զմեղս, գրաւի յախտեանական տանջանացն, եւ յորժամ<sup>1412</sup> դառնայ ի մեղացն՝ ոչ կարէ զպատիժ բարկութեան Աստուծոյ.

**Ձի հոգի յինէն ելցէ եւ զամենայն շունչ եւ արարի:** Աստ **հոգի** ոչ է իմանալ զՀոգին Սուրբ, զի ոչ ասէ յօդին<sup>1413</sup>. այլ՝ սոսկ հոգի, որ եւ մարդկային հոգիք եւ շունչք արարեալ ի նմանէ. Ասէ. ոչ հանապազ բարկանամ նոցա, այլ խնայեմ<sup>1414</sup>, զի Իմ եւ արարածք:

#### ԾԳ

**Անօրէնք իբրեւ զծով ծփեացին եւ հանգիստ մի՛ գտցեն** (ԾԷ 20): Բանս այս ի վերայ անարինաց ուղղի բազում օրինակաւ: Նախ՝ զի որպէս **ծովն** ի ծփման<sup>1415</sup> է անդր, նոյնպէս եւ մեղաւորք<sup>1416</sup> հանապազ ի խռովութեան եւ<sup>1417</sup> եւ տատանին<sup>1418</sup> ի խղճէ մտացն, եւ ոչ գտանին<sup>1419</sup> հանգիստ ո՛չ ի տան եւ ո՛չ արտաքոյ, ո՛չ ի տուէ եւ ո՛չ ի զիշերի. որպէս Կայեն, որ երէրէր միշտ եւ տատանէր յօրինակ ամենայն մեղաւորաց: Վասն որոյ ասէ մարգարէն. «Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց» (Սղմ. ԼԷ 4): Երկրորդ՝ ալիքն ոչ կան, այլ փութով կորնչին, նոյնպէս եւ խորհուրդ մեղաւորին անհաստատ եւ փութով կորնչին, զի «Տէր ցրուէ զխորհուրդս մեղաւորաց» (Սղմ. ԼԲ 10) ասէ մարգարէն, եւ Յակոբոս, թէ՛ «Այր երկմիտ առանց հաստատութեան է, յամենայն ճանապարհս իւր նմանէ հողմոյ կոծելոյ» (Յակ. Ա 8): Երրորդ՝ զի թէպէտ մրմռալով ալիքն գոչեն<sup>1420</sup>, սակայն ոչ ելանեն ընդ սահմանս իրեանց, այլ յինքեանք խորտակեացին, ըստ Յորայ «Ի քեզ խորտակեացին ալիք քո» (Հմմտ. Յովք ԼԸ 11): Նոյնպէս եւ մեղաւորն հայիոյի ընդ յարդարն, խնդրի սպանել զնա, այլ Տէր ոչ թողու զնա, այլ ինքեանց վնասեն, զոր նոցա խորհին, ըստ այնմ. «Անաստ ալիք ծովու, որ միշտ փրփրեն զիրեանց<sup>1421</sup> անձանց կորուստ» (Յուդա 13): Չորրորդ՝ զի ծովն ի յամպոց եւ ի հողմոց առաւել խռովի, նոյնպէս եւ նոքա՝ ի հակառակացն<sup>1422</sup>, զի թէ յաղթեն եւ թէ յաղթին՝ ի խռովութենէ միշտ: Ձի բազում չարչարանօք հազիւ որ կարէ յաղթել թշնամոյն, եւ յետ այնու հանապազ ի կասկածի կայ: Վասն որոյ ասէ. **Ոչ գոյ խաղաղութիւն ամբարշտացն, ասէ Տէր:** Հինգերորդ՝ զի յալիք եզր հասեալ՝ դադարեն, որպէս ասէ.

**Եղիցի ջուր նորա ի կոխումն եւ ի կաւ** (ԾԷ 20), նոյնպէս եւ հնարք մեղաւորաց մահուամբ խափանին, ըստ մարգարէին. «Յայնմ ատուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա »(Սաղ.

ճԼԵ 4): Եւ նահապետն ասէր «Իբրեւ զջուր մի եռասցիս» (Ծնդ. ԽԹ 4): Վեցերորդ՝ զի որպէս հետք նաւի ոչ երեւի ի վերայ ծովու, ասէ Սողոմոն (Առակ. Լ 19), նոյնպէս եւ խրատք իմաստիցն ոչ մնա ի միտս նոցա, զի լուծեալ են<sup>1423</sup> մեղօք զհետ ցանկութեան աշխարհի: Եւ ոչ այս միայն, այլ եւ յանդիմանիչս<sup>1424</sup> իւրեանց ատեն, եւ որպէս ասէ Սողոմոն. «Խրատեայ<sup>1425</sup> զիմաստունն, եւ<sup>1426</sup> սիրեսցէ զքեզ: Խրատեա զանմիտն, եւ ատեսցէ զքեզ» (Առակ Թ 8): Եւթներորդ՝ զի թէ բազում քաղցր գետք եւ անձրեւք մտանեն ի ծով՝ ոչ քաղցրանայ: Նոյնպէս եւ քաղցր բան Սուրբ Գրոց. թէպէտ քարոզեն նմա յարածամ գութ արքայութեան եւ զմեծ զողորմութիւն Աստուծոյ, այլ նա ի դառնութենէ<sup>1427</sup> մեղացն ոչ փոփոխի, զի թիրեալն ոչ ուղղի, ասէ իմաստունն<sup>1428</sup>: Ութերորդ՝ զի ոչ կարկուտ եւ ոչ սառնամանիքն ցրտութեան զծովն ոչ կարեն խաղաղել, նոյնպէս եւ մեղաւորացն. թէպէտ տեսանէ բազում պատուհաս ի վերայ ինքեան. հիւանդութիւն, սով, աւերք, նուազութիւն պտղոց, խաշանց մահ, սակայն ոչ զղջայ մինչեւ զխտովին կորուսանի, եւ այս լինի վասն յիմարութեան, զի ոչ իմանայ, թէ զայսպիսի խրատս ածէ Աստուած ի զղջումն մեղաւորաց, զի «ոչ կամի զմահ մեղաւորին» ( Հմմտ. Ա Տիմոթ. Ա 15), ասէ: Իններորդ՝ զի ի շարժմանէն ոչ ինչ երեւի յատակս ծովուն, նոյնպէս եւ սիրտ մեղաւորին խաւարեալ է ի ծագումնէ շնորհաց Աստուծոյ, զի «շօշափեցին զխաւար եւ ոչ զլոյս» (Յովք. ԺԲ 25) ասէ: Նա եւ յիմարեալք են ի բնական լուսոյն, եւ ոչ ընտրեն զբարին ի չարէն,<sup>1429</sup> ըստ այնմ. Ոգիք, ըմբռնեալք<sup>1430</sup> ի մեղս, ի մտաց եւս անկանին: Տասներորդ՝ զի ոչ ինչ բոյս բուսանի ի ծովն եւ ոչ ի ժողովս նորա, նոյնպէս եւ ոչ բոյսք բարեաց՝ ի հոգիս մեղաւորաց, ըստ այնմ. «Պտուղ նորա յերկրէ կորիցէ» (Սղմ. Ի 11): Նա եւ զայլ բազումս ընկղմէ ի մեղս իւր, որոց ասէր Տէրն. «Դուք ոչ մտանէք եւ որք մտանեն չտայք թոյլ մտանել» (Մտթ. ԻԳ 13): Եւ Սողոմոն խրատէ. «Մի՛ բնակէր ընդ առն անգգամի, զի մի՛ զխեղդ ոգոց նորա ընդունիցիս» (հմմտ. Առակ. ԻԲ 25): Այտքիկ վասն անօրինացն: Իսկ վասն արդարոցն ասէ. Խաղաղութիւն ի վերայ խաղաղութեանցն, այսինքն՝ ի խղճէ մտացն եւ յարտաքուստ<sup>1431</sup>: Դարձեալ ի կեանս եւ ի մահ դառնալ հոգով եւ մարմնով, դարձեալ երկնաւորան եւ երկրաւորան՝ դարձեալ նոր օրինացս ի վերայ հնոյն: Եւ ամենայն զինչ խռովութիւն ասացաւ ամբարշտաց ընդդէմ նոցա, ամենայն կերպիւ արդարոցն խաղաղութիւն է եւ հանգիստ:

Եւ այսքան առ այս:

- ԾԳ -

**Գոչեա զօրութեամբ եւ մի՛ խնայէր** (ԾԸ 1ա), զի կամի<sup>1432</sup> մեծագոյնս տալ, ասել. **յօր օր է**, այսինքն թէ՛ **Պատմեա ժողովրդեան իմոյ զմեղս նոցա** (1գ) Ասէ՛ մի՛ երկնչիւր, այլ զօրացիր հոգով, որ ի քեզ բնակեալ է, եւ իբրեւ զառիւծն յանճնապատան եւ անվախ արար զքեզ:

**Բարձրացոյ իբրև զփող**<sup>1433</sup> **բարբառ քո** (1բ): **Իբրև զփող** ասէ վասն երկու պատճառի. նախ՝ զի ամենայն ուրեք լուիցեն զագոյու բարբառս քո: Երկրորդ՝ զի միայն ձայնդ է քո, այլ բանքդ իմ են, որպէս հնչումն ի մեջ փողոյն:

**Ձիս օր ըստ օրէ խնդրեն** (ԾԸ 2): Ձայն յայտնէ, թէ միտք նոցա մոլորեալ է ընդ կոռցն եւ մեղացն, եւ կեղծութեամբ խնդրեն:

**Եւ ասեն. Ձի՞ է, զի պահեցաք մեք եւ դու**<sup>1434</sup> **ոչ տեսեր**<sup>1435</sup> (ԾԸ 3): Այս է՝ դատ դնեն ընդ իս եւ իրաւունս խնդրեն. թէ մեք պահեցաք՝ Դու ընդէ՞ր ոչ փրկես զմեզ: Ձի միայն պահօքն արդարանալ կարծէին ի բիր չարեացն: Եւ Աստուած զի՞նչ տայ պատասխանի:

**Ձի յաւոր պահոց ձերոց գտանին կամք ձեր կատարեալ:** Այս է՝ վասն այն ոչ տեսանեմ, զի ի պահս զչար կամս ձեր կատարէք: Վասն այն եւ **ոչ տեսանեմ**, զի կսկծեցուցանէք զնոսս, որ ընդ ձեռամբ ձերով են: Վասն այն **ոչ տեսանեմ**, զի հակառակիք ընդ մեծսն: Վասն այն **ոչ տեսանեմ**, զի կռուիք ընդ հաւասարսն: Վասն այն **տեսանեմ ոչ**, զի կռիւք զանաւագն, այսինքն՝ զրկէք եւ հարստահարէք զաղքատսն:

**Չեն ինձ պիտոյ այնպիսի ատոր պահք, մի գայք եւ բողոքէք առ իս, զի ոչ լսեմ ձեզ, ասէ** (ԾԸ 4), եւ **թէ կորացուցես իբրև զանուր զպարանոց քո** (5)՝ կեղծաւորութեամբ, եւ թէ՛ քրճագգեաց<sup>1436</sup> եւ մոխրաթաւալ լիցիս ի ցոյցս մարդկան:

**Սակայն ոչ գայն պահս ընտրեցի, ասէ Տէր** (ԾԸ 5)՝ Ձի վասն երկու պատճառի եղան պահք. նախ վասն նուագութեան մարմնոյ ի փափկութեանց: Երկրորդ՝ վասն պտղաբերութեան, զի այլոց օգուտ լինիցի<sup>1437</sup>, այսինքն՝ ողորմութեամբ, զի են ի պատուիրանացն, որք ըստ ինքեան, եւ են, որ այլովք զարգանան: Չոր օրինակ ի մարմնական գործս են, որ ըստ ինքեանք<sup>1438</sup> են գործք, որպէս ընթանալն, խօսելն եւ ուտելն, եւ են, որ այլովք, որպէս երկրագործելն, զի պիտոյանա արօրն եւ սերմն, եւ ի գօտեմարտելն, եւլն եւ կրթութիւն: Նոյնպէս եւ գործք<sup>1439</sup> պատուիրանացն են, որք ըստ ինքեան են, որպէս աղօթելն, ողորմելն, սիրելն զԱստուած եւ զընկերն: Եւ են, որ յայլ իրօք պիտոյանան, որպէս պահքն, եւ նոյն ինքն կուսութիւն, զի պարտ է ի սոցանէ պտուղ գոլ, եւ ապա հաճոյասցին Աստուծոյ: Ձի կարի մեծ ճգնութիւն է կուսութիւն: Այլ խոտեցան յիմար կուսանքն՝ չարչարանք է պահք, այլ խոտեցաւ փարիսեցոյն, որ պահէր երկիցս ի շաբաթոյ: Իսկ դնելն պահոցն<sup>1440</sup> վասն այլոց եւ ընդունելի եղև. պահեաց եւ Մովսէս վասն այլոցն<sup>1441</sup> եւ հաճոյացաւ Աստուած, զի ունէին պտուղ, որպէս եւ իմաստուն կուսանքն: Այլ թէ որ ասիցէ, թէ զիա՞րդ ոմանք ի հարստութեան եւ ոմանք յաղտեղութեան են, կէսք ի հանգիստ եւ կէսք ի վիշտս տառապին: Ձիա՞րդ ոչ հասարակաց ետ Աստուած զինչս, որպէս զարեւն, զանձրեւն, զօդ եւ զհողմս<sup>1442</sup>: Պատասխանէ Յովհաննէս. նախ՝ թէ եւ զինչս անհաւասար ետ, զի գոյաւորին պատուիրեաց՝ տալ չբաւորին, որ<sup>1443</sup> լինին հաւասարք\*:

\* Տե՛ս Ոսկեբերան, Մեկն. Եսայեայ, էջ 212:

Դարձեալ ասէ՝ Աստուծոյ նախախնամութենէ, զի զոմանս հարուստ եւ զոմանս աղքատս արար, զի բազում շահ լինելոյ էր<sup>1444</sup> անտի: Նախ՝ զի մի՛ ամենեքեան հաղթեսցին չարեացն, որ ի մեծութենէն<sup>1445</sup> լինի, որ են հոգս աշխարհի եւ պատրանք մեծութեան եւ մոռացումն հոգեւորին, կռիւք եւ ասելութիւնք եւ այլն: Սորա ամենեքեան մեծութենէն լինին<sup>1446</sup>: Երկրորդ՝ զի մեծատունքն մխիթարեսցեն զգաւս աղքատացն, եւ վարձատրեսցին, այսինքն՝ վաճառելով զմիմեանց զմարմնաւորն եւ զհոգեւորն, եւ երկոքին շատեալ օգտեսցին, որպէս ասէ առաքեալն. «Ձեր առաւելութիւն ի նոցա նուագութիւն եւ նոցին նուագութիւն ձերն առաւելութիւն» (Բ Կորնթ. Ը 14): Երրորդ՝ զի մի՛ անկարգութեամբ վարեսցին, այլ երեւեսցի կարգն առաջին<sup>1447</sup> եւ վերջին: Չորրորդ՝ զի գութ եւ սէր տնկեսցի<sup>1448</sup> ի մէջ մեծատանցն եւ աղքատաց, որպէս ասէ Սիրաք. «Սիրէ անասուն զանասուն եւ այր՝ զընկեր իւր» (հմմտ. Սիրաք. ԺԳ 19): Հինգերորդ՝ զի միմեանց կատարեալ լիցին եւ հնազանդին պէս-պէս պիտոյից, որպէս ասէ առաքեալն. «Ծառայք հնազանդ լերոք տէրանց մարմնաւորաց, եւ տէրանցն ասէ. Մի՛ առաւել նեղէք զծառայս, զի եւ ձեզ Տէր գոյ յերկինս» (Եփես. Զ 5): Իսկ եթէ զարեգակն չէր հասարակ տուեալ՝ բազումք<sup>1449</sup> խաւարաւ կորնչէին<sup>1450</sup> եւ տանջէին<sup>1451</sup>: Իսկ եթէ զի՞նչ պիտոյ է<sup>1452</sup> պահոցն պնդութիւն, զի ընդունելի լիցի՝ այդ է զոր ասէ **Լոյծ զկնճիռն անօրէնութեան** (ԾԸ 6) այսինքն՝ զկնճիռն<sup>1453</sup> եւ զհոգւոց մեղացն արձակեայ ի քէն, որ բովանդակին ամենայն ի չորս իրս. առաջին՝ ոչ զրկել զայս, երկրորդ՝ զհորն այլոց բաշխել, երրորդ՝ ոչ նենգել այլոց, չորրորդ՝ այլ նենգաւորացն թողուլ: Եւ այս՝ առ ընտանիս եւ առ<sup>1454</sup> օտարս: Արդ, առաջինն զայս<sup>1455</sup> չզրկել ոչ յայտնի բռնութեամբ, որպէս իշխանք եւ աւագակք եւ ոչ ի ծածուկք, որպէս գողք եւ ոչ խաբէութեամբ, որպէս վաճառողք: Իսկ երկրորդն՝ զհորն այլոց տալ, այսինքն՝ քաղցելոց՝ կերակուր, ծարաւելոց՝ ջուր, մերկոց՝ զգեստ եւ զայլ պէտսն, որպէս<sup>1456</sup> ասէ Քրիստոս՝ զօտարս ժողովել, զհիւանդս եւ զբանտեալսն տեսանել (հմմտ. Մտք. ՀԵ 36, 39, 43): Իսկ երրորդն՝ չնենգել այլոցն եւ ոչ բանի տրտնջել կամ բամբասել, կամ զրպարտել, կամ հայիոյել եւ սուտ խօսել<sup>1457</sup>, կամ բարկանալ եւ ոչ նենգել մտօք, հպարտանալ կամ նախանձել, ատել եւ ռիսակալել, այլ եւ ոչ նենգութիւն<sup>1458</sup> գործելով, առնուլ եւ ոչ հատուցանել, հարկանել կամ սպանանել, եւ ոչ նենգել յայրատ հայեցմամբ աչաց:

Իսկ, չորրորդն, որ է թողուլ նենգաւորաց եթէ՛ մտօք խէթ ունին զքէն, եթէ բանի յանցեան քեզ, եթէ զպարտքն<sup>1459</sup>, ըստ մարմնոյ ոչ կարեն հատուցանել: Ներել եւ թողուլ ամենեցունց, զի եւ<sup>1460</sup> Աստուած զձերն թողցէ ըստ այնմ. «Եթէ թողցուք մարդկան թողեալ լիցի նոցա» (Յովի. Ի 23): Արդ, այս է, որ ասէ<sup>1461</sup> ըստ կարգի.

**Լոյծ զկնճիռն անօրէնութեան** (ԾԸ 6)- Այսինքն՝ զկրկնուած եւ զշարամանութիւնս մեղացն, զի մեղքն ոչ է ուղղութիւն եւ դիւրութիւն:



**Քակեայ զխարդախութիւն բռնութեան վաճառոցն**, այսինքն՝ զնենգութիւն վաճառոցն, զի որպէս բռնաւորն յայտնի յափշտակէ, նոյնպէս եւ նա՝ գողութեամբ ի վաճառն:

**Չամենայն մորիակս անօրէնութեան պատառեա-** Այսինքն՝ զգիր վաշխիցն, զոր սովոր են չարք ոմանք առնել արծաթոյ կամ այլ իրաց, եւ ուսիր ի հարկաց մեր Փրկչէն, զի **զմորիակս** պարտուց մերոց, թողեալ, թէպէտ ոչ էր անօրէնութեան, այլ արդարութեան պարտք, այն է, որ ասացաւ. «Յաւոր որում ուտիցես ի նմանէ, մահու մեռանիցիս» (Ծնդ. Բ 17):

Արդ, զայս դատավճիռ պատռեաց Քրիստոս եւ բեւեռեաց ընդ խաչափայտին: Նոյնպէս եւ դու արայ: Արձակեա զնեղեալս թողութեամբ: Այս գերագոյն է քան զառաջինն, զի անդ զգիրս շահուցն ասաց **պատառեայ**, եւ աստ ասէ թէ ոչ ունիցի, ուստի հատուցանիցէ՝ մի՛ նեղեր<sup>1462</sup> զնա, այլ զամենայն պարտս թող նմա, զի մի պատժեսցիս ըստ<sup>1463</sup> պարտապանաց առակին: Որպէս ասէ Տէրն.

**Բրդեա քաղցելոց զհաց քո** (ԾԸ 7ա): Երեք ինչ ցուցանէ. նախ՝ ոչ ասէ տուր, այլ՝ **բրդեա**, այսինքն՝ խնամօք արա զողորմութիւն, որպէս ասէ Պօղոս. «Չամբեցից զինչս իմ աղքատաց» (Ա Կորնթ. ԺԳ 3): Երկրորդ՝ ասէ **քաղցելոց** եւ ոչ մեծատանց, զի լիցի փոխարէն այլ աղքատաց, որք<sup>1464</sup> չունին հատուցանել: Երրորդ՝ **զհաց քո**, այսինքն՝ զքո աշխատութեամբ<sup>1465</sup> վաստակելն եւ ոչ յափշտակելն<sup>1466</sup> յընկերէն:

**Չաղքատ անյարկս տար ի տուն քո, եւ զմերկս**<sup>1467</sup> **զգեցոյ** (ԾԸ 7բ): Չայտսիկ Տէրն յԻնքեան<sup>1468</sup> վերաբերէ՝ ասելով. «Օտար էի եւ ժողովեցէք զԻս, մերկ էի զգեցուցէք» (Մտթ. ԻԵ 35): Եւ թէ ամենեւին իսկ չիցեն պատուիրանք՝ ի բնութենէդ քո ո՞չ<sup>1469</sup> ողորմիս նոցա, յորժամ դու զանազան կերակուրով յագիս,<sup>1470</sup> եւ զբնութենակիցն քո քաղցեալ տեսանես<sup>1471</sup>, դու կերպաս զգենուս եւ նա մերկ շրջի արտաքս:

**Եւ յընտանեաց զաւակի քո զակն մի՛ արկանիցես** (ԾԸ 7գ): Այսինքն՝ շեղեսցես կամ դարձուցանիցես: Եւ **ընտանի** ոչ միայն արեւակից է, այլ եւ բնութենակիցն, մանաւանդ թէ՛ դաւանակիցն, որք ի միոյ յարգանդէ աւագանին ծնանին<sup>1472</sup> եւ միով կերակուրով սնանին, եւ են անդամք միոյ զլիտյն Քրիստոսի: Այլ եւ լեզուակիցն, նա եւ<sup>1473</sup> կրօնակիցն ըստ կարգի **ընտանիք** են միմեանց, զորս<sup>1474</sup> պարտ է առաւել խնամել: Որպէս ասէ. «Որ ընտանեաց իւրոց խնամ ոչ տանիցի՝ ի հաւատոցն ուրացեալ է եւ չար եւս է քան զանհաւատսն» (Ա Տիմոթ. Ե 8):

**Հարց** - Վասն է՞ր ամենայն մեծամեծ մեղացն, այսինքն՝ շնութեան, սպանութեան եւ այլոցն ոչ սոյնպէս ծանր պատիժ դնէ որպէս անագորոյնիցն ասաց<sup>1475</sup> (հմմտ. Գաղ. Ե 19-22):

**Պատասխան**. Չի անգթութիւնն էր պատճառ եւ սկիզբն ամենայն մեղաց, զի ոչ գթա վասն այն սպանանէ. վասն այն գողանա եւ զայլսն<sup>1476</sup> նմանապէս: Յետ այսորիկ

գողորմութիւնն փոխարէն կարգէ, ըստ հինգ յեղանակաց<sup>1477</sup>: Եւ այս է առաջին որ ասէ. **Յայնժամ ծառայեսցի կանուխ լոյսն քն**<sup>1478</sup> (ԾԸ 8), այսինքն՝ օգնականութիւնն Աստուծոյ, իբրեւ զառաւօտ սփռեսցի ի վերայ քո: Եւլ ծառայումն զառատութիւնն նշանակէ: **Երկրորդ՝ եւ բժշկութիւնք քո վաղվաղակի հասցէ** (ԾԸ 8): Այսինքն<sup>1479</sup> զխեղախայթեալ\* վերս մեղացն բժշկէ ի հոգոյն<sup>1480</sup>: Եւ տե՛ս, զի ի մեր ձեռս է կանուխ եւ անագան բժշկութիւնն: Երրորդ՝ **Եւ գնասցէ առաջի քո արդարութիւն քո** (ԾԸ 8), որպէս կարապետ եւ նուիրակ եւ քարոզ մեծածայն առաջի թագաւորին ընթանան ի պատիւ նոցա, քանի՞ առաւել արդարութեան գործն մեծ քարոզէ եւ պատիւ գործողին, որպէս ասէ Յակոբոս. «Բարձր ի գլուխ պարծի ողորմութիւնն առ դատաստան» (Յակ. Բ 13): Չորրորդ՝ ասէ, **Եւ փառքն Աստուծոյ զքեւ փակեսցին**<sup>1481</sup> (ԾԸ 8), որպէս ծիրանի թագաւորական կամ բեհեզ պատուական իցէ, քան զհանդերձ արդարոյն, որ է փառքն Աստուծոյ, որպէս ասէ Տէրն. «Փայլեսցին արդարքն իբր զարեգակն» (Մտթ. ԺԳ 43): Հինգերորդ՝ **Յայնժամ կարդասցես եւ Աստուած լուիցէ քեզ** (ԾԸ 9): Զի՞նչ քան զայս մեծ կայցէ, որ զինչ եւ խնդրէ մարդ՝ լսէ եւ կատարէ Աստուած: Եւ ոչ միայն այս, այլ մինչդեռ<sup>1482</sup> խօսիցես, ասասցէ, եթէ<sup>1483</sup> ահաւասիկ հասեալ<sup>1484</sup> կամ, այսինքն՝ նախ քան զխնդրելն կամ զհայցումն, որ հայր գթած կամ բարեկամ սիրելի յառաջ քան զխնդրելն տա, որպէս Աստուած խոստանայ տալ: Եւ այս զի՞նչ պատճառաւ. վասն պատառ մի հացի եւ բաժակ մի ջրոյ եւ սակաւ մի զգեստոց<sup>1485</sup> եւ ի տան օթեւանին: Տե՛ս թէ զինչ տասս եւ զինչ առնուս. յԱստուծոյ՝ սէրն եւ ի մարդկանէ՝ զփառս: Եւ զիտելի է, զի տասն իրօք կատարեալ լինի ողորմութիւնն եւ ընդունելի լինի Աստուծոյ, զոր աստ կարգէ. Նախ՝ սուրբ ձեռօք եւ յարդար վաստակոց եւ միշտ եւ յօժար կամօք եւ առանց տրտնջելոյ առատ եւ զուարթ եւ աղքատաց եւ ծածուկ եւ հասարակ: Արդ, նախ՝ սուրբ ձեռօք, զի տուողն ողորմութեան մերժէ յինքնէն զմեղքն եւ ապա ընդունի Աստուած, վասն որոյ ասէ թէ՛ **Սերձեսցես դու ի քէն զկնճիռն**. որ է մեղքն, ապա թէ ոչ ի մեղաւորաց ոչ ընդունի զնուէրս, որպէս այլուր ասէ. **Թե մեղաւորն մատուցանիցէ Նաշիի պատարագ՝ այնպէս որ թէ զշուն որ մորթիցէ** (ԿԶ 3) եւ այլն:

Երկրորդ՝ զի ողորմութիւնն ոչ իցէ յափշտակութեանց կամ ի զովութեանց որպէս ասէ, թէ մերժեսցես զձեռնձգութիւն, այլ պիտոյ է ի հալալ վաստակոց, որպէս ասէ Առակն. «Պատուեա զՏէր ի քոց արդար վաստակոց» (Առակ. Գ 9):

Երրորդ՝ զի ասէ զբանս տրտնջման, որպէս եւ Պօղոս ասէ. «Զամենայն ինչ արարեք<sup>1486</sup> առանց տրտնջելոյ» (Փիլիպ. Բ 14), զի տրտնջն պղծէ զգործն, ապականէ զպտուղն, դառնացուցանէ զքաղցրն, զի տրտնջն նշանակ է ծոյլ եւ անյօժար<sup>1487</sup> սրտի, այլ յորժան գործէ ձեռք, լռեսցէ բերանդ:

\* Զիք՝ ՆԲԳ:

Չորրորդ՝ զի միանգամ կամ երկիցս առնիցես զողորմութիւնն եւ բաւական համարեցին<sup>1488</sup>, այլ յարածամ<sup>1489</sup>, որպէս ասէ առաքեալն. «Ողորմութիւն եւ հաւատք ի քէն մի պակասեցին (Հմմտ. ՂԿ. ԻԲ 32) եւ դարձեալ ասէ. **Մի դանդաղիր բարի առնել, երբ ձեռնհաս իցես** (ԽԱ, 25), եւ ինքն ասէ. **Տացես քաղցելոց զհաց** (ԾԸ 7), որ նշանակէ մշտնջենատրին, զի միշտ քաղցիցի ոք: Հինգերորդ՝ զի իցէ յօժար կամօք որպէս ասէ. **Տացես զհաց քո սրտի մտօք** (ԾԸ 10) եւ այնպէս պարտ է յօժարութիւնն որպէս թէ առնու եւ ոչ թէ տաս: Եւ արդարեւ առնումք, քան թէ տամք, զի տամք սակաւ զնշին եւ զապականեցաւ իրս: Եւ առնումք զմեծ պարգևս անապական կենացն: Վեցերորդ՝ զի կարօտելոցն առնումք զողորմութիւն, որպէս ասէ. **Զանձինս կարօտեալս լոյ** (10): Զայս եւ Տէրն հրամայէ. «Տուր փոխ այնոցիկ, ուստի ակն ոչ ունիցիս» (ՂԿ. Զ 35) եւ այլն: Եւթներորդ՝ **զկարօտեալս յագեցուցես**, այսինքն՝ առատ տալ զողորմութիւնն եւ ոչ ճշդելով որպէս ասէ Պօղոս «Որ ճշդտելով սերմանէ ճշդելով հնձեցէ» (Բ Կորնթ. Թ 6), եւ առատացն ասէ. «Աստուած իմ լի արասցէ զամենայն բարութիւնս ձեր» (Փիլիպ. Գ 19): Ութերորդ՝ զուարթ երեսաւք տալ, որպէս ասէ Սողոմոն. «Զտուրս զուարթ առատս սիրէ Աստուած» (Առակ. ԻԲ 9), զի ոչ այնքան ի տուրս նայի Աստուած, որքան ի կամս տուողին, որպէս զովեցաւ կինն այրի, որ զերկու փողն էարկ զանձանակն, քան որք բազումս արկին (տե՛ս Մկ. ԺԲ 41-44): Իններորդ՝ պարտ է առնել զողորմութիւն ի ծածուկ, ըստ այնմ. «Մի զիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո, զի Հայր քո տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս» (Մտթ. Զ 4): Տասներորդ՝ զի պարտէ բաշխել զողորմութիւն առ հասարակ չարեաց եւ բարեաց, արդարոց եւ մեղաւորաց եւ մի՛ ընտրել եւ մի՛ քննել, զի ոչ է ժամանակս ընտրութեան, այլ՝ ողորմութեան, ասէ սուրբն Յոհան Ոսկէբերան<sup>1490</sup>, ըստ այնմ. «Եղերուք դուք գթած որպէս Հայրն ձեր երկնաւոր գթած է» (Ղկ. Զ 36), զի «Ծագէ զարեգակն ի վերայ չարեաց եւ բարեաց եւ ածէ անձրեւ արդարոց եւ մեղաւորաց» (Մտթ. Ե 45, 46): Այս թէ որքան իրք պիտոյ են, զի կատարեալ լիցի ողորմութիւն: Այժմ դարձցուք վերստին փոխարէն<sup>1491</sup> ողորմութեանն, որ ասացաք զհինգն: Իսկ վեցերորդն այս<sup>1492</sup> է, որ ասէ. **Յայնժամ ծագեցէ ի խաւարի լոյս քո** (Ծ 10), այսինքն է՝ զի թէ վիշտք եւ փորձութիւնք եւ տրտմութիւնք հոգեւոր եւ մարմնաւոր փակեալ իցէ քեզ շուրջանակի որպէս խաւար, այնքան կարող է զօրութիւն ողորմութեանն, զի յորժամ ծագէ ի վերայ քո, որպէս լոյս արեգականն փարատէ զխաւար կարեաց քոց: Եւ ոչ միայն այս, այլ եւ զհուրն յաւիտենական շիջուցանէ, որպէս ասէ Սիրաք. «Զբորբոքեալ հուր ջուր շիջուցանէ եւ զմեղս քաւեն ողորմութիւնք »( Սիրաք Գ 33): Եւթներորդ՝ Եւ<sup>1493</sup> **եղիցի Աստուած քո ընդ քեզ յամենայն ժամ**: Եւ այլ զի՞նչ մեծ քան զայս իցէ, որ Աստուած ընդ մարդոյն լինի յամենայն ժամ, զայս խոստացաւ աշակերտացն. «Ես ընդ ձեզ եմ զամենայն ատուրս կենաց մինչեւ ի կատարած աշխարհի» (Մտթ. ԻԸ 20): Ութերորդ՝ զի ասէ. **Լցցի ըստ**<sup>1494</sup> **ցանկութեան անձն**

**քո իբրև զպարտեզ ջրալից»** (ԺԸ, 11): Այսինքն՝ այնպես առատանայ քո բարութիւնքն հոգեւոր եւ մարմնաւոր, զի գոր ինչ ցանկաս, լինիցի ի քեզ որպէս Յոբայ եղեւ: Տե՛ս, թէ որքան շինուածս ունէր, քանի փարթամութիւնս, վասն որոյ ասէր. «Ոռոգանէին լերինք իմ կաթամբ» (Յովբ. ԻԹ 6), եւ այս ոչ վասն ազահութեան եւ տմարդութեան եղեւ, այլ<sup>1495</sup> վասն մարդասէր եւ առատ բարուցն, որ հայր էր որբոց եւ այրեաց, ոտք կաղաց եւ աչք կուրաց, որոյ բաց էին դրունքն հանապազ աղքատաց: Իննէրորդ՝ զի<sup>1496</sup> ասէ. **Եւ շինեսցին աւերակք քո յաիտենից** (ԿԱ, 4): Այսինքն՝ զի ողորմութեամբ շինին<sup>1497</sup> զբաղաքք եւ տունք աւերեալք, ըստ մարգարէին: Ասացէր, թէ աշխարհս ողորմութեամբ շինեսցի. աստ՝ մարմնաւորն եւ անդ՝ հոգեւորն եւ յաիտենից<sup>1498</sup> յարկն պատրաստի վասն ողորմութեան, ըստ այնմ. «Եկայք օրհնեալք Հօր իմոյ» (Մտթ. ԻԵ 34) եւ այլն:

Տասներորդ՝ զի ասէ. **Եղիցին հիմունք քո մշտնջենաւոր յազգաց յազգս** (ԾԸ, 12): Այսինքն՝ զաւակք եւ յիշատակք քո մշտնջենաւոր կացցեն ի վերայ երկրի: Եւ յիրաւի է իսկ, զի թէ վասն անողորմութեանն սատակեսցի զաւակ մարդոյ, որպէս ասէ Գաւիթ. «Սատակեսցի յերկրի զաւակ նորա փոխանակ զի ոչ յիշեաց առնել զողորմութիւն» (Սղմ. ԼԳ 17), ապա յայտ է թէ վասն ողորմութեան անջինջ մնա յիշատակ մարդոյն եւ զի սոյնպէս եւ եւս քան զայս առաւել փոխարէն կա ողորմութեանն վասն, վասն այսորիկ Աստուած ի սերմ առակէ զողորմութիւն, եւ թէ՛ Սերմանեցէք զարդարութիւն եւ հնձեցէք զպտուղն կենաց (հմմտ. Բ Կորնթ. Թ 6), զի որպէս սակաւ սերմանի եւ բազմապատիկ հնձի, նոյնպէս եւ ողորմութիւնն, որպէս ցուցաւ: Այսքան առ այս:

**Կոչեսցես զշաբաթս փափուկս նուիրեալս Աստուծոյ եւ փառաւորեալս** (ԾԸ 13)- **Փափուկ** ասէ վասն հանգրստեանն, զի Աստուած ի մնա հանգեաւ յամենայն գործոյ Իւրոց: Եւ մէք աստ մարմնով հանգչիմք: Եւ պատկեր է հանգստեան արդարոց յօրն վերջին, եւ **նուիրեալ** է, զի սրբեաց զնա Իւր, եւ **փառաւորեալ**, զի օրհնեաց զնա:

**Ոչ խօսեսցիս բան ինչ բարկութեան բերանով քո** (13 )): Տե՛ս, զի եւ այս գործէ եւ չար եւս դժնդակ, քան զամենայն գործս ընդդէմ հրէիցն է, որք միայն դատարկանան ի գործոց եւ զամենայն մեղս գործեն բերանով եւ ձեռօքն եւ այլովքն, եւ պղծեն շաբաթս եւ զլեզուս եւ զբերանս իւրոց: Նոյնպէս եւ այժմ քրիստոնէայք յաւուր կիրակէի դատարկանան ի գործոց եւ զմեն եւ վաճառեն եւ ստեն եւ նենգեն եւ կռուին, արբենան եւ պոռնկին եւ զամենայն չարիս առաւել ի կիրակի գործեն:

**Այս է նոցա ուխտ, ասէ Տէր. Հոգին իմ, որ ի քեզ է եւ բանքն, գոր ետու**<sup>1499</sup> **ի բերան քո** (ԾԹ 21): Աստ յայտնապէս զերրորդական անձնաւորութիւնն յայտնէ: Տէր՝ Հայր եւ Հոգին Իւր՝ Սուրբ Հոգին եւ Բան՝ Որդին: **Չայս ուխտ**, այսինքն՝ զգաւանութիւն Երրորդութեանն Հոգովն Սրբով ուխտենք մկրտութեամբ աւազանին եւ ունիմք հանապազ ի բերան մեր եւ զաւակք մեր ազգէ յազգ մինչեւ յաիտեան:

**Լուսաւորեաց, լուսաւորեաց Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո** (Կ, 1), այլ թարգմանքն ասեն՝ **Արի եւ լուսաւորեաց: Երուսաղէմ** նշանակէ զեկեղեցիս հեթանոսաց, որ անկեալ եւ հնազանդեալ էր մոլորութեամբ մեղաց եւ կռապաշտութեամբ<sup>1500</sup>, վասն որոյ ասէ. **Արի, որ նստիսդ եւ լուսաւորեաց ի խաւարմանէդ**, իսկ ըստ Եւթանասնից, որ կրկին է **լուսաւորեաքն**, զի յետ առնելոյ շնորհացն ծուլութեամբ եւ ապերախտութեամբ զրկին<sup>1501</sup> ի լուսոյ շնորհաց, վասն որոյ կրկնէ, զի յորժամ ընդունիցիմք՝ անիբացդնելի պահիցիմք միշտ: **Չի հասեալ է լոյս քո**, որ է Քրիստոս: Չայս եւ Պողոս ասէ յԵփեսացոցն. «Արի, որ ննջեսդ եւ լուսաւորեսդ զքեզ Քրիստոս» (Եփես. Ե 14): Եւ զի ոչ է յազգս<sup>1502</sup> այս զգալի լուսոյն, յայտ է յերից. Նախ՝ զի յորդորէ՝ **լուսաւորեաց, լուսաւորեաց** ասելով, զի յորժամ երեւի լոյսս այս, կամաւ եւ ակամա լուսաւորէ՝ զի՞նչ շահէր ասելովն իսկ: Երկրորդ՝ զի ասէ **լոյս քո**, եւ արդ **լոյս** այս ոչ է առանձնակի ումէք այլ առ հասարակ: Երրորդ՝ զի ասէ. **Փառք Տեառն ի վերայ քո ծագեսցի**: Ապա յայտ է, թէ վասն այլ իմն իմանալի լուսոյ ասէ որոյ ուղեկից փառքն Աստուծոյ է, զի փառք արեգականն կամ աստեղաց փայլումն իրեանց են առաւել եւ նուազ, ըստ Պողոսի. «Այլ փառք արեգականն եւ այլ փառք լուսնի» (Ա Կորնթ. ԺԵ 41), իսկ Աստուծոյ փառքն է իմանալի ընդ շնորհացն ծագեալ, որ է Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ լուսաւորեաց զեկեղեցի երեւմամբն ի մարմնի, որպէս ասէ Դաւիթ. «Տէր<sup>1503</sup> Աստուած մեր երեւեցաւ մեզ» (Սղմ. ԳԺԷ 27), որ եւ ճառս այս Եսայեա ի վեցերորդ կարգի ընթերցուածիս է<sup>1504</sup> եղեալ ի խորհուրդ վեցերորդ դարուն, յորում Լոյսն աշխարհի երեւեցաւ, եւ վեցերորդ յեղանակաւ լուսաւորեաց զմեզ, որ վեց իրօք խաւարեալ էաք. Նախ՝ յանգիտութեան խաւարէ ի լոյս գիտութեան: Երկրորդ՝ ի մեղացն յարդարութեան լոյս: Երրորդ՝ կռոցն ի լոյս աստուածապաշտութեանն: Չորրորդ՝ ի տրտմութեանցն յուրախութեան լոյսն, ըստ որում մերժեաց զամենայն արտօսք յամենայն<sup>1505</sup> յաչաց<sup>1506</sup>: Հինգերորդ՝ ի ստուերաց մահու ի լոյս կենաց, ըստ այնմ՝ «Խափանեաց զմահ եւ լուսաւոր արար զկեանս եւ զանեղծութիւն» (Բ Տիմոթ. Ա 10), ասէ: Վեցերորդ՝ լուսաւորեաց եւ զգալի տեսութիւնս աչաց մարդկան,<sup>1507</sup> որպէս ի ծնէ<sup>1508</sup> կուրիւն: Ապա այնու յիրաւի<sup>1509</sup> կանուխ ժամանակօք աւետէ մարգարէս զեկեալ հասեալ Լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ<sup>1510</sup>, որ գալոց է յաշխարհ:

Արդ,<sup>1511</sup> գիտելի է, թէ վասն է՞ր լոյս անուանի Քրիստոս ըստ բնական յեղանակի, ասացեալ է յայլում վայրի, իսկ աստանօր ըստ լուսաւորելոյն խնդրի բազում պատճառս. Նախ՝ զի որպէս լոյսն ոչ ըստ բնութեան ճառագայթիցն լուսաւորէ<sup>1512</sup>, այլ ըստ զօրութեան աչաց այս է, զի կոյրն ամենեւին ոչ տեսանէ եւ որ խփէ զաչն, իսկ բժոտն սակաւ տեսանէ եւ զօրաւորն առաւել լուսաւորի: Նոյնպէս եւ անհաւատքն եւ որք կամաւ ուրանան՝ ոչ լուսաւորին<sup>1513</sup> ի Քրիստոսէ, իսկ թերիքն ի հաւատքն բժոտք են: Իսկ կատարեալքն հաւատով եւ մաքուր գործով առաւել լուսաւորին: Երկրորդ՝ ի լուսոյն ոմանք լուսաւորին եւ

զայլս լուսաւորեն, որպէս ապակի եւ ջուր: Եւ ոմանք լուսաւորին, այլ ոչ լուսաւորեն, որպէս քամբակ կամ երկաթ, ոմանք ոչ լուսաւորին եւ ոչ լուսաւորեն, այլ եւ զայլս ստուերաւ խաւարեն, որպէս քար եւ հող: Նոյնպէս եւ առաքեալքն, հայրապետք եւ վարդապետք լուսաւորեալք ի Քրիստոսէ եւ լուսաւորեն զայլս, ըստ այնմ. «Դուք էք լոյս աշխարհի» (Մտք. Ե 14), իսկ հավատացեալ<sup>1514</sup> ժողովուրդք միայն լուսաւորին ինքեանք, ըստ այնմ. «Ես լոյս յաշխարհ եկի, որ հաւատայ Յիս՝ ի խաւարի մի մնասցէ» (Յովհ. ԺԲ 46), այլ ընկալցի<sup>1515</sup> զլոյս կենաց, իսկ որք ոչ լուսաւորին, որպէս երկրասէրքն եւ քարոզացեալքն անգղջութեամբ, ինքեանք ոչ լուսաւորին, այլ եւ զայլս ի ստուերս մեղաց արգելում, ըստ այնմ<sup>1516</sup> «Դուք ոչ մտանէք, եւ այլոց չտայք թոյլ մտանել» (Մտք. ԻԳ 13): Երրորդ՝ որպէս լոյսն հերքէ զխաւար, եւ լուսաւորէ զօղ, նոյնպէս եւ Քրիստոս փարատեաց զտրտմութիւն մեղաց եւ տգիտութեան<sup>1517</sup> եւ ուրախացոյց զհտութեամբ եւ արդարութեամբ լուսոյն, որպէս ասացաւ ի վերոյ<sup>1518</sup>, զի այն է փառօք ծագումն<sup>1519</sup>, վասն որոյ ասէ. «Փառք Տեառն ի վերայ քո ծագեցին» (Հմմտ. ՂԿ. Բ 9): Չորրորդ՝ որպէս լոյսն փութանակի եւ զամենայն հեռաւորս լուսաւորէ, նոյնպէս եւ յերեւելն Քրիստոսի փութով լուսաւորեցան հեռացեալ ազգ հեթանոսաց, որպէս ասէ. «Գնացեն հեթանոսք ի ծագել լուսոյ քո» (հմմտ. Յայտ. ԻԱ 24): Հինգերորդ՝ որպէս ընդ ծագել լուսոյն եւ ջերմութիւնն սփռի զուգաչափ զոլով, այսպէս եւ ընդ բանին Քրիստոսի շնորհք<sup>1520</sup> Սուրբ հոգոյն ծաւալի էակից գոլով եւ հաւասար Աստուած:

Վեցերորդ՝ զի որպէս ընդ ծագելն մեծ լուսոյն ծածկին ամենայն լուսաւորք, նոյնպէս և ի ծագելն իմանալի լուսոյն Քրիստոսի, նշոյլք օրինաց զտեղի առին, ըստ այնմ. «Լրումն օրինաց և մարգարէիցն Քրիստոսու է» ( Հռովմ. Ժ 4): Եւթներորդ՝ որպէս լոյսն յարեւելից ելեալ եւ, խոնարհեալ ի մուտս, ընդ երկրաւ ծածկի եւ դարձեալ ծագէ, նոյնպէս եւ Քրիստոս յարգանդ Կուսին իբրեւ յարեւելից ծնեալ եւ բազմազան շնորհօք զտնօրէնութիւնն կատարեալ եւ յետոյ ի գերեզման մտանել եւ յարութեամբն վերստին զամենայն լուսաւորեալ, որպէս ասէ. **Գնացեն քազաւորք ի լոյս քո** (Կ 2): Ութերորդ՝ որպէս լոյս ընդ ծագելն<sup>1521</sup> իւր գերեկեան ճանապարհն փոխէ հեռանալովն եւ մերձենալովն, նոյնպէս լոյսն<sup>1522</sup> ճշմարիտ նախ յիւրսն եկն եւ ոչ ընկալան Հրեայքն եւ յետ յարութեանն լոյսն յայտնեցաւ հեթանոսաց, ըստ այնմ, որ ասէր. «Այսուհետեւ մկրտեցէք զամենայն հեթանոսս» ( Մտք. ԻԸ 19-20), զի մերձենալովն ի մեզ հեռացաւ ի հրէիցն, որպէս յորժամ մերձ էր ի նոսա եւ հեռի՝ ի հեթանոսաց: Իններորդ՝ լուսովն տեսանենք զամենայն զգալիս՝ որոշենք զլաւսն եւ զվատթարսն եւ ուղիղ ընթանամք (Մղմ. ԼԵ 11): Նոյնպէս եւ Քրիստոսի տեսանենք զամենայն իմանալի իրս, ըստ այնմ. «Որ գնայ ի տունջեան<sup>1523</sup> ոչ գայթակղի», եւ «Թէ գնացէք մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք» (Յովհ. ԺԱ 9, ԺԲ 35): Տասներորդ՝ զի ի մերձենալ լուսոյն ի ձայն հաւուն յարուցեալ թօթափիմք զքուն եւ զգեցեալ սկսանիմ

յիւրաքանչիւր գործս, ըստ այնմ. «Ի ծագել լուսոյ, ելանէ մարդ ի գործս իւր մինչեւ յերեկոյ» (Մղմ. ԾԳ 22): Նոյնպէս եւ յորժամ փայլակն յարեւելից ծագեսցի ահ եղեւ սաստիկ հայրական փառօք, յայնժամ ի ձայն<sup>1524</sup> փողոյն յառնեն ամենայն ազգ մարդկան ի մահահանգիստ քնոյն եւ զգեցեալ զանապական մարմինս հրաւիրին յիւրաքանչիւր պատրաստեալ տեղիս, ըստ այնմ. «Որոց զքարիս գործեալ իցէ» (Յովհ- Ե 29) եւ այլն: Որոց եւ մեզ լիցի տեսանել զլոյսն կենաց ի ձեռն լուսանորոզ աղօթից ձերոց. ամէն<sup>1525</sup>:

**Չի ահա խաւար ծածկեաց զերկիր եւ մառախուղ՝ զհեթանոսս: Խաւար՝ մեղաց եւ մառախուղ՝ կոռոցն:** Ասաց թէ՛ **հասեալ է լոյս քո:** Այժմ զիա՞րդ ասէ թէ. **Խաւար ծածկեաց զերկիր** (Կ 2). այս է՝ զի իսրայելացոցն **լոյս** զազատիլն ասէ եւ յայնժամ հեթանոսք ի **խաւարի** էին, զի Բաբելացիքն ի ծառայութիւն մատնեցան, իսկ առ մեզ **լոյս**<sup>1526</sup> Քրիստոս, զի հաւատացեալքն լուսաւորեցան եւ անհաւատքն ի խաւարի մնացին, ըստ այնմ. «Ի դատաստան եկի, զի որք ոչն տեսան եւ կուրասցին» ( Յովհ. Թ 39):

**Եկեսցեն ի քեզ երամակք ուղտուց եւ խաշինք Կեդարու եւ խոյքն Նաբեովթայ եւ արծաթ եւ ոսկի** (Կ 6-7) եւ այլքն: Չպատարագս<sup>1527</sup> հեթանոսացն նշանակէ, որ առին վարձս փոխանակ անարգութեան<sup>1528</sup> իւրոց եւ փոխանակ աւարին, որ աւարեցան ի գերութիւնն. որպէս եւ յայնժամ առին զվարձս յեւանելն յԵզրիպտոսէ, նոյնպէս եւ աստ \*:

**Եւ տուն աղօթից իմոց փառաւորեսցի** (Կ 7), զի «առաւել լինէին փառքն նորա վերջինն, քան զառաջինն», որպէս ասէ Անգէոս ( Անգ. Բ 10): Այլ ի վերայ եկեղեցոյ կատարի հոգեւորապէս, զի **ուղտն** անմաքուր կենդանի է եւ խոհեմ եւ անպատարագելի յօրինացն նշանակէ զհեթանոսս, որ անմաքուր եւ անսուրբ էին ի կռապաշտութեանն, իսկ յորժամ հաւատացին ի Քրիստոս եւ մաքրեալ սրբեցան աւագանան, եղեն խոհեմագոյնք խորհրդովք եւ մերձաւորք բանին Աստուծոյ: Իսկ ասելն<sup>1529</sup> թէ՛ **ծածկեսցեն զքեզ՝ զբազմութիւնն նշանակէ:** **Եւ խոյքն Նաբեովթայ** անձինն նշանակէ ի հրէից զհաւատացեալքն՝ ի Քրիստոս, մանաւանդ՝ զերանելի առաքեալս, որ ի Քրիստոսէ ածան<sup>1530</sup>. Նախ՝ զի **Խոյն** առաջնորդ է հօտի եւ առաքեալքն առաջնորդք հօտին Քրիստոսի, ըստ այնմ. «Արածեա զոչխարս իմ» (Յովհ. ԻԱ 15), եւ Պօղոս ասէ. «Ո՞ որ արածիցէ խաշն<sup>1531</sup> եւ ի կաթանէն ոչ կերիցէ» (Ա Կորնթ. Թ 7): Երկրորդ՝ զի<sup>1532</sup> **խոյ** ծնող է զառանց եւ առաքեալքն՝ ժողովրդոց անմեղաց, ըստ այնմ. «Ի Քրիստոս Յիսուս աւետարանան ես ծնայ զձեզ» (Ա Կորնթ.Գ 15): Երրորդ՝ զի երկուքուք կատարեալ է,

\* Հեղինակն այստեղ ի մտի ունի բացառապէս հոգևոր ավարը, այսինքն՝ եզրիպտական գիտութիւնը, որից հրեաները վերցրին այն կարևորը, ինչն անհրաժեշտ էր իրենց կրոնական փորձառութեանը, որովհետև, ինչպէս նկատում է Ռոզգինեսը «Սուրբ սրբոց անոթները պատրաստված էին այն ավարից, որ Իսրայելը տարավ Եզրիպտոսից» (Ս- Գրիգոր Սքանչելագործ, Նամակներ, 2): Հրեաների կողմից եզրիպտացիներին հասցված վնասը, կողոպուտը (Ելք Գ 22, ԺԱ 2) Ս- Իրինեսոսի և Օգոստինոսի բացատրությամբ այլաբանությունն է քրիստոնյաների՝ հեթանոսական գրվածքներում առկայծող ճշմարիտն ու հայտնութենականն ընտրելու և վերցնելու իրավունքի՝ տես Օգոստինոս Երանելի, Խոստովանություններ, Երևան, 2002, էջ 336, ծնթ- 47:

այսինքն՝ որոճող եւ կճղակահերձ, եւ կատարեալք էին առաքեալքն ըստ օրինացն եւ ըստ շնորհացն<sup>1533</sup>: Չորրորդ՝ զի սուրբ<sup>1534</sup> կենդանի է, եւ առաքեալքն սրբեալք ի Քրիստոսէ, ըստ այնմ. «Գուր սուրբ էք ամենեքեան» (Գործք Բ 4), որ՝ ի վերնատունն ընկալան զՀոգին Սուրբ<sup>1535</sup>: Հինգերորդ՝ զի պատարագելի էր խոյ, ըստ այնմ. «Արու տարետոր լիցի» (Ելք ԺԲ 5) եւ առաքեալքն նուիրեցին զանձինս վասն Քրիստոսի, որպէս ասէ Պօղոս. «Նուիրիմ ի վերայ պատարագի պաշտամանս այսորիկ» (Փիլիպ. Բ 17), եւ զի անդ մեծ էր ընտրութիւն ի կենդանիս զոհիցն, այսինքն՝ ի սուրբն եւ յանսուրբն եւ դարձեալ՝ յարատաւորն եւ յանարատն, իսկ աստ հոգոցն առաքինութիւն խնդրի եւ թէ այն գոցի այլ. «Չիք խտիր հրէի կամ հեթանոսի» (Հռովմ. Ժ 12) եւ այլն, զի «Պատարագ Աստուծոյ Հոգի խոնարի» (Սղմ. Ծ 19)

**Եւ խաշինքն Կեղարու ժողովեսցին առ քեզ** (Կ 7ա): **Կեղարն** «խաւար» թարգմանի, որ նշանակէ զամենայն խաւարեալս մեղօք, որք ժողովին ի հաւատս եւ լուսակիզն փայլեն լուացմամբ աւագանին եւ նորոգութեամբ հոգոյն:

**Եւ տուն աղօթից իմոց փառատրեսցի** (Կ 7բ), որ է եկեղեցի Քրիստոսի, քան զիրեական տաճարն. **Ով են սոքա, որ իբրեւ զամպս թռուցեալ զան** (Կ 8): Հիանալով ասէ, զոր յառաջն ծանրամարմին ուղտս անուանեաց **եւ խաշինս Կեղարու**՝ վասն անհաւատութեան, այժմ ի ձեռն հաւատոցն թեթեւացեալք **ամպոյ** նմանեսցին, որք ցօղեն զցօղ հոգետոր ի յանդս եկեղեցոյ: Այլ եւ եղեն **աղաւնիք** սպիտակափայլք եւ զգօնութեամբ զարդարեալք, ծնունդք այնր աղանոյ, որ էջ ի Յորդանան: Այս է **ձագախառն** երամացեալ հսկայն, որ ասէ. **Ամենեքեան ի Սաքա եկեսցեն** (Կ 6), այսինքն՝ ի ձեռն ներքինոյն Կանդակա բերել կնդրուկ (Հմմտ. Գործք Ը 27), որ է անուշահոտ աղօթք սրբոց, եւ ոսկի՝ զանբիծ հաւատն, եւ ականս պատուական՝ զանագան առաքինութիւնք են:

**Հարց** . Ձի՞նչ է միայն Կաթողիկէ Առաքելական եկեղեցի:

**Պատասխան**. Յայտնի են զգալապէս, զի փոխանակ միոյ հրեական տաճարին<sup>1536</sup> հազարք եւ բիւրք շինեսցին զեկեղեցիք<sup>1537</sup> ընդ ամենայն աշխարհիս<sup>1538</sup>: Այլ եւ հոգետորապէս եկեղեցի մարդ է կենդանի վիմօք շինեալ ի վերայ ճշմարիտ<sup>1539</sup> հիմանն Քրիստոսի, այսինքն՝ հաւատացեալք ի հաւատս Քրիստոսի միայն ասի, զի հիմն այլ ոչ որ է բայց միայն Քրիստոս (Հմմտ. Ա Կորնթ. Գ 11): **Կաթողիկէն** ընդհանուր լսի եւ **Առաքելական**, զի քարոզութեամբ առաքելոցն շինեցաւ եւ ոչ որպէս հինն՝ ի ձեռն մարգարէիցն, զի նախ զառաքեալս ի մէջ եկեղեցոյ ասէ.

**Ոչ եւս եղիցի քեզ** (Կ 19ա) **արեգակն լոյս տուրնջեան, եւ լուսինն ի գիշերի** (Կ 19) եւ այլն: Երիւք է իմանալ.

Նախ՝ ի վերայ Իսրայէլի, զի յետ դարձցին ոչ եւս եղիցին քեզ ապաստան սնոտի լոյս լուսաւորացոյ, այլ Աստուած եղիցի քեզ յոյս<sup>1540</sup> յաւիտենական եւ լոյսք լուսաւորացոյ ոչ



**պակասեսցին ի քէն**<sup>1541</sup>: Երկրորդ՝ ի վերայ հաւատացելոցս. **Ոչ եղիցի քեզ արեգակն ի լոյս** (Կ 19): Ոչ զայն ասէ, թէ պակասին լուսաորքդ, այլ թէ՛ այնքան ոչ լուսաորեն, որպէս Աստուած զմիտքս լուսաորէ եւ թէպէտ Տէր եղիցի քեզ լոյս, սակայն արեգակն, որ է Աւետարանն եւ լուսինն՝ օրինացն, ոչ պակասեսցէ ի քէն: Երրորդ՝ ոմանք ասեն զայս եւ ի կատարածին, զի ոչ է պիտոյ զգալի լոյս արեգականն եւ ծագումն լուսնի, զի Տէր եղիցի լոյս յաիտենական, այլ եւ ոչ պակասին նոքա մտանելով եւ ելանելով, զի դադարին ի գնացիցն:

**Ես Տէր ընդ ժամանակս ժամանակս ժողովեցից զնոսա** (Կ 22): Զի Իսրայէլ երբեմն Կիրոսի եւ երբեմն Դարեհի եւ երբեմն Արտաշեսի ժողովեաց յԵրուսաղէմ, իսկ հաւատացեալս զՀրեայս ժողովեաց զոմանս ի ձեռս առաքելոցն եւ զայլսն ի կատարածի զհարիւր քառասունչորս հազար կնքեալսն, իսկ զհեթանոսս զոմանս յերրորդ ժամուն եւ զոմանս ի վեց եւ զայլսն յիրաքանչիւր ժամու կոչէ:

- ԾՁ -

**Հոգի Տեառն ի վերայ իմ** (ԿԱ 1ա), այսինքն՝ մարմնաւորութեանս: Տե՛ս զԵրրորդութեանն յայտնութիւն. Ինքն եւ<sup>1542</sup> Տէրն եւ Հոգին, **վասն որոյ եւ օծ իսկ զիս** (ԿԱ 1բ): Տես զանճառ միաւորութիւնն, զի ասէ. **Օծ Հոգին** եւ ոչ արտաքոյ զմարմինս, որպէս երկաբնակ բաժանողացս: Զայս եւ Պետրոս ասաց. «Զոր օծ Աստուած Հոգովն Սրբով եւ զօրութեամբ» (Գործք Ժ 38): Եւ թէ, «գնա Տէր եւ օծեալ Աստուած արար» (Գործք Բ 36): Եւ Դաւիթ ասէ. «Օծ զքեզ Աստուած, Աստուած քո իղով ուրախութեան առաւել քան զընկերս քո» (Սղմ. ԽԳ 8, Եբր. Ա 9), իսկ թէ զի՞նչ է առաւելութիւն օծմանն Քրիստոսի եւ թէ որքանաբար ասի օծումն, ասացեալ է և այս յայլում վայրի: Եւ զի ոչ վասն կարօտութեան ընկալաւ զՀոգին, յայտ է յերից. Նախ՝ զի իւր է Հոգին եւ զիւր հոգին կարօտութեամբ զիա՞րդ առնու ինքն,<sup>1543</sup> ըստ այնմ՝ «Որ զՀոգին Քրիստոսի ոչ ունի սա չէ նորա»: Եւ աստ ասէ **Հոգի Տեառն** եւ ոչ ասէ վերադրաւ թէ՛ Հոգին<sup>1544</sup> Տեառնն: Երկրորդ՝ զի անդ[ը]ստին ի սկզբանէ ունէր, ըստ այնմ. «Հոգին Սուրբ եկեսցէ» (Բկ. Ա 35), եւ «Որ ի նմայն ծնեալ է ի Հոգոյն Սրբոյ է» (Ստք. Ա 20), եւ արդ, որ ի սկզբանէ ունէր, այժմ զիա՞րդ կարօտե՞<sup>1545</sup>: Երրորդ՝ զի Հոգին Սուրբ սրբէ եւ զօրացուցանէ եւ օծանէ եւ որդեգրութեան արժանաւորէ, իսկ սրբիչն մեր եւ զօրութիւնն Հօր եւ Որդին Աստուծոյ եւ օծեալն Տէր, զիա՞րդ կարօտէր սրբութեան հոգոյն: Ըստ այնմ. «Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր» (Բկ. Բ 11), «Զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո, քանզի եւ որ ծնանելոցն է ի քէն սուրբ է, եւ Որդի Աստուծոյ կոչեսցի (Բկ. Ա 35) : Իսկ Տէր մեր ընկալաւ զՀոգիս Սուրբ<sup>1546</sup> վասն կրկին պատճառի.

Նախ՝ վասն վկայութեան որպէս եւ ձայն Հօրն<sup>1547</sup>, թէ՛ «Որդի է Աստուծոյ» (Յովհ. Ա 35), որպէս ասէր Յովաննէս. «Յոյր վերայ տեսանիցես զՀոգին Սուրբ, զի իջանիցէ, նա է, որ մկրտէ Հոգովն Սրբով, եւ ես տեսի եւ վկայեցի, թէ սա է Որդին Աստուծոյ» (Յովհ. Ա 33-

34)<sup>1548</sup>: Երկրորդ՝ զի մարմնատրուքեամբ առցէ եւ ի մեզ հեղցէ՝ գլուխ գոլով մեզ, ըստ այնմ «Որպէս իդ, զի իջանէ ի գլուխ եւ ի մորուսն Ահարոնի» (Մղմ. ԳԼԲ 2): Իսկ<sup>1549</sup> մեք առնումք զՀոզիմ Սուրբ<sup>1550</sup> ի վկայութիւն, այլ եւ<sup>1551</sup> ի լրումն կարօտութեանն, ըստ այնմ. «Հոզիմ Սուրբ վկայէ հոգոյս մերում» (Հռովմ. Ը 16):

**Հարց.** Եւ զի Որդի է Աստուծոյ եւ Աստուած ճշմարիտ, ըստ այնմ. «Դա է Որդի իմ սիրելի» (Մրկ. Թ 6), ապա<sup>1552</sup> ընդէ՞ր ասէ թէ. «Հայր գործէ, զգործսն<sup>1553</sup> որ Յիս է» (Յովհ. Ե 17), եւ թէ՛ «Հոգովն եւ մատամբն<sup>1554</sup> Աստուծոյ հանեն զդէս» (Մտթ. ԺԲ 28), եւ թէ՛ «մատամբն Աստուծոյ», եւ թէ՛ «վարեցաւ ի Հոգոյն» (ԳԿ ԺԱ 20, Մտթ. Դ 1):

**Պատասխանի.** Այտքիկ եւ նմանք սոցա զմիութիւն կամացն նշանակեն Սուրբ Երրորդութեանն: **Աւետարանել աղքատաց առաքեաց զիս** (ԿԱ 1): **Առաքիլն** զյայտնութիւնն ասէ, զի ոչ ինչ տեղիք թափուր ի նմանէ, միթէ՞ թագաւորք եւ իշխանք եւ մեծատունք աղքատք իցեն. այո եւ կարի քաջ, զի աղքատ եւ տնանկ են ի հոգեւորէն, ըստ Դաւթաւ. «Ես աղքատ եւ տնանկ եմ Աստուած» (Մղմ. ԼԹ 18): Դարձեալ **աղքատ** զխոնարհսն<sup>1555</sup> ասէ, որք հոգով են աղքատ, ըստ այնմ. «Երանի աղքատաց, զի նոցա է արքայութիւնն երկնից» (Մտթ. Ե 3): Տե՛ս, զի ի ձեռն հպարտութեանն զրկեցաք յարքայութենէն Աստուծոյ<sup>1556</sup>, խոնարհութեամբ վերստին ժառանգեցաք: Բժշկել զրեկեալս սրտիք, ոյք մաշեալ էին սրտիք եւ ի կարծիս վասն թողութեան մեղաց բժշկեաց զնոսա: Եւ զի ասաց, թէ՛ **Աւծ զիս Հոզիմ Սուրբ**, եւ թէ՛ **Առաքեաց զիս**, զի մի որպէս զմարգարէսն<sup>1557</sup> կարծեսցի, երբ ի վերայ զբարձրագոյնս եթէ՛ **Բժշկել զրեկեալս սրտիք**, այսինքն՝ թողութեամբ մեղացն զտրտմութիւն նոցա ուրախացուցանել, ըստ այնմ. «Եկայք առ իս ամենայն աշխատեալք եւ Ես հանգուցից զձեզ» (Մտթ. ԺԱ 28-29): **Եսն** ասելով զճոխ իշխանութիւնն յայտնէ, իսկ բժշկութեամբն ոմանց զմարմնոյ ախտսն<sup>1558</sup> բժշկէր որպէս Ադամ լուծին եւ զայլոցն, եւ ոմանք զՀոգոյն որպէս քանանացոյն եւ պոռնկին, եւ ոմանց զերկուքն, զմեղսն թողոյր եւ զմարմին բժշկէր, որպէս ի ծնէ կուրին եւ զայլոցն եւս<sup>1559</sup>:

**Քարոզեալ զերեաց զթողութիւն:** Ոչ ասաց՝ տալ, այլ թէ՛ **քարոզել**, զի մի՛ ակամա լիցի, այլ յօժար ցանկութեամբ:

**Եւ կուրաց տեսանել.** որք խաւարեալ էին մեղօք եւ կռապաշտութեամբ, լուսաւորեաց արդարութեամբ եւ աստուածպաշտութեամբն:

**Յնծասցէ անձն իմ ի Տէր** (ԿԱ 10): Տե՛ս, զի վասն եկեղեցոյ ասէ ցնծալ հոգով, զի հրէիցն ամենայն ինչ մարմնավոր էր: Որպէս ուրախ լինի որ ի ստացուածոյս, յորդիս, ի կին եւ յայլսն, նոյնպէս ուրախ լինի մարդն, յորժամ առնու շնորհս ինչ յԱստուծոյ, մանաւանդ յորժամ զիտասցէ առ ինքն, թէ Աստուած հաշտ է ընդ նմա, որպէս առաքեալքն ուրախ եղեն ի Քրիստոս, եւ զայլսն յորդորէին ուրախանալ, ըստ այնմ. «Ուրախ լերուք ի Տէր դարձեալ ասեմ ուրախ լերուք» (Փիլիպ. Ա 16): Այլ եւ մարմնատր ուրախութիւնն փոփոխական է, իսկ

այս անթերանալի<sup>1560</sup>, ըստ այնմ թէ. «Չուրախութիւնն ձեր ոչ որ հանիցէ ի ձեզ» (Յովհ. ԺՁ, 22):

- ԾԷ -

**Ձի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան**- Յայտ է, զի այս **հանդերձ** ոչ է փրկութեան: Եւ ո՞ր փրկութեան հանդերձն. այն է, զոր զգենումք ի ձեռն մկրտութեան, ըստ Պօղոսի. «Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցաք զՔրիստոս զգեցայք»- (Գաղատ. Գ 27), զի նա զգեստ փրկութեան մեր, որով փրկիմք ի բռնութենէ մահու: Դարձեալ նա ծածկեաց զմերկութիւն մեր, զոր մերկացաք եւ ծանակ էաք<sup>1561</sup> մեղօք ի ձեռն սատանայի: Այլ եւ մերկացոյց զիին մարդն մեղօք եւ զգեցոյց զնորն արդարութեամբ, որ ըստ Աստուծոյն: **Իբրեւ փեսայի եղ ինձ պսակ եւ զհարսն զարդարեաց զիս:** Ձի հարսանիք արար եւ հոգեւոր հարսանիք, ըստ որում՝ միացաւ **փեսայն** Քրիստոս ընդ հոգիս մեր: Եւ տե՛ս զաղքատութիւն **հարսինն**. զոր օրինակ որ ցանկացի աղքատ աղախնոյ, ինքն տացէ զարդն եւ ի հարսնութիւնն առցէ: Նոյնպէս եւ թագաւորն Քրիստոս ցանկացաւ զեղոյ եկեղեցոյ, ըստ Դաւիթի<sup>1562</sup>. «Ինքն զարդարեաց մկրտութեամբն եւ միացաւ ընդ հոգիս մեր» (Հմմտ. Մղմ. ԽԳ 10-15): Եւ զի ի դիմաց **հարսինն** է բանս՝ զիա՞րդ ասէ. **իբրեւ փեսայի եղ ինձ պսակ:** Այսինքն՝ է **Փեսայն** Իւրով պսական պսակեաց զիս: Իսկ պսակս այս եղեւ ի ձեռն չարչարանաց խաչին, ըստ երգոյն. «Պսակեաց զնա մայր իւր յատուր ուրախութեան իւրոյ» (Երգ Գ 11): Այս է՝ «Ձի որք ի Քրիստոս մկրտեցաք ի մահ անդր նորա մկրտեցաք», «զի տնանկից եղաք մահու նորա» (Հռոմ. Ձ 3, 5)՝ պատուաստելովն ի նա: Որպէս այլուր ասէ. «Կեանք ձեր ծածկեալ են Քրիստոսի յԱստուած» (Կողոս. Գ 3): Յետ որոյ նշանակ զանազան պտուղս առաքիւնութեան հարսին եկեղեցոյ, զՀրեայս օրինակելով ի պարտեզս, որ կակղացեալ եւ մերսանեալ էին օրինօք եւ մարգարէիք եւ զհեթանոսս յերկիրս կորդ եւ առանց սերման ծածկեալս:

**Հարց.** Ընդէ՞ր է, զի երեւի, թէ «Ստեաց Աստուած զերդումն» (Ա Մակ. Ձ 62), որպէս ասէ. **Երդուա Տէր ի զօրութիւն իւր, թէ ոչ տաց զքեզ ի ձեռս թշնամեաց քոց** (ԿԲ 8), եւ ետ զնոսս ի ձեռս Տիտոսի եւ Վեսպիանոսի,<sup>\*</sup> եւ թէ ոմանք վասն<sup>1563</sup> չար պատժոց շրջեն զերդումն: Իսկ այն բարի էր:

**Պատասխան** - Ոմանք ասեն, թէ ոչ ետ զնոսս, դարձեալ ի Բաբելոն զերի, եւ այս ոչ է բաւական, այլ այս է, զի Աստուած ոչ երբեք անցանէ զերդումնն եւ զխոստումն Իւր: Այլ մեք յորժամ ոչ արժանի լինիմք խոստման<sup>1564</sup>, զի վասն ուղղութեան խոստանայ զպարգետս եւ երդնու<sup>1565</sup> ի տալն, եւ, ի խոտորելն մեր, մեք ստենք զերդումն եւ ոչ՝ նա:

\* Վեսպասիանոս (69 – 79), Տիտոս (79 – 81) կայսրեր, որոնց ժամանակ Երուսաղեմը հիմնահատակ կործանվեց:

**Իսկ այս ո՞վ է, որ դիմեալ գա յԵդոմայ** (ԿԳ 1ա) Բանս այս յարմարի ի վերայ Եդոմանեցոցն, որք սատակեցան Իսրայելի, յորժամ զատեցան ի Բաբելոնէ, զի սոքա չար դրացիք էին Իսրայելի, որք ասէին. «Քակեցէք զՏաճարն մինչեւ ի հիմն» (Մրկ. ԺԳ 58), իսկ այս ամենայն ուրեք կամ նախդիր է կամ ի տեղի ճշմարտութեան դնի, որպէս եւ աստ: **Ո՞վ է որ դիմեալ գա** (ԿԳ 1բ): **Ովս** այս հարցական եւ հիացական է իբր թէ ինքն զարմանայ եւ զայլս կամի զարմացուցանել, որպէս նախքան զայս ասաց:

**Ո՞վ են նոքա, որ իբրեւ զամպս թռուցեալ են** (Կ, 8), այս ո՞վ է: Յորժամ կամի Աստուած հաւատարիմ առնուլ զբանն: Ըստ պատշաճի ներգործութեանն, այլ եւ այլ դէմս ցուցանէ, որպէս ասէ Ամովս. «Տեսի զՏէր, զի կայր ի վերայ ադամանդեա պարսպի» (Ամովս Է 7), որ նշանակէր զհաստատուն պահպանութիւն: Սոյնպէս եւ Յեսու Նաւեա իբրեւ զօրավար ետես առ ի յօգնութիւն եկեալ: Սոյնպէս եւ աստ տեսանէ Եսայի. **Այր մի, որ դիմեալ զայր յԵդոմայ ի հանդերձս թաթաւեալս, գօտի ընդ մէջ իբրեւ հնձանահարի, որ լի հնձան կոխեսցէ,**<sup>1566</sup> **կարմրութիւն ձորձոց իւրոց ի Բոսորա** (ԿԳ 1-2): Չտեղին յանուանէ յիշէ<sup>1567</sup> զի անտի ցուցանէ զհարուածս: Չի **Բոսորն** զառաւել մթագոյն կարմիրն նշանակէ:

**Գեղեցիկ պատմուճանաւ** (ԿԳ 1): Եւ որպէ՞ս իցէ **գեղեցիկ**. զի ասաց, թէ **թաթաւեալ** էր ի կարմրութիւն Բոսորա: Եւ գեղեցիկ յայնժամ է, յորժամ ի սուրբ իցէ պատմուճանն: Այն իսկ է զարմանք եւ մարգարէն զարմանայր: Եւ յորժամ Աստուած զսքանչելի իրս գործէ՝ դու զիարդն մ՛ քննէր\*:

**Եւ բուռն զօրութեամբ:** Այսինքն՝ հզօր եւ համեստ, զի այնպիսի երևէր դէմքն, եւ զի եհարց մարգարէն թէ. **Այս ով է**, ապա պատասխանի առնէ. Ես խօսիմ զարդարութիւն (ԿԳ, 1), այսինքն՝ ես առնեմ զարդարութիւն, զի խօսելն Աստուծոյ գործ յայտնէ\*\*, ըստ այնմ. «Ասաց եւ եղեն հրամայեաց եւ հաստատեցան» (Ծնդ. Ա 4), եւ Յովէլ ասէ. «Հզօր են գործք պատգամաց նորա» (Յովէլ Բ 2): **Վասն էր կարմիր են ձորձոք քո իբրեւ հնձանահարի:** Ոչ միայն արիւն էր եւ ոչ զինի սուրբ, այլ ի մէջ երկուց գունոցն. վասն այն հարցանէ մարգարէն: Չի հնձանահարաց<sup>1568</sup> ձեռոյն զդիրութիւն պատերազմին ցուցանէր եւ յարեցնէն<sup>1569</sup> ցուցանէ, թէ ոչ զինի էր, զոր կոխէր, այլ՝ արիւն, եւ ոչ սակաւ ինչ ցայտեալ, այլ՝ քաջ թաթաւեալ, զի զայն յայտնէ լի հնձանի կոխելն, պատասխանէ ինքն. **Հնձան հարի միայն, եւ ի հեթանոսաց ոչ որ էր ընդ իս** (ԿԳ 3): Եւ զի չէ վասն հնձանի բանս, յայտնի է, որ ասէ, թէ՛ **ի հեթանոսաց ոչ որ էր ընդ իս**, այսինքն՝ յեղէ կարօտ օգնականի, չկոչեցի զոք զօրավիզն: Այն է զի Իսրայել միայն կոտորեաց զԵդոմ յետ դարձին:

\* Միտքը աստվածաբանորեն համերաշխվում է թեոդոտոս Անկյուրացու (Ե դ.) հետևյալ խորհրդածության հետ. «Քանզի յորժամ սքանչելիս ասացից քեզ ի բաց թող գյածունն խորհրդոցդ, զի նշան եւ արուեստք Աստուծոյ հաւատովք զօրանան եւ ոչ բանիւք խուզին»- տես «Էջմիածին», 2005, Ե, էջ 92:

**Կոխեցի զնոսա սրտմտութեամբ իմով եւ ճնլեցի եւ իջուցի զարիւն նոցա յերկիր:** Այն է, որ ասաց Աբդիու թէ. «Բարձրասցիս եւ ի մէջ աստեղաց ղիցես զբուն քո, եւ անտի իջուցից զքեզ» (Աբդիու 4), եւ թէ վասն է՞ր կոխեցեր, ասէ.

**Չի հասեալ էր օրն հատուցման նոցա եւ ամ փրկութեան եկեալ հասեալ (ԿԳ 4):** Այն է **օր հատուցմանն**, որ յԵդոմաեցոցն վրէժս առնոյր եւ նեղելոցն փրկութիւն գործէր: Եւ զի մի յորժամ սրտմտութիւն եւ բարկութիւն լսիցես Աստուծոյ ախտս ինչ անհանճարս կարծիցես Նմա, որպէս առ մեզ: Վասն այն ասէ. **Ես խօսիմ զարդարութիւն եւ Օր հատուցման նոցա հասեալ է (ԿԳ 1-4).** զի սրտմտութիւնն առ Աստուած արդար հատուցմունքն է: Այնու, որ կոտորէր զԵդոմաեցիսն եւ փրկէր զԻսրայէլ (Տե՛ս Ծնդ. ԻԷ 29, Գ Թագ. ԺԱ 15, Ա Մնաց, ԺԸ 11-13), ցուցանէ, թէ յերկուսին զօրաւոր է Աստուած ի պատժելն եւ ի բարեգործելն: Դարձեալ միտ ղիցուք եւ այլ ասաց ի կարգին: **Չի կրկին է մարգարէութիւնս, նախ յանմարմին զօրութիւնն եւ ի վերայ Իսրայէլի է օրինակաւ, իսկ ճշմարտութեամբ՝ ի մարդէղութիւնն Քրիստոսի կատարի, զի արիւնագոյն տեսանէր մարգարէն զՔրիստոս, իբր յաղթող ի պատերազմէ եկեալ:** Որպէս եւ Ինքն Տէր մեր ասաց. Ոչ ոք կապէ զհօրն, եթէ ոչ զկազմուած նորա հանէ ի նմանէ (տե՛ս Մտթ. ԺԲ 29, Մրկ. Գ 27): Եւ դարձեալ. «Քաջալերեցարուք, զի Ես յաղթեցի աշխարհի» (Յովհ. ԺՁ 33), եւ դարձեալ՝ «Գերեաց զգերութիւն առ աւար» (Մտթ. ԺԲ 29, Մրկ. Գ 27), եւ թէ՛ «Եհան ի բանտէ զկապեալսն», (ԽԲ 7) եւ թէ՛ «Չղբունս պղնձիս եւ զնիզս երկաթիս խորտակեաց»- (ԽԵ 2) այսինքն՝ զմեղս եւ զմահ, եւ թէ՛ «Առ զէն եւ զասպար քո» (Սղմ. ԼԳ 2), եւ թէ՛ «Ած զսուր ընդ քո մէջ հօր» (Սղմ. ԽԳ 4): Եւ Սիմեոն ասէր. «Սա կա ի գորումն եւ ի կանգնում բազմաց եւ ի նշան հակառակութեան» (Դկ. Բ 34): Եւ այլ բազումք, որ ցուցանեն զյաղթութիւնն Քրիստոսի: Նոյնպէս եւ աստ այնպէս երեւի, թէ զբազումս կոտորեալ ելանէ յԵդովմայ:

**Կարմրութիւն ձորձոց իրոց ի Բոսորա: Բոսորն** մերձ է Եդոմայ, որ նշանակէ զԲեդղահեմ, որ յԵդոմայեցոց կողմանեն<sup>1570</sup> կա, ուստի երեւեցաւ Աստուած մարմնով: **Կարմրութիւն ձորձոց.** որպէս նահապետն Յակոբ ասաց. «Լուսացէ ի զինի զպատմունճան իւրոյ եւ յարիւն խաղողոյ զձորձս իւր» (Ծնդ. ԽԹ 11):

**Գեղեցիկ պատմունճանաւ,** վասն կրկին ասէ.

Նախ՝ զի մի գձուծ ինչ համարիցիս զնա, վասն ասելոյն թէ՛ **Նուազ էր տեսիլ նորա քան զմարդկան (ԾԳ 3),** զի յաղքատ մօրէ ծնաւ եւ ի մսուր եղաւ եւ խոնարհ շրջեցաւ եւ չարչարեցաւ, վասն որոյ ասէ. **գեղեցիկ էր պատմունճանաւ (ԿԳ 1),** որպէս եւ Դաւիթ ասէ. «Գեղեցիկ տեսանելեալ քան զամենայն որոց» (Սղմ. ԽԳ 3):

\*\* Միտքը աստվածաբանական արձագանքն է Եղիշեի Արարածոց մեկնության հետևյալ տեղիների- «Եւ զի ասաց- Արար Աստուած զհաստատութիւնն--- **զի ասացն արար է**», «բնական կամքն Աստուծոյ իմանալ եւ առնել ինչ»- Լ. Խաչիկյան, Եղիշեի Արարածոց մեկնությունը, Եր., 1992, էջ 234, 264:

Երկրորդ՝ զի այլ եւ այլ կերպարանօք երեւեր իւրաքանչիւր ումեք, զի ըստ չափոյ հաւատոցն չափեր եւ գերեւումն, զի այլազգ երեւեր հրէիցն եւ այլ՝ առաքելոցն, այլազգ՝ Կղեոպեանցն երեւեցաւ եւ այլազգ՝ դրօքն փակելովք: Որ եւ Մարիամու այլազգ յառաջագոյն եւ այլազգ՝ յետ յարութեանն երեւեր, զոր երբեմն «պարտիզպան» կոչէր եւ երբեմն «Բաբունի» կոչէր (տե՛ս Յովհ. Ի 15, 16), որպէս եւ Հայր նորա երբեմն ի բոց հրոյ երեւեր Դանիէլի եւ երբեմն՝ «ծեր» եւ «հինաւորց» (Դան. Է 9, 13, 22): «Հուր» զպատժականն<sup>1571</sup> նշանակէր եւ «ծերն»՝ զանսկիզբ բնութիւնն եւ ոչ թէ բնութիւն ինչ փոխիւր. քաւ լիցի: Նոյնպէս եւ աստ ըստ պատշաճի տեղոյն փոխէր զկերպարանն ի կարմիր ձորձու եւ ի գեղեցիկ պատմութեան: Դարձեալ պատմութեանն Քրիստոսի եկեղեցի է, որպէս ասաց վերոյ. «Կենդանի եմ Ես ասէ Տէր» (Յովհ. ԺԴ 19), զի «զձեզ զամենեսեան իբրեւ զհանդերձ զգեցայց»: Եւ զայս ոչ համարեցաւ բաւական այլ. «Ես հանդերձ ձեր եմ եւ դուք՝ իմ «որպէս ասացաւ». Յնձասցէ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց հանդերձ փրկութեան եւ պատմութեանն ուրախութեան» (ԿԱ 10), զի որ. «Ի Քրիստոս մկրտեցաք զՔրիստոս զգեցաք» (Գաղ. Գ 27), ասէ Պօղոս: Եւ զի՞նչ է **հանդերձն**. այն է, որ ասէ դարձեալ Պօղոս. «Մարմին եմք ի մարմնոյ նորա եւ ոսկեր յոսկերաց նորա» ( Գաղ. Ե 30): **Բունն**<sup>1572</sup> **զօրութեամբ**, ոչ բռնութիւն ինչ ասէ, այլ զզօրութիւն եւ զուղղութիւն իրացն ցուցանէ, զի թէ ոք զիրսն քննեսցէ բռնութեամբ են, բայց զօրութիւն է նմա, որ ուղղութեամբ ի գլուխ տեան զգործն:

**Հարց - Ես խօսիմ զարդարութիւն եւ իրաւունս փրկութեան (ԿԳ 1), ետարց մարգարէն թէ՛ Այս ո՞վ է:**

**Պատասխան** - Ոչ ասաց թէ Ո՞վ իցեմ, այլ թէ՛ **Ես: Եսն** դերանուն է, որպէս մարդն զընդհանուրն յայտնէ եւ Պետրոսն՝ զյատուկն, նոյնպէս ասելն **Ես** միոյ դիմաց է, այլ յատուկ զո՞վն ոչ ցուցանէ, վասն որոյ ասէ. **Ես խօսիմ**, զի ցուցցէ թէ Էութիւն նորա առանց քննելոյ են, **խօսիմ զարդարութիւն եւ զիրաւունս փրկութեան**: Այսինքն՝ առնեն արդար դատաստան, զի զկենդանիս ի մեղաց արդարս առնեն եւ զՀոգիս ի տանջանաց փրկեն եւ զթշնամին սատանայ իրամամբք դատապարտեն:

**Ընդէր կարմիր են ձորձք քո իբրեւ հնձանահարի (ԿԳ 2):** Գիտէք իսկ խորհրդոցն միջախումբք, զի միեւնոյն է արիւն եւ զինի: Այսինքն՝ զի արիւնն ջուր է կարմրացեալ ի լերդէն, եւ զինին ջուր է որակացեալ յորթոյ կամ միեւնոյն է զինին եւ արիւնն խորհրդական, զոր ետ մեզ Քրիստոս:

**Հնձան հարի միայն:** Արդարեւ միայն Աստուծոյ<sup>1573</sup> վայել են այնպիսի գործք եւ ոչ մարդոյ կամ հրեշտակի, որպէս ասէ մարգարէս.

**Ոչ պատգամաւոր ոք եւ ոչ հրեշտակ, այլ ինքնին Տէր փրկեսցէ զմեզ (ԿԳ 9):** Եւ այս վասն երկու պատճառի. նախ՝ զի ոչ ոք կարէր նորոգել զմեզ, բայց միայն որ Ստեղծն:

Երկրորդ՝ զի մի դարձեալ<sup>1574</sup> դիւապաշտ եւ մարդապաշտ լիցուք վասն որոյ **Ինքնին Տէր** մեր, որ արարն նա **փրկեաց**, եւ պաշտելովն զՆա ի լոյս աստուածգիտութեան ամաք:

**Եւ ի հեթանոսաց ոչ ոք էր ընդ իս** (ԿԳ 3ա): Ոչ ասէ թէ՛ ի<sup>1575</sup> հրէից, այլ թէ՛ **ի հեթանոսաց ոչ ոք էր**: Այս է, զի Ինքն փրկիչն<sup>1576</sup> մեր յազգէ Հրէիցն էր, ըստ այնմ գիտեմք, զի փրկութիւն ի հրէից է:

**Սրտմտութեամբ իմով կոխեցի** (ԿԳ 3բ): Այսինքն՝ զթշնամիսն՝ զսատանայ եւ զմահ: Դարձեալ այսու, որ ասացաւ եւ վերանալն Քրիստոսի յերկինս ակնարկէ մարգարէս, որպէս եւ զայլ ամենայն տնօրէնութիւնս նորա յայտնեաց Հոգին ի ձեռն մարգարէիցն, նոյնպէս եւ զայս:

**Իսկ այս ո՞վ է, որ դիմեալ գայ յԵղովմայ** (ԿԳ 1): Զի յերկինս հանդերձեալ էր ելանել ի սեփական փառս իւր կրեալ զամենայն վասն մեր, հիացեալ երկնային զօրութիւնքն ասեն: **Ո՞վ է Սա, որ դիմեալ գա յԵղովմայ**, այսինքն՝ յերկրէ յերկինս ելանէ: Դարձեալ՝ **Ո՞վ է Սա**, որ զերկրային մարմինս յերկինս յանէ, զի **Եղովմն** երկիր թարգմանի, վասն զի ել յերկինս ոչ որպէս էջն, զի էջ անմարմին եւ ապա խառնեաց անշփոթաբար մարմին աստուածայնովն զօրութեամբ, վասն որոյ յելն վերին ասէին անմարմինքն. **Ո՞վ է Սա**, զի ոչ ոք սոյնպէս էջ ի վերուստ: **Ո՞վ է Սա, որ գայ**. մեք այսպիսի ընդունել ոչ ուսաք, մարմին ոչ օդաւ վարի, մարդ օդագնաց ոչ լինի: Եւ թէ ոք ասիցէ. Ահա եւ թռչունք մարմին գոլով օդավար լինին: Ասեմ թէ եւ նոքա ոչ են մարդ, այլ եւ թեւօք թռչին եւ դարձեալ, թէ ասիցէ ոք ահա Ենովք եւ Եղիա, երկնագնացք եղեն: Ասեմ, թէ նոքա ոչ իւրոց զօրութեամբն, այլ հրեղէն կառօք, այսինքն՝ հրեշտակք տանէին, այլ եւ ոչ վերնագոյն երկնային զօրութեանցն<sup>1577</sup>: Եւ տարակուսելի է իրն զի զառ ի ստորին ճանապարհս եւ զմարդէտութեան հանգամանքս անհաս արար ի նոցանէ: Վասն այն ընդ ելանելն սքանչանային, թէ՛ **Ո՞վ է Սա, որ դիմեալ գա յԵղովմայ**:

**Հարց** . Եթէ ոք ասիցէ, թէ. Ընդէ՞ր ոչ գիտէին նոքա, զի զաւետիս Կուսին ետ Գաբրիէլ եւ ի ծննդեանն բազմութիւնք երկնաւորաց իջեալ, եւ այլուր «Հրեշտակք մատեան եւ պաշտեցին զնա» եւ «հրեշտակք զօրացուցանէին», ասէ (տե՛ս Դուկ. Ա 1, 13, Մտթ. Գ 11):

**Պատասխան** - Եւ Հրեշտակք ետուն զաւետիս յարութեանն, առ այս կրկին է լուծումն.

Նախ՝ զի որք սպասաւորէին ի տնօրէնութիւնն ի հրեշտակաց եւ ի պետաց դասուն<sup>1578</sup> էին, որք են վերջին քահանայապետութիւնք: Իսկ որք ի տեսանելն հիացան, նոքա չէին տեղեակք տնօրէնութեան նորա, այսինքն՝ իշխանութեանց դասուցն<sup>1579</sup>, որք են միջին քահանայապետութիւնք, որպէս ասէ Դաւիթ<sup>1580</sup> «Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր» (Սղմ. ԻԳ 7-9), ասէին զայս ներքինքն առ վերինքն: Իսկ նոքա հարցանէին. «Ո՞վ է սա թագաւոր փառաց» ( Սղմ. ԻԳ 8) պատասխանէին. «Տէր զօրութեանց, Ինքն թագաւոր փառաց» ( Սղմ. ԻԳ 8-10): Երկրորդ՝ զի հրեշտակք նախքան զգործն կամ ի սկիզբն գործոյն

զկատարածն ոչ գիտէին, զի միայն Աստուծոյ է այս, այլ զոր ինչ յայտնէ Աստուած, զայն գիտեն: Արդ, հրեշտակք գիտէին զանօրէնութիւնն, որոց սպասատրեցին, այլ զլինելոցն ոչ գիտէին: Զի գիտէին զմարմին լինել Աստուծոյ Բանին, այլ թէ զմարմինն Իւր տա ի կերակուր՝ զայն ոչ գիտէին: Գիտէին զփրկութիւն հրէից, այլ զկոչումն հեթանոսաց ոչ գիտէին: Տեսին եւ զյարութիւն այլ զվերանալն ոչ գիտէին, եւ զընդաջմէ Հօր նստելն, զվերագոյնն ամենայն երկնատրացն զայն ոչ գիտէին, այլ զայս եւ զնմանք սոցա յեկեղեցոյ ուսան զբազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ, որպէս ասէ Պօղոս յԵփեսացոց (Եփես. Գ 20-21): Վասն որոյ զարմացեալ ասէին-

**Ո՞վ է սա, որ դիմեալ զայ յԵղովմայ: Կարմրութիւն ձորձոց իւրոց ի Բոսորայ: Բոսորն մարմին թարգմանի: Կարմրութիւն ձորձոցն ի մարմնոյն է, ասէ, այսինքն է՝ երին, որ բխեաց ի կողից նորա, քանզի պահէ զկողն եւ զարիւնն առ ի յանդիմանութիւն հրէիցն, զի մի՛ փառօքն տեսանել ուրասցին, թէ զնա մեք խաչեցաք:**

**Գեղեցիկ պատմութեանաւ**, քանզի զմեր անարգութիւնս առ ընկալաւ եւ չարչարանօքն իւր ազատեաց զմեզ, այսինքն՝ յառաջին յանցանացն, տրտմութեամբն՝ զտրտմութիւնն, քրտամբն՝ զքիրտն երեսաց, փշեղէն պսակաւն՝ զփուշ անիծիցն, անարգութեամբ՝ թքովն, մերկութեամբն ոտիւքն ձեռօքն, լեզեաւն եւ զայլսն, վասն որոյ ասէ մարգարէն. **Տեսաք մեք զնա եւ ոչ նոր տեսիլ** եւ այլն (ԾԳ 2): Եւ զի այսմ ամենայնի յաղթեաց ելեալ յերկինս, եցոյց վերնոցն զԱստուածութիւնն առանց թշնամանաց այսինքն՝ զի ի չարչարելն մնաց առանց չարչարանաց եւ ի թշնամանելն՝ առանց թշնամանաց: Վասն այն ասէ.

**Գեղեցիկ է պատմութեանաւ բունն՝ զօրութեամբ** (ԿԳ, 1), բռնութիւնն զօրութիւն թարգմանի, որ է հզօր զօրութեամբ ասեն: Արդ, այս ի վերին զօրութեանցն: Առ այս եւ Քրիստոս պատասխանէ եւ ասէ. **Ես խօսիմ զարդարութիւն եւ իրաւունս փրկութեան** (ԿԳ 1), կամ որպէս ոմանք սոյնպէս բաժանելով դնեն զկէտն թէ՛ հանդերձ **զօրութեամբ Ես խօսիմ զարդարութիւն**: Եւ ո՞ր է զօրութիւնն, ասես. Ի խաչն ելեալ փրկեաց զաշխարհս: Ահա զօրութիւնն հանդերձ արդարութեամբ, քանզի ի բազում ժամանակս էառ զմարդիկ եւ ծառայեցոյց իւր բանասարկուն սատանայ, եկն, եհաս ճշմարիտ Հովիւն, ի բաց կորզեաց ի զայլոյն : Եւ եր այս<sup>1581</sup> գործ արդարութեան, վասն որոյ ասէ. Հանդերձ **զօրութեամբ. Ես խօսիմ զարդարութիւն** (ԿԳ 1): Եւ տես զգործն ասէ, եւ զպատիւն լռէ, քանզի հարցեալ, թէ **Ո՞վ է Սա**, ոչ ասաց թէ՛ Ես եմ ձեր, այլ ի գործոյն կամի ցուցանել զԻնքն՝ **խօսիմ**, ասէ, **զարդարութիւն**: Եւ զայս ասացեալ լռեաց:

**Հարց. Ընդէ՞ր են կարմիր ձորձք քո իբրեւ հնձանահարի** (ԿԳ, 2):

**Պատասխան.** իսկ Փրկիչն մեր որպէս յերկրի զմարդիկ ուսոյց, զԻւր վասն մեր չարչարելն: Նոյնպէս ելեալ յերկինս, զերկնայինս ուսուցանէ, թէ՛ **Հնձան հարի**: Եւ արդարեւ, **հնձանահար** ախտից մերոց եւ չարչարանաց եւ զողկոյզն նոցա ճմլեաց,



այսինքն՝ զսատանայ, ուստի էին ախտք մեր եւ չարչարանք: Եւ միոյն ասէ. **հարի զհնձանն** եւ կարի քաջ, զի այլ ո՞վ որ վասն մեր չարչարեցաւ, «Միթէ՞ Պօղոս ի խաչ ելեալ իցէ վասն ձեր» (Ա Կորնթ. Ա 13), գրէ առաքեալն: Բայց զի միայն ասէ **Հնձան հարի**: Զգոյշ լեր, մի արտաքս հաներ ի փրկագործ տնօրէնութենէն զՀայր եւ զՀոգին, զի Հայր կամակից էր եւ Հոգին գործակից, թէպէտ<sup>1582</sup> ոչ չարչարեցան, զի ոչ առին մարմին: Այլ եւ ոչ նա բնութեամբ Աստուածութեանն չարչարեցաւ, այլ ընկալաւ յաղագս մեր՝ տնօրէնութեամբ, յինքն զչարչարանս, այսինքն՝ զի միատրութեամբն չարչարեցաւ եւ ոչ չարչարեցաւ, քանզի Աստուած էր, ըստ բնութեանն: **Հնձան հարի միայն եւ ի հեթանոսաց**, որ է յազգաց **ոչ որ էր ընդ իս** ոչ արդար եւ ոչ հայրապետ<sup>1583</sup>, ոչ մարգարէ եւ ոչ սուրբ որ, ըստ այնմ «Բարեկամք իմ եւ մերձաւորք հեռի կային յինէն» (Սղմ. ԼԷ 12), զի. «Ամենեքեան թողին զնա եւ փախեան, ասէ Աւետարանն» (Մտթ. ԻԶ 56): «Միայն յաղթեցի եւ պարգեւեմ<sup>1584</sup> իմոցն զյաղթութիւն» (Ա Յովհ. Ե 4), այսինքն՝ մեղաց եւ մահու եւ թշնամոյն, ըստ այնմ. «Ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս եւ զկարիճս» (ՂԿ. Ժ 19), եւ թէ. «Մի՛ երկնչիք յայնմանէ, որ զմարմին սպանանեն» (Ղկ. ԺԲ 4), ապա յաւելու եւ զպատճառս կոխելոյ հնձանքն ասէ. **Օր հատուցման եհաս նոցա** (ԿԳ 4): Երկայնամտեցի, ասէ, բանսարկուին, բագում ժամանակս անսացեալ բռնութեան նորա: Եւ զի եհաս օր հատուցման այսքան մեղաց եւ ստացուածոց իմոց քաւիչ լինել կամեցայ ողորմեալ Ադամայ թշնամանողին զիս:

**Եւ փրկեաց զնոսա բագուկ իմ**, զի եհաս ժամանակ եւ զամենայն դեւս հաւաքեալ ի միասին, որպէս զողկոյզ եւ միայն զնոսա հնձան կոխեաց<sup>1585</sup>, ապա, ազդումն ընկալեալ երկնաւոր զօրացն ի բարբառոյ Տեառն. պատասխանի. տան առ այս Տեառն եւ ասեն. **Զողորմութիւնս Տեառն յիշեցի** (ԿԳ 7), այսինքն՝ զի զիտեմք զինչ<sup>1586</sup> ասաց ի ձեռն այլոց մարգարէիցն՝ զալ եւ յերկրի մարմնով երեւել եւ չարչարանօք զմարդիկ փրկել, որպէս եւ տեսանեմք դէմ յանդիման: Վասն այսորիկ զողորմութիւնս Տեառն յիշեմք:

- ԾԸ -

**Հարց.** ասէ մարգարէս, **Տէր դատաւոր բարերար** (ԿԳ 7):

**Պատասխան.** Արդ, տեսանեմք ոչ միայն բարիս, այլ եւ պատիժս չար, որպէս զգեհենն եւ զարտաքսեալն ի դրախտէն, զջրհեղեղն եւ զայլսն: Զի մարդիկ երբեմն բարի եւ երբեմն չար առնեն, իսկ Աստուած միշտ զամենայն բարի առնէ եւ չար ոչ երբէք, եւ այն էս, որ մեզ չար թուի, բարերարութիւն է, զի եւ գեհեան ոչ է չար, այլ՝ բարի վասն կրկին պատճառի. Նախ՝ զի մերժեալ որոշեաց զնա, զի մի՛ վնասեցի երկիր եւ կենդանիք՝ ի նմանէ: Երկրորդ՝ զի յերկիւղէ նորա ոմանք զբարիս գործեն, այլ եւ դրախտէն. հանելն բարերարութիւն էր. Նախ՝ զի մի ուտելովն ի պտղոյն կենաց յարաժամ ի չարիս մնացուք<sup>1587</sup>: Երկրորդ՝ զի ապաշխարութեամբ վերստին զխոստացեալն ժառանգեցեն: Նոյնպէս իմա եւ զայլ պատուհասն զմահն եւ զանէծս եւ զայլսն, զի փրկութիւն եղել մեզ<sup>1588</sup> բարերար<sup>1589</sup>

պատուհասն, որպէս ասէ ոմն ի սրբոց հարցն մերոց: Այլ եւ հեղեղ ջուրցն եւ հուրն ի Սողոմ եւ Փարաւոնին եւ այլքն նմանապէս բարերարութիւն է կրկին յեղանակաւ: Նախ՝ զի կարճեսցի<sup>1590</sup> չարիք նոցա, երկրորդ՝ զի այլոց օրինակ լիցին:

**Յայտնի եղէ այնորիկ, որ զինէն ոչ հարցանէին, գտա այնոցիկ, որ զԻսն ոչ խնդրէին** (ԿԵ 1), Վասն Ռոբոյ է բանս յազգս հեթանոսաց, որպէս ասէ Պօղոս: Համարձակեցաւ Եսայի<sup>1591</sup> եւ ոչ երկեալ ի հրէիցն ասելով զայս: Իսկ ի վերայ հրէիցն կամ զայն ասէ, որ սքանչելեօք յայտնեցաւ ի նոսա, կամ թէ այնոցիկ, որ ոչ հարցանէին, **յայտնի եղէ՝** որչափ եւս առաւել՝ ձեզ, կամ թէ զերախտիքն ցուցանէ, թէ ոչ դուք խնդրեցէք զիս, այլ Ես ընտրեցի զձեզ, եւ Պօղոս կոչեցեալ եւ առաքեալ զինքենէ ասէր. «Եւ թէ յառաջ քան զլինելն աշխարհի ընտրեաց զմեզ» (Եփես. Ա 4):

**Չոր հանապազ ձգեցի զձեռն իմ առ ժողովուրդն անհաւան եւ հակառակող:** Այն է, որ ասաց Տէր մեր «Երուսաղէմ, Երուսաղէմ, բազում անգամ կամեցայ ժողովել զքեզ եւ ոչ կամեցարո՞ւք» (Բկ. ԺԳ 34): Դարձեալ զօրն տիւ ձգեաց զձեռն իւր<sup>1592</sup> ի վերայ խաչին ի մէջ ապստամբ ժողովրդեանն: Դարձեալ յառաջագոյն բազում անգամ առաքեաց զմարգարէսն մեծամեծ նշանօք եւ ոչ հաւանեցան **հակառակողքն**, «այլ զոմանս սպանին եւ զայլս քարկոծեցին եւ զայլսն՝ այլապէս» (Մրկ. ԺԲ 7):

- ԾԹ -

**Այսպէս ասէ Տէր. Չոր օրինակ, թէ գտանիցէ<sup>1592ա</sup> ճիւղ ի մէջ ողկուզաց, (ԿԵ 8) եւ ասիցէ այր ցրնկեր իւր. Մի ապականէր զդա, զի օրհնութիւն Տեառն զոյ ի դմա** (ԿԳ 8), զի **ճիւղ** օրհնութեան օրինակ է զարդարսն ի մէջ ժողովրդոցն, իսկ Քրիստոս՝ ի մէջ արդարոցն, որ ծածկեալ էր եւ զայր յառաջինսն ի դարս արդարս: Չի որպէս վասն միոյ պտղոյն բոլոր ողկոյզն, նոյնպէս ի պատճառս արդարոց բոլոր ժողովուրդն եւ ի պատճառս Քրիստոսի արդարքն մնային: **Օրհնութիւն Տեառն զոյ ի դմա**, այսինքն՝ արդարութիւն, սրբութիւն կամ փրկութիւն Տեառն:

**Վասն որոյ ոչ կորուսից զամենեսեան** (ԿԵ 8): Վասն նորա ասէ **զամենեսեան փրկեմ**, ըստ այնմ. **Եթէ ոչ Տեառն զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ** (Ա 1) եւ այլն:

**Եւ ժառանգեսցեն ընտրեալքն իմ եւ ծառայքն իմ** (ԿԵ 9) աստ զԵրուսաղէմ եւ անդ՝ զարքայութիւնն: Բայց երկու են սոքա, այսինքն՝ ընտրեալն Աստուծոյ, ըստ այնմ՝ «Յառաջ քան զլինելն աշխարհի ընտրեաց» (Եփես. Ա 4), իսկ ծառայելն մեզ եւ ապա լինի ժառանգութիւն:

**Այլ դուք, որ թողէք զիս եւ մոռացարո՞ւք, մատնեցից զձեզ ի սուր** (ԿԵ 11), աստ՝ թշնամեաց եւ անդ՝ տանջանացն: Եւ զի՞նչ է պատճառն. այդ է, որ ասէ. **Կոչեցի զձեզ մարգարէիքն եւ քարոզչօքն եւ ոչ լուարո՞ւք** (ԿԵ 12), **Խաւսեցայ** դէմ յանդիման եւ **ստունգանեցէք<sup>1593</sup>** (ԿԵ 12), այսինքն՝ խցէք զականջս: **Եւ զոր ոչն կամէի՝ ընտրեցէք**, այս է

մեղքն՝ չառնելն զկամս Աստուծոյ, զի թէ բարի կարծէ<sup>1594</sup> մարդ եւ զհետ իւր ընտրութեան կամացն երթայ՝ չար է առաջի Աստուծոյ: Եւ թէպէտ չար թոյի քեզ եւ կամօքն Աստուծոյ լինի՝ բարի է այն որպէս պոռնկութիւնն Ովսէի եւ սպանութիւնն Եղիայի եւ Փենէհեսի<sup>1595</sup> եւ դաւաճանելն զեգիպտացիսն:

**Վասն այտորիկ. Որ ծառայեն ինձ կերիցեն** զմարմին կենդանարար եւ **դուք սովեսջիք** (ԿԵ 13), եւ **Նորա արբցեն** զդեղն կենաց եւ **դուք ծարաւեսջիք** եւ նորա ուրախ լիցին ի դառնալն իւրեանց,<sup>1596</sup> եւ դուք տրտմեսջիք ի մոլորութիւնն<sup>1597</sup> ձեր, զի բարեաց ուրախութիւն ցնծութիւն է հոգեւոր, զի միշտ ցաւի հոգին ի խղճէ մտացն:

**Չի թողջիք զանուն ձեր ի յագուրդ ընտրելոց<sup>1598</sup> ինոց** (ԿԵ 15), այսինքն՝ ի յատելութիւն, զի որպէս յագեալն արհամարիէ գիրն, նոյնպէս եւ յիշատակ մեղաւորացն անարգէ ի միտս արդարոցն, թէպէտ ազգակից են ըստ մարմնոյ:

**Եւ ծառայիցն ինոց կոչեսցի անուն նորա** (ԿԵ 15): Յայտ է եկեղեցոյ, ըստ այնմ. «Ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի իմ» (Մտթ. ԺԶ 18), կամ Իսրայէլ Աստուծոյ, կամ Քրիստոնէայ, որ յԱնտիոք կոչեցաւ կամ կամք Աստուծոյ, որպէս ասաց մարգարէիս **Քեզ անուն կոչեսցի կամք իմ** (ԿԲ 4), այսինքն՝ առնելովն կամք Աստուծոյ:

**Եղիցի երկինք նոր եւ երկիր նոր** (ԿԵ 17). Նախ՝ Իսրայէլացոցն յետ դարձին **նոր եղև երկինք** ցօղով եւ երկիր արմատօք:

Երկրորդ՝ հաւատացելոցն նորոգեցաւ երկիր: Նախ՝ կուսանօք եւ սրբովք, որ եղև ի սմա: Երկրորդ՝ զի ճշմարտութիւնն եգիտ եւ զմոլորութիւնն անարգեցաւ: Երրորդ՝ քարոզութեամբ մեղացն: Չորրորդ՝ զՍուրբ Հոգին ընկալաւ: Հինգերորդ՝ զմարմնոյ եւ արեանն սրբոյ ճաշակումն, իսկ **երկինք նոր**, այսինքն՝ ուրախութիւն երկնաւորացն, վասն դարձի սոցա, նա եւ՝ խոստումն հոգեւոր բարեացն: Երրորդ՝ լինելոց է այս ի կատարածին, որպէս ասէ Պետրոս<sup>1599</sup> Կաթողիկէքն. «Եղիցին երկինք նոր եւ երկիր նոր» ( Բ Պետ. Գ 13), այսինքն՝ զի. ազատեսցին ի ծառայութենէ ապականութեան (Հռովմ. Ը 21), ասէ Պօղոս, զի երկինք ի շարժմանէ դադարին եւ լուսաւորքն ոչ եւս նուագեսցին, իսկ երկիրս ի գարշ թանձրութեանց եւ յապականութեանց նորոգի: Չորրորդ՝ **Նոր** եղիցի **երկիրն** կենդանեաց ի բնակութիւն եւ **երկինք նոր**, զոր յափշտակեցաւ Պօղոս մինչեւ յերրորդ յերկինս \*:

**Որ հարիւրամեանն մեռանիցի մեղաւոր եւ անիծեալ կոչեսցի** (ԿԵ 20)<sup>1600</sup>: Կատարեցաւ այս ի ժողովուրդն յետ դարձին, զի ոչ էր ի նոսա տարածամ մահ, եւ ծեր, որ չէր լցեալ զժամանակս իւր, ոչ մեռանէր թէպէտ մեղաւոր էր, զի վասն մեղացն անիծեալ լինէր, այլ տարածամ ոչ մեռանէր: Եւ այսպէս երկայնակեացք եղեն. Նախ՝ զի ամենայն բարիքն յայն հարիւր ամն տուեալ լինի նոցա: Երկրորդ՝ զի թերեւս յորդորեսցին յառաքինութիւնս,

\* Տե՛ս Անկանոն գիրք Առաքելականք, էջ 101-109:

յայնքան ժամանակս ընդ բարի մարդկան<sup>1601</sup> լինելով, զի ոչ կամի Աստուած ի հարկէ եւ աստիւ առնել պիտանիս այլ՝ կամաւ եւ յօժարութեամբ իւրոց: Երբորդ՝ զի մի ասիցեն, թէ ահաւոր է եւ ոչ կարենք հաճոյանալ նմա: Վասն այնորիկ եւ զկէտ ժամանակին յայտ արար, զի ընդ երկար կենացն եւ զերկայնմտութիւնն իւրոց ցուցանէ նոցա:

**Ըստ ատուրց փայտի կենաց եղիցին ատուրք ժողովրդեանն ինոյ** (ԿԵ 22): Նախ՝ յորդորումն թէ իբրեւ զծառ երկայնակեաց լինելոց<sup>1602</sup> են յետ դարձին: Դարձեալ **փայտ կենաց** փոխանակ այնր, որ ի դրախտին է խաչն Քրիստոսի, որպէս ասէ Մովսէս. «Տեսանիցէք զկեանս ձեր կախեալ զփայտէ» (Թուոց ԻԱ 9): Արդ, հաւատացեալքն իմ ըստ կենաց փայտին մշտնջենաւոր եւ անմահ մնացեն իսկ ասելն **ժողովրդեան ինոյ** զմտերմութիւն եւ զսէրն ցուցանէ առ հաւատացեալս:

**Գործք ձեռաց նորա հնասցին**, (ԿԵ 22) այսինքն՝ մնացեն: Չնոյն բանն երկրորդէ աստ, զաւակ օրինեալ են յԱստուծոյ, զի հաւատոց եւ սրբութեան են որդիք:

**Գայլք եւ գառինք ի միասին ճարակեցին** (ԿԵ 25): Ոմանք Յուդայ եւ յԵփրեմ հանեն զբանս, որք յետ դարձին միաբանեցան, այլ ոչ յարմարի, զի անդ երկու իշխանութիւնքն երկու գազանի նմանութեամբ ցուցանին, իսկ աստ մինն **գազան** է, եւ մինն **գառն**, որ է առակ օրինակի, զի յափշտակողք եւ անմեղք, այսինքն՝ բռնաւորք եւ ռամիկք ի մի եկեղեցի ժողովեցան միոյ աւագանի ծնունդք, զնոյն Հոգի սրբութեան ընկալան եւ ի միասին զճաշակումն մարմնոյ եւ արեանն Քրիստոսի:

**Առիւծն իբրեւ զեզն յարդ կերիցէ** (ԿԵ 25բ) այսինքն՝ գազանաբարոյքն թողին զբարս իւրեանց եւ մտին ընդ վարդապետութեամբ առաքելոցն հեզոց:

**Օձ զհողն իբրեւ զհաց կերիցէ** (ԿԵ 25գ), այսինքն՝ նենգաւորքն, զիւրն ինչ իւրոց բաւական համարեցին:

**Եւ մի մեղիցեն ի լերինն սուրք** (ԿԵ 25դ), այսինքն՝ մի վնասեցեն զոք յորդոցն նորն Երուսաղէմի, որ շինեցաւ ընդ ամենայն տիեզերս: Իսկ **լեռան սուրք** անուանի եկեղեցի. նախ՝ վասն անառիկ ամրութեան, ըստ այնմ. «Դրունք դժոխոց զդա մի՛ յաղթահարեցեն» (Մտք. ԺԶ 18): Երկրորդ՝ վասն բարձրագոյն աւանդիցն, որ յեկեղեցի կատարի խորհուրդ պատարագին որդեգրութեանն Աստուծոյ, թողութեան մեղաց, աստուածախօս հրամանն եւ այլքն ամենայն մեծամեծք խորհուրդք, որ աւանդեալ են յեկեղեցի:

- Կ -

**Այսպէս ասէ Տէր. Երկինք աթոռ Իմ են եւ երկիրս պատուանդան ոտից իմոց, որպիսի՞ տուն շինեցէք ինձ եւ այլն** (ԿԶ, 1): Պատասխանի- այնմ, որ ասէին զսրբութիւնն շինեցին հարքն մեր եւ դու աւերեցեր: Արդ, ասէ, թէ զանբաւ բնութիւնս իմ զիս՞րդ կարիցէ տաճարդ ձեր ընդունել: Յայսմանէ երեւի կրկին ինչ. Նախ՝ անբաւութիւնն Աստուծոյ, որպէս ասացաւ. Չոր երկինք եւ երկիր ոչ կարէին տանել, այլ Ինքն է տանոց ինքեան ըստ այնմ.

«Հայր յիս եւ Ես ի Հայր» (Յովհ. Ժ 38): Երկրորդ՝ տաճարդ ձեր ոչ կարէ տանել զիս, այլ փոքր սիրտ հեզոց եւ խոնարհաց, որ է եկեղեցի հեթանոսաց, ընդարձակ տեղի է շնորհի իմոյ: Եւ արդ, ի միտ առ, ով եղբայր, եւ հարց զհակառակ հրէայն, թէ ըստ ճառին որպէս մեկնեն զբանս զայս, **երկինք աթոռ իմ են եւ երկիրս պատուանդան ոտից իմոց**, զի զամենայն բանս ըստ մարգարէիցն, ըստ գրոյն իմանան, վասն որոյ եւ հեռանան ի Քրիստոս: Արդ, որպէս իմանան մարմինն Աստուծոյ նստեալ ի յերկինս եւ երկեայն ոտիւք հասեալ ի յերկիր: Եւ մեք սոյնպէս լուսք յառաջնորդեն մերմէ<sup>1603</sup>, թէ մեծ վարդապետն Վարդան այսու բանի յամօթ է արարեալ զոմն տրամաբան հրէայ ի Տփղիս<sup>1604</sup> քաղաքի առաջի թագաւորին վրաց եւ մեծամեծաց նորա: Սոյնպէս եւ բանն որ ասէ. **Գայլք եւ գառինք ի միասին ճարակեացին**, զոր անհնար է այսմ մարմնապէս<sup>1605</sup> լինել, թէ պատասպարէին<sup>1606</sup> ի տապանն Նոյի, այլ սա զլինելոցն ասէր<sup>1607</sup>: Եւ կամ թէ այն՝ **եղիցին երկինք նոր եւ երկիր նոր**, այս մարմնապէս ոչ եղի ի դարձին նոցա: Եւ կամ այն, որ ասէր ցԵրուսաղէմ **պատրաստեմ կարկեհան զքարինս քո եւ զհիմունս քո շափիղա եւ զաշտարակս քո յայսպիսի եւ զդրունս քո յականց վանեաց**: Եւ այս ոչ եղի ըստ մարմնոյ: Եւ կամ այն, թէ՛ **Գետ բխեսցեն ի վերայ լերանց եւ լերինք եւ բլուրք խոնարհեացին առաջի քո եւ ամենայն ձորք լցցին** եւ այլն: Սոքա ոչ եղեն ըստ մարմնոյ: Եւ կամ այն. **Ո՞ չափեաց զերկինս թգաւ եւ զերկիր քլաւ եւ զջուր ակնով** եւ այլն: Եւ սոքա ոչ են մարմնապէս: Եւ այլ բազումք նմանք սոցա, որպէս ասացաւ. «Չայս ամենայն ձեռն իմ արար եւ Իմ է ամենայն» (Գործք Է 50): Արուեստաւորն բազում իրօք յատկանայ. Նախ՝ զի այլոյ հրամանաւ առնէ, իսկ Աստուած: «Չայս ամենայն ձեռն իմ արար», ասէ: Երկրորդ՝ նոքա վասն այլոց առնեն, իսկ աստ ասէ. Իմ է ամենայն, եւ Դաւիթ. «Նորա է ծով եւ նա արար զնա» (Սղմ. ԴԴ 5): Երրորդ՝ նոքա նիւթ խնդրեն, իսկ Աստուած յոչընչէ արար, որպէս ասէ.<sup>1608</sup> «Ի սկզբանէ արար զերկին եւ զերկիր» (Ծնդ. Ա 1): Չորրորդ՝ նոքա վասն վարձու առնեն, իսկ Աստուած վասն առատ բարութեան Իւրոյ: Հինգերորդ՝ նոքա աշխատութեամբ գործեն, իսկ Աստուած ասաց եւ եղեն հրամայեաց եւ հաստատեցան: Վեցերորդ՝ նոքա կարօտեն ժամանակի, իսկ Աստուած ոչ է կարօտ, այլ ընդ կամելն գործն կատարի, ըստ այնմ. **Չամենայն ինչ, զոր կամեցաւ եւ արար Տէր** (ԽՉ 10):

Եւ Ես յո՞ հանգեայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս եւ յայնոսիկ, որ դողան բանից իմոց (ԿՉ 2): Տե՛ս, զի սիրտք **հեզոց եւ խոնարհաց** բարձրագոյնք են, քան զերկինս եւ զերագոյնք քան զտաճարս եւ որ պատկառ կան բանից նորա, այսինքն՝ կատարեն զպատուէրս նորա, նոքա են բնակարան Աստուծոյ, ըստ այնմ. «Օթեանս առ նմա արասցուք» (Յովհ. ԺԴ 23): Եւ ո՞րք են, որ **դողան ի բանից** նորա, այսինքն՝ որք խոնարհ են հոգով եւ հեզ՝ բարութ եւ սուրբ են սրտիւք, յաղտոյ մեղաց, զի «նոքա զԱստուած տեսցեն» (Մտք. Ե 8), ասէ:

**Բայց անօրէնն եթէ մատուցանիցէ ինձ եզն պատարագ, այնպէս որպէս հարկանիցէ որ զկառապին մարդոյ (ԿՁ 3) եւ այլն:** Չորս իրօք հաճեցի պատարագն. Նախ՝ զի սուրբ իցէ մատուցողն, զի Աստուած նախ ի մատուցողն<sup>1609</sup>, եւ ապա ի պատարագն հայի<sup>1610</sup>, ըստ այնմ «Հայեցաւ Աստուած ի Հաբել եւ ի պատարագս նորա» (Ծնդ. Դ 4): Ապա թէ ո՞չ սրբեսցէ զանձն, լուիցէ զասացեալս աստ, եթէ՝ **եզն եւ ոչխարն** որպէս մարդոյ եւ շան սպանութիւն է եւ խունկն հայհոյութիւն, զի ոչ այլ ինչ այնպէս բարկացուցանէ զԱստուած, որպէս անարժանութեամբ պատարագն եւ այլոր ասէ. **Ո՞ խնդրեաց զայդ ի ձեռաց ձերոց: Խունկք ձեր պիղծ են եւ զուր է նաշիւն ձեր:** Եւ յաւել զպատճառն, **եւ զի ձեռք ձեր լի են արեամբ,** ասէ, եւ Մաղաքէի<sup>1611</sup> խօսէ<sup>1612</sup>. «Հարից զապաւառ նոցա ընդդէմս ձեր» (Մաղ. Բ 3): Երկրորդ՝ պիտոյ է զի յիրոց<sup>1613</sup> արդար ստացուածոցն իցէ պատարագն, ըստ այնմ. «Չողջակէզս ուղղալից մատուցից քեզ»- (Սղմ. ԿԵ 15) Պատուեա զՏէր ի Քրիստոս Աստուծոյ արդար վաստակոց (Առակ. Գ 9) եւ այլ, «Ապա թէ ոչ զրկեալն ի ձէնջ աղաղակէ եւ բողոք հնձողացն եհաս յականջ Տեառն զօրութեանց (Յակ. Ե 4): Երրորդ՝ զի յընտրելոցն իցէ պատարագն, ըստ այնմ. «Չողջակէզս ուղղալիցս մատուցից քեզ» (Սղմ. ԿԵ 15) եւ թէ՛ «Յուլից եւ ի զառանց պարարտացն իցէ պատարագն քո, զի պարտ է զգեղեցիկսն մասնաւորել Աստուծոյ եւ զայն՝ առատ եւ զուարթ երեսօք, զի այնպէս առատ իցէ ի տալն որպէս թէ առնուցու: Եւ այն է սիրելի Աստուծոյ, ըստ այնմ. «զՏուրս զուարթ առատս սիրէ Աստուած» ( Առակ. ԻԲ 9) է, ապա թէ ոչ որ «Ճշտութեամբ սերմանէ, ճշտութեամբ եւ հնձեսցէ» (Բ Կորնթ. Թ 6 ), ասէ Պօղոս: Չորրորդ՝ զի ի փառս Աստուծոյ առնիցէ եւ ոչ ի ցոյցս մարդկան. Նախ՝ այն է, որ վասն գովութեան առնէ որպէս ասէ Տէրն. «Չի փառաւորեսցիս ի մարդկանէ» (Մտթ. Չ 2): Երկրորդ՝ այն է, որ վասն փոխարինաց առնէ՝ կոչելով զմեծամեծս եւ զբարեկամս, որպէս ասէ Տէրն: Այլ որ աղքատացն առնէ եւ վասն հոգեւորին՝ այն է ի փառս Աստուծոյ:

**Լուարուք զպատգամս Տեառն եւ որ դողայք ի բանից նորա (ԿՁ 5):** Այն է, որ ասէ Չեզ ասեմ, որ լսէքդ, զի նոցա լսելն բաւական է:

**Խօսեցարուք եղբարք ընդ ատելիս ձեր եւ զարշեցուցիչս (ԿՁ 5):** Այն է որ ասէ Տէրն: «Բարի արարէք ատելեաց ձերոց» (Մտթ. Ե 44) եւ այլն, եւ Պօղոս, «Եթէ թշնամին քո քաղցեալ իցէ հաց տուր նմա եւ թէ ծարաւի՝ ջուր եւ զայս արարեալ կայծակունս Հրոյ կուտեսցես ի գլուխ նորա» (Հռոմ. ԺԲ, 20):

**Չի անուն Տեառն փառաւորեսցի,** ըստ այնմ. «Տեսցեն զգործս ձեր եւ փառաւորեսցեն զՀայր ձեր, որ յերկինս» ( Մտթ. Ե 16): Որպէս ընդ ծուլութեան մերում ասէ. **Անուն իմ վասն ձեր հայհոյեսցի ի մէջ հեթանոսաց, ասէ Տէր (ԾԲ 5):**

**Չայն բարբառոյ խոռվութեան ի քաղաքէ յորժամ պատեսցին զնա թշնամիքն (Տե՛ս Ա Մակար. ԺԱ 49): Չայն ի Տաճարէ,** այն է, զոր ետուն բնակիչք քաղաքին, քանզի ի մեծ իմն

յուսացեալ էին ի Տաճարն եւ զայլ բարեգործութեանց անփոյթ առնէին ասելով. «Տաճար Տեառն, Տաճարն Տեառն» (Երեմիա Է 4) ասէ՛ անտի լինիցի սկիզբն ւերման: Եւ աստի յայտ է, զի ի ժամանակի նեղութեանն ոչ ուրեք է ապաստան լինել, այլ՝ յԱստուած եւ յոգոցն առաքինութիւն:

**Ո՞վ<sup>1614</sup> լուսւ, ո՞ ետես, այս զի ոչ եղև այնպիսի ինչ, եթէ երկնից ի միում ատուր եւ ծնաւ ազգ մի ողջոյն** (ԿԶ 8), քանզի ի չորից կողմանց դառնան գերիքն եւ ծնեալ լինին ի միում ատուր, այսինքն՝ ի սուղ ատուրս լնու զքաղաքն:

**Ջի երկնեաց Սիոն եւ ծնաւ զմանկունս իւր** (ԿԶ 8), այս է՝ յանկարծակի ւերն, լցաւ զօրօք՝ ժողովրդօք: Բայց, արդարեւ, ի վերայ նորոյ Սիոնի պատշաճի, որ ծնաւ միանգամայն զազգս ամենայն յորդիս Աստուծոյ:

**Ահաւասիկ ես դարձուցանեմ ի նոսա իբրեւ զգետ խաղաղութիւն եւ իբրեւ զհեղեղատ յորդեալ** (ԿԶ, 12): Չշնորհս պարգեւացն յառակէ ի **գետ** եւ ի **հեղեղ** վասն բազում պատճառաց. Նախ՝ զի որպէս **գետն** եւ **հեղեղն** յորդառատ հոսեն, նոյնպէս եւ<sup>1615</sup> յորդառատ է շնորհքն Աստուծոյ, ըստ այնմ. «Որ ունի տացի եւ յաւելցի նմա» (Մտք. ԻԵ 29): Երկրորդ՝ զի յանկարծակի հոսեն, նոյնպէս եւ շնորհքն Աստուծոյ յորժամ եւ կամի որպէս ի վերնատանն<sup>1616</sup> յանկարծակի շարժեցաւ յորում նստէին եւ լցան ամենեքեան Հոգովն Սրբով (Գործք Բ 2-5): Երրորդ՝ զնոսա ոչ ոք կարէ արգիլել եւ Պօղոս ասէ. «Աստուած է, որ արդարացուցանէ, իսկ արդ ո՞վ է, որ դատապարտ առնիցէ» (Հռովմ. Ը 33-34): Չորրորդ՝ զի եւ այլք տեսանեն, նոյնպէս եւ շնորհքն ոչ միայն որոց տացին, այլ եւ այլքն տեսանեն, ըստ այնմ. «Ոչ կարէ քաղաք թաքչել եւ կամ ճրագն՝ լոյս ամենեցուն, որ ի տունն իցեն» (Մտք. Ե 14): Հինգերորդ՝ **գետք** եւ **հեղեղք** այլ ոչ դառնան յետս եւ Պօղոս ասէ<sup>1617</sup>. «Անգեղջ են ի խոստումն Աստուծոյ» (Հռովմ. ԺԱ 29): Վեցերորդ՝ նոքա ի բարձրավանդիցն ի խոնարհս իջանեն եւ. «Տէր ամբարտավանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց» (Յակ. Գ 6). ասէ: Եւթներորդ՝ ի հեղեղէն եւ ի գետէն սակաւ ինչ առուս պեղէն, նոյնպէս եւ բազումք յարժանացելոցն շնորհացն աշխատութեամբ յինքեանս ձգեն, ըստ այնմ, որ ասէ առակաւ. «Ջրհոր խոր է խորհուրդ սրտի<sup>1618</sup> առն եւ այլ իմաստուն քամեսցէ զնա» (Առակ Ը 5): Նոյնպէս եւ ամենայն ազգ բարութիւն եւ խաղաղութիւն, զոր տայ Աստուած, ըստ այդմ<sup>1619</sup> օրինակի<sup>1620</sup> է, որպէս ասացաւ:

**Ահաւասիկ Տէր իբրեւ զհուր եկեսցէ եւ կառք նորա իբրեւ զմրրիկ յոյժ** (ԿԶ 15). **Մրրիկ եւ հուր** ասելով զերագ եւ զսաստիկ հրամանն Աստուծոյ յայտնէ, ըստ այնմ<sup>1621</sup> որպէս ասէ Մաղաքիա. «Օր Տեառն իբրեւ զհնոց բորբոքեալ է» (Մաղաք- Գ 1), այսինքն՝ ահեղ օր կատարածի աշխարհի, որպէս եւ թէ՛ «Աստուած մեր հուր ծախիչ է» (Եբր. ԺԲ 29): Չայս եւ Դաւիթ ասէ. «Աստուած մեր յայտնապէս եկեսցէ, հուր առաջի նորա բորբոքեսցէ եւ շուրջ

զնովաւ մրրիկ յոյժ» (Մդմ. ԽԹ 3): Եւ Տէրն. «Որպէս փայլակն ասէ այնպէս եղիցի զալուստն Որդոյ մարդոյ» (Մատթ. 27):

**Չի ի հուր Տեառն դատեցի երկիր ամենայն** (ԿԶ 16). Նախ՝ զթշնամեաց ակնարկէ, որով յետ դարձին<sup>1622</sup> դատեցին զԵրուսաղէմ ի հուր առակելով<sup>1623</sup> եւ ապա զհանդերձելոյն ակնարկէ որպէս ասէ Պետրոս ի Կաթողիկէն<sup>1624</sup> «Երկինք եւ երկիր հրոյ գանձեալ պահին» (Բ Պետ. Գ 7): Եւ Պօղոս ասէ. «Օրն ընտրեցէ, զի հրով յայտնելոց է» (Ա Կորնթ. Գ 13): Եւ արդ, **հրով** Նախ՝ զպայծառութիւն սրբոցն նշանակէ, որք ունին զշինուածս գործոց. ոսկի արծաթ, ականս պատուականս, որք առաւել լուսատրին: Երկրորդ՝ զպատիժ մեղատրաց յայտ առնէ, որք ունին զշինուածս գործոցն, փայտ, խոտ, եղէգն, որք դիւրավատնելիք են հրոյ, եւ այլ յատկութիւնք հրոյ գրեալ է այլ ուրեք:

**Որ ուտեն միս խոզենի եւ զմուկն ի միասին սատակեցին նոքա** (ԿԶ 17), զի սոքօք արհամարհեցեն զօրէնսն ի սոսա յանդգնէին չրեայքն, կամ յորժամ ի Բաբելացոցն սպառեցան զայն յիշեցուցանէ, կամ զի յետ դարձին բազում անգամ չարչարեցան ի յունացն:

**Եւ ես զխորհուրդս նոցա եւ զգործս նոցա զիտեմ** (ԿԶ 18): Տես, զի ոչ միայն գործոց այլ եւ խորհրդոց առնէ մանրամասնաբար<sup>1625</sup> քննութիւն կամ ժողովել զամենայն ազգս եւ զլեզուս, այսինքն՝ զհեթանոսն, որք կոտորին յաուրս Չօրաբաբելի:

**Եկեցեն եւ տեսցեն զփառս իմ** (ԿԶ 18) վասն փառացն, որ լինի Իսրայէլի ի զալստեան<sup>1626</sup> Գոգա:

